Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

132

2521

491.99-5
9-34

2010

1925 г.
СОФИЯ
Ընթերցարան Քրիստափոր

№ 24.- | №
№ | №
Отд.

371

2002

491·99-5
Գ-34
-346-

# ԴՊՐՈՒԹԻՒՆ,

ԿԱՄ

# ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԵՐԷՆ

ՅՕՐԻՆԵԱՑ

Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*ՊԷՇԻԿԹԱՇՈՒ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ*

ԾԱԽԻՒՔ

Հ. Ը. Պ.

*ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ*

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1868 —

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. Գ. ԳԷՈՐԳԱՅ ԿԱԹՈՂԻ-
ԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ
Տ. ՊՕՂՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

44801 -

29491-63

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային դպրոցաց մէջ Հայերէն գրաւոր լեզուին ուսմանը տրուած կարեւորութիւնը տեսնելով Հայկազեան Ընկերութիւնս Հայերէն Քերականութեան այս երրորդ տպագրութիւնն աւելի ճոխ եւ կատարեալ ընել տալ հարկ համարեցաւ. մանաւանդ որ ասկէ առաջ համառօտ Քերականութիւն մը 'ի պէտս նորագոյն ուսանողաց 'ի լոյս ընծայած է։

Քերականութեանս հեղինակն այս տպագրութեան այն ամեն փոփոխութիւններն ու յաւելուածներն ըրաւ զոր իւր եւ այլոց փորձառութիւնը կը թելադրէր ; եւ գրաբար լեզուին ուսմանը ազգային դաստիարակութեան մէջ ունեցած եւ ունենալու բազմադիմի կարեւորութիւնը կը պահանջէր։ Հեղինակն Ազգային դպրոցաց գրաբարին ուսմանը նկատմամբ ըրած նախատեսութիւնն այնչափ աւելի կը յարգէ որչափ համոզուած է թէ Հայ սերնդեան արդի լեզուին ինչպէս ծնունդը գրաբարէն է, նոյնպէս աճումն ու զարգացումը գրաբարով պիտի ըլլայ։ Աս տեսութեամբ գրաբարին ուսումը մեր ազգային նախակրթական դաստիարակութեանն առաջին եւ գլխաւոր մասը պիտի ըլլայ մինչեւ որ ազգային արդի լեզուն ժամանակիս գիտնաբար եւ գրագիտական պիտոյից բաւական ըլլալու վիճակին հասնի։ Այս կարեւոր վիճակին ուր կը կենայ մեր լեզուին, նա մանաւանդ մեր մտաց զարգացումը՝ արդարեւ քանի մը ճամբով կրնանք հասնիլ. բայց ով կրնայ ժխտել թէ ան ճամբաներուն մէկն ալ գրաբարին ուսումը չէ։ Հոն պիտի

գտնենք նոր եւ ճշգագոյն գաղափարներու պատկերներ․ խորին մտածութիւններու եւ փափուկ զգացումներու ձեւեր. հոն է մեր գոյացնելու լեզուին եթէ ոչ կերպական՝ անշուշտ նիւթական մասը. եւ ո գիտէ թերեւս ան լեզուն որուն կարեւորութիւնը կը զգանք եւ առ որ կը դիմենք՝ նոյն իսկ մեր հին, գր—բ—ր, երբեմն նաեւ Վ—է—ւ կոչած լեզուն է։

Գրաբար լեզուին կարօտութիւնն օրըստօրէ աւելի զգացուելով, հարկաւ անոր ուսմանը գործիքներն ալ, որոց մէկն ալ Քերականութիւնն է՝ հետզհետէ նոյն կարօտութեան լրմանը յարմարագոյն ըլլալու են։ Մեր Քերականութեան նպատակն աս է. ոչ թէ Քերականութիւն շինող մը երեւիլ կ'ուզենք, այլ թէ կրնա՞նք արդեօք 'ի նպաստ լեզուին ուսմանը բան մը ընել։ Ուստի Քերականութեանս մէջ մեր սկզբունքն է. 1. Կանոնները կամ պատուէրները համառօտ, յստակ եւ ճիշդ ընել. 2. Լեզուին ընդհանուր օրէնքներն այնպէս աւանդել որ օրէնքը դէպքին անվրէպ մերձենալի ըլլայ. ինչպէս որ ասիկայ կը տեսնուի Տէր բայիի, Հայցական հոլովի, Ուղղական խնդրոյ, Յարաբերականի, Յօդերու, Դիմորոշներու, Բայերու ժամանակներուն գործածութեան կանոններուն մէջ. 3. Լեզուին մատենագրութեանը մէջ այն երեւոյթները, եւ համաձայնութեան ձեւերուն այն կերպերը որ ընդհանուր օրէնքի մը արդիւնք են՝ առնուլ, ապա թէ ոչ թողուլ. եւ այս ընտրութեան չափ եւ կանոն առնուած է դէպքերուն յաճախութիւնն ու միօրինակութիւնը. ըստ որում այնչափ աւելի բանաւոր է դէպք մը օրէնք հետեւցնել՝ որչափ դէպքը

յաճախ եւ միօրինակ պատահական է ։

Առաջին տպագրութեան թիւերը փակագծով նշանակուած են, որպէս զի Քերականական կրթութիւնն աս տպագրութեան հետ ալ գործածել դիւրին ըլլայ։

Հայկազեան Ընկերութիւնը իւր դպրոցասէր նպատակին մէջ յարատեւ ըլլալուն նոր ապացոյց մ' ալ տալով կը յուսայ որ, ուղղախոհ հասարակութեան խրախուսիչ մղմամբը, մանանխոյ մը հատի փոքրկութենէն ոստալից հովանաւոր ծառի մը մեծութեանը կը հասնի յօգուտ Ազգին, պաշտպանութեամբ Անոր՝ որ ամեն անձնանուէր ջանք օրհնել սովոր է։



# ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ արուեստը լեզու մը ուղիղ խօսիլ եւ ուղիղ գրել կը սորվեցնէ ։

2. Ուղիղ խօսելու եւ ուղիղ գրելու համար պէտք է գիտնալ թէ խօսք մը ինչպէս կը շինուի ։

3. Խօսք մը բառերէ կը շինուի ։

4. Բառերուն վրայ գիտնալու երեք բան կայ ։

5. Նախ՝ թէ բառերը քանի տեսակ են եւ ինչ փոփոխութիւններ կը կրեն ։

Երկրորդ՝ թէ խօսքին մէջ ինչ պաշտօններ կը կատարեն, եւ ան պաշտօնները ցուցնելու համար իրարու հետ ինչպէս կը համաձայնին ։

Երրորդ՝ թէ ինչ կարգով կը շարուին * ։

---

* Աս երեք բաներուն նայելով՝ Քերականութիւնը երեք մաս պիտի ունենայ. Ստուգաբանութիւն. Համաձայնութիւն, եւ Շարադասութիւն ։

# ՄԱՍ Ա.

## ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

6 . Հայերէն լեզուին բառերն ութ տեսակ են . Անուն, Ածական, Դերանուն, Նախադրութիւն, Բայ, Մակբայ, Շաղկապ, Ձայնարկութիւն ։

Ասոնք Մասունք բանի կը կոչուին ։

## ԳԼՈՒԽ Ա.

### ԱՆՈՒՆ

7 . Անունը, որ գոյական կ'ըսուի, անձ մը կամ իր մը կը ցուցնէ . հայր, մայր, հաց, քաղաք, գետ, զգեստ, հոգի, իմաստութիւն, գոյական անուններ են ։

8 . Անունը երկու տեսակ է, Հասարակ անուն եւ Յատուկ անուն ։

9 . Քաղաք, գետ, լեռ, հասարակ անուն են . ամեն քաղքի՝ քաղաք . ամեն գետոյ՝ գետ, ամեն լեռան՝ լեռ կրնանք ըսել . ասոր համար հասարակ կ'ըսուին ։

10 . Փարիզ, Եփրատ, Արարատ, յատուկ անուն են . ամեն քաղքի՝ Փարիզ, ամեն գետոյ՝ Եփրատ, ամեն լեռան՝ Արարատ չենք կրնար ըսել . միայն Փարիզ քաղ-

քին՝ Փարիզ, մինակ Եփրատ գետին՝ Եփրատ, մինակ Արարատ լեռան՝ Արարատ կրնանք ըսել, ասոր համար յատուկ կ'ըսուին:

11. Յատուկ անունները գլխագրով կը գրուին:

12. Գոյական անունը երկու փոփոխութիւն կ'ունենայ. Թիւ և Հոլով:

13. Թիւը երկու է. Եզակի և Յոգնակի:

14. Եզակին անունին նշանակած բանին մէկ հատ ըլլալը կը ցուցնէ. ինչպէս. մարդ. քաղաք, գետ, մէկ մարդ, մէկ քաղաք, մէկ գետ կը նշանակեն:,

15. Յոգնակին՝ անունին նշանակած բանին մէկէ աւելի ըլլալը կը ցուցնէ. զոր օրինակ. մարդք, քաղաքք, գետք, մարդեր, քաղաքներ, գետեր ըսել են. այսինքն՝ մէկէ աւելի մարդ, մէկէ աւելի քաղաք, մէկէ աւելի գետ:

16. Հոլովն՝ անունի մը վերջաւորութեանը կամ ծայրին փոխուիլն է:

17. Հոլովը Հայերէնի մէջ վեց է. Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական եւ Գործիական:

18. Անունին վերջը փոխուելուն հոլովել կ'ըսուի:

19. Հայերէնի մէջ ամեն անուն մէկ կերպով չի հոլովիր, այսինքն՝ ամեն անուն իր վերջը մէկ կերպով չի փոխեր. շատ մը հո-

լովելու կերպեր կան որոնք Հոլովմունք կը կոչուին ։

20․ Հայերէնի մէջ տասներկու կանոնաւոր, քանի մը հատ ալ անկանոն հոլովմունք կան ։

21․ Ամէն անուն եզակին մէջ տարբեր, ու յոգնակին մէջ տարբեր կերպով կը հոլովի ։

## ՏԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

### Ա․ ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի․ | Յոգնակի․ |
|---|---|---|
| Ուղղական․ | Բան․ | Բան-ք․ |
| Սեռական․ | Բան-ի․ | Բան-ից․ |
| Տրական․ | Բան-ի․ | Բան-ից․ |
| Հայցական․ | զԲան․ | զԲան-ս․ |
| Բացառական․ | 'ի Բան-է․ | 'ի Բան-ից․ |
| Գործիական․ | Բան-իւ․ | Բան-իւք․ |

Արքայ, յի, յիւ․ Գէծ, գծի, գծիւ․
Հանդէս, դէսի, դէսիւ․ Ողջոյն, ջունի, ջունիւ ։

### Բ․ ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի․ | Յոգնակի․ |
|---|---|---|
| Ո․ | Քաղաք․ | Քաղաք-ք․ |
| Ս․ | Քաղաք-ի․ | Քաղաք-աց․ |
| Տ․ | Քաղաք-ի․ | Քաղաք-աց․ |
| Հ․ | զՔաղաք․ | զՔաղաք-ս․ |
| Բ․ | 'ի Քաղաք-է․ | 'ի Քաղաք-աց․ |
| Գ․ | Քաղաք-աւ․], | Քաղաք-օք․ |

Աւազան, նի, նաւ․ Լեզու, զուի, զուաւ․
Որդեակ, դեկի, դեկաւ․ Պարտէզ, տէզի, տէզաւ․

### Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի, | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Զգեստ. | Զգեստ—ք. |
| Ս. | Զգեստ—ու. | Զգեստ—ուց. |
| Տ. | Զգեստ—ու. | Զգեստ—ուց. |
| Հ. | զԶգեստ. | զԶգեստ—ս. |
| Բ. | 'ի Զգեստ—է. | 'ի Զգեստ—ուց. |
| Գ. | Զգեստ—ու. | Զգեստ—ուք. |

Ծով, ծովու, ծովու. Զէն, զէնու, զէնու.
Ինձ, ընձու, ընձու. Քաղց, ցու, ցու:

Այս հոլովման տակ գացող անուններէն ոմանց բացառականը —է կ'ըլլայ, զոր օրինակ. Զարդ, զարդու, 'ի զարդուէ. Խրատ, խրատու, 'ի խրատուէ. Նախանձ, նախանձու, 'ի նախանձուէ. Քաղց, քաղցու, 'ի քաղցուէ, եւայլն:

### Դ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Գետ. | Գետք. |
| Ս. | Գետ—ոյ. | Գետ—ոց. |
| Տ. | Գետ—ոյ. | Գետ—ոց. |
| Հ. | զԳետ. | զԳետ—ս. |
| Բ. | 'ի Գետ—ոյ. | 'ի Գետ—ոց. |
| Գ. | Գետ—ով. | Գետ—ովք. |

Մեր, րոյ, րով. Խունկ, խնկոյ, խնկով.
Էշ, էշոյ, էշով. Յոյս, յուսոյ, յուսով:

Այս հոլովման տակ գացող բառերէն ոմանց եզակի տրականը —ման կ'ըլլայ. զոր օ_

րինակ. Նոր, նորոյ, նորում. Հին, հնոյ, հնում. Մի, միոյ, միում, եւայլն։

| | Ե. ՀՈԼՈՎՈՒՄ | Զ. ՀՈԼՈՎՈՒՄ |
|---|---|---|
| | Եզակի. | Յոգնակի. |
| Ո. | Տրդատ. | Հռիփսիմէ. |
| Ս. | Տրդատ-այ. | Հռիփսիմ-եայ. |
| Տ. | Տրդատ-այ. | Հռիփսիմ-եայ. |
| Հ. | զՏրդատ. | զՀռիփսիմէ. |
| Բ. | 'ի Տրդատ-այ. | 'ի Հռիփսիմ-եայ. |
| Գ. | Տրդատ-աւ. | Հռիփսիմ-եաւ. |

| | |
|---|---|
| Հայկ, կայ, կաւ. | Գայիանէ, նեայ, նեաւ. |
| Արամ, մայ, մաւ. | Յուլիոս, լեայ, լեաւ. |
| Վահան, նայ, նաւ. | Լուկրետիա, տեայ, տեաւ. |
| Արշակ, կայ, կաւ. | Եսայի, սայեայ, սայեաւ. |
| Տիգրան, նայ, նաւ. | Օգոստոս, տեայ, տեաւ. |

Այս երկու հոլովմանց տակ յատուկ անուններ կ'երթան, անոր համար յոքնակի չունին. Վեցերորդ հոլովման տակ գացող ոս վերջաւորածներն Առաջին հոլովման պէս ալ կ'ըլլան. ինչպէս. Օգոստոս. Օգոստոսի, Օգոստոսիւ. Յուլիոս, Յուլիոսի, Յուլիոսիւ. Պիոս, Պիոսի, Պիոսիւ։

## Է. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Եկեղեցի. | Եկեղեցի-ք. |
| Ս. | Եկեղեց-ւոյ. | Եկեղեց-եաց. |
| Տ. | Եկեղեց-ւոյ, -ւոջ. | Եկեղեց-եաց. |

| | | |
|---|---|---|
| Հ. | զԵկեղեցի · | զԵկեղեցիս · |
| Բ. | *յԵկեղեց-ւոյ · | յԵկեղեց-եաց · |
| Գ. | Եկեղեց-ւով · | Եկեղեց-եօք · |

Գեղի, ղւոյ, ղեաւ. Գօտի, տւոյ, տեաւ.
Տեղի, տեղւոյ, տեղեաւ. Գինի, նւոյ, նեաւ:

Այս հոլովման տակ կ'երթան ամէն ի վեր-ջաւորած բազմավանկ անուններ. ի վերջա-ւորած միավանկները Չորրորդ հոլովման, այսինքն Դ-րդ. գ-րդային պէս կ'ըլլան. ինչ-պէս, Զի, ձիոյ, ձիով. Դի, դիոյ, դիով:

Այս հոլովման տակ գացող անուններէն ո-մանց եզակի գործիականը -ով, իսկ յոքնա-կի սեռականը, տրականը, բացառականը -ոց, ու գործիականը -ովք կ'ըլլան. ինչպէս Հոգի, հոգւոյ, հոգւով. Հոգիք, հոգւոց, հոգւովք. Որդի, որդւոյ, որդւով. Որդիք, որդւոց, որդւովք: Նոյնն կ'ըլլան ամէն ցի վերջաւորած անուններ. ինչպէս, Իս-րայելացի, Իսրայելացւոյ, Իսրայելացւով. Իսրայելացիք, Իսրայելացւոց, Իսրայելաց-ւովք:

Այս հոլովման տակ գացող բառերէն ոմանց բացառականն ալ -ոջէ կ'ըլլայ. ինչպէս, Տե-ղի, տեղւոյ, 'ի տեղւոջէ:

## Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի. Յոգնակի.

* Ձայնաւորով սկսող անուններուս քով՝ ի նախդրին տեղ յ կը դրուի:

| | | |
|---|---|---|
| Ո. | Փոքր. | Փոքր–ունք. |
| Ս. | Փոքր–ու. | Փոքր–ունց. |
| Տ. | Փոքր–ու. | Փոքր–ունց. |
| Հ. | զՓոքր. | զՓոքր–ունս. |
| Բ. | 'ի Փոքր–ուէ. | 'ի Փոքր–ունց. |
| Գ. | Փոքր–ումբ, փոքր–ու. | Փոքր–ումբք. |

Մանր, նու, նու. Մանունք, նունց, նումբք.
Նանր, նու, նու. Նանունք, նունց, նումբք.
Թանձր, ձու, ձու. Թանձունք, ձունց, ձումբք.
Քաղցր, ցու, ցու. Քաղցունք, ցունց, ցումբք.

Այս հոլովման տակ գացող անուններէն Բարձր, յոգնակիին մէջ այսպէս կ'ըլլայ. Բարձունք, բարձանց, բարձամբք. փոխանակ Բարձունց, բարձումբք ըլլալու:

Այս հոլովման տակ գացող ածականները յոքնակի ալ ունին: Բայց կան աս հոլովման տակ գացող քանի մը գոյականներ որոնք յոքնակի չեն գործածուիր. զոր օրինակ. Ասր, ասու, յասուէ, ասու: Մեղր, մեղու, 'ի մեղուէ, մեղու:

## Թ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Հիմն. | Հիմ–ունք. |
| Ս. | Հիմ–ան. | Հիմ–անց. |
| Տ. | Հիմ–ան. | Հիմ–անց. |
| Հ. | զՀիմն. | զՀիմ–ունս. |
| Բ. | 'ի Հիմ–անէ. | 'ի Հիմ–անց. |
| Գ. | Հիմ–ամբ. | Հիմ–ամբք. |

Արեգակն, կան, կամբ. Շուրթն, շրթան, շրթամբ.

Խոստումն, տման, տմամբ. Գուռն, գրան, գրամբ.

Այս հոլովման տակ գացող անուններէն ո֊մանց յոքն. ուղղ. ու հայցականը անք, անս կ'ըլլան. ինչպէս, Սերմն, սերմանք, սերմանս. Կողմն, կողմանք, կողմանս. Անուն, անուանք, անուանս:

Մն վերջաւորութ ած բառերուն մեծ մասն աս հոլովման տակ կ'երթան. ինչպէս են վե֊րի բառերը եւ հետեւեալները. Ատամն, ատաման, ատամամբ. Ատամունք, ատա֊մանց, ատամամբք. Ուսումն, ուսման, ուս֊մամբ. Ուսմունք, ուսմանց, ուսմամբք. Սկիզբն, սկզբան, սկզբամբ. Սկզբունք, սկզբանց, սկզբամբք. Քիրտն, քրտան, քրտամբ. Քրտունք, քրտանց, քրտամբք. եւ այլն:

Կան ուրիշ այլ եւ այլ վերջաւորութիւն ունեցող բառեր ալ որոնք աս հոլովման պէս կ'ըլլան. զոր օրինակ.

Աղջիկ, ջկան, ջկանէ, ջկամբ. ջկունք, ջկանց, մբք.
Անուն, ուան, ուանէ, ուամբ. ուանք, ուանց, մբք.
Աշուն, շնան, շնանէ, շնամբ. շունք, շնանց, շնամբք.
Գարուն, րնան, րնանէ, րնամբ. րունք, րնանց, մբք.
Կորեակ, րեկան, րեկանէ, րեկամբ. րեկունք, րեկանց.
Ձեղուն, ուան, ուանէ, ուամբ. ունք, ուանց, ուամբք.
Մանուկ, նկան, նկանէ, նկամբ. նկունք, նկանց, մբք.
Մարդիկ, դկան, դկանէ, դկամբ.
Շուն, շան, շանէ, շամբ. շունք, շանց, շամբք.
Պաշտօն, տաման, տամանէ, տամամբ. տամունք, տամանց, տամամբք.

Տնիկ, տնկան, տնկանէ, տնկամբ. տնկունք, տնկանց, տնկամբք.
Տուն, տան, տանէ, տամբ. տունք. տանց, տամբք.
Տատուն, տտան, տտանէ, տտամբ. տտունք, տտանց, տտամբք.
Փոքրիկ, րկան, րկանէ, րկամբ. րկունք, րկանց, մբք.

## Ժ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Գառն. | Գառ-ինք. |
| Ս. | Գառ-ին. | Գառ-անց. |
| Տ. | Գառ-ին. | Գառ-անց. |
| Հ. | զԳառն. | զԳառ-ինս. |
| Բ. | 'ի Գառ-անէ. | 'ի Գառ-անց. |
| Գ. | Գառ-ամբ. | Գառ-ամբք. |

Ձեռն, ռին, ռամբ. Եզն, եզին, եզամբ.
Լեառն, լերին, լերամբ. Խաշն, խաշին, խաշամբ։

Այս հոլովման տակ գտցող բառերէն ոմանք, ինչպէս՝ Անձն, Ազն, Դիւցազն, Հարսն, Մատն, բացառականին մէջ յԱնձնէ, յԱզնէ, 'ի Դիւցազնէ, 'ի Հարսնէ, 'ի Մատնէ, կ'ըլլան. փոխանակ յԱնձանէ, յԱզանէ, 'ի Հարսանէ, 'ի Մատանէ ըլլալու։

Դարձեալ՝ ոմանց յոգն. ու ղղ. ու հայցականը օ-նք, օ-նս, կ'ըլլան. ինչպէս, Դիւցազօ-նք, զԴիւցազօ-նս. Հարսօ-նք, հարսօ-նս. Մատօ-նք, մատօ-նս. Սատօ-նք, մատօ-նս. Թոռօ-նք, թոռօ-նս. Ոզօ-նք, ոզօ-նս. փոխանակ, Հարսինք, հարսինս. Մատինք, մատինս, եւ այլն ըլլալու։

## ԺԱ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Նեղութիւն. | Նեղութիւնք. |
| Ս. | Նեղութեան. | Նեղութեանց. |
| Տ. | Նեղութեան. | Նեղութեանց. |
| Հ. | զՆեղութիւն. | զՆեղութիւնս. |
| Բ. | 'ի Նեղութենէ. | 'ի Նեղութեանց. |
| Գ. | Նեղութեամբ. | Նեղութեամբք. |

Այսպէս կը հոլովին ամէն ութիւն վերջաւորուած բառեր, եւ իւն վերջաւորուածներէն շատերը, որոնց ոմանց բացառականը էանէ կ'ըլլայ. փոխանակ ենէ ըլլալու. զոր օրինակ.

Արիւն, արեան, յարենէ, արեամբ. արիւնք, արեանց.
Անկիւն, անկեան, յանկենէ, անկեամբ. անկիւնք, անկեանց.
Կորիւն, կորեան, 'ի կորեանէ, կորեամբ. կորիւնք, կորեանց.
Ձիւն, ձեան, 'ի ձեանէ, ձեամբ. ձիւնք, ձեանց.
Սիւն, սեան, 'ի սեանէ, սեամբ. սիւնք, սեանց.

Բայց ան իւն վերջաւորած բառերը որոնք ումն վերջաւորածներուն զօրութիւնն ունին՝ բնաւ չեն հոլովիր. ասոնք հոլովել պէտք եղած ատեն՝ ումն վերջաւորածները գործածել հարկ կ'ըլլայ. զոր օրինակ. Հնչիւն կամ Հնչումն, Հնչման, Հնչմամբ. Գոչիւն կամ գոչումն, գոչման, գոչմամբ: Միայն Բրթմնջիւն բառը հոլոված կայ, Բրթմնջիւն, բրթմնջեան, 'ի բրթմնջենէ:

Կան ուրիշ այլ եւ այլ վերջաւորութիւն ունեցող բառեր ալ որոնք աս հոլովման պէս կ'ըլլան · զոր օրինակ ·

Տեսիլ, սլեան, սլենէ, սլեամբ · սիլք, սլեանց, սլեամբք ·
Հանգիստ, գստեան, գստենէ, գստեամբ ·
Կորուստ, րստեան, րստենէ, րստեամբ ·
Գալուստ, լստեան, լստենէ, լստեամբ ·
Փախուստ, խստեան, խստենէ, խստեամբ ·
Ստին, ստեան, ստենէ, ստեամբ · ստինք, ստեանց,
ստեամբք ։

ԺԲ · ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի · | Յոգնակի · |
|---|---|---|
| Ո · | Ոսկր · | Ոսկ-երք · |
| Ս · | Ոսկ-եր · | Ոսկ-երաց · |
| Տ · | Ոսկ-եր · | Ոսկ-երաց · |
| Հ · | զՈսկր · | զՈսկ-երս · |
| Բ · | յՈսկ-երէ · | յՈսկ-երաց · |
| Գ · | Ոսկ-երբ · | Ոսկ-երօք · |

Կայսր, սեր, սերբ ·　　Ուստր, տեր, տերբ ·
Դուստր, դստեր, դստերբ ·　　Աստղ, տեղ, տեղբ ·
Ալիւր, ալեր, ալերբ ·　　Աղբիւր, բեր, բերբ ·

Համր բառը յոքնակիին մէջ կ'ըլլայ համ-մերք, համերց · այսպէս կրնան ըլլալ նաեւ աս հոլովման տակ դասել ուրիշ բառեր ալ · զոր օրինակ · Ոսկերք, ոսկերց, ոսկերբք · Աստեղք, աստեղց, աստեղբք · Աղբերք, աղբերց, աղբերբք եւ այլն · բայց Երկրորդ հոլովման յոքնակիին պէս՝ ոսկերաց, ոսկերօք · աստեղաց, աստեղօք · աղբերաց, աղբերօք, ըսել աւելի սովորական է ։

# ՁԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

## Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Այր. | Արք, |
| Ս. | Առն. | Արանց. |
| Տ. | Առն. | Արանց. |
| Հ. | զԱյր. | զԱրս. |
| Բ. | յԱռնէ. | յԱրանց. |
| Գ. | Արամբ. | Արամբք. |

Տէր, տեառն, 'ի տեառնէ. տերամբ. Տեարք, տեարանց, տերամբք.

## Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Հայր. | Հարք. |
| Ս. | Հօր. | Հարց. |
| Տ. | Հօր. | Հարց. |
| Հ. | զՀայր. | զՀարս. |
| Բ. | 'ի Հօրէ. | 'ի Հարց. |
| Գ. | Հարբ. | Հարբք. |

Մայր, մօր, 'ի մօրէ, մարբ. Մարք, մարց, մարբք. Եղբայր, եղբօր, յեղբօրէ. եղբարբ. Եղբարք, եղբարց, եղբարբք.

## Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Քոյր. | Քորք. |
| Ս. | Քեռ. | Քերց. |
| Տ. | Քեռ. | Քերց. |
| Հ. | զՔոյր. | զՔորս. |
| Բ. | 'ի Քեռէ. | 'ի Քերց. |
| Գ. | Քերբ. | Քերբք. |

## Դ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Կին. | Կանայք. |
| Ս. | Կնոջ. | Կանանց. |
| Տ. | Կնոջ. | Կանանց. |
| Հ. | զԿին. | զԿանայս. |
| Բ. | 'ի Կնոջէ. | 'ի Կանանց. |
| Գ. | Կանամբ. | Կանամբք. |

## Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Գիւղ. | Գիւղք. |
| Ս. | Գեղջ. | Գիւղից. |
| Տ. | Գեղջ. | Գիւղից. |

## Զ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Օր. | Աւուրք. |
| Ս. | Աւուր. | Աւուրց. |
| Տ. | Աւուր. | Աւուրց. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հ. | զԳիւղ. | զԳիւղս. | զՕր. | զԱւուրս. |
| Բ. | 'ի Գեղջէ. | 'ի Գիւղից. | յՕրէ. | յԱւուրց. |
| Գ. | Գիւղիւ. | Գիւղիւք. | Աւուրբ. | Աւուրբք. |

| | Է. ՀՈԼՈՎՈՒՄ | | Ը. ՀՈԼՈՎՈՒՄ | |
|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. | Տիւ. | Տիւք. | Արեւելեայ. | Արեւելեայք. |
| Ս. | Տունջեան. | | Արեւելւոյ. | Արեւելեայց. |
| Տ. | Տունջեան. | | Արեւելւոյ. | Արեւելեայց. |
| Հ. | զՏիւ. | զՏիւս. | զԱրեւելեայ. | զԱրեւելեայս. |
| Բ. | 'ի Տունջենէ. 'ի տուէ. | | յԱրեւելւոյ. | յԱրեւելեայց. |
| Գ. | Տունջեամբ. | | Արեւելեաւ. | Արեւելեօք. |

## ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

22. Վեց հոլովներէն երկուքը, այսինքն Ուղղականն ու Հայցականը, ուղիղ հոլով, իսկ միւս չորսը, Սեռականը, Տրականը, Բացառականն ու Գործիականը խոտորնակ հոլով կը կոչուին։

23. Բաղաձայնով վերջաւորուած անուններուն վերջին վանկին ի եւ ու ձայնաւորները՝ խոտորնակ հոլովներուն մէջ բնական* ըի կը փոխուին. զոր օրինակ, գիծ, գծի, խունկ, խնկոյ։

Իսկ Եա՝ Ե, Է՝ Ի, Ոյ՝ ու կը փոխուին,

---

* Բնական ը կ'ըսուի ը հնչումը որ չի գրուիր. բայց երկու բաղաձայնի մէջտեղը հարկաւ զգալի է, զոր օրինակ. քննել. որ կը կարդացուի քըննել. Թէպէտ ը գիրը չի գրուիր։

ինչպէս . Ատե—ն , ատենի . Մէգ , միգի . Ող-ջոյն , ողջ—նի :

24 . Քանի մը բառերու մէջ է գիրն ալ բնական չի կը փոխուի , զոր օրինակ . Ասե-ղըն , ասղան . Թիթեղն , Թիթղան :

Դե— բառին է գիրը էի կը փոխուի , զոր օրինակ . Դեւ , դիւի . Դեւք , դիւաց , դի-ւօք :

25 . Ի— վերջաւորուած բառերուն մէջ է—ը ո—ի կը փոխուի , զոր օրինակ , Թէ— , Թ—ոյ , Թ—ով . Պատէ— , պատ—ոյ , պատ—ով . Անէ— , ան—ոյ , ան—ով . Հովէ— , հով—ի , հով—աւ . Վաղէ— , վաղ—ի :

26 . Արծ—է բառը եզակի խոտորնակ հո-լովներուն մէջ է գիրը չի պահեր , զոր օրի-նակ . Արծուէ , արծուոյ , արծուով :

27 . Փոփոխելի ձայնաւորով սկսած միա-վանկ բառերէն ոմանք վերի կանոնին հա-մեմատ կը փոխուին խոտորնակ հոլովնե-րուն մէջ , ոմանք ալ չեն փոխուիր . զոր օրինակ .

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ինչ | կ'ըլլայ, | ընչի, | ընչիւ, | ինչք, | ընչից, | ընչիւք. |
| Իղձ | » | ըղձի, | ըղձիւ, | իղձք, | ըղձից, | ըղձիւք. |
| Ո—նչ | » | ընչոյ, | ընչով, | ո—նչք, | ընչաց, | ընչօք, |
| Ո—նդ | » | ընդոյ, | ընդով, | ո—նդք, | ընդոց, | ընդովք. |

Բայց

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Իժ | կ'ըլլայ, | իժի, | իժիւ, | իժք, | իժից, | իժիւք, |
| Իր | » | իրի, | իրք, | իրաց, | իրօք. | |
| Ո—ս | » | ոսոյ, | ոսով, | ոսք, | ոսոց, | ոսովք. |

Ուխտ » ״ ուխտի, ուխտիւ, ուխտք, ուխտից, տիւք.

28. Այս վերջաւորուած հասարակ անուններն Ն. հոլովման պէս կը հոլովին, զոր օրինակ:

Աշտեայ, տէի, տէիւ. տեայք, տէից, տէիւք.
Գուղնաքեայ, քէի, քէիւ, եւ այլն.
Կաթողիկեայ, կէի, կէիւ, եւ այլն.
Փախստեայ, տէի, տէիւ, եւ այլն.
Քրիստոնեայ, նէի, նէիւ, եւ այլն։

Անդեայ բառը կը հոլովի այսպէս, Անդեայ, անդէոյ, անդէով. Անդեայք, անդէոց, անդէովք:

Իսկ Եայ վերջաւորած տեղւոյ կամ բնակչաց անուններ, Արեւելեայ բառին պէս կը հոլովին, զոր օրինակ.

Ասորեստանեայ, նւոյ, նւով. նեայք. նեայց. նեօք.
Հայաստանեայ, նւոյ, նւով. նեայք, նեայց, նեօք.
Վանեայ, նւոյ, նւով. նեայք, նեայց, նեօք.
Ծովեզերեայ, րւոյ, եւ այլն.
Միջերկրեայ, րւոյ, եւ այլն.
Սարերկրեայ, սարերկրւոյ, եւ այլն։

29. Ան վերջաւորուած բառեր այսպէս կը հոլովին.

Մամիկոնեան, նենի, նենիւ. նեանք, նեանց, նեամբք.
Յաւիտեան, տենի, տենիւ. տեանք, տեանց, տեամբք.
Յոբելեան, ելենի, ելենիւ. ելեանք. եւ այլն։

30. Ու վերջաւորուած ածականներ որոնք յատուկ անուններէ շինուած են, եւ մէկու մը վերաբերեալները կը ցուցնեն, հետեւեալ կերպով կը հոլովին:

Աղամանք , մանց , մամբք կամ մամք .
Շամիրամանք , միրամանց , միրամամբք կամ մամք .

31 . Կան հասարակ անուններ որոնց ամեն կամ քանի մը հոլովները քանի մը կերպ կ՚ըլլան . կամ եզակին տարբեր , յոգնակին տարբեր կերպով կը հոլովին . զոր օրինակ .

Աղախին , աղախնոյ , աղախնով . Աղախինք կամ աղախնեայք , աղախնայց կամ աղախնեայց , աղախնեօք .

Աղուէս , աղուեսու . Աղուէսք կամ աղուեսունք , աղուեսուց , աղուեսուք .

Ամիս , ամսոյ կամ ամսեան , ամսով . Ամիսք , ամսոց , ամսովք .

Անդրանիկ , անդրանկան , յանդրանկանէ , անդրանկամբ , կամ անդրանիկ , անդրանկի , անդրանկաւ . Անդրանիկք , անդրանկաց , անդրանկօք .

Գանձ , գանձու կամ գանձի , գանձու կամ գանձիւ . Գանձք , գանձուց , գանձիւք կամ գանձուք .

Գիշեր , գիշերոյ կամ գիշերի , գիշերով կամ գիշերաւ .

Դուռն , դրան , դրամբ . Դրունք , դրանց , դրամբք . կամ Դուրք , դրաց , դրօք .

Եպիսկոպոս , եպիսկոպոսի , եպիսկոպոսաւ . Եպիսկոպոսք կամ եպիսկոպոսունք , պոսաց , պոսօք .

Երագ . Երագունք .

Երէց , երիցու , յերիցուէ , երիցու կամ երիցամբ . Երիցունք , երիցանց , երիցամբք .

Զօր, զօրու, զօրու. Զօրք, զօրաց, զօրօք·

Ժողովուրդ, ժողովրդեան, 'ի ժողովրդենէ, ժողովրդեամբ· Ժողովուրդք, ժողովրդոց, ժողովրդովք·

Լուսին, լուսնոյ կամ լուսնի, լուսնով կամ լուսնիւ·

Խորհուրդ, խորհրդեան կամ խորհրդոյ կամ խորհրդի, խորհրդով կամ խորհրդիւ· Խորհուրդք, խորհրդոց, խորհրդովք·

Ծաղիկ, ծաղկան, 'ի ծաղկանէ, ծաղկամբ· կամ ծաղիկ, ծաղկի, ծաղկաւ· Ծաղկունք, ծաղկանց, ծաղկամբք. կամ ծաղիկք, ծաղկաց, ծաղկօք, կամ ծաղկովք·

Ծնունդ, ծննդեան, 'ի ծննդենէ, ծննդեամբ. Ծնունդք, ծննդոց, ծննդովք.

Կոչ, կոչոյ, կոչով· Կոչունք, կոչնոց, կոչնովք·

Հուր, հրոյ, հրով կամ հուրբ·

Ձեռն, ձեռին, 'ի ձեռանէ, ձեռամբ· Ձեռք, ձեռաց, ձեռօք·

Ճիրան, ճիրանի, ճիրանաւ· Ճիրանք կամ ճիրանունք, ճիրանաց կամ ճիրանանց, ճիրանօք կամ ճիրանամբք·

Ճրագ, ճրագի, ճրագաւ· Ճրագք կամ ճրագունք, ճրագաց, ճրագօք·

Մահ, մահուան կամ մահու, 'ի մահուանէ, մահուամբ կամ մահու. Մահք կամ մահուանք, մահուանց, մահուամբք·

Մեղր, մեղու կամ մեղեր·

Մկան, մկանի, մկանաւ· Մկանք կամ մկանունք, մկանանց, մկանամբք.

Մսան, մսանի, մսանաւ. Մսանք կամ մսանունք, մսանանց, մսանամբք·

Նարդոս, նարդոսի կամ նարդեան, նարդոսիւ.

Ոտն, ոտին, յոտանէ, ոտամբ. Ոտք, ոտից, ոտիւք.

Որմ, որմոյ, որմով. Որմք կամ որմունք, որմոց, որմովք

Պառաւ, պառաւոյ, պառաւով. Պառաւք կամ պառաւունք, պառաւանց, պառաւամբք.

Պատերազմ, պատերազմի, պատերազմաւ. Պատերազմք կամ պատերազմունք, պատերազմաց, պատերազմօք.

Ջուր, ջրոյ, ջրով կամ ջուրբ. Ջուրք, ջրոց կամ ջուրց, ջրովք կամ ջուրբք.

Սարկաւագ, սարկաւագի, սարկաւագաւ. Սարկաւագք կամ սարկաւագունք, սարկաւագաց, սարկաւագօք.

Ցից, ցցի, ցցիւ. Ցիցք կամ ցցունք, ցցից, ցցիւք.

Փախուստ, փախստեան կամ փախստի, փախստեամբ կամ փախստիւ.

Քար, քարի, քարիւ. Քարինք, քարանց, քարամբք.

32. Դ. Հոլովման, այսինքն, Գ.եռ., Գէ-տոյին պէս հոլովող բառերէն ոմանց եզակի տրականը ի ով կընայ վերջաւորիլ, ի նախադրութեան հետ, զոր օրինակ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աթոռ. | Տր. | աթոռոյ | կամ | յաթոռի. |
| Անկողին. | » | անկողնոյ | » | յանկողնի. |
| Բերան. | » | բերանոյ | » | 'ի բերանի. |
| Գինչեր. | » | գիչերոյ | » | 'ի գիշերի. |
| Գիր. | » | գրոյ | » | 'ի գրի. |
| Գուբ. | » | գբոյ | » | 'ի գբի. |
| Երագ. | » | երագոյ | » | յերագի. |
| Թուղթ. | » | թղթոյ | » | 'ի թղթի. |
| Ծոց. | » | ծոցոյ | » | 'ի ծոցի. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մարմին. | » | մարմնոյ | » | 'ի մարմնի. |
| Պատիժ. | » | պատժոյ | » | 'ի պատժի. |
| Պատիւ. | » | պատուոյ | » | 'ի պատուի. |
| Տիղմ. | » | տղմոյ | » | 'ի տղմի. |
| Փոր. | » | փորոյ | » | 'ի փորի. |

Նայց չըսուիր, 'ի մարդի, 'ի լուսի, 'ի ծերի, և այլն ։

33. Կան անուններ ալ որոնք տարբեր կերպով հոլովելով ուրիշ նշանակութիւն կ'ունենան.

| | |
|---|---|
| Այր, այրի, այրիւ. | այր, մաղարա. |
| Այր, առն, արամբ. | էրքէկ մարդ. |
| Գայլ, գայլի, գայլիւ. | գայլ բերանակալ. |
| Գայլ, գայլոյ, գայլով. | գայլ (դամլա). |
| Գեղ, գեղոյ, գեղով. | գեղեցկութիւն. |
| Գեղ, գեղջ, գիւղիւ. | գեղ. |
| Դի, դիոյ, դիով. | դի, (լէշ). |
| Դիք, դից, դիօք. | չաստուած. |
| Կոյս, կուսի, կուսից. | կոյս, (աղջիկ). |
| Կոյս, կուսի, կուսաց. | կողմ. |
| Մայր, մօր, մարբ. | մայր. |
| Մայր, մայրի, մայրիւ. | մայր, (ծառ). |
| Որթ, որթոյ, որթով. | որթ, (ասմա). |
| Որթ, որթու, որթու. | հորթ, (տանա). |
| Սան, սանի, սանիւ. | կաթսայ. |
| Սան, սանու, սանուց. | սան, յէտանասան. |
| Փող, փողոյ, փողով. | փող (փօրու). |
| Փող, փողի, փողիւ. | փող (փօղազ). |
| Օդ, օդոյ, օդով. | օդ, (հավա). |
| Օդ, օդի, օդիւ. | օդ, (ոտքի աման . |

34 · Հասարակ անուններէն ոմանք բար-դութեան կամ ածանցման մէջ իրենց առջի Հոլովման ձեւը կը պահեն ոմանք ալ կը փո-խեն , զոր օրինակ ·

Փոխողներ·

Աստուած, տուծոյ, ծով· Անաստուած, ծի, ծից·
Գլուխ, գլխոյ, գլխով· Զօրագլուխ, գլխի, գլխաց·
Գործ, ծոյ, ծով· Այգեգործ, ծի, ծաց·
Զէն, զինու, զինու· Սպառազէն, զինի, զինաց·
Խրատ, տու, տու· Անխրատ, տի, տից·
Խօսք, սից, սիւք· Բարեխօս, սի, սաւ, սաց·
Սէր, սիրոյ, սիրով· Աստուածասէր, սիրի, րաւ·
Սիրտ, սրտի, սրտիւ· Խստասրտաց·

Պահողներ·

Գին, գնոյ, գնով· Մեծագին, գնոյ, գնով·
Մարմին, մարմնոյ, մնով· Անմարմին, մնոյ, մնով·
Շունչ, շնչոյ, շնչով· Անշունչ, շնչոյ, շնչով·

ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԹՈՒՈՑՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

35 · Կան անուններ որոնք յոքնակի չեն կրնար ունենալ , զոր օրինակ · հաց , ծարաւ , ծերութիւն , և այլն .

Ասոր հակառակ կան անուններ որոնք ե-զակի չունին , ինչպէս · Աղօթք , Դժոխք , Կամք , Մեղք , Միտք , Պարտք · և այլն ։ Չըսուիր Աղօթ , Դժոխ , Կամ , և այլն ։ Այս տեսակ անուններ Անեզական կը կոչուին ։

Անեզական անուններ բարդութեան

կամ ածանցման մէջ, և կամ ուրիշ բառերու հետ իբրև ատուԹեան կերպ գործածուած ատեն եղակի կ'ըլլան, զոր օրինակ.

Աղջնասէր, դժոխական, կամաւոր, մեղաւոր, մտախորհ, պարտաւոր. և կամ, մեղ դնել, մեղ ինչ ոչ գոյր նոցա, մտ դնել, 'ի մտի ունել, զմտաւ ածել, ընդ մտ տանել, կամ եղեւ ինձ, պարտ է։

36. Կան այնպիսի բառեր ալ որոնց հոլովման ձեւը եզակի է, բայց նշանակուԹիւնը յոգնակի ըլլալուն համար՝ յոգնակիի ձեւով չեն հոլովիր, զոր օրինակ:

Մարդիկ, մարդկան, 'ի մարդկանէ, մարդկամբ.
Մանկտի, մանկտւոյ, 'ի մանկտւոյ, մանկտւով.
Գրեան, գրենոյ, գրենով.
Որեար, որերոյ, որերով.
Ոսկրոտի, ոսկրոտւոյ, ոսկրոտւով.
Աւազանի, աւազանւոյ աւազանւով.

Նոյպէս են նաև Խուժան, Իշեան, Ձիան, Խոզեան: Ուստի եւ չըսուիր մարդիկք, մարդկանց. Մանկտիք, մանկտեաց. Գրեանք, գրեանց. Որեարք, որերոց. և այլն:

## ԳԼՈՒԽ Բ.

### ԱԾԱԿԱՆ

37. Ածական կ'ըսուին ան տեսակ բա-

ւեր՝ որոնք գոյականին որպիսութիւնը, այսին-քըն ինչպէս ըլլալը. և կամ քանակութիւնը, այսին-քըն՝ թիւը, քանի հատ ըլլալը կը ցուցնեն։ Օր օրինակ, կարմիր հանդերձ, երկու հան-դերձ. կարմիր՝ հանդերձին որպիսութիւնը, երկու՝ քանակութիւնը կը ցուցնեն, ուս-տի և ածական են։

38. Գոյականն ու ածականը իրարմէ որոշելու դիւրին կերպն է՝ բառին քով բան (չէյ) բառը դնել. եթէ կը յարմարի՝ ան բառն ածական է, եթէ չի յարմարիր՝ բա-ռը գոյական է. զոր օրինակ, չըսուիր՝ մարդ բան, քաղաք բան, տուն բան. այս մարդ, քաղաք, տուն, գոյական են. բայց կ'ը-սուի, բարի բան, չար բան, մեծ բան. այս բարի, չար, մեծ ածական են։

39. Ածականները սովորաբար գոյակա-նէն ետքը կը դրուին, ու անոր հետ մէկ տեղ կը հոլովին, զոր օրինակ. այր իմաս-տուն. իմաստուն մարդ։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Այր իմաստուն. | Արք իմաստունք. |
| Ս. | Առն իմաստնոյ. | Արանց իմաստնոց. |
| Տ. | Առն իմաստնոյ. | Արանց իմաստնոց. |
| Հ. | զԱյր իմաստուն. | զԱրս իմաստունս. |
| Բ. | յԱռնէ իմաստնոյ. | յԱրանց իմաստնոց. |
| Գ. | Արամբ իմաստնով. | Արամբք իմաստնովք. |

40. Բայց հարկ կ'ըլլայ շատ անգամ ա-

ծականը գոյականէն առաջ դնել, ան ատեն ածականն անփոփոխ կը մնայ, զոր օրինակ.

Հաւատարիմ բարեկամ. Հաւատարիմ բարեկամք.
Հաւատարիմ բարեկամի. Հաւատարիմ բարեկամաց.
Ի Հաւատարիմ բարեկամէ. Հաւատարիմ բարեկամօք.
Հաւատարիմ բարեկամաւ.

41. Մինակ միավանկ ածականները գոյականէն առաջ ալ դրուելու ըլլան, անոր հետ մէկ տեղ կը հոլովին. զոր օրինակ. Մեծ տուն, Մեծի տան, Մեծաւ տամբ. Նոր օրէնք, Նորոց օրինաց. Քաջ այր, քաջի առն, քաջաց արանց. Սուրբ քաղաք, սրբոյ քաղաքի և այլն:

42. Գոյականին քանակութիւնը ցուցընող ածականները Թուական կը կոչուին. և երեք տեսակ են. Բացարձակ, Դասական և Ըններական:

43. Ա. Բացարձակները գոյականին թիւը կամ քանի հատ ըլլալը կը ցուցնեն, և գլխաւորները հետևեալներն են:

| | Մի | Երկու | Երեք | Չորք |
|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ. | Յոգ. | Յոգ. |
| Ո. | Մի. | Երկու. | Երեք. | Չորք. |
| Ս. | Միոյ, միոջ. | Երկուց. | Երից. | Չորից. |
| Տ. | Միոյ, միում. | Երկուց. | Երից. | Չորից. |
| Հ. | զՄի. | զԵրկուս. | զԵրիս. | զՉորս. |
| Բ. | ՚ի Միոջէ. | յԵրկուց. | յԵրից. | ՚ի Չորից. |
| Գ. | Միով. | Երկուք. | Երիւք. | Չորիւք. |

### Հինգ.

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Հինգ. | Հինգք. |
| Ս. | Հնգի. | Հնգից. |
| Տ. | Հնգի. | Հնգից. |
| Հ. | զՀինգ. | զՀինգս. |
| Բ. | 'ի Հնգէ. | 'ի Հնգից. |
| Գ. | Հնգիւ. | Հնգօք. |

### Վեց.

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Վեց. | Վեցք. |
| Ս. | Վեցի. | Վեցից. |
| Տ. | Վեցի. | Վեցից. |
| Հ. | զՎեց. | զՎեցս. |
| Բ. | 'ի Վեցէ. | 'ի Վեցից. |
| Գ. | Վեցիւ. | Վեցիւք. |

### Եօթն.

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Եօթն. | Եօթանք. |
| Ս. | Եօթան. | Եօթանց. |
| Տ. | Եօթան. | Եօթանց. |
| Հ. | զԵօթն. | զԵօթանս. |
| Բ. | յԵօթանէ. | յԵօթանց. |
| Գ. | Եօթամբ. | Եօթամբք. |

### Ութ.

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Ութ. | Ութք. |
| Ս. | Ութի. | Ութից. |
| Տ. | Ութի. | Ութից. |
| Հ. | զՈւթ. | զՈւթս. |
| Բ. | յՈւթէ. | յՈւթից. |
| Գ. | Ութիւ. | Ութիւք. |

### Ինն.

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Ինն. | Իննունք. |
| Ս. | Ըննի. | Ըննից. |
| Տ. | Ըննի. | Ըննից. |
| Հ. | զԻնն. | զԻննունս. |
| Բ. | յԸննէ. | յԸննից. |
| Գ. | Ըննիւ | Ըննիւք. |

### Տասն.

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ո. | Տասն. | Տասունք. |
| Ս. | Տասին. | Տասանց. |
| Տ. | Տասին. | Տասանց. |
| Հ. | զՏասն. | զՏասունս. |
| Բ. | 'ի Տասնէ. | 'ի Տասանց. |
| Գ. | Տասամբ. | Տասամբք. |

### Մետասան, Տասնըմէկ.

| | Եզակ. | Յոգնակ. |
|---|---|---|
| Ո. | Մետասան. | Մետասանք. |
| Ս. | Մետասանի. | Մետասանից. |

| | | |
|---|---|---|
| Տ. | Մետասանի. | Մետասանից. |
| Հ. | զՄետասան. | զՄետասանս. |
| Բ. | ՚ի Մետասանէ. | ՚ի Մետասանից. |
| Գ. | Մետասանիւ. | Մետասանիւք. |

## Մետասանին պէս կը հոլովին.

Երկոտասան. տասն-երկու.
Երեքտասան. տասն-երեք.
Չորեքտասան. տասն-չորս.
Հնգետասան. տասն-հինգ.
Վեշտասան. տասն-վեց.

## Եօթնեւտասան, տասն-եօթը.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Եօթնեւտասան. | Եօթնեւտասանք. |
| Ս. | Եօթնեւտասնին. | Եօթնեւտասանց. |
| Տ. | Եօթնեւտասնին. | Եօթնեւտասանց. |
| Հ. | զԵօթնեւտասան. | զԵօթնեւտասանս. |
| Բ. | յԵօթնեւտասանէ. | յԵօթնեւտասանց. |
| Գ. | Եօթնեւտասամբ. | Եօթնեւտասամբք. |

## Այսպէս կը հոլովին.

Ութեւտասան. տասն-ութը.
Իննեւտասան. տասն-ինը.

## Քսան.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Քսան. | Քսանք. |
| Ս. | Քսանի. | Քսանից. |
| Տ. | Քսանի. | Քսանից. |
| Հ. | զՔսան. | զՔսանս. |

| | | |
|---|---|---|
| Բ. | ՚ի Քսանէ· | ՚ի Քսանից· |
| Գ. | Քսանիւ· | Քսանիւք· |

Այսպէս կը հոլովին.

Երեսուն, երեսնի, երեսնիւ· Եր———ն.
Քառասուն, քառասնի, քառասնիւ· Ք————ն.
Յիսուն, յիսնի, յիսնիւ· Յէ——ն.
Վաթսուն, վաթսնի, վաթսնիւ· Վ—Թ——ն.
Եօթանասուն, եօթանասնի, եօթանասնիւ, Եօթ—ն————ն.
Ութսուն, ութսնի, ութսնիւ, ——Թ———ն.
Իննսուն, իննսնի, իննսնիւ· Ինն———ն.

## Հարիւր.

| | Եզակի· | Յոգնակի· |
|---|---|---|
| Ո. | Հարիւր· | Հարիւրք· |
| Ս. | Հարիւրոյ· | Հարիւրոց· |
| Տ. | Հարիւրոյ· | Հարիւրոց· |
| Հ. | զՀարիւր· | զՀարիւրս· |
| Բ. | ՚ի Հարիւրոյ· | ՚ի Հարիւրոց· |
| Գ. | Հարիւրով· | Հարիւրովք· |

Այսպէս կը հոլովին.

| | |
|---|---|
| Երկերիւր· Երկ——հ—րէ—ր· | Վեցհարիւր· Վեցհ—րէ—ր· |
| Երեքհարիւր· Երէքհ—րէ—ր· | Եօթնհարիւր· ԵօԹըհ—րէ—ր· |
| Չորեքհարիւր· Չորսհ—րէ—ր· | Ութհարիւր· ——Թըհ—րէ—ր· |
| Հինգհարիւր· ՀԷնգհ—րէ—ր· | Իննհարիւր· Իննըհ—րէ—ր· |

| | Հազար. | | Բիւր, տ——ը հ—զ—ր. | |
|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. | Հազար· | Հազարք· | Բիւր· | Բիւրք· |
| Ս. | Հազարի· | Հազարաց· | Բիւրու· | Բիւրուց· |
| Տ. | Հազարի· | Հազարաց. | Բիւրու· | Բիւրուց· |
| Հ. | զՀազար· | զՀազարս· | զԲիւր· | զԲիւրս· |

Բ. ՚ի Հազարէ. ՚ի Հազարաց. ՚ի Բիւրէ. ՚ի Բիւրուց.
Գ. Հազարաւ. Հազարօք. Բիւրու. Բիւրուք.

44. Բ. Դասական Թուականները գոյականին ԿԱՐԳԸ ԿԱՄ ՔԱՆԵՐՈՐԴ ԸԼԼԱԼԸ կը ցուցնեն, և հետևեալներն են.

## Առաջին.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Առաջին. | Առաջինք. |
| Ս. | Առաջնոյ. | Առաջնոց. |
| Տ. | Առաջնոյ, ջնում. | Առաջնոց. |
| Հ. | զԱռաջին. | զԱռաջինս. |
| Բ. | յԱռաջնմէ, յԱռաջնոյ. | յԱռաջնոց. |
| Գ. | Առաջնով. | Առաջնովք. |

## Առաջներորդ.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Առաջներորդ. | Առաջներորդք. |
| Ս. | Առաջներորդի. | Առաջներորդաց. |
| Տ. | Առաջներորդի, դում. | Առաջներորդաց. |
| Հ. | զԱռաջներորդ. | զԱռաջներորդս. |
| Բ. | յԱռաջներորդէ. | յԱռաջներորդաց. |
| Գ. | Առաջներորդաւ. | Առաջներորդօք. |

Առաջին բառին պէս կը հոլովի.
Վերջին, ջնոյ, ջնում, ջնով. ջինք, ջնոց, ջնովք:

Առաջներորդին պէս կը հոլովին ուրիշ մնացեալ դասական Թուականները, զոր օրինակ .

| | | | |
|---|---|---|---|
| Երկրորդ· | | Եօթնեւտասներորդ· | դի· |
| Երրորդ· | դի· | Ութեւտասներորդ· | դաւ· |
| Չորրորդ· | դաւ· | Իննեւտասներորդ· | դք· |
| Հինգերորդ· | դք· | Քսաներորդ· | դաց· |
| Վեցերորդ· | դաց· | Երեսներորդ· | |
| Եօթներորդ· | | Քառասներորդ· | |
| Ութերորդ· | | Յիսներորդ· | |
| Իններորդ· | դի· | Վաթսներորդ· | |
| Տասներորդ· | դաւ· | Եօթանասներորդ· | |
| Մետասաներորդ· | դք· | Ութսներորդ· | դի· |
| Երկոտասաներորդ· | դաց· | Իննսներորդ· | դաւ· |
| Երեքտասաներորդ· | | Հարիւրերորդ· | դք· |
| Չորեքտասաներորդ· | | Երկերիւրերորդ | դաց· |
| Հնգետասաներորդ· | | Հազարերորդ· | |
| Վեշտասաներորդ· | | Բիւրերորդ, | |

Նմին բացարձակ թուականի վերջը որդ կամ երորդ* մասնիկն աւելցնելով դասական կ'ըլլայ· զոր օրինակ, Երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, տասներորդ, քսաներորդ, հարիւրերորդ, հազարերորդ, եւայլն։

---

* Միերորդ չըսուիր· անոր տեղ առաջին կամ առաջներորդ կամ առաջնորդ կ'ըսուի։ Երկրորդ պէտք է գիտնալ որ դասական թուոյ մը բաղկացընող բոլոր թիւերը դասական վերջաւորութիւն մը կ'առնեն· ուստի 21· 25· 105· 122· 1465· եւ այլն, Հայերէն գրաբար կը կարդացուին տասներորդ առաջներորդ· տասներորդ հինգերորդ· հարիւրերորդ հինգերորդ· հարիւրերորդ տասներորդ երկրորդ· հազարերորդ չորեքհարիւրերորդ վաթսուներորդ հինգերորդ։ Յոլովել հարկ եղած ատեն ալ անոնք միայն յոլովելու է, այսպէս· տասներորդի հինգերորդի· հարիւրորդի տասներորդի երկրորդի· հազարերորդի չորեքհարիւրորդի վաթսուներորդի հինգերորդի։

Ինչպէս մինչև իննը՝ Երրորդ մասնիկը կ'առնեն. մնացեալները երրորդ ալ կրնան վերջաւորիլ, զոր օրինակ. Առաջնորդ, տասնորդ, կամ տասանորդ, յիսնորդ, քառասնորդ, հարիւրորդ, հազարորդ։

45. Գ. Անձներական թուականները՝ բացարձակներուն վրայ եքին* կամ եքեան մասնիկն աւելցնելով կը շինուին, և իրենց ցուցած թուոյն ամէնն ալ կը նշանակեն. զոր օրինակ, Երկոքին՝ երկուքն ալ ըսել է. Երեքին՝ երեքն ալ, Չորեքին՝ չորսն ալ, Տասնեքին՝ տասն ալ, ևայլն։

Անձներական թուականները միայն յոգնակի են, և հետևեալ կերպով կը հոլովին։

Յոգնակի.

| | | |
|---|---|---|
| Ո. | Երկոքին, երկոքեան. | Երեքին, երեքեան. |
| Ս. | Երկոցունց, ցուն. | Երեցունց. |
| Տ. | Երկոցունց. | Երեցունց. |
| Հ. | զԵրկոսին, զերկոսեան. | զԵրեսին, զերեսեան. |
| Բ. | յԵրկոցունց. | յԵրեցունց. |
| Գ. | Երկոքումբք. | Երեքումբք. |

46. Ամենեքին, ամենեքեան կը նշանակէ ամէն ալ, և գոյականաբար միայն կը գործածուի**։

* Երկու թուականը միայն ուրիշ մասնիկով անձներական կ'ըլլայ, ուստի երկոքին ըսուած է ու՛չ թէ երկեքին։

** Ուրիշ երկու տեսակ թուականներ ալ կան, այսինքն [illegible] կամ [illegible] և [illegible] վերջաւորութիւնները։

47 . Թուական ածականներն ալ սովորաբար գոյականէն առջը դրուելով մէկտեղ կը հոլովին ։

Մէ՝ եզակի գոյական կ՚ուզէ . Մնացած Թուականները սովորաբար յոգնակի գոյական կ՚ուզեն , զոր օրինակ .

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Այր մի. | Արք երկու. |
| Ս. | Առն միոյ. | Արանց երկուց. |
| Տ. | Առն միում. | Արանց երկուց. |

---

Կին կամ պատիկ վերջաւորութիւնները Կրկնական կը կոչուին . քանզի քանակութիւն մը Թուական անուանին ցուցուցած Թուոյն չափ կրկնուած կը նշանակեն . զոր օրինակ , կրկին կամ երկպատիկ , քանակութիւն մը երկու անգամ նոյնչափ կրկնուած կը նշանակէ , երեքկին կամ երեքպատիկ , քանակութիւն մը երեք անգամ կրկնուած . չորեքկին կամ չորեքպատիկ՝ քանակութիւն մը չորս անգամ կրկնուած կը նշանակեն ։

Այսպէս կ՚ըլլայ , հնգեկին , վեցկին , եօթնեկին , եօթանասնեկին , և այլն ։

Եակ վերջաւորութիւնները՝ բան մը այսչափ Թուէ կամ հատէ բաղկացած կը նշանակեն . ուստի , երկեակ՝ բան մը երկու Թիւէ կամ հատէ բաղկացած . երրեակ՝ բան մը երեք Թիւէ կամ հատէ , չորեակ՝ չորս Թիւէ կամ հատէ բաղկացած կը նշանակէ ։

Այսպէս կ՚ըլլայ նաև՝ հնգեակ , վեցեակ , եօթնեակ , հնգետասնեակ , և այլն ։

Կին վերջաւորութեան Թուականները , բաց ՚ի կրկին ածականէն , սովորաբար չեն հոլովիր , իսկ պատիկ և եակ վերջաւորութիւնները Բ . Հոլովման պէս կը հոլովին . այսպէս . Եօթնպատիկ , եօթնպատկի , եօթնպատկաւ . Եօթնեակ , եօթնեկի , եօթնեկաւ . և այլն ։

| | | |
|---|---|---|
| Հ. | զԱյր մի. | զԱրս երկուս. |
| Բ. | յԱռնէ միոջէ. | յԱրանց երկուց. |
| Գ. | Արամբ միով. | Արամբք երկուք. |
| | Յոգնակի. | Յոգնակի. |
| Ո. | Արք վեց. | Արք քսան. |
| Ս. | Արանց վեցից. | Արանց քսանից. |
| Տ. | Արանց վեցից. | Արանց քսանից. |
| Հ. | զԱրս վեց. | զԱրս քսան. |
| Բ. | յԱրանց վեցից. | յԱրանց քսանից. |
| Գ. | Արամբք վեցիւք. | Արամբք քսանիւք. |

48. Թուականները, եթէ գոյականէն առաջ դրուին, կրնան մէկտեղ հոլովիլ և չհոլովիլ. զոր օրինակ, հոլովելով՝ Երկու արք. Երկուց արանց. Չորից զինուորաց. Եօթանց սարկաւագաց. Երկոտասանից առաքելոց։ Չհոլովելով՝ հինգ հացիւ, փոխ արանց, երկոտասան առաքելոց, ևայլն։

Մի՝ առաջ ալ դրուի, կը հոլովի. Մի այր, միոյ առն, միով արամբ։

49. Դասականներն ալ գոյականէն ետքը, երբեմն ալ առաջ դրուելով, միշտ եզակի գոյական կ'ուզեն, ու մէկտեղ կը հոլովին, զոր օրինակ. Օր երկրորդ, աւուր երկրորդի, յօրէ երկրորդէ կամ երկրորդոյ աւուր. ի հինգերորդում ամսեան, ևայլն։

Ընձներականները գոյականէն ետքը, երբեմն ալ առաջ դրուելով, միշտ յոգնակի գոյական կ'ուզեն ու մէկտեղ կը հոլովին.

գոր օրինակ. Որդիք Երկրին, որդւոց Երկրացւոց, որդւովք Երկրաւորօք. կամ, Երկրին որդիք, Երկրացւոց որդւոց, Երկրաւորօք որդւովք։

50. Տեսակ մը ածականներ ալ կան որոնք անորոշ կամ մէջակ կը կոչուին, և հետևեալներն են.

Ամենայն. | Այլ.

| | Եզ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|
| Ո. | Ամենայն. | Այլ. | Այլք. |
| Ս. | Ամենայնի. | Այլոյ. | Այլոց. |
| Տ. | Ամենայնի. | Այլում. | Այլոց. |
| Հ. | զԱմենայն. | զԱյլ. | զԱյլս. |
| Բ. | յԱմենայնէ. | յԱյլմէ. | յԱյլոց. |
| Գ. | Ամենայնիւ. | Այլով. | Այլովք. |

Այլ բառին պէս կը հոլովին հետևեալ անորոշ ածականները.

Իւրաքանչիւր, րոյ, րում, րմէ, րով. րք, րոց. Միւս, սոյ, սում, սմէ, սով. սք, սոց։

Ոմն. | Ոք.

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Ոմն. | Ոմանք. | Ոք. | Ոմանք. |
| Ս. | Ուրումն. | Ոմանց. | Ուրուք. | Ոմանց. |
| Տ. | Ումեմն. | Ոմանց. | Ումեք. | Ոմանց. |
| Հ. | զՈմն. | զՈմանս. | զՈք. | զՈմանս. |
| Բ. | յՈւմեմնէ. | յՈմանց. | յՈւմեքէ. | յՈմանց. |
| Գ. | Ոմամբ. | Ոմամբք. | Ոմամբ. | Ոմամբք. |

| | Իմն, Ինչ. | Նոյն. | |
|---|---|---|---|
| | Եզ. և Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. | Իմն, ինչ. | Նոյն. | Նոքին. |
| Ս. | Իրիք. | Նորին. | Նոցին, նոցունց. |
| Տ. | Իմիք. | Նմին. | Նոցին, նոցունց. |
| Հ. | զԻմն, զինչ. | զՆոյն. | զՆոսին. |
| Բ. | յիմեքէ. | 'ի Նմին. | 'ի Նոցունց. |
| Գ. | Իւիք. | Նովին, Նովիմբ. | Նովիմբք, Նոքիմբք. |

Նոյն բառին պէս կը հոլովին, սոյն, դոյն.

| | Ո՞վ Ո՞. | | Որ. | | Զի՞նչ. |
|---|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. | Եզ. |
| Ո. | Ո՞վ, ո՞. | Ո՞յք. | Որ. | Որք. | Զի՞նչ. |
| Ս. | Ո՞յր. | Ո՞յց. | Որոյ. | Որոց. | Է՞ր. |
| Տ. | Ո՞ւմ. | Ո՞յց. | Որում. | Որոց. | Ի՞մ. |
| Հ. | զՈ՞վ, զո՞ | զՈ՞յս. | զՈր. | զՈրս. | Զի՞նչ. |
| Բ. | յՈւմէ՞. | յՈ՞յց. | յՈրմէ. | յՈրոց. | Առ իմէ՞. |
| Գ. | Որո՞վ. | Որո՞վք. | Որով. | Որովք. | Ի՞ւ. |

| | Միմեանց. | Իրերաց. |
|---|---|---|
| | Յոգնակի. | Յոգնակի. |
| Ո. | Չունի. | Չունի. |
| Ս. | Միմեանց. | Իրերաց. |
| Տ. | Միմեանց. | Իրերաց. |
| Հ. | զՄիմեանս. | զԻրեարս. |
| Բ. | 'ի Միմեանց. | յԻրերաց. |
| Գ. | Միմեամբք. | Իրերօք. |

51. Անորոշ անձականներն ալ գոյական.

ներու հետ, սովորաբար առաջ դրուելով կը հոլովին, զոր օրինակ ։

Այր որ, առն որոյ, առն որում, ևն։

Այր ոմն, առն ուրումն, առն ումեմն, յառնէ ումեմնէ, արամբ ոմամբ. կամ՝ Այր ոք, առն ուրուք, առն ումեք, յառնէ ումեքէ. Արք ոմանք, արանց ոմանց, արամբք ոմամբք, զարս ոմանս.

Գործ ինչ, գործոյ իրիք, գործոյ իմիք, 'ի գործոյ իմիքէ, գործով իւիք.

Նոյն* բան, նորին բանի, նմին բանի, 'ի նմին բանէ, նովին բանիւ. Նոյն բանք, նոցին բանից, նովին բանիւք.

Որ տուն, որոյ տան, որում տան, յորմէ տանէ, որով տամբ. Որ տունք, որոց տանց, որովք տամբք։

Ո՞վ կամ ո՞, գոյականաբար կը վարուի. միայն ոք բառին հետ երբ ածական կը հոլովի այսպէս.

Ո՞վ կամ ո՞ ոք, ո՞յր ուրուք, ո՞ւմ ումեք, յումէ՞ ումեքէ։

Զ՞ինչ ալ միայն ինչ բառին հետ երբ ածական կը գործածուի այսպէս.

Զի՞նչ ինչ, է՞ր իրիք, ի՞մ իմիք, ի՞ւ իւիք։

52. Միմեանց, իրերաց, բառերը գոյականաբար կը գործածուին։

---

* Սոյն. Դոյն. Նոյն ածականները միշտ գոյականին նախադաս ըլլալ սովորութիւն է ։

Նոյնպէս որ և ուրիշ հարցական ածականներ գոյականէն առաջ կը դրուին ։

# ԳԼՈՒԽ Բ.

## ԴԵՐԱՆՈՒՆ

53. Դերանուն կ՚ըսուին այն բառերը որ-ոնք խօսքին մէջ առաջուց յիշուած բառի մը տեղ կը դրուին, նոյն բառը չկրկնելու համար. զոր օրինակ. Սմբատ արդար է. ա-նիկա յանցաւորները կը պատժէ. Տեսայ այն մարդը՝ որ քեզի հետ էր: Այս խօսքերուն մէջ անիկա, որ, դերանուն են. քանզի առջինը (անիկա) Սմբատ բառին տեղ դրուած է. իսկ երկրորդը (որ)՝ մարդ բառին տեղ:

54. Դերանունները դէմք ալ կը ցուցնեն. և դէմքը երեք է. առաջին, երկրորդ, երրորդ: Առաջին դէմքն է խօսողը. երկրորդն է ան՝ որուն կը խօսուի. երրորդն է ան՝ որուն վրայով կը խօսուի:

55. Դերանունները չորս տեսակ են. Ան-ձնական, կամ Դիմական, Ցուցական, Ստացական և Յարաբերական:

56. Ա. Անձնական դերանուններն են. Ես, դու՛, աս, դա, նա, ինքն, իւր:

Ես՝ առաջին դէմքի դերանուն է. դու՝ երկրորդ դէմքի. աս, դա, նա, ինքն, իւր՝ երրորդ դէմքի:

Անձնական դերանունները հետևեալ կեր-պով կը հոլովին.

| | Ա. ԴԷՄՔ | | Բ. ԴԷՄՔ | | Գ. ԴԷՄՔ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. | Ես. | Մենք. | Դուն. | Դուք. | Նա. | Նոքա. |
| Ս. | Իմ. | Մեր. | Քո. | Ձեր. | Նորա. | Նոցա. |
| Տ. | Ինձ. | Մեզ. | Քեզ. | Ձեզ. | Նմա. | Նոցա. |
| Հ. | զիս. | զՄեզ. | զՔեզ. | զՁեզ. | զՆա. | զՆոսա. |
| Բ. | յինէն. | ՚ի Մէնջ. | ՚ի Քէն. | ՚ի Ձէնջ. | ՚ի Նմանէ. | ՚ի Նոցանէ. |
| Գ. | Ինեւ. | Մեօք. | Քեւ. | Ձեօք. | Նովաւ. | Նոքօք. |

Գ. ԴԷՄՔ.

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Ինքն. | Ինքեանք. | չ—նի. | Իւրեանք. |
| Ս. | Ինքեան. | Ինքեանց. | Իւր, իւրեան. | Իւրեանց. |
| Տ. | Ինքեան. | Ինքեանց. | Իւր, իւրեան. | Իւրեանց. |
| Հ. | զԻնքն. | զԻնքեանս. | չ—նի. | զԻւրեանս. |
| Բ. | յԻնքենէ | յԻնքեանց. | յԻւրմէ. | յԻւրեանց. |
| Գ. | Ինքեամբ. | Ինքեամբք. | Իւրեւ, իւր-եաւ, իւրեամբ. | Իւրեամբք. |

Սա, դա, դերանունները Նային պէս կը հոլովին։

57. Բ. Ցուցական դերանուններն են՝ Այս, այդ, այն. որոնք հետեւեալ կերպով կը հոլովին.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Այս. | Այս, այսոքիկ. |
| Ս. | Այսր, այսորիկ. | Այսց, այսոցիկ. |
| Տ. | Այսմ, այսմիկ. | Այսց, այսոցիկ. |
| Հ. | զԱյս. | զԱյս, զայսոսիկ. |
| Բ. | յԱյսմ, յայսմանէ. | յԱյսց, յայսցանէ. |
| Գ. | Այսու, այսուիկ. | Այսու, այսոքիւք. |

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ո։ | Այդ։ | Այդք, Այդոքիկ։ |
| Ս։ | Այդր, այդորիկ։ | Այդց, այդոցիկ։ |
| Տ։ | Այդմ, այդմիկ։ | Այդց, այդոցիկ։ |
| Հ։ | զԱյդ։ | զԱյդս, զայդոսիկ։ |
| Բ։ | յԱյդմ, յայդմանէ։ | յԱյդց, յայդցանէ։ |
| Գ։ | Այդու, այդուիկ։ | Այդուք, այդոքիւք։ |

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ո։ | Այն։ | Այնք, այնոքիկ։ |
| Ս։ | Այնր, այնորիկ։ | Այնց, այնոցիկ։ |
| Տ։ | Այնմ, այնմիկ։ | Այնց, այնոցիկ։ |
| Հ։ | զԱյն։ | զԱյնս, զայնոսիկ։ |
| Բ։ | յԱյնմ, յայնմանէ։ | յԱյնց, յայնցանէ։ |
| Գ։ | Այնու, այնուիկ։ | Այնուք, այնոքիւք։ |

Ցուցականներն իւրեն ածական, գոյականներու հետ ալ մէկտեղ հոլովելով կը գործածուին, և թէ առաջ թէ ետքը կրնան գրուիլ։ Եթէ առաջ գրուին՝ կարճ հոլովներն կը գործածուին, եթէ ետքը գրուին՝ երկայններն։ և ան ատեն գոյականին վրայ ս, դ, ն գիրերը կ'աւելնան, զոր օրինակ։

## ԱՅՍ ՏՈՒՆ

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ո։ | Այս տուն։ | Այս տունք։ |
| Ս։ | Այսր տան։ | Այսց տանց։ |
| Տ։ | Այսմ տան։ | Այսց տանց։ |
| Հ։ | զԱյս տուն։ | զԱյս տունս։ |

| | | |
|---|---|---|
| Բ։ | յԱյսմ տանէ։ | յԱյսց տանց։ |
| Գ։ | Այսու տամբ։ | Այսու տամբք։ |

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ու։ | Այդ տուն։ | Այդ տունք։ |
| Ս։ | Այդր տան։ | Այդց տանց։ |
| Տ։ | Այդմ տան։ | Այդց տանց։ |
| Հ։ | զԱյդ տուն։ | զԱյդ տունս։ |
| Բ։ | յԱյդմ տանէ։ | յԱյդց տանց։ |
| Գ։ | Այդու տամբ։ | Այդու տամբք։ |

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ու։ | Այն տուն։ | Այն տունք։ |
| Ս։ | Այնր տան։ | Այնց տանց։ |
| Տ։ | Այնմ տան։ | Այնց տանց։ |
| Հ։ | զԱյն տուն։ | զԱյն տունս։ |
| Բ։ | յԱյնմ տանէ։ | յԱյնց տանց։ |
| Գ։ | Այնու տամբ։ | Այնու տամբք։ |

## ԿԵՐՊԸ ԳՐՈՒԱԾ

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ու։ | Տունս այս։ | Տունքս այսոքիկ։ |
| Ս։ | Տանս այսորիկ։ | Տանցս այսոցիկ։ |
| Տ։ | Տանս այսմիկ։ | Տանցս այսոցիկ։ |
| Հ։ | զՏունս զայս։ | զՏունս զայսոսիկ։ |
| Բ։ | ՚ի Տանէս յայսմանէ։ | ՚ի Տանցս յայսցանէ։ |
| Գ։ | Տամբս այսու իկ։ | Տամբքս այսոքիւք։ |

| | Եզակի։ | Յոգնակի։ |
|---|---|---|
| Ու։ | Տունդ այդ։ | Տունքդ այդոքիկ։ |

| | | |
|---|---|---|
| Ս. | Տանդ այդորիկ. | Տանցդ այդոցիկ. |
| Տ. | Տանդ այդմիկ. | Տանցդ այդոցիկ. |
| Հ. | զՏունդ զայդ. | զՏունսդ զայդոսիկ. |
| Բ. | ՚ի Տանէդ յայդմանէ. | ՚ի Տանցդ յայդցանէ. |
| Գ. | Տամբդ այդուիկ. | Տամբքդ այդոքիւք. |

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ու. | Տունն այն. | Տունքն այնոքիկ. |
| Ս. | Տանն այնորիկ. | Տանցն այնոցիկ. |
| Տ. | Տանն այնմիկ. | Տանցն այնոցիկ. |
| Հ. | զՏունն զայն. | զՏունսն զայնոսիկ. |
| Բ. | ՚ի Տանէն յայնմանէ. | ՚ի Տանցն յայնցանէ. |
| Գ. | Տամբն այնուիկ. | Տամբքն այնոքիւք. |

58. Գ. Ստացական կամ՝ յատկացուցիչ կոչուած դերանուններն են՝ իմ, քո, մեր, ձեր, իւր. Ասոնք հետեւեալ կերպով կը հոլովին.

Եզակի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ու. | Իմ. | Քո. | Մեր. | Ձեր. | Իւր. |
| Ս. | Իմոյ. | Քոյ. | Մերոյ. | Ձերոյ. | Իւրոյ. |
| Տ. | Իմում. | Քում. | Մերում. | Ձերում. | Իւրում. |
| Հ. | զԻմ. | զՔո. | զՄեր. | զՁեր. | զԻւր. |
| Բ. | յԻմմէ. | ՚ի Քումմէ. | ՚ի Մերմէ. | ՚ի Ձերմէ. | յԻւրմէ. |
| Գ. | Իմով. | Քով. | Մերով. | Ձերով. | Իւրով. |

Յոգնակի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ու. | Իմք. | Քոյք. | Մերք. | Ձերք. | Իւրք. |
| Ս. | Իմոց. | Քոց. | Մերոց. | Ձերոց. | Իւրոց. |
| Տ. | Իմոց. | Քոց. | Մերոց. | Ձերոց. | Իւրոց. |
| Հ. | զԻմս | զՔոյս. | զՄերս. | զՁերս. | զԻւրս. |
| Բ. | յԻմոց. | ՚ի Քոց. | ՚ի Մերոց | ՚ի Ձերոց. | յԻւրոց. |
| Գ. | Իմովք. | Քովք. | Մերովք. | Ձերովք. | Իւրովք. |

Ստացականներն ալ, երբ անձական դերանուններէն առաջ կամ ետքը դրուելով, մէկտեղ կը հոլովին, այսպէս.

ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Իմ տուն. | Իմ տունք. |
| Ս. | Իմոյ տան. | Իմոց տանց. |
| Տ. | Իմում տան. | Իմոց տանց. |
| Հ. | զԻմ տուն. | զԻմ տունս. |
| Բ. | յԻմմէ տանէ. | յԻմոց տանց. |
| Գ. | Իմով տամբ. | Իմովք տամբք. |

ԵՏՔԸ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Տուն իմ. | Տունք իմ. |
| Ս. | Տան իմոյ. | Տանց իմոց. |
| Տ. | Տան իմում. | Տանց իմոց. |
| Հ. | զՏուն իմ. | զՏունս իմ. |
| Բ. | ՚ի Տանէ իմմէ. | ՚ի Տանց իմոց. |
| Գ. | Տամբ իմով. | Տամբք իմովք. |

Նոյնպէս կ՚ըլլան միւս ստացականներն ալ։

59. Դ. Յարաբերական դերանունն է որ կամ՚ ո և հետևեալ կերպով կը հոլովի.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Որ, ո. | Որք, ոյք, ոք. |
| Ս. | Որոյ, որո. | Որոց, ոց. |

| | | |
|---|---|---|
| Տ. | Որում, ում. | Որոց, ոյց. |
| Հ. | զՈր, զո. | զՈր, զորս, զոյս. |
| Բ. | յՈրմէ, յումմէ. | յՈրոց, յոյց. |
| Գ. | Որով. | Որովք. |

## ԳԼՈՒԽ Դ.

### ՆԱԽԴԻՐ ԿԱՄ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

60. Նախդիր կամ Նախադրութիւն կ'ըսուին այն բառերը որոնք գործածութեան մը պարագաները, զոր օրինակ՝ տեղը, ժամանակը, եղանակը, պատճառը, կը ցուցնեն։

61. Նախադրութիւնները մինակ չեն գործածուիր. այլ իրենցմէ ետքը բառ մը կ'ուզեն, ապա թէ ոչ իմաստ մը չեն տար. զոր օրինակ, վրան, համար, նախադրութիւն է, և առանձին իմաստ մը չի տար. բայց երբ կ'ըսեմ, Վրան Աստուծոյ, Աստուծոյ համար, Վրան Սիրոյ, սիրոյ համար, իմաստ մը կ'իմանամ.

62. Նախադրութեան ուզած բառը նախադրութեան խնդիր կը կոչուի, ուստի վերի օրինակներուն մէջ, Աստուծոյ, Սիրոյ, բառերը վրան նախադրութեան խնդիրն են։

63. Գլխաւոր նախադրութիւնները հետեւեալներն են.

է, յ, ջ, ը ––, ըն, ըփ. ատոնք նախդիր ալ կ'ըսուին։

Դարձեալ,

1. Տեղւոյ պարագայ ցուցնող կամ ո՞–ւր հարցման պատասխան եղող նախադրութիւններ.

Առաջի, ––ջևը.

Առ ընթեր. } +–կը.
Առ երի. }

Արտաքոյ, դ––ր–ը.

Զկնի } ·ևջը
Զհետ }

'Ի մէջ } ·ևջը.
'Ի միջի }

'Ի ներքոյ, ներ–ը.

'Ի վեր,

'Ի վեր քան զ } բանէ մը վէր.
'Ի վերոյ քան զ }

'Ի վերայ, վր–ն.

Հանդէպ } դէմ–ջը.
Յանդիման }

Յետոյ, եփէն.

Շուրջ զ. բոլորտիքը.

2. Ժամանակի պարագայ ցուցնող կամ ե՞րբ հարցման պատասխան եղող նախադրութիւններ.

Յառաջ քան զ } բանէ մը ––ջ.
Նախ քան զ }

Յետ, } եփքը։
Յետոյ, }

3. Թէ տեղւոյ և թէ ժամանակի պարա-գայ ցուցնող.

Մինչև 'ի } Մինչ. ինչուան.
Մինչև ց }

4. Եղանակի պարագայ ցուցնող կամ ի՞նչպէս հարցման պատասխան եղող նա-խադրութիւններ.

'ի ձեռն, ձեռքովը միջոցովը.

Ընդդէմ } ընդդէմ.
Հակառակ }

Հանդերձ, հետը, մէկտեղ.

Փոխանակ, տեղը.

5. Պատճառի նպատակի պարագայ ցու-ցնող կամ ինչո՞ւ համար. ի՞նչ նպատակով հարց-ման պատասխան եղող նախադրութիւններ.

Առ 'ի }
Վասն } համար, պատճառաւ.
Յաղագս }
Սակս }

## ԳԼՈՒԽ Ե.

### ԲԱՅ

64. Բայ կ'ըսուին այն բառերը որոնք ընել կամ ըլլալ կը ցուցնեն. զոր օրինակ, Սիրեմ, կը սիրեմ. Շրջիմ, կը պտտիմ, բան մը ընել կը ցուցնեն. Եմ, եմ. Հիւանդանամ, կը հիւընդնամ, բան մը ըլլալ կը ցուցնեն. ուստի բայ են։

65. Բայերը երեք տեսակ են. Էական բայ, Ներգործական բայ, և Չէզոք բայ ։

Էական բայն է Եմ ։

Ներգործական բայերը շատ են, և ամեն ներգործական բայ կրաւորական կ'ունենայ ։

Ներգործականը գործողութիւնն ընել կը ցուցնէ. Կրաւորականը գործողութիւնը կրել (քաշվիլ) կը ցուցնէ. զոր օրինակ, Սիրեմ. կը սիրեմ, Ներգործական է. Սիրիմ, կը սիրուիմ, Կրաւորական է ։

Չէզոք բայերէն ոմանք ընել կը ցուցնեն. ինչպէս՝ Շրջիմ, Մտանեմ, Երթամ. ոմանք ալ ըլլալ կը ցուցնեն, զոր օրինակ, Հիւանդանամ, Ծնանիմ, Մեծանամ ։ Բայց Չէզոք բայերը կրաւորական չեն կրնար ունենալ ։

66. Բայերն ունին Թիւ, Դէմք, Ժամանակ և Եղանակ ։

67. Թիւը՝ եզակին և յոգնակին է. զոր օրինակ. Սիրեմ, սիրես, սիրէ, կը սիրեմ, կը սիրես, կը սիրէ, եզակի են. Սիրեմք, սիրէք, սիրեն, կը սիրենք, կը սիրէք, կը սիրեն, յոգնակի են ։

68. Դէմքը երեք է, առաջին, երկրորդ, երրորդ. զոր օրինակ, սիրեմ, կը սիրեմ, առաջին դէմք է. սիրես, կը սիրես, երկրորդ դէմք է. սիրէ, կը սիրէ, երրորդ դէմք է ։ Նոյնպէս ալ յոգնակիին մէջ ։

69. Ժամանակը բուն երեք է. Ներկայ, Անց-

եալ, Ապառնի ։ Ներկան՝ հիմակուանը կը ցուցընէ, զոր օրինակ, սիրեմ, կը սիրեմ, ներկայ է ։ Անցեալն՝ անցածը կը ցուցնէ, զոր օրինակ, սիրեցի, սիրեցի, անցեալ է ։ Ապառնին՝ գալիքը կը ցուցնէ, զոր օրինակ, սիրեցից, պիտի սիրեմ, ապառնի է ։

Անցեալը երկու է. Անկատար անցեալ որ է սիրէի, կը սիրէի. և Կատարեալ անցեալ որ է սիրեցի, սիրեցի ։

70. Եղանակը չորս է. Սահմանական, Հրամայական, Ստորադասական և Դերբայ ։

Սահմանականը, Հրամայականը և Ստորադասականը դէմք ունին, և դիմաւոր բայ կը կոչուին. իսկ Դերբայը դէմք չունի, ուստի և անդէմ բայ կը կոչուի ։

Դերբայը երեք է. Անորոշ դերբայ, Անցեալ դերբայ և Ապառնի դերբայ. զոր օրինակ Սիրել՝ անորոշ դերբայ է. Սիրեալ՝ անցեալ դերբայ է. Սիրելոց՝ ապառնի դերբայ ։

71. Բային մէջ ինչ թիւ, ինչ դէմք, ինչ ժամանակ և ինչ եղանակ ըլլալը՝ բային վերջաւորութեանը փոխուելէն կը ճանչցուի ։

Թիւ, դէմք, ժամանակ և եղանակ ցուցընելու համար բային վերջաւորութեանը փոխուելուն՝ Խոնարհումն կ'ըսուի ։

72. Խոնարհումը, այսինքն՝ բայերուն վերջաւորութեան կերպը, չորս է ։ Բայերէն ոմանք եմ կը վերջաւորին, զոր օրինակ, սի-

բեմ, հատանեմ. ոմանք եմ կը վերջաւորին, զոր օրինակ, խօսիմ, ուսանիմ. ոմանք ամ կը վերջաւորին, զոր օրինակ, ազամ, խոստանամ. ոմանք ալ ում կը վերջաւորին, զոր օրինակ, թողում, ընթեռնում:

73. Բայերուն մեծ մասը կանոնաւոր է, ոմանք ալ անկանոն են:

## 74. ԷԱԿԱՆ ԲԱՅ

### ԵՄ*

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

Դէմք.

Եզ. Ա. Եմ. Բ. Ես. Գ. Է.

Յք. Ա. Եմք. Բ. Էք. Գ. Են.

Անկատար անցեալ.

Եզ. Ա. Էի. Բ. Էիր. Գ. Էր.

Կատարեալ անցեալ.

Դէմք.

Յք. Ա. Էաք. Բ. Էիք. Գ. Էին.

Եզ. Ա. Եղէ. Բ. Եղեր. Գ. Եղեւ.

Ապառնի.

Յք. Ա. Եղաք. Բ. Եղէք. Գ. Եղեն.

---

* Եմ բային բուն հրամայականն է էր. էրուք. էք. բայց ասոնք ողջ բառին հետ գործածուած են. Ողջ էր, ողջ էք, ողջ էրուք:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ա. Եղէց. | | Ա. Եղիցուք. |
| Եզ. | Բ. Եղիցիս. | Յգ. | Բ. Եղիջիք. |
| | Գ. Եղիցի. | | Գ. Եղիցին. |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Դէմք. | | Դէմք. | |
| Եզ. | Բ. Լեր, եղիջիր, լիջիր* | Յգ. | Բ. Լերուք, եղերուք, |
| | Մի լինիր. | | Լիջիք, Մի լինիք. |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. Իցեմ. | | Ա. Իցեմք. |
| Եզ. | Բ. Իցես. | Յգ. | Բ. Իցէք. |
| | Գ. Իցէ. | | Գ. Իցեն. |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Անդէմ. Լինել.
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Անդէմ. Լեալ.
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Անդէմ. Լինելոց.

---

## ԿԱՆՈՆԱՒՈՐ ԲԱՅԵՐ

### ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

75. Առաջին լծորդութեան այսինքն՝ եմ վերջաւորած բայերը երկու ձև ունին. եմ և անեմ. զոր օրինակ. սիրեմ, հաստանեմ:

Ա. ՁԵՒ — Բ. ՁԵՒ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Դէմք. | Ներկայ. | |
| | Ա. Սիր-եմ. | Հաստ-անեմ. |
| Եզ. | Բ. Սիր-ես. | Հաստ-անես. |
| | Գ. Սիր-է. | Հաստ-անէ. |

---

* Եղանիմ, լինիմ, գոմ բայերը Կրական բայ չեն, Չէզոք բայեր են. ասոնց խոնարհումը տես Անկանոն բայերուն մէջ:

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Սիր-եմք. | Հատ-անեմք. |
| Յգ. | Բ. | Սիր-էք. | Հատ-անէք. |
| | Գ. | Սիր-են. | Հատ-անեն. |

Դէմք. Անկատար անցեալ։

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Սիր-էի. | Հատ-անէի. |
| Եզ. | Բ. | Սիր-էիր. | Հատ-անէիր. |
| | Գ. | Սիր-էր. | Հատ-անէր. |
| | Ա. | Սիր-էաք. | Հատ-անէաք. |
| Յգ. | Բ. | Սիր-էիք. | Հատ-անէիք. |
| | Գ. | Սիր-էին. | Հատ-անէին. |

Կատարեալ անցեալ։

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Սիր-եցի. | Հատ-ի. |
| Եզ. | Բ. | Սիր-եցեր. | Հատ-եր. |
| | Գ. | Սիր-եաց. | Հատ կամ եհատ. |

Դէմք.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Սիր-եցաք. | Հատ-աք. |
| Յգ. | Բ. | Սիր-եցէք. | Հատ-էք. |
| | Գ. | Սիր-եցին. | Հատ-ին. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Սիր-եցից. | Հատ-ից. |
| Եզ. | Բ. | Սիր-եսցես. | Հատ-ցես. |
| | Գ. | Սիր-եսցէ. | Հատ-ցէ. |
| | Ա. | Սիր-եսցուք. | Հատ-ցուք. |
| Յգ. | Բ. | Սիր-եսջիք*. | Հատ-ջիք. |
| | Գ. | Սիր-եսցեն. | Հատ-ցեն. |

* Բոլոր բայերուն ապառնի յոգնակի երկրորդ դէմքը միանգամայն հրամայական է. ուստի սիրեսջիք, հատջիք, խօսե.

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Եզ. Բ. | Սիր-եա, | Հատ, |
| | մի Սիր-եր. | մի Հատ-աներ. |
| Յգ. Բ. | Սիր-եցէք, | Հատ-էք, |
| | մի Սիր-էք. | մի Հատ-անէք. |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Եզ. Ա. | Սիր-իցեմ. | Հատ-անիցեմ. |
| Եզ. Բ. | Սիր-իցես. | Հատ-անիցես. |
| Եզ. Գ. | Սիր-իցէ. | Հատ-անիցէ. |
| Յգ. Ա. | Սիր-իցեմք. | Հատ-անիցեմք. |
| Յգ. Բ. | Սիր-իցէք. | Հատ-անիցէք. |
| Յգ. Գ. | Սիր-իցեն. | Հատ-անիցեն. |

| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. | Սիր-ել. | Հատ-անել. |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. | Սիր-եալ*. | Հատ-եալ. |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. | Սիր-ելոց. | Հատ-անելոց. |

Նոյնց պէս կը հոլովին հետեւեալ կանո-նաւոր բայերը.

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

Ազատ-եմ. Տես-անեմ.

---

ձէ՛, ոռոձէ՛, և այլն. սիրեցէք. կարեցէք. խօսեցէք ալ կը նշանակեն։ Նոյնպէս վերջին * գիրը ըի փոխուելով հրամայական եղակին կ'ըլլայ. ուտի կ'ըսուի. սիրեաձէր. հոռձէր՝ խօսեաձէր, ոռոձէր, և այլն. եւ՝ սիրեա, հատ. խօսեաց. ուտիր. կը նշանակեն։

* Այս ըմբռնութեան առ ձեւին, այսինքն սիրեմ ին ալս խոնարհող բայերէն ոմանց Անցեալ ընդունելութիւնը էլէւ ալ կ'ըլլայ. զոր օրինակ. սիրելեւ. հոռլելեւ։ Այսպէս ալ ապառնի գիտնալ որ տակից անխտիր ամէն բայի համար չէ. շատ խորթ կ'ըլլայ ըսել ապառնեցեալ, բժշկեցեալ. և այլն։

| | |
|---|---|
| Թմչկ-եմ. | Թեկ-անեմ. |
| Գան-եմ. | Արկ-անեմ. |

ՉԷԶՈՔ

| | |
|---|---|
| Ամաչ-եմ. | Անց-անեմ. |
| Գոչ-եմ. | Հաս-անեմ. |
| Ննջ-եմ. | Ել-անեմ. |

76. Առ լծորդութեան Առաջին ձևին, այսինքն էմ վերջաւորութեաններուն տակ՝ քանի մը -նէմ վերջաւորութեան բայեր կան. ինչպէս դարմանէմ, ժամանէմ, սերմանէմ. բայց ասոնց արմատները դարման, ժաման, սերման, ըլլալուն համար՝ էմ վերջաւորութեան բայեր են, ոչ թէ-նէմ:

77. Նոր Հայկաբանակ՝ Երկրորդ ձևին, այսինքն -նէմ վերջաւորութեաններուն տակ՝ քանի մը էմ վերջաւորութեան բայեր կը գտնուին. ինչպէս, ածէմ, բերէմ, հանէմ. ասոնց նախար-ըլը, ապառնին ու հրամայականը հասանեմին պէս կ՚ըլլան. բերի, բերիր, բեր. ածի, ածիր, ած. հանի, հանիր, հան. փոխանակ՝ բերեցի, բերեցիր, բերէ. ածեցի, ածեցիր, ածէ. հանեցի, հանեցիր, հանէ, ըլլալու:

78. Առ լծորդութեան Երկրորդ ձևին, այսինքն հատանեմին պէս խոնարհող բայերուն կատարեալ եղանակի երրորդ դէմքին ու հրամայականը՝ բային արմատն է: Ուստի խոնարհման ընթացքին մէջ է ի, ը ի. և ու—ի փոխուած ձայնաւորներին՝ արմատին մէջ ի-

րենց արմատական գիրը նորէն կ՚առնեն. զոր օրինակ.

| | Կատ. Գ. Դէմ. | | | Հրմ. |
|---|---|---|---|---|
| Գտանեմ. | գիտ. | կամ | եգիտ. | գիտ. |
| Մոռանամ. | մոռաց. | » | եմոռաց. | մոռաց. |
| Մտանեմ. | մուտ. | » | եմուտ. | մուտ. |
| Կալանեմ. | կալ. | » | եկալ. | կալ. |
| Անէծանեմ. | անէծ. | » | | անէծ. |
| Դիզանեմ. | դէզ. | » | եդէզ. | դէզ. |
| Զօրացուցանեմ. | զօրացոյց. | | | |
| Կորուսանեմ. | կորոյս. | | | |

79. Հատանեմին պէս խոնարհող բայերուն կատարեալ եզակի երրորդ դէմքին վրայ է գիրն ալ կրնայ դրուիլ. երբ արմատը բաղաձայնով սկսած միավանկ է. զոր օրինակ.

| | Կատ. Գ. Դէմ. |
|---|---|
| Հատանեմ. | է-հատ. |
| Մտանեմ. | է-մուտ. |
| Հասանեմ. | է-հաս. |

Իսկ ձայնաւորով սկսող միավանկներէն մինակ ալ սկսողներուն նոյն կատարեալ եզակի Գ. դէմքին վրայ է գիրը կրնայ դրուիլ զոր օրինակ.

| | Կատ. Գ. Դէմ. |
|---|---|
| Արկանեմ. | է-արկ. |
| Ածեմ. | է-ած. |

Բայց բաղձականներուն վրայ գրի յաւելուած չըլլար. ուստի չըսուիր.

| | Կտր. Գ. Դէմ. |
|---|---|
| Անիծանեմ. | է — անէծ. |
| Զօրացուցանեմ. | է — զօրացոյց. |
| Կորուսանեմ. | է — կորոյս. |

Նոյնպէս ա գրէն զատ ուրիշ որ և իցէ ձայնաւորով սկսող միավանկներուն վրայ ալ յաւելուած չըլլար. ուստի չըսուիր.

| | Կտր. Գ. Դէմ. |
|---|---|
| Ելանեմ. | է — ել. |
| Եղծանեմ. | է — եղծ. |
| Իջանեմ. | է — էջ. եւայլն |

Հարկանեմ բային կ գիրը արմատական ժամանակներուն, այսինքն կատարեալին, ապառնոյն, հրամայականին և անցեալ դերբային մէջ կը կորսուի. զոր օրինակ.

| | Կտր. | Ապռ. | Հրմ. | Անց. դեր. |
|---|---|---|---|---|
| Հարկանեմ, | Հարի, | Հարից, | Հար, | Հարեալ. |
| Փոխանակ | Հարկի, | Հարկից. | Հարկ, | Հարկեալ. |

Զարկանեմ բային կ գիրը բնաւ չկորսուիր.

## ԵՐԿՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

80. Այս լծորդութեան բայերն ալ երկու ձև ունին, էմ և անէմ. զոր օրինակ. խօսէմ. ուսանէմ.

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| Դէմք. | | Ներկայ. | |
|---|---|---|---|
| | Ա. | Խօս–իմ. | Ուս–անիմ. |
| Եզ. | Բ. | Խօս–իս. | Ուս–անիս. |
| | Գ. | Խօս–ի. | Ուս–անի. |
| | Ա. | Խօս–իմք. | Ուս–անիմք. |
| Յգ. | Բ. | Խօս–իք. | Ուս–անիք. |
| | Գ. | Խօս–ին. | Ուս–անին. |

Անկատար անցեալ

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Խօս–էի. | Ուս–անէի. |
| Եզ. | Բ. | Խօս–էիր. | Ուս–անէիր. |
| | Գ. | Խօս–էր. | Ուս–անէր. |
| | Ա. | Խօս–էաք. | Ուս–անէաք. |
| Յգ. | Բ. | Խօս–էիք. | Ուս–անէիք. |
| | Գ. | Խօս–էին. | Ուս–անէին. |

Կատարեալ անցեալ

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Խօս–եցայ. | Ուս–այ. |
| Եզ. | Բ. | Խօս–եցար. | Ուս–ար. |
| | Գ. | Խօսեցաւ. | Ուս–աւ. |
| | Ա. | Խօս–եցաք. | Ուս–աք. |
| Յգ. | Բ. | Խօս–եցայք. | Ուս–այք. |
| | Գ. | Խօս–եցան. | Ուս–ան. |

| Դէմք. | | Ապառնի. | |
|---|---|---|---|
| | Ա. | Խօս–եցայց. | Ուս–այց. |
| Եզ. | Բ. | Խօս–եսցիս. | Ուս–ցիս. |
| | Գ. | Խօս–եսցի. | Ուս–ցի. |

Ա. խօս-եսցուք. Ուս-ցուք.
Յգ. Բ. խօս-եսջիք. Ուս-ջիք.
Գ. խօս-եսցին. Ուս-ցին.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ. Բ. խօս-եաց, Ուս-իր,
մի խօս-իր. մի Ուս-անիր.
Յգ. Բ. խօս-եցարուք, Ուս-արուք,
մի խօս-իք, մի Ուս-անիք.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա. խօս-իցիմ. Ուս-անիցիմ.
Եզ. Բ. խօս-իցես. Ուս-անիցես.
Գ. խօս-իցէ. Ուս-անիցէ.

Ա. խօս-իցուք. Ուս-անիցուք.
Յգ. Բ. խօս-իջիք. Ուս-անիջիք.
Գ. խօս-իցեն. Ուս-անիցեն.

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. խօս-ել*. Ուս-անել.
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. խօս-եալ. Ուս-եալ.
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. խօս-ելոց. Ուս-անելոց.

Նոյն պէս կը խոնարհին հետեւեալ կանո-նաւոր բայերը:

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

Բարբառ-իմ. Աղ-անիմ.

---

* Պէտք է գիտնալ որ լաւ ընտիր մատենագրաց մէջ մի-ջաւորած բայերուն անորոշ դերբայը եւ կ'ըլլայ. ասոր փո-խանակ ըսելու սիրել խօսել. ընակել ուսանել. պէտք է ըսել՝ սիրել խօսել ընակել ուսանել:

Խոստովան-իմ. Ծն-անիմ.
Համար-իմ. Ուս-անիմ.

## ՉԷԶՈՔ

Աշխատ-իմ. Անկ-անիմ.
Երեւ-իմ. Մեռ-անիմ.
Դադար-իմ. Սն-անիմ.

81. Աս լծորդութեան Առաջին ձեւին, այսինքն իմ վերջաւորութիւններուն տակ՝ քանի մը անիմ վերջաւորուած բայեր կ'երթան. ինչպէս, խոստովանիմ, հաւանիմ. բայց ասոնց արմատները խոստովան, հաւան ըլլալուն համար՝ իմ վերջաւորուած բայեր են, և ոչ անիմ:

82. Ասոր հակառակ անիմ վերջաւորուածներուն տակ՝ քանի մը իմ վերջաւորուածներ կան, զոր օրինակ, նստիմ բայը որ կ'ըլլայ նստայ, նստայց, նիստ, ուսանիմ ին պէս, փոխանակ՝ խօսիմ ին պէս՝ նստեցայ, նստեցայց, նստեցայ ըլլալու:

83. Աս լծորդութեան Երկրորդ ձեւին տակ կան քանի մը բայեր, որոնց հրամայականին յոգնակին, երուք կ'ըլլայ. զոր օրինակ, ագանիմ, ագերուք. անկանիմ, անկերուք. փոխանակ՝ ագարուք, անկարուք ըլլալու:

## ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

84. Աս լծորդութեան բայերն ալ երկու ձեւ ունին, ամ և անամ. զոր օրինակ, աղամ, ատանամ:

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| Դէմք. | | Ներկայ. | |
|---|---|---|---|
| Եզ. | Ա. | Աղ—ամ. | Ստ—անամ. |
| | Բ. | Աղ—աս. | Ստ—անաս. |
| | Գ. | Աղ—այ. | Ստ—անայ. |
| Յգ. | Ա. | Աղ—ամք. | Ստ—անամք. |
| | Բ. | Աղ—այք. | Ստ—անայք. |
| | Գ. | Աղ—ան. | Ստ—անան. |

### Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ա. | Աղ—այի. | Ստ—անայի. |
| | Բ. | Աղ—այիր. | Ստ—անայիր. |
| | Գ. | Աղ—այր. | Ստ—անայր. |
| Յգ. | Ա. | Աղ—այաք. | Ստ—անայաք. |
| | Բ. | Աղ—այիք. | Ստ—անայիք. |
| | Գ. | Աղ—ային. | Ստ—անային. |

### Կատարեալ անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ա. | Աղ—ացի. | Ստ—ացայ. |
| | Բ. | Աղ—ացեր. | Ստ—ացար. |
| | Գ. | Աղ—աց. | Ստ—ացաւ. |
| Յգ. | Ա. | Աղ—ացաք. | Ստ—ացաք. |
| | Բ. | Աղ—ացէք. | Ստ—ացայք. |
| | Գ. | Աղ—ացին. | Ստ—ացան. |

### Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ա. | Աղ—ացից. | Ստ—ացայց. |
| | Բ. | Աղ—ասցես. | Ստ—ասցիս. |
| | Գ. | Աղ—ասցէ. | Ստ—ասցի. |

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Աղ–ասցուք. | Ստ–ասցուք. |
| Յգ. | Բ. | Աղ–ասջիք. | Ստ–ասջիք. |
| | Գ. | Աղ–ասցեն. | Ստ–ասցին. |

Դէմք. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Բ. | Աղ–ա, | Ստ–ացիր, |
| | | մի Աղ–ար. | մի Ստ–անար. |
| Յգ. | Բ. | Աղ–ացէք, | Ստ–ացարուք, |
| | | մի Աղ–աք. | մի Ստ–անայք. |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Աղ–այցեմ. | Ստ–անայցեմ. |
| Եզ. | Բ. | Աղ–այցես. | Ստ–անայցես. |
| | Գ. | Աղ–այցէ. | Ստ–անայցէ. |
| | Ա. | Աղ–այցեմք. | Ստ–անայցեմք. |
| Յգ | Բ. | Աղ–այցէք. | Ստ–անայցէք. |
| | Գ. | Աղ–այցեն. | Ստ–անայցեն. |

| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ. | Աղ–ալ. | Ստ–անալ. |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. | Աղ–ացեալ. | Ստ–ացեալ. |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. | Աղ–ալոց. | Ստ–անալոց. |

Նոյն այս կը խոնարհին հետեւեալ բայերը :

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | |
|---|---|
| Կարդ–ամ. | Խոստ–անամ. |
| Հաւատ–ամ. | Գող–անամ. |
| Ողբ–ամ. | Մերկ–անամ. |

ՁԷԶՈՔ

| | |
|---|---|
| Գն–ամ. | Գոհ–անամ. |
| Խաղ–ամ. | Հեռ–անամ. |
| Փութ–ամ. | Կուր–անամ. |

85. Քանի մը ամ վերջաւորուած բայեր կատարեալին և ապառնւոյն մէջ անամ վերջաւորութիւններուն պէս, իսկ հրամայականին մէջ ամ վերջաւորութիւններուն պէս կ'ըլլան, զոր օրինակ.

| | | | |
|---|---|---|---|
| Հողամ, | Հողացայ, | Հողացայց, | Հողա. |
| Յուսամ, | Յուսացայ, | Յուսացայց, | Յուսա. |
| Որսամ, | Որսացայ, | Որսացայց, | Որսա. |
| Ծնծամ, | Ծնծացայ, | Ծնծացայց, | Ծնծա. |

Փոխանակ՝ հողացի, հողացից. յուսացի, յուսացից եւայլն, ըսելու:

86. Նաեւ հակառակ, անամին պէս խոնարհող բայերէն ոմանց հրամայականը ամին պէս ալ կըլլայ, զոր օրինակ:

| | Հրամ. |
|---|---|
| Խմանամ. | Խմա կամ Խմացէք. |
| Լուանամ. | Լուա » Լուացէք. |
| Մոռանամ. | Մոռա » Մոռացէք. |

87. Նո լծորդութեան Երկրորդ ձևին տակ կան քանի մը ենամ վերջաւորուած բայեր, որոնք ե գիրը բոլոր խոնարհման մէջ կը պահեն. զոր օրինակ. արբենամ, արբենայի. արբեցայ. արբեցայց, արբեցէք, արբենալ, արբեցեալ, եւայլն:

ՉՈՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

88. Նո լծորդութեան բայերն ալ երկու-

ձև ունին, որոնք կատարեալին, ապառնույն ու հրամայականին մէջ կը տարբերին։

Ա· ՁԵՒ | Բ· ՁԵՒ

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | Դէմք· | | Ներկայ· |
|---|---|---|---|
| | Ա· | Թող–ում· | Հան–ում· |
| Եզ· | Բ· | Թող–ուս· | Հան–ուս· |
| | Գ· | Թող–ու· | Հան–ու· |
| | Դէմք· | | |
| | Ա· | Թող–ումք· | Հան–ումք· |
| Յգ· | Բ· | Թող–ուք· | Հան–ուք· |
| | Գ· | Թող–ուն· | Հան–ուն· |

Անկատար անցեալ·

| | | | |
|---|---|---|---|
| | Ա· | Թող–ուի· | Հան–ուի· |
| Եզ· | Բ· | Թող–ուիր· | Հան–ուիր· |
| | Գ· | Թող–ույր· | Հան–ույր· |
| | Ա· | Թող–ուաք· | Հան–ուաք· |
| Յգ· | Բ· | Թող–ուիք· | Հան–ուիք· |
| | Գ· | Թող–ուին· | Հան–ուին· |

Կատարեալ անցեալ·

| | | | |
|---|---|---|---|
| | Ա· | Թող–ի· | Հան–այ· |
| Եզ· | Բ· | Թող–եր· | Հան–ար· |
| | Գ· | Թող, եթող· | Հան–աւ· |
| | Ա· | Թող–աք· | Հան–աք· |
| Յգ· | Բ· | Թող–էք· | Հան–այք· |
| | Գ· | Թող–ին· | Հան–ին· |

Աղ––նէ.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Թող–ից. | Հան–այց. |
| Եզ. | Բ. | Թող–ցես. | Հան–ցիս. |
| | Գ. | Թող–ցէ. | Հան–ցի. |
| | Ա. | Թող–ցուք. | Հան–ցուք. |
| Յգ. | Բ. | Թող–ջիք. | Հան–ջիք. |
| | Գ. | Թող–ցեն. | Հան–ցին. |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Բ. | Թող, | Հան–իր, |
| | | մի Թող–ուր. | մի Հան–ուր. |
| Յգ. | Բ. | Թող–էք, | Հան–արուք. |
| | | մի Թող–ուք. | մի Հան–ուք. |

Դէմ. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Թող–ուցում. | Հան–ուցում. |
| Եզ. | Բ. | Թող–ուցուս. | Հան–ուցուս. |
| | Գ. | Թող–ուցու. | Հան–ուցու. |
| | Ա. | Թող–ուցումք. | Հան–ուցումք. |
| Յգ. | Բ. | Թող–ուցուք. | Հան–ուցուք. |
| | Գ. | Թող–ուցուն. | Հան–ուցուն. |

| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ. | Թող–ուլ. | Հան–ուլ. |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. | Թող–եալ. | Հան–եալ. |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. | Թող–լոց. | Հան–լոց. |

Նոյն պէս կը խոնարհին հետեւեալ բայերը ։

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | |
|---|---|
| Արգել–ում. | Զգեն–ում. |
| Հեղ–ում, | Ընթեռն–ում. |

ՉԵԶՈՔ

Յեն–ում.

89. Ո՛ր լծորդութեան Առաջին ձեւին տակ դասող բայերուն ալ արմատը՝ կատարեալին երրորդ դէմքն ու հրամայականն է։

90. Ո՛ր բայերուն ալ բաղաձայնով սկսող միավանկներուն կատարեալ եզակի երրորդ դէմքին վրայ է գիրը կ'աւելնայ, զոր օրինակ. Թողում, կատար. Եթող. Հեղում, կատար. Եհեղ։ Իսկ ա գրով սկսող միավանկներուն վրայ է գիրը կ'աւելնայ. զոր օրինակ. առնում, էառ։ Բայց բազմավանկներուն, և ա էն զատ ուրիշ ձայնաւորով սկսող միավանկներուն վրայ գրի յաւելուած չըլլար. ուստի չըսուիր, յաւելու–մ, է յաւել. արգելու–մ, էարգել. ընկենու–մ, էընկէց։

91. Ո՛ր լծորդութեան նում վերջաւորուածներէն ոմանց ն գիրը՝ արմատական ժամանակներուն, այսինքն կատարէալին, ապառնոյն, հրամայականին ու անցեալ դերբային մէջ ց ի կը փոխուի. զոր օրինակ.

| . | Կատր. | Ապառ. | Հրմ. | Անց. դերբ. |
|---|---|---|---|---|
| Լնում, | Լցի, | Լցից, | Լից, | Լցեալ. |
| Խնում, | Խցի, | Խցից, | Խից, | Խցեալ. |
| Ընկենում, | Ընկեցի, | Ընկեցից, | Ընկեա, | Ընկեցեալ. |

Բայց ասոնց արմատներն են,

Լէց, Խէց, Ընկէց։

Նոյնպէս հետեւեալներն.

| | Կատր. | Ապառ. | Հրմ. | Անց. դերբ. |
|---|---|---|---|---|
| Զգենում, | Զգեցայ, | Զգեցայց, | Զգեցիր, | Զգեցեալ. |

Ընթեռնում, թերցայ, թերցայց, թերցիր, թերցեալ·
Յենում, յեցայ, յեցայց, յեցիր, յեցեալ·

Առնում և զբօսնում բայերը ն գիրն արմատական ժամանակներուն մէջ կը կորսնցնեն, զոր օրինակ ·

| | Կտր· | Ապռ· | Հրմ· | Անց· դերբ· |
|---|---|---|---|---|
| Առնում, | Առի, | Առից, | Առ, | Առեալ· |
| Զբօսնում, | Զբօսայ, | Զբօսայց, | Զբօսիր, | Զբօսեալ· |

---

## ՉՈՐՍ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆՑ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԸՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

92· Ամէն լծորդութեան տակ ներգործական բայեր կը գտնուին։

Ներգործական բայերը կրաւորական կ'ըլլան հետեւեալ կերպով·

93· Առաջին լծորդութեան, այսինքն էմ և անէմ վերջաւորուած ներգործական բայերուն կրաւորականը՝ Երկրորդ լծորդութեան, այսինքն՝ խօսիմ և --անիմին պէս կ'ըլլայ, այսինքն՝ սիրէմը սիրիմ ընելով՝ խօսիմին պէս խոնարհելու է. Հաստանէմն ալ հաստանիմ ընելով՝ --անիմին պէս խոնարհելու է. զոր օրինակ·

| | Կտր· | Ապռ· | Հրմ· | Ստորադ· |
|---|---|---|---|---|
| Սիրէմ, | Սիրեցայ, | Սիրեցայց, | Սիրեաց, | Սիրեցէմ· |
| Հաստանէմ, | Հաստայ, | Հաստայց, | Հաստիր, | անեցէմ· |

94. Երկրորդ լծորդութեան, այսինքն՝ իմ և անիմ վերջաւորուած բայերուն կրաւորականը ներգործականին հետ միևնոյն է. ուստի Խորհիմ, խորհեցայ, Ուսանիմ, ուսայ և այլն, թէ՛ կը խորհիմ, խորհեցայ. կը սորվիմ, սորվեցայ. և թէ կը խորհուիմ, խորհուեցայ, կը սորվուիմ, սորվուեցայ կը նշանակեն։

95. Երրորդ լծորդութեան Նախնին ձեւին, այսինքն՝ ամ վերջաւորուածներուն կրաւորականը՝ նոյն լծորդութեան Երկրորդ ձեւին, այսինքն՝ անամ վերջաւորուածներուն պէս կ'ըլլայ, մինակ ստորադասականը այցեմ կ'ըլլայ, զոր օրինակ.

| | Կտր. | Անց. | Հրմ. | Ստորադաս. |
|---|---|---|---|---|
| Աղամ, | Աղացայ, | Աղացայց, | Աղացիր, | Աղայցեմ. |

Իսկ անամ վերջաւորուածներուն, զոր օրինակ՝ Ստանամ ին կրաւորականը ներգործականին հետ միևնոյն է. ուստի Ստանամ, ստացայ, թէ՛ կը ստանամ, ստացայ, և թէ կը ստացուիմ, ստացուեցայ կը նշանակէ։ Միայն ստորադասականը այցեմ ըլլալու տեղ՝ այցիմ կ'ըլլայ, ստանայցիմ։

96. Չորրորդ լծորդութեան, այսինքն՝ ում վերջաւորուածներուն Նախնին ձեւին կրաւորականը՝ նոյն լծորդութեան Երկրորդ ձեւին պէս կըլլայ, զոր օրինակ.

| | Կտր. | Անց. | Հրմ. |
|---|---|---|---|
| Թողում, | Թողայ, | Թողայց, | Թողիր. |

Իսկ ում վերջաւորուած Երկրորդ ձևին, այսինքն հանում լին պէս խոնարհող ներգոր-ծականներուն կրաւորականը՝ ներգործակա-նին հետ նոյն է. ուստի Շփենում, շփեցայ. թէ կը հագնիմ, հագայ, և թէ կը հագնուիմ, հագնուեցայ կը նշանակէ։

---

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

### Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Առնեմ. | Ասեմ. | Գիտեմ. | Դնեմ. |
| Ընել։ | Ըսել։ | Գիտնալ։ | Դնել։ |

### Անկատար անցեալ։

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի. | Ասէի. | Գիտէի. | Դնէի. |

### Կատարեալ անցեալ։

| | | | |
|---|---|---|---|
| Արարի. | Ասացի. | Գիտացի. | Եդի. |
| Արարեր. | Ասացեր. | Գիտացեր. | Եդիր. |
| Արար. | Ասաց. | Գիտաց. | Եդ. |
| Արարաք. | Ասացաք. | Գիտացաք. | Եդաք. |
| Արարէք. | Ասացէք. | Գիտացէք. | Եդիք. |
| Արարին. | Ասացին. | Գիտացին. | Եդին. |

### Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Արարից. | Ասացից. | Գիտացից. | Եդից. |
| Արասցես. | Ասասցես. | Գիտասցես. | Դիցես. |
| Արասցէ. | Ասասցէ. | Գիտասցէ. | Դիցէ. |
| Արասցուք. | Ասասցուք. | Գիտասցուք. | Դիցուք. |
| Արասջիք. | Ասասջիք. | Գիտասջիք. | Դիջիք. |
| Արասցեն. | Ասասցեն. | Գիտասցեն. | Դիցեն. |

### Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Արա, | Ասա, | Գիտա, | Դիր, |
| մի Առներ. | մի Ասեր. | մի Գիտեր. | մի Դներ. |
| Արարէք, | Ասացէք, | Գիտացէք, | Դիք, |
| մի Առնէք. | մի Ասէք. | մի Գիտէք. | մի Դնէք. |

### Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցեմ. | Ասիցեմ. | Գիտիցեմ. | Դնիցեմ. |

### Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Առնել. | Ասել. | Գիտել. | Դնել. |

### Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Արարեալ. | Ասացեալ. | Գիտացեալ. | Եդեալ. |

### Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Առնելոց. | Ասելոց. | Գիտելոց. | Դնելոց. |

---

### Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպեմ. | Լսեմ. | Կարեմ. | Ճանաչեմ. |
| Խմել: | Լսել: | Կրնալ: | Ճանչնալ: |

### Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպէի. | Լսէի. | Կարէի. | Ճանաչէի. |

### Կատարեալ անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Արբի. | Լուայ. | Կարացի. | Ծանեայ. |
| Արբեր. | Լուար. | Կարացեր. | Ծանեար. |
| Արբ, էարբ. | Լուաւ. | Կարաց | Ծանեաւ. |
| Արբաք. | Լուաք. | Կարացաք. | Ծանեաք. |

| | | | |
|---|---|---|---|
| Արբէք. | Լուայք. | Կարացէք. | Ծանեայք |
| Արբին. | Լուան. | Կարացին. | Ծանեան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Արբից. | Լուայց. | Կարացից. | Ծանեայց. |
| Արբցես. | Լուիցես. | Կարասցես. | Ծանիցես. |
| Արբցէ. | Լուիցէ. | Կարասցէ. | Ծանիցէ. |
| Արբցուք. | Լուիցուք. | Կարասցուք. | Ծանիցուք. |
| Արբջիք. | Լուիջիք. | Կարասջիք. | Ծանիջիք. |
| Արբցեն. | Լուիցեն. | Կարասցեն.. | Ծանիցեն. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Արբ, | Լուր, | Կարող լեր, | Ծանիր, |
| մի Ըմպեր. | մի Լսեր. | եւ այլն. | մի Ճանաչեր. |
| Արբէք, | Լուարուք, | | Ծաներուք, |
| մի Ըմպէք. | մի Լսէք. | | մի Ճանաչէք. |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպիցեմ. | Լսիցեմ. | Կարիցեմ. | Ճանաչիցեմ. |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպել. | Լսել. | Կարել. | Ճանաչել. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Արբեալ. | Լուեալ. | Կարացեալ. | Ծանուցեալ. |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպելոց. | Լսելոց. | Չունի. | Ճանաչելոց. |

---

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչեմ. | Յառնեմ. * | Ուտեմ. | Յանցանեմ. |
| Մեղանչել: | Ելլել: | Ուտել: | Յանցանք ընել: |

* Յառնեմ՝ նստած կամ պառկած տեղէն ելլել կը նշանակէ. Ելնեմ՝ վեր կամ դուրս ելլել կը նշանակէ.

Անկատար անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչէի. | Յառնէի. | Ուտէի. | Յանցանէի. |

Կատարեալ անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայ. | Յարեայ. | Կերայ. | Յանցեայ. |
| Մեղար. | Յարեար. | Կերար. | Յանցեար. |
| Մեղաւ. | Յարեաւ. | Կերաւ. | Յանցեաւ. |
| Մեղաք. | Յարեաք. | Կերաք. | Յանցեաք. |
| Մեղայք. | Յարեայք. | Կերայք. | Յանցեայք. |
| Մեղան. | Յարեան. | Կերան. | Յանցեան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայց. | Յարեայց. | Կերայց. | Յանցեայց. |
| Մեղիցես. | Յարիցես. | Կերիցես. | Յանցիցես. |
| Մեղիցէ. | Յարիցէ. | Կերիցէ. | Յանցիցէ. |
| Մեղիցուք. | Յարիցուք. | Կերիցուք. | Յանցիցուք. |
| Մեղիջիք. | Յարիջիք. | Կերիջիք. | Յանցիջիք. |
| Մեղիցեն. | Յարիցեն. | Կերիցեն. | Յանցիցեն. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղիր, | Արի, | Կեր, | Յանցիր, |
| մի Մեղանչեր. | մի Յառներ. | մի Ուտեր. | մի Յանցաներ |
| Մեղարուք, | Արիք, | Կերայք, | Յանցերուք, |
| մի Մեղանչէք. | մի Յառնէք. | մի Ուտէք. | մի Յանցանէք |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչիցեմ. | Յառնիցեմ. | Ուտիցեմ. | Յանցանիցեմ. |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչել. | Յառնել. | Ուտել. | Յանցանել. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեղուցեալ. | Յարուցեալ. | Կերեալ. | Յանցուցեալ. |

Ապառնի դերբայ.

Մեղանչելոց. Յառնելոց. Ուտելոց. Ցանկանալոյ.

---

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիմ. | Լինիմ. | Մարթիմ. | Երկնչիմ. |
| Ըլլալ | Ըլլալ | Կրնալ | Վախնալ |

Անկատար անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Եղանէի. | Լինէի. | Մարթէի. | Երկնչէի. |

Կատարեալ անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Եղէ. | Եղէ. | Մարթացայ. | Երկեայ. |
| Եղեր. | եւ այլն. | Մարթացար. | Երկեար. |
| Եղեւ. | | Մարթացաւ. | Երկեաւ. |
| Եղաք. | | Մարթացաք. | Երկեաք. |
| Եղէք. | | Մարթացայք. | Երկեայք. |
| Եղեն. | | Մարթացան. | Երկեան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Եղէց. | Լիցիմ. | Մարթացայց. | Երկեայց. |
| Եղիցիս. | Լիցիս. | Մարթասցիս. | Երկիցես. |
| Եղիցի. | Լիցի. | Մարթասցի. | Երկիցէ. |
| Եղիցուք. | Լիցուք. | Մարթասցուք. | Երկիցուք. |
| Եղիջիք. | Լիջիք. | Մարթասջիք. | Երկիջիք. |
| Եղիցին. | Լիցին. | Մարթասցին. | Երկիցեն. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղիջիր, | Լեր, | Զունի. | Երկիր, |
| մի Եղանիր. | մի Լինիր. | | մի Երկնչիր. |
| Եղերուք, | Լերուք, | | Երկերուք, |
| մի Եղանիք. | մի Լինիք. | | մի Երկնչիք. |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիցիմ. | Լինիցիմ. | Մարթայցեմ. | Երկնչիցիմ. |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղանել. | Լինել. | Մարթել. | Երկնչել. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղեալ. | Լեալ. | Մարթացեալ. | Երկուցեալ. |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղանելոց. | Լինելոց. | Չունի. | Երկնչելոց. |

---

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Թաքչիմ. | Թռչիմ. | Կորնչիմ. | Հանգչիմ. |
| Պահուըտիլ: | Թռչիլ: | Կորսուիլ: | Հանգչիլ: |

Անկատար անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Թաքչէի. | Թռչէի. | Կորնչէի. | Հանգչէի. |

Կատարեալ անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Թաքեայ. | Թռեայ. | Կորեայ. | Հանգեայ. |
| Թաքեար. | Թռեար. | Կորեար. | Հանգեար. |
| Թաքեաւ. | Թռեաւ. | Կորեաւ. | Հանգեաւ. |
| Թաքեաք. | Թռեաք. | Կորեաք. | Հանգեաք. |
| Թաքեայք. | Թռեայք. | Կորեայք. | Հանգեայք. |
| Թաքեան. | Թռեան. | Կորեան. | Հանգեան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Թաքեայց. | Թռեայց. | Կորեայց. | Հանգեայց. |
| Թաքիցես. | Թռիցես. | Կորիցես. | Հանգիցես. |
| Թաքիցէ. | Թռիցէ. | Կորիցէ. | Հանգիցէ. |

| | | | |
|---|---|---|---|
| Թաքիցուք· | Թռիցուք. | Կորիցուք. | Հանգիցուք· |
| Թաքիջիք· | Թռիջիք· | Կորիջիք· | Հանգիջիք· |
| Թաքիցեն· | Թռիցեն. | Կորիցեն. | Հանգիցեն· |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Թաքիր, | Թռիր, | Կորիր, | Հանգիր, |
| մի թաքչիր· | մի թռչիր· | մի կորնչիր· | մի հանգչիր· |
| Թաքերուք, | Թռերուք, | Կորերուք, | Հանգերուք, |
| մի թաքչիք· | մի թռչիք· | մի կորնչիք· | մի հանգչիք· |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Թաքչիցիմ· | Թռչիցիմ· | Կորնչիցիմ· | Հանգչիցիմ· |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Թաքչել· | Թռչել· | Կորնչել· | Հանգչել· |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Թաքուցեալ· | Թռուցեալ· | Կորուսեալ· | Հանգուցեալ |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Թաքչելոց· | Թռչելոց. | Կորնչելոց· | Հանգչելոց· |

---

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մատչիմ· | Մարտնչիմ· | Փախչիմ· | Ընդունիմ. |
| Մօտենալ: | Կռուել: | Փախչել: | Ընդունել: |

Անկատար անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Մատչէի· | Մարտնչէի· | Փախչէի· | Ընդունէի· |

Կատարեալ անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Մատեայ· | Մարտեայ· | Փախեայ. | Ընկալայ· |
| Մատեար· | Մարտեար· | Փախեար· | Ընկալար. |

| | | | |
|---|---|---|---|
| Մատեաւ. | Մարտեաւ. | Փախեաւ. | Ընկալաւ. |
| Մատեաք. | Մարտեաք. | Փախեաք. | Ընկալաք. |
| Մատեայք. | Մարտեայք. | Փախեայք. | Ընկալայք. |
| Մատեան. | Մարտեան. | Փախեան. | Ընկալան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Մատեայց. | Մարտեայց. | Փախեայց. | Ընկալայց. |
| Մատիցես. | Մարտիցես. | Փախիցես. | Ընկալցիս. |
| Մատիցէ. | Մարտիցէ. | Փախիցէ. | Ընկալցի. |
| Մատիցուք. | Մարտիցուք. | Փախիցուք. | Ընկալցուք. |
| Մատիջիք. | Մարտիջիք. | Փախիջիք. | Ընկալջիք. |
| Մատիցեն. | Մարտիցեն. | Փախիցեն. | Ընկալցին. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Մատիր, | Մարտիր, | Փախիր, | Ընկալ, |
| մի Մատչիր. | մի Մարտնչիր. | մի Փախչիր. | մի Ընդունիր. |
| Մատերուք, | Մարտերուք, | Փախերուք, | Ընկալարուք, |
| մի Մատչիք. | մի Մարտնչիք. | մի Փախչիք. | մի Ընդունիք. |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Մատչիցիմ. | Մարտնչիցիմ. | Փախչիցիմ. | Ընդունիցիմ. |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մատչել. | Մարտնչել. | Փախչել. | Ընդունել. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մատուցեալ. | Մարտուցեալ. | Փախուցեալ. | Ընկալեալ. |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Մատչելոց. | Մարտնչելոց. | Փախչելոց. | Ընդունելոց. |

### Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Գամ. | Երթամ. | Ունիմ. | Տանիմ. |
| Գալ: | Երթալ: | Ունենալ: | Տանել: |

### Անկատար անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Գայի. | Երթայի. | Ունէի. | Տանէի |

### Կատարեալ անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Եկի. | Չոգայ. | Կալայ. | Տարայ. |
| Եկիր. | Չոգար. | Կալար. | Տարար. |
| Եկն. | Չոգաւ. | Կալաւ. | Տարաւ. |
| Եկաք. | Չոգաք. | Կալաք. | Տարաք. |
| Եկայք. | Չոգայք. | Կալայք. | Տարայք. |
| Եկին. | Չոգան. | Կալան. | Տարան. |

### Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Եկից. | Երթայց. | Կալայց. | Տարայց. |
| Եկեսցես. | Երթիցես. | Կալցիս. | Տարցիս. |
| Եկեսցէ. | Երթիցէ. | Կալցի. | Տարցի. |
| Եկեսցուք. | Երթիցուք. | Կալցուք. | Տարցուք. |
| Եկեսջիք. | Երթիջիք. | Կալջիք. | Տարջիք. |
| Եկեսցեն. | Երթիցեն. | Կալցին. | Տարցին. |

### Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եկ, | Երթ, | Կալ, Կա, | Տար, |
| մի Գար. | մի Երթար. | մի Ունիր. | մի Տանիր. |
| Եկայք, | Երթայք, | Կալարուք, | Տարէք, |
| մի Գայք. | մի Երթայք. | մի Ունիք. | մի Տանիք. |

### Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Գայցեմ. | Երթայցեմ. | Ունիցիմ. | Տանիցիմ. |

Անորոշ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Գալ. | Երթալ. | Ունել. | Տանել. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Եկեալ. | Երթեալ. | Կալեալ. | Տարեալ. |

Ապառնի դերբայ,

| | | | |
|---|---|---|---|
| Գալոց. | Երթալոց. | Ունելոց. | Տանելոց. |

---

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Լամ. | Կամ. | Կեամ. | Տամ. |
| Լաւ: | Կենաւ: | Ապրէ: | Տաւ: |

Անկատար անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Լայի. | Կայի. | Կէի. | Տայի. |

Կատարեալ անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Լացի. | Կացի. | Կեցի, | Ետու. |
| Լացեր. | Կացեր. | Կեցեր. | Ետուր. |
| Լաց, ելաց. | Կաց, եկաց. | Կեաց, եկեաց. | Ետ. |
| Լացաք. | Կացաք. | Կեցաք. | Տուաք. |
| Լացէք. | Կացէք. | Կեցէք. | Ետուք. |
| Լացին. | Կացին. | Կեցին. | Ետուն. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Լացից. | Կացից. | Կեցից. | Տաց. |
| Լասցես. | Կասցես. | Կեցցես. | Տացես. |
| Լասցէ. | Կասցէ. | Կեցցէ. | Տացէ. |
| Լասցուք. | Կասցուք. | Կեցցուք. | Տացուք. |
| Լասջիք. | Կասջիք. | Կեցջիք. | Տաջիք. |
| Լասցեն. | Կասցեն. | Կեցցեն. | Տացեն. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Լաց, | Կաց, | Կեաց, | Տուր, |
| մի Լար· | մի Կար. | մի Կեար· | մի Տար· |
| Լացէք· | Կացէք, | Կեցէք, | Տուք, |
| մի Լայք· | մի Կայք· | մի Կեայք· | մի Տայք· |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Լայցեմ· | Կայցեմ. | Կեայցեմ. | Տայցեմ· |

Անորոշ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Լալ· | Կալ. | Կեալ· | Տալ· |

Անցեալ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Լացեալ· | Կացեալ· | Կեցեալ· | Տուեալ· |

Ապառնի դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Լալոց· | Կալոց· | Կելոց. | Տալոց· |

---

Ներկայ·

| | | | |
|---|---|---|---|
| Այտնում. | Երդնում. | Զարթնում. | Ոստնում. |
| Ուռէլ: | Երդում ընել: | Արթննալ: | Ցատկել: |

Անկատար անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Այտնուի. | Երդնուի· | Զարթնուի. | Ոստնուի· |

Կատարեալ անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Այտեայ. | Երդուայ· | Զարթեայ· | Ոստեայ. |
| Այտեար. | Երդուար· | Զարթեար· | Ոստեար. |
| Այտեաւ. | Երդուաւ· | Զարթեաւ· | Ոստեաւ. |
| Այտեաք· | Երդուաք· | Զարթեաք. | Ոստեաք· |
| Այտեայք· | Երդուայք· | Զարթեայք· | Ոստեայք· |
| Այտեան. | Երդուան· | Զարթեան· | Ոստեան· |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Այտեայց. | Երգուայց. | Զարթեայց. | Ոստեայց. |
| Այտիցես. | Երգուիցես. | Զարթիցես. | Ոստիցես. |
| Այտիցէ. | Երգուիցէ. | Զարթիցէ. | Ոստիցէ. |
| Այտիցուք. | Երգուիցուք. | Զարթիցուք. | Ոստիցուք. |
| Այտիջիք. | Երգուիջիք. | Զարթիջիք. | Ոստիջիք. |
| Այտիցեն. | Երգուիցեն. | Զարթիցեն. | Ոստիցեն. |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Այտիր, | Երգուիր, | Զարթիր, | Ոստիր, |
| մի Այտնուր. | մի Երգնուր. | մի Զարթնուր. | մի Ոստնուր. |
| Այտերուք, | Երգուարուք, | Զարթիք, | Ոստերուք, |
| մի Այտնուք. | մի Երգնուք. | մի Զարթնուք. | մի Ոստնուք. |

Ստորադասական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Այտնուցում. | Երգնուցում. | Զարթնուցում. | Ոստնուցում |

Անորէն դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Այտնուլ. | Երգնուլ. | Զարթնուլ. | Ոստնուլ. |

Անցեալ դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Այտուցեալ. | Երգուեալ. | Զարթուցեալ | Ոստուցեալ. |

Ապառնի դերբայ.

| | | | |
|---|---|---|---|
| Այտնլոց. | Երգնլոց. | Զարթնլոց. | Ոստնլոց. |

---

Ներկայ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Յառնում. | Բարձրանալ: | Փաղցնում. | Աներեւանալ: | Գոմ Ըլլալ: |
| Յառնուս. | | Փաղցնուս. | | Գոս. |
| Յառնու. | | Փաղցնու. | | Գոյ. Կայ. |

| | | |
|---|---|---|
| Յագնումք. | Քաղցնումք. | Գոմք. |
| Յագնուք. | Քաղցնուք. | Գոյք. |
| Յագնուն. | Քաղցնուն. | Գոն. |
| | Անկատար անցեալ: | |
| Յագնուի. | Քաղցնուի. | Գոյի. |
| Յագնուիր. | Քաղցնուիր. | Գոյիր. |
| Յագնոյր. | Քաղցնոյր. | Գոյր. |
| Յագնուաք. | Քաղցնուաք. | Գոյաք. |
| Յագնուիք. | Քաղցնուիք. | Գոյիք. |
| Յագնուին. | Քաղցնուին. | Գոյին. |
| | Կատարեալ անցեալ: | |
| Յագեայ. | Քաղցեայ. | |
| Յագեար. | Քաղցեար. | |
| Յագեաւ. | Քաղցեաւ. | |
| Յագեաք. | Քաղցեաք. | |
| Յագեայք. | Քաղցեայք. | |
| Յագեան. | Քաղցեան. | |
| | Ապառնի. | |
| Յագեայց. | Քաղցեայց. | |
| Յագիցես. | Քաղցիցես. | |
| Յագիցէ. | Քաղցիցէ. | Գուցէ. |
| Յագիցուք. | Քաղցիցուք. | |
| Յագիջիք. | Քաղցիջիք. | |
| Յագիցեն. | Քաղցիցեն. | Գուցեն. |
| | Հրամայական եղանակ. | |
| Յագիր, | Քաղցիր, | |
| մի Յագնուր. | մի Քաղցնուր. | |

| | | |
|---|---|---|
| Ցասերուք, | Քաղցերուք, | |
| մի՛ Ցասնուք. | մի՛ Քաղցնուք. | |
| | Ստորադասական եղանակ. | |
| Ցասնուցում. | Քաղցնուցում. | |
| | Անորոշ դերբայ. | |
| Ցասնուլ. | Քաղցնուլ. | Գոլ. |
| | Անցեալ դերբայ. | |
| Ցասուցեալ. | Քաղցեալ. | |
| | Ապառնի դերբայ. | |
| Ցասնելոց. | Քաղցնելոց. | |

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՁԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐՈՒՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆԸ

Ներկայ՝

| | | | |
|---|---|---|---|
| Առնիմ, | Ասիմ, | Գիտիմ, | Գնիմ, |
| Ըլլալ (Ըլլուիլ) | Ըսուիլ | Գիտցուիլ | Գնուիլ |

Անկատար անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի. | Ասէի. | Գիտէի. | Գնէի. |

Կատարեալ անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Արարայ. | Ասացայ. | Գիտացայ. | Եղայ. |
| Արարար. | Ասացար. | Գիտացար. | Եղար. |
| Արարաւ. | Ասացաւ. | Գիտացաւ. | Եղաւ. |
| Արարաք. | Ասացաք. | Գիտացաք. | Եղաք. |
| Արարայք. | Ասացայք. | Գիտացայք. | Եղայք. |
| Արարան. | Ասացան. | Գիտացան. | Եղան. |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Արարայց· | Ասացայց· | Գիտացայց· | Եդայց· |
| Արասցիս· | Ասասցիս· | Գիտասցիս· | Դիցիս· |
| Արասցի· | Ասասցի· | Գիտասցի. | Դիցի. |
| Արասցուք. | Ասասցուք· | Գիտասցուք· | Դիցուք· |
| Արասջիք· | Ասասջիք· | Գիտասջիք· | Դիջիք· |
| Արասցեն· | Ասասցեն· | Գիտասցեն· | Դիցեն· |

Հրամայական եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Առնիջիր. | Ասիջիր. | Գիտացիր. | Դնիջիր· |
| մի Առնիր· | մի Ասիր· | մի Գիտիր· | մի Դնիր· |
| Առնիջիք. | Ասացարուք· | Գիտացարուք. | Եդարուք· |
| մի Առնիք· | մի Ասիք· | մի Գիտիք· | մի Դնիք· |

Ստորադասական եղանակ·

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցիմ· | Ասիցիմ· | Գիտիցիմ· | Դնիցիմ· |

Անորոշ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Առնել (իլ)· | Ասել (իլ)· | Գիտել (իլ)· | Դնել (իլ)· |

Անցեալ դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Արարեալ· | Ասացեալ· | Գիտացեալ· | Եդեալ. |

Ապառնի դերբայ·

| | | | |
|---|---|---|---|
| Առնելոց· | Ասելոց· | Գիտելոց· | Դնելոց. |

Ներկայ.

| | | |
|---|---|---|
| Ըմպիմ. | Ճանաչիմ· | Պարտիմ. |
| Խմել: | Ճանչնալ: | Պէտք, պարտական ըլլալ: |

Անկատար անցեալ:

| | | |
|---|---|---|
| Ըմպէի· | Ճանաչէի· | Պարտէի· |

Կատարեալ անցեալ.

| | | |
|---|---|---|
| Արբայ· | Ծանուցայ· | Չունի. |
| Արբար· | Ծանուցար· | |
| Արբաւ· | Ծանուցաւ· | |
| Արբաք· | Ծանուցաք· | |
| Արբայք· | Ծանուցայք· | |
| Արբան· | Ծանուցան· | |

Ապառնի.

| | | |
|---|---|---|
| Արբայց· | Ծանուցայց· | Չունի. |
| Արբցիս· | Ծանուսցիս. | |
| Արբցի· | Ծանուսցի· | |
| Արբցուք· | Ծանուսցուք· | |
| Արբջիք· | Ծանուսջիք· | |
| Արբցին· | Ծանուսցին. | |

Հրամայական եղանակ.

| | | |
|---|---|---|
| Արբիր, | Ծանուցիր, | Չունի. |
| մի՛ Ըմպիր· | մի՛ Ճանաչիր· | |
| Արբերուք, | Ծանուցարուք, | |
| մի՛ Ըմպիք· | մի՛ Ճանաչիք· | |

Ստորադասական եղանակ.

| | | |
|---|---|---|
| Ըմպիցիմ· | Ճանաչիցիմ· | Պարտիցիմ· |

Անորոշ դերբայ.

| | | |
|---|---|---|
| Ըմպել (իլ)· | Ճանաչել (իլ)· | Պարտել (իլ)· |

Անցեալ դերբայ.

| | | |
|---|---|---|
| Արբեալ· | Ծանուցեալ· | Չունի. |

Ապառնի դերբայ.

| | | |
|---|---|---|
| Ըմպելոց· | Ճանաչելոց· | Չունի. |

Ներկայ.

| | | |
|---|---|---|
| Ուտիմ. | Լսիմ. | Տուեալ լինիմ. |
| Ուտէ։ | Լսէ։ | Տրուէ։ |

Անկատար անցեալ։

| | | |
|---|---|---|
| Ուտէի. | Լսէի. | Տուեալ լինէի. |

Կատարեալ անցեալ։

| | | |
|---|---|---|
| Կեր եղէ. | Լու եղէ. | Տուայ. |

Ապառնի.

| | | |
|---|---|---|
| Կեր եղէց. | Լու եղէց. | Տուեալ եղէց. |

Հրամայական եղանակ,

| | | |
|---|---|---|
| Կեր լեր. | Լու լեր. | Տուեալ լեր. |
| մի Ուտիր. | մի Լսիր. | եւ այլն. |
| Կեր լերուք. | Լու լերուք. | Տուեալ լերուք. |
| մի Ուտիք. | մի Լսիք. | եւ այլն. |

Ստորադասական եղանակ.

| | | |
|---|---|---|
| Ուտիցիմ. | Լսիցիմ. | Տայցիմ. |

Անորոշ դերբայ.

| | | |
|---|---|---|
| Ուտել (իլ). | Լսել (իլ). | Տուեալ լինել. |

Անցեալ դերբայ.

| | | |
|---|---|---|
| Կերեալ. | Լուեալ. | Տուեալ, |

Ապառնի դերբայ.

| | | |
|---|---|---|
| Ուտելոց. | Լսելոց. | Տալոց. |

---

## ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

97. Դերբայներն, այսինքն Անորոշ դերբայ ու Անցեալ դերբայը, որ երբ բայ՝ ընել կամ ըլլալ մը կը ցուցնեն, նաև երբ գոյական և ածական անուն կը գործածուին ու կը հոլովին ։

98. Անորոշ դերբայները գոյական են, և միայն եզակի կը հոլովին, այսպէս.

Ա. ԼԾ. Սիրել, սիրելոյ, սիրելով. Հատանել, հատանելոյ, հատանելով։

Բ. ԼԾ. Խօսել, խօսելոյ, խօսելով. Ուսանիլ, ուսանելոյ, ուսանելով։

Գ. ԼԾ. Աղալ, աղալոյ, աղալով. Գողանալ, գողանալոյ, գողանալով։

Դ. ԼԾ. Թողուլ, թողլոյ, թողլով։

99. Անցեալ դերբայները շատ անգամ իբր ածական կը գործածուին, և, թէ եզակի թէ յոգնակի, կը հոլովին այսպէս.

Ա. ԼԾ. Սիրեալ, սիրելոյ, սիրելով. Սիրեալք, սիրելոց, սիրելովք։

Հատեալ, հատելոյ, հատելով. Հատեալք, հատելոց, հատելովք։

Բ. ԼԾ. Խօսեալ, խօսելոյ, խօսելով. Խօսեալք, խօսելոց, խօսելովք։

Ուսեալ, ուսելոյ, ուսելով. Ուսեալք, ուսելոց, ուսելովք։

Գ. ԼԾ. Աղացեալ, աղացելոյ, աղացելովք. Աղացեալք, աղացելոց, աղացելովք։

Գողացեալ, գողացելոյ, գողացելով. Գողացեալք, գողացելոց, գողացելովք։

Դ. ԼԾ. Թողեալ, թողելոյ, թողելով. Թողեալք, թողելոց, թողելովք։

100. Անցեալ և Ապառնի դերբայները Էական բային եմ, էի, իցեմ ժամանակներով խոնարհելով, քանի մը բաղադրեալ ժամանակներ կը կազմեն. զոր օրինակ.

| Յարակատար. | Ներկայ ապառնի. |
|---|---|
| Սիրեալ-եմ. սիրած եմ. | Սիրելոց-եմ. պիտի սիրեմ. |
| » -ես. | » -ես. |
| » -է. | » -է. |
| » -եմք. | » -եմք. |
| » -էք. | » -էք. |
| » -են. | » -են. |

| Գերակատար. | Անկատար ապառնի. |
|---|---|
| Սիրեալ-էի. սիրած էի. | Սիրելոց-էի. պիտի սիրէի. |
| » -էիր. | » -էիր. |
| » -էր. | » -էր. |
| » -էաք. | » -էաք. |
| » -էիք. | » -էիք. |
| » -էին. | » -էին. |

| Ստորադասական անցեալ. | Ստորադասական ապառնի. |
|---|---|
| Սիրեալ-իցեմ. սիրած եմ. | Սիրելոց-իցեմ. պիտի սիրեմ. |
| » -իցես. կամ | » -իցես. |
| » -իցէ. սիրած ըլլամ. | » -իցէ. |
| » -իցեմք. | » -իցեմք. |
| » -իցէք. | » -իցէք. |
| » -իցեն. | » -իցեն. |

## ԳԼՈՒԽ Զ.

### ՄԱԿԲԱՅ

101. Մակբայ կ՚ըսուին ան բառերը որոնք բային մէկ որպիսութիւնը կամ պարագան կը ցուցնեն, ինչպէս որ ածականը գոյականին որպիսութիւնը կը ցուցնէ. զոր օրինակ, Յոյժ ըմպել, շատ խմել. Բարւոք խօսել, աղէկ խօսիլ: Յոյժ, շատ, և Բարւոք, աղէկ, մակբայ են. առջինը ըմպել բային, երկրորդը՝ խօսել բային մէյմէկ որպիսութիւնը կը ցուցնեն:

Սովորական մակբայները հետևեալներն են.

1. Տեղական, այսինքն՝ Տեղւոյ պարագայ ցուցնող, կամ ո՞ւր. ուստի՞, հարցմանց պատասխան եղող մակբայներ.

| | |
|---|---|
| Անդ, հոն (դադարում). | Արտաքս } դուրսը. |
| Անդր, հոն (շարժում). | Արտաքոյ } |
| Աստ, հոս (դադարում). | Արտաքուստ, դուրսէն. |
| Այսր, հոս (շարժում). | Ի խոնարհ, վարը. |
| Անտի, անկէ. | Ի ներքս } ներսը, վարը. |
| Այտի, ատկէ. | Ի ներքոյ } |
| Աստի, ասկէ. | Ի ներքուստ, ներսէն, վարէն. |
| Անդուստ } անկէ. | Ի վեր } վերը. |
| Անդստին } | Ի վերոյ } |
| Աստուստ } ասկէ. | Ի վերուստ, վերէն. |
| Աստստին } | Ի վերայ, վրան. |

| | | | |
|---|---|---|---|
| Տուրջ<br>Տուրջանակի | բոլորտիքը. | Ուրեք, տեղ մը. | |
| | | Ուստեք, տեղէ մը. | |

2. Ժամանակական, այսինքն՝ ժամանակի պարագայ ցուցնող, կամ ե՞րբ հարցման պատասխան եղող մակբայներ.

| | | | |
|---|---|---|---|
| Այսօր, այսօր. | | Նախ<br>Յառաջագոյն | նախ, առաջ. |
| Այժմ<br>Արդ | հիմա. | Իսկոյն<br>Իսկ եւ իսկ<br>Անդէն<br>Անդէն եւ անդ<br>Առ ժամայն<br>Նոյն ժամայն<br>Նոյն հետայն | անմիջապէս, մէկէն. |
| Ապա<br>Յետոյ | ետքը. | | |
| Երեկ, էրէկ. | | | |
| Վաղիւ, վաղը. | | | |
| Յայնժամ, անատէն. | | | |
| Յեռանդ, էրէկ չէ առջի օր. | | | |
| Հերու, անցեալ տարի. | | Զառաջինն<br>Յառաջնումն<br>Ի սկզբան | առաջ, 'ի սկիզբն, |
| Այգուն<br>Առաւօտուն<br>Վաղորդայն | առտուան. | Կանխաւ, առաջուց. | |
| Երեկոյի, էրիկուանը. | | Վաղու<br>Վաղուց | շատոնց. |
| Գիշերի, գիշերը. | | Երբեմն, էրբեմն. | |
| Ընդ առաւօտն, | առտուան դէմ. | Երբեմն . . . երբեմն<br>Մերթ . . . մերթ<br>Է զի . . . է զի | երբեմ-մըն . . . երբեմն |
| Գիշերայն, գիշերանց. | | Երբէք երբէք, ատեն ատեն. | |
| Ամառան, ամառ: | | | |
| Կանուխ, կանուխ. | | | |
| Վաղ, առաջ, կանուխ. | | | |

3. Քանակական, այսինքն՝ չափ ցուցնող կամ ո՞րչափ, ո՞րչափ անգամ հարցման պատասխան եղող մակբայներ.

| | | | |
|---|---|---|---|
| Յոյժ, շատ. | | Ստէպ<br>Յաճախ | շատ անգամ. |
| Կարի, չափէն աւելի, շատ. | | | |

Դուն ուրեք } քիչ անգամ.
Անօսր }

Դարձեալ }
Միւսանգամ } նորէն, կրկին.
Վերստին }
Անդրէն }

Միանգամ } անգամ մը.
Գամ մի }

Միանգամայն, մէկէն.

Երկիցս, երկու անգամ.

Երիցս, եւն, երեք անգամ, ևն.

Եւս, եւ ալ նաև.

4. Եղանակական, այսինքն՝ եղանակի պարագայ ցուցնող. կամ ի՞նչպէս հարցման պատասխան եղող մակբայներ.

Այսպէս }
Զայս օրինակ } այսպէս.
Զայս գունակ }

Այնպէս, այնպէս.

Արդարեւ, իրաւ, իրօք.

Ապաքէն, անշուշտ, անտարակոյս.

Յոյժ }
Կարի } սաստիկ.
Անհնարին }

Բարւոք, աղէկ.

Զարաչար, շատ գէշ.

Յիրաւի, իրաւամբ.

Զուր }
Ի զուր }
Վայրապար } պարապ տեղը.
Ի նանիր }
Ընդ վայր }

Տարապարտուց } անիրաւ տեղը.
Յանիրաւի }

Գաղտ, գաղտուկ.

Ի ծածուկ, ծածուկ.

Առանձինն, առանձին.

Միայն } միայն.
Եւեթ }

Ամենեւին, բոլորովին.

Յայտ } յայտնի.
Յայտնապէս }

Ձրի, ձրի.

Տարապարհակ, անկարեւոր.

Յանկարծ } յանկարծ.
Յեղակարծումն }

Վաղվաղակի }
Փութապէս } շուտով.
Փութանակի }

5. Բաղդատական, այսինքն՝ բաղդատութիւն ցուցնող մակբայներ.

Եւս, աւելի.

Քան }
Առաւել քան } աւելի քան.
Մանաւանդ }

Այնպէս... որպէս, այնպէս... ինչպէս.

Այնչափ... որչափ, այնչափ... որչափ...

6. Տարակուսական մակբայներ.

| | |
|---|---|
| Թերեւս, գուցէ. կարելի է. | Միթէ, միթէ, մի. |
| Գուցէ, չըլլայ թէ. | Զիա՛րդ } ինչպէս. |
| Արդեօք, արդեօք. | Ո՛րպէս } ինչպէս. |

7. Հարցական մակբայներ.

| | |
|---|---|
| Զիա՞րդ, ինչպէս. | Ե՞րբ, ե՞րբ. |
| Ընդէ՞ր } ինչո՞ւ համար. | Ո՞րչափ } որքա՞ն. |
| Հի՞մ } ինչո՞ւ համար. | Քանի՞օ՞ն } որքա՞ն. |
| Զի՞ } ինչո՞ւ համար. | Ո՞րքան } որքա՞ն. |
| Ո՞ւր, ո՞ւր (դադարում). | Քանի՞ցս անգամ, քանի՞ անգամ. |
| Յո՞, ո՞ւր (շարժում). | Ո՞չ ապաքէն } չէ՞ մի որ. |
| Ուստի՞, ուրկէ՞. | Ո՞չ } չէ՞ մի որ. |

8. Բացասական կամ ժխտական մակբայներ.

| | |
|---|---|
| Ոչ, չ, ոչ, չ. | Բնաւ } ամենեւին. |
| Մի, մի. | Ամենեւին } ամենեւին. |
| Երբէք, երբեք. | |

## ԳԼՈՒԽ Է.

### ՇԱՂԿԱՊ

102. Շաղկապ կ'ըսուին այն բառերը որոնք երկու բառ կամ խօսք իրարու հետ կը կապեն. զոր օրինակ. Հայր իմ և մայր իմ. հայրս ու մայրս. Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան. իրեններուն եկաւ ու իրենները զինք չընդունեցան: Այս խօսքերուն մէջ և, ու շաղկապ են. առջի խօսքին մէջ՝ և՝

Նոյն, նոյն բառերն իրարու հետ կը կապէ. երկրորդին մէջ և շաղկապին կապածը՝ երկու խօսք է :

Գլխաւոր շաղկապներն են հետեւեալները ·

| | |
|---|---|
| Եւ · ու · | Ուստի · ասոր · |
| Բայց · բայց · | Իբրեւ · } երբ · |
| Այլ · այլ հապա · | Յորժամ · } երբ · |
| Զի · վասն զի, որովհետեւ զի, որ · | Մինչ · } երբ, ատենը · |
| Քանզի · քանզի, ինչու որ · | Մինչդեռ · } երբ, ատենը · |
| Վասն զի · } որովհետեւ · | Սակայն · սակայն · |
| Որովհետեւ · } որովհետեւ · | Թէպէտեւ · թէպէտ |
| Արդ · } արդ · | Եթէ · } եթէ, որ · |
| Եւ արդ · } արդ · | Թէ · } եթէ, որ · |
| Ապա · } ուրեմն, անանկ է նէ · | Կամ · կամ · |
| Ուրեմն · } ուրեմն, անանկ է նէ · | Իսկ · էն, բայց · |

---

## ԳԼՈՒԽ Ը ·

### ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

103 · Ձայնարկութիւն կամ Միջարկութիւն կ'ըսուին այն բառերը որոնք կիրք մը կը յայտնեն. զոր օրինակ, վախ, զարմանք, բարկութիւն, զզուանք, արհամարհութիւն, ցաւ եւայլն։

Գլխաւոր ձայնարկութիւնները հետեւեալներն են.

Ո՜հ · օ՜հ · տրտմութիւն, վիշտ ցաւ ցնող ·

Ո՜վ. }
Ո՜. } —՜վ. զարմանք ցուցնող.

Վա՜հ. վ—՜հ. արհամարհանք ցուցնող.

Վա՜չ. վ—՜չ, օ՜խ. վրէժխնդրութիւն ցուցնող.

Բա՜բէ. բ—՜բէ. զարմանք, ցաւ կամ ապաշաւ ցուցնող.

Եղո՜ւկ. }
Աւա՜ղ. } ———՜ղ. գութ, ցաւակցութիւն ցուցնող.

Հա՜պա. }
Օ՜հ. } օ՜հ. խրախոյս ցուցնող.

Օն անդր. }
Փարգաստ. } Ա——————ծ չընէ. մերժում, սոսկում ցուցնող
Քաւ լիցի. }

Ա՜յ. —՜յ. բարկութիւն, թշնամանք ցուցնող.

Է՜. —՜է. մէկը կանչելու համար.

Երանի՜. Եր—նի՜. երանութիւն տալու համար.

Վա՜յ. վ—՜յ. վայ կարդալու համար.

Ագնի՜ւ. —գնի՜—. գովելու համար.

Իցի՜ւ. }
Իցէ՜ թէ. } իղձ, բաղձանք ցուցնելու համար.
Ցանկա՜րծ. }

# ՄԱՍ Բ.

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

**104.** Բառերը խօսքի մէջ այլ և այլ պաշտօններ կը կատարեն, և բառերուն կատարած այս պաշտօնները մասնաւոր քերականական անուններ ունին, որ են՝ Տէր Բայի. Խնդիր. Ստորոգելի կամ Ածական Խնդիր, Բացայայտիչ և Կոչական ։

## ԳԼՈՒԽ Ա.

### ՏԷՐ ԲԱՅԻ

**105.** Բայն ընել կամ ըլլալ կը ցուցնէ. Տէր բային ընողը կամ ըլլողն է. զոր օրինակ. Ես սիրեցի զձեզ. Դուք ատեցաք զիս, խօսքերուն մէջ՝ Ես, Դուք Տէր բայի են։

Տէր բային ո՞վ (քիմ), հարցման պատասխանն է, և այս հարցումն ընելով Տէր բային դիւրաւ կը գտնուի։

Վերի խօսքին մէջ. Ո՞վ սիրեց. — Ես։ Ո՞վ ատեց. — Դուք. Ես, Դուք՝ Տէր բայի են։

**106.** Երբ Տէր բային պարզ* է, բային

---

* Պարզ կ'ըսուի Տէր բային, երբ եզակի կամ յոգնակի

անոր հետ թուով ու դէմքով կը համաձայնի, զոր օրինակ.

Ես ննջեմ. Մեք դիտեմք. Դու ասես. Դուք ոչ գիտէք. Նա ետես. Նոքա ոչ իմացան։

107. Թէ՛ գոյականով և թէ առանց գոյականի Եզակի Թուական անուններուն բայը յոքնակի կրնայ դրուիլ. զոր օրինակ։

Պատասխանեցան նմա տասն այր բորոտ. Հինգն 'ի նոցանէ իմաստունք էին.

108. Երբ Տէր բային Բաղադրեալ է, բայը յոքնակի կը դրուի, թէև Տէր բային կազմող բառերն եզակի ըլլան, զոր օրինակ.

Պետրոս եւ Յովհաննէս ելին 'ի տաճարն. Նոյ եւ որդիք նորա մտին 'ի տապանն։

Ա. Եթէ բայը խօսքին մէջ Տէր բայիներէն առաջ է, բայը կրնայ առաջին տէր բային հետ համաձայնիլ, այսինքն՝ եզակի դրուիլ, եթէ առաջին տէր բային եզակի է. զոր օրինակ.

Բազմութեան հաւատացելոց էր սիրտ եւ անձն մի Յարեաւ Մովսէս, եւ Յեսու պաշտօնեայ նորա, եւ ելին 'ի լեառնն Աստուծոյ. Եմուտ Նոյ, եւ որդիք նորա եւ կին նորա . . . ընդ նմա 'ի տապանն։

---

Չէ բառ է. ինչպէս. դու սիրեցեր. նոքա գնացին։

Բաղադրեալ կ'ըսուի Տէր բային, երբ երկու կամ աւելի եզակի կամ յոքնակի բառերէ կազմուած է, ինչպէս (108) օրինակներուն մէջ։

Եւ մեռաւ Սաւուղ, եւ երեքեան որդիք նորա եւ կապարճակիրն եւ ամենայն արք նորա. Եկն Յիսուս, եւ աշակերտք նորա. Ինքն աստի արբ, եւ որդիք նորա եւ խաշինք նորա. Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն, եւ մարգարէքն։

Բ. Նոյնպէս երբ տէր բայերը ու և. կամ շաղկապով կապուած են, բայը, մանաւանդ առաջ դրուած բայը, կրնայ տէր բայերէն մէկուն հետ միայն համաձայնիլ, այսինքն՝ եզակի դրուիլ երբ այն մէկը՝ որուն հետ կ'ուզենք համաձայնեցնել, եզակի է. զոր օրինակ.

Ոչ էր նոցա ոչ ել եւ ոչ մուտ եւ ոչ գին եւ ոչ վաճառ։ Ոչ մահ եւ ոչ կեանք եւ ոչ հրեշտակք եւ ոչ իշխանութիւնք . . . եւ ոչ բարձրութիւն եւ ոչ խորութիւն եւ ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի Աստուծոյ։

Եթէ յառնիցէ 'ի միջի քում մարգարէ կամ երազահան՝ նշանցէ. Եթէ աղաչիցէ զքեզ եղբայր քո կամ ուստր քո կամ դուստր քո կամ կին քո կամ բարեկամ հանգոյն անձին քո. Ի՞ ոք քո աստ քեզայ, կամ որդիք կամ դստերք։

Այս տեսակ խօսքերու մէջ միւս տէր բայերուն քով լռելեայն բայ մը կ'իմացուի. զոր օրինակ.

Եմուտ Նոյ, եւ որդիք նորա եւ կին նորա . . . ընդ նմա 'ի տապանն. փոխանակ ըսելու, Եմուտ Նոյ 'ի տապանն, մտին եւ որդիք նորա, եմուտ եւ կին նորա ընդ նմա։

*Եկն Յիսուս, եւ աշակերտքն նորա,* փոխանակ՝ *Եկն Յիսուս, եկին եւ աշակերտք նորա։*

*Ոչ մահ եւ ոչ կեանք եւ ոչ հրեշտակք . . . եւ ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ եւայլն.* փոխանակ՝ *Ոչ մահ կարէ մեկնել զմեզ . . . ոչ կեանք կարեն մեկնել զմեզ. ոչ հրեշտակք կարեն մեկնել զմեզ եւ ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ։*

*Եթէ աղաչեսցէ զքեզ եղբայր քո կամ ուստր քո կամ դուստր քո, եւայլն.* փոխանակ՝ *Եթէ աղաչեսցէ զքեզ եղբայր քո, կամ եթէ աղաչեսցէ զքեզ ուստր քո, կամ եթէ աղաչեսցէ զքեզ դուստր քո, եւայլն։*

109. Երբ բաղադրեալ Տէր բային տարբեր դէմքի անուններէ բաղկացած է, բայը յոգնակի կը դրուի, ու դէմքով պատուաւոր* դէմքին հետ կը համաձայնի . զոր օրինակ .

*Ես եւ հայր իմ մի եմք. Յորժամ դու եւ նա միայն իցէք։*

Երբ բայը խօսքին մէջ Տէր բայիներէն առաջ է, և պատուաւոր դէմքի Տէր բային եզակի է, բայը կրնայ եզակի դրուիլ, զոր օրինակ .

*Մտցես 'ի տապանն դու եւ որդիք քո եւ կին քո եւ կանայք որդւոց քոց. Մեղար դու եւ երկո-*

---

* Առաջին դէմքը՝ երկրորդէն, երկրորդը՝ երրորդէն պատուաւոր է։

քին բարեկամք քո․ Իշխեա մեզ դու եւ որդիք որդւոց քոց։

**110**․ Տէր բային ըստ օրինի ուղղական հոլով պիտի ըլլայ․ բայց Հայերէնի մէջ սեռական և տրական ալ կրնայ ըլլալ։

**111**․ Տէր բային երկու դէպքի մէջ սեռական կը դրուի․

Ա․ Երբ և շաղկապով կապուած երկու բայ միևնոյն Տէր բային ունին, կրնայ առջի բայն Անցեալ դերբայի փոխուիլ ու և շաղկապը զանց առնուիլ, և ան ատեն Տէր բային սեռական հոլով կրնայ դրուիլ․ զոր օրինակ․

Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա ասէ․ փոխանակ ըսելու․ Տեսանէ Յիսուս զհաւատս նոցա և ասէ։ Հրէից խորհեալ զնա կամէին սպանանել․ փոխանակ ըսելու․ Հրէայք խորհէին զնա և կամէին սպանանել։

Բ․ Եմ բայով և անցեալ դերբայով բաղադրեալ բայի ժամանակներուն եզակի երրորդ դէմքը ամեն դէմքի, եզակի և յոգնակի դերանուն և գոյական, տէր բայիով ամեն դէմքի տեղ կը գործածուի․ զոր օրինակ․

Լուեալ էր զձայն նոցա․ փոխանակ՝ Լուեալ էի դուք։ Եթէ իմ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա․ փոխանակ՝ Եթէ ես ոչ էի եկեալ եւ խօսեցեալ։ Եթէ չէր նորա խօսեցեալ իմ զքեզ սպանեալ էր․ փոխանակ՝ Եթէ նա չէր խօսեցեալ ես զքեզ սպանեալ էի։ Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուծոյ, պա-

տիժս ՚ի նմանէ չէր պարտ պահանջել. փոխանակ Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուած։

112. Տէր բային փոխան կը դրուի հետեւեալ դէպքին մէջ.

Երբ երկու խօսք իրարու հետ Երբէ կամ ոչ շաղկապներով կապուած են, կրնայ Երբէ կամ ոչ շաղկապը զանց առնուիլ ու երկրորդ խօսքին դիմաւոր բային Անորոշ դերբայի փոխուիլ. և ան տաեն Տէր բային (եթէ խօսքին մէջ Տէր բայի կայ) տրական կը դրուի, զոր օրինակ.

Ոչ կամիմք թագաւորել նմա ՚ի վերայ մեր. փոխանակ՝ Ոչ կամիմք եթէ թագաւորեսցէ նա ՚ի վերայ մեր։ Դէպ եղեւ անցանել նմա ընդ այն ճանապարհ. փոխանակ՝ Դէպ եղեւ զի անց նա ընդ այն ճանապարհ։ Ոչ տամք թոյլ անցանել ձեզ ընդ երկիր մեր. փոխանակ՝ Ոչ տամք թոյլ զի անցանիցէք ընդ երկիր մեր. Առի զքեզ ՚ի վանաց հօտից լինել քեզ առաջնորդ ՚ի վերայ ժողովրդեան իմոյ. փոխանակ՝ Զի լինիցիս դու առաջնորդ։ Ի բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսմիկ գիտեմ. փոխանակ՝ Գիտեմ զի ես դու դատաւոր եւ այլն։ Ընդէ՞ր ելից Սատանայ զսիրտ քո ստել քեզ Հոգւոյն սրբոյ. փոխանակ՝ Զի ստեսցես դու Հոգւոյն սրբոյ։ Աղաչեցաք չելանել նմա յԵրուսաղէմ. փոխանակ՝ Աղաչեցաք զի մի՛ ելցէ նա յԵրուսաղէմ։ Պատուիրէ մարդկան՝ ամենայն ումեք ապաշխարել. փոխանակ՝ Պատուիրէ մարդկան զի ամենայն ոք ապաշխարեսցէ։ Եւ Հրեայք ՚ի զուր ակնկալութիւն

կապեալ կամ եթէ՝ Դաւիթ գալոց է շինել զԵրուսաղէմ եւ ժողովել զՀրեայս, եւ անդ Թագաւորել նմա նոցա· փոխանակ՝ Եթէ Դաւիթ գալոց է շինել զԵրուսաղէմ . . . եւ անդ թագաւորելոց է նա նոցա։ *

---

## ԳԼՈՒԽ Բ.

### ԽՆԴԻՐ

113. Խնդիր կ՚ըսուին այն բառերը որոնք ուրիշ բառի մը քով դրուելով անոր իմաստը կ՚որոշեն կամ կ՚ամբողջացնեն. զոր օրինակ.

Լեւոն յիշենեաց· Արժանի հօրենց· Վասն խաղաղութեան· Առաքեաց շեղակն յայտէ էր խօսքերուն մէջ՝ յիշենեաց, հօրենց, խաղաղութեան, շեղակն յայտէ էր բառերը խնդիր են։ Առանց աս բառերուն՝ Լեւոն, Արժանի, Վասն, Առաքեաց՝ որոշ կամ կատարեալ իմաստ մը չեն տար։

114. Խնդիր ունեցող բառը խնդրաւոր կը կոչուի. վերի օրինակներուն մէջ Լեւոն, Արժանի, Վասն, Առաքեաց բառերը խնդրաւոր են։

---

* Այս ձեւ խօսքերու մէջ Տէր բային վայելչութեամբ ուղղական կամ հոլովական այլ դրուած կը գտնուի. զոր օրինակ· ժողովուրդն որ կայր եւ լսէր՝ ասէին որոտումն լինել. այսինքն ասէին թէ որոտում. մն լինի՝ ՆՆՋէՆ առեն զի ք ԶԱստուած եւ գոհութիւնս այսինքն՝ գիրք առեն ԷԲԷ Աստուածաշունչ եւ ղարձնաւ

115. Խնդիր առնող բառերն են Ա. Գոյականը, Բ. Ածականը, Գ. Նախադրութիւնն ու Դ. Բայը։

1925

### Ա. ԳՈՅԱԿԱՆԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

116. Գոյական անունը, կամ գոյականաբար առնուած Ածական մը և Անորոշ դերբայներ սեռական հոլով խնդիր կ'առնեն, որուն հայերէն յատկացուցիչ ըսել սովորութիւն եղած է. ինչպէս որ սեռական հոլով խնդիր առնող բառն ալ յատկացեալ կը կոչուի. զոր օրինակ.

Լոյս աշխարհի, Իմաստութիւնք Յունաց, Ի ծնանելն Յիսուսի, խօսքերուն մէջ՝ Աշխարհի, Յունաց, Յիսուսի, յատկացուցիչ են. Լոյս, Իմաստութիւնք, Ծնանել բառերն ալ յատկացեալ են։

Յատկացուցիչը՝ որո՞ւն, ինչի՞ն, հարցման պատասխան է. Վերի խօսքերուն մէջ սա հարցումը կրնանք ընել.

Որո՞ւն լոյսը. — աշխարհին. Որո՞ւն իմաստութիւնները. — Յունաց. Որո՞ւն ծնանելու ատենը. — Յիսուսին։

117. Բայի զօրութիւն ունեցող գոյականներ՝ նոյն արմատէն շինուած բայերուն առած բնութեան խնդիրները կրնան առնել. ուստի կ'ըսուի.

Դարձ յերկիր. Մուտ յաշխարհ. Ել յերկինս, —

Հայր· Դարձ 'ի գերութենէ. Ելք 'ի Բաբելոնէ. Գալուստն յԵրուսաղէմ. Փրկութիւն 'ի թշնամեաց. Ապս-տամբութիւն յօրէնաց. Փախուստ 'ի Սաւուղայ. Լուան զորդւոյն ժողովրդեանն զնմանէ. Վասն ամբաստանութեան Հրէից զինէն. Պատերազմ Արշակայ ընդ Մակեդոնացւոց զօրութեանն ։

Այս օրինակներուն մէջ՝ դարձ՝ դառնալ բային առնելու խնդիրն առած է. այսինքն՝ Դարձ (դառնալ) — Ո՞ւր. — յերկիր։ Մուտ բառն ալ մտնել բային խնդիրն առած է. այսինքն՝ Մուտ (մտանել). — Ո՞ւր. — յաշխարհ։ Փախուստ՝ փախչել բայինը. Փախուստ (փախչել). — Ուստի՞ կամ որմէ՞. — 'ի Սաւուղայ։ Լուան զորդւոյն. Տրտունջը լսեցին. — Որո՞ւն վրայով. — Զնմանէ. անոր վրայով։

## Բ. ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ

118. Ածականներն, ինչպէս նաև Ընդունելութիւններ, որոնք երբ ածական կը գործածուին, կրնան ուղղականէն զատ ամեն հոլով խնդիր առնել. զոր օրինակ.

Ա. Սեռական հոլով խնդիր առնողներ.

Արտաքէտ ամենայնի, Կամարար Աստուծոյ, Օրէնսդիր ազգաց, Աւարառուք ստացուածոց։

Նոյնպէս էլ և ելք վերջաւորուածներ։

Արարիչ աշխարհի, Գտիչ չարեաց, Առնելիք գործոց։

Բ. Տրական հոլով խնդիր առնողներ.

Նման Նմ—. Հաւասար —ոլոց. Դիմակաց Նոֆ—
—ոլէ. Արժանի ճ—ոլ—ոց. Հմուտ —ոլ—ոյ. Հնազանդ —
մ—. Կարօտ հ—ցէ. Ծարաւի —ոլէ—ն. Տգէտ —ոլ—
ն—ն. Տեղեակ ն—ոլ—ն—ն. Աներեւոյթ —ոլոց. Ըն-
դունելի Ա—ոլ—ծոյ. Հաճոյ —ոլոց. Բաւական —մ—ոյնէ։

Գ. Բացառական հոլով խնդիր առնողներ.

Լի 'ի հ—ոյ խ—ղոյն. Երկիւղած յԱ—ոլ—ծոյ. Ա-
պրստամբ յօրէն—ց. Արձակ 'ի լծ—ոյ. Ազատ 'ի մ—ոլոց.
Փախստական կամ փախստեայ յե—ոլ—ց թշնամ—ոյն.
Աղքատ յըն—ոլ—ց. Անզեղջ 'ի ոլ—ոլ—ց. Տկար յ—ոլ—ց. Կա-
րօտ յն—ոլ—ն—ն. Մանուկ 'ի —ոլ—ց. Տգէտ 'ի —ոլ—ց.
Անատես, Աներեւոյթ յ—ոլոց. Անյայտ 'ի —ոլ—ոլ—ն. Հե-
ռի 'ի —ոլ—ն. Տարագիր յ—ոլ—ոլ—ց. Օտար 'ի —ոլ—ոլ—
—ց. Թերի յն—ոլ—ն—ն. Թափուր 'ի —ոլ—ոլ—ց. Ու-
նայն 'ի —ոլ—ց. Սուրբ, Անարատ 'ի մ—ոլոց. Միայն
յ—ոլ—ց. Մեկուսի 'ի ն—ոլ—ն. Մատաղ յ—ոլ—ոլ—ց. Ի մ—ոլ—
—ոլ—ց թեթեւ. Յ—ոլ—ոլ—ոլ—ց ('ի բնութենէ) թեթեւ,
Ի —ոլ—ց ե— 'ի յ—ոլ—ց անպիտան. Անարգ յ—ոլ—ց։

Դ. Գործիական հոլով խնդիր առնողներ.

Լի —ոլ—ոլ—, —ոլ—ոլ— բարեաց. Կարօտ —ոլ—.
Ծարաւի —ոլ—ոլ—. Մանուկ —ոլ—ոլ—. Բ—ոլ—ոլ—ոլ— թե-
թեւ. Հզօր —ոլ—ոլ—. Երկայն, կարճ —ոլ—ոլ—. Գեղե-
ցիկ —ոլ—ոլ—ոլ—. Տգեղ —ոլ—ոլ—. Արագ —ոլ—ոլ—։

Ե. Հայցական խնդիր առնող ածական-
ներ ալ կը գտնուին, մանաւանդ լէ վերջա-
ւորուածներ որոնք —ոլի զօրութիւն ունին.

Զ—ոլ—ոլ— անարգուք. Ոտք —ոլ—ոլ—ոյից կրեկեաց

շտապանօքն. Ի ձեռս գործելեաց զգործս կանի տանն Տեառն

Զ. Նախադրութիւններով խնդիր առնողներ.

Բաւական առ ամենայն. Հեղգ առ ուսումն. Փոյթ յառաջադիմութեան. Արագ ՚ի ներել. Ծանր ՚ի բարկանալ. Առատ ՚ի պարգեւս. Գթած առ ամենեսեան. Գոհացող զԱստուծոյ. Զարախօս զամենէ. Սողուն ՚ի վերայ երկրի. Քաղցր առ ամենեսեան, Ծարաւի է անձն իմ առ քեզ.

119. Թուական և անորոշ ածականներ բացառական հոլով խնդիր կ'առնուն. զոր օրինակ.

Մին, Ոմն, Ոմանք, Այլք, Իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ. Երկու ՚ի ձէնջ. Ոչ ինչ յերկրաւորաց. Ոչ թէ վասն զի պիղծ ինչ կայցէ ՚ի կերակրոց. Արձակէր նոսա ինչ ՚ի հանդոյ. Ո՞, կամ Ո՞ ոք ՚ի ձէնջ. Վասն որո՞յ գործոյ ՚ի նոցանէ. Ոք յընտրանեաց քոց. Զայլ ոք յառաջեւելոց անտի ոչ գտի. Ոչ եմ իբրեւ զայլս ՚ի մարդկանէ. Բանիք ՚ի մարդկանէ.

Նոյնպէս քանակութիւն ցուցնող ածականներ. ինչպէս, Բազումք, կէսք, շատք, փոքունք, ամենայնք, և այլն, Թուականներուն պէս բացառական խնդիր կ'ուզեն. զոր օրինակ.

Բազումք ՚ի նոցանէ. Զբազումս ՚ի մոգուց. Ի կանանց փիլիսոփայից ոչ սակաւք. Փոքր ՚ի շատէ. Կէսք ՚ի նոցանէ. Առ փոքու ՚ի ջրոյ անտի.

120. Իսկ Ըստ քան Թուական անուանց

հետ գործիական կը դրուի, զոր օրինակ.

Մատունք ձեռաց նորա եւ ոտից վեց վեց, քսան եւ չորք թուով. Արամբք զօրաւորօք թուով իբրեւ երեքհարիւր. ի հրապարակ ածել թուով իբրեւ եօթն հարիւր. թուով բազում. թուով յոյժ նուազունք. թուով սակաւ։

Նս տեսակ, այսինքն թուական եւ անորոշ բառեր, երբեմն 'ի նախադրութեամբ հայցական ալ խնդիր կ'առնեն. զոր օրինակ.

Ոչ ոք է նման քեզ յԱստուածս, տէր. Ոչ ոք կարօտէր 'ի նոցանէ. Ոչ ոք յորդւոց Ադամայ գտաւ առանց մեղաց. Ո՞վ նմանիցի Տեառն յորդւոց Աստուծոյ. Չորրորդն 'ի նոցանէ 'ի կերպարանս առիւծու. Ի նահապետացն եօթներորդն յԱդամայ Ենովք։

Գ. ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ

121. Նախադրութիւններէն ոմանք այլ եւ այլ հոլով խնդիր կուզեն, եւ խնդիրը փոխելով տարբեր իմաստ կուտան. այսպէս են Ի, Յ, Զ, Առ, Ընդ, Ըստ, Ց. նախադրութիւնները։

Ի կամ Յ

Ա. Ի կամ յ նախադրութիւնները եզակի մէջ տրականով *դադարման կը ցուցնեն, ինչ

* Ոմանք ի կամ յ նախդիրով տրականը՝ ներգոյական կը կոչեն. ի կամ յ նախդիրով հայցականն ալ՝ [illegible] [illegible]

անորոշ (առանց ըլի) հայցականով շարժում կը ցուցնեն. զոր օրինակ.

Արար ընդունելութիւն մեծ նմա Ղեւի 'ի տան իւրում. Այսօր 'ի տան քում արժան է ինձ ագանել. Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. Ուսուցանէր զնոսա հանապազ 'ի տաճարին. Այր մի տնկեաց այգի եւ փորեաց 'ի նմա հնձան։

Ա՛ս օրինակներուն մէջ գործողութիւնը դադարում է։

Եհան զնոսա 'ի լեառն մի բարձր. Եւ գնաց յանապատ տեղի. Խաղացո զնաւդ 'ի խորն եւ արկէք զգործիս ձեր յորս. Էջ 'ի տեղի մի տափարակ. Համարէին թէ 'ի գերեզմանն երթայ։

Ա՛ս օրինակներուն մէջ ալ գործողութիւնը շարժում է։

Նոյն է կամ, նախադրութիւնները յոգնակիի մէջ. եւ Զորրորդ, Հինգերորդ եւ Վեցերորդ հոլովմանց, այսինքն Դ. Ե. Տրտ. եւ Ա—խ—խ—ժ անուններուն պէս հոլովող բառերը եզակիին մէջ ալ, թէ դադարում եւ թէ շարժում ցուցնելու համար անորոշ հայցական կ՚ուզեն. զոր օրինակ.

Դադարում. Բնակէր 'ի գերեզմանս. Աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա. Եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինս է. Աստուած ոչ 'ի ձեռագործ տաճարս բնակէ. Նման է մանկտւոյ որ նստին 'ի հրապարակս. Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ա-

ստացէք 'ի լուսոյ. Էր Պետրոս 'ի տան. Հեղձաւ 'ի ջրին. Կորել յոսա:

Շարժում. Ածին զնա յապարանս թագաւորին. Ոչ հնձեն եւ ոչ ժողովեն 'ի շտեմարանս. Առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն 'ի հարսանիս. Արձակեաց զժողովուրդն 'ի տունս իւրեանց. Հողեփեռնէս մտեալ 'ի մահիճս իւր 'ի քուն եղեւ. Անկաւ երկաթն 'ի ջուրն. Մտանել 'ի լոյս. Բանալ յոսա:

Ի կամ յ նախադրութիւնք երբ այսպէս դադարում կամ շարժում, այսինքն՝ տեղ կը ցուցընէ, որ հարցման պատասխան է. զոր օրինակ. Նստանել.— Ո՞ւր. — 'ի տան տոմ. քու տունդ. Ուսուցանէր. — Ո՞ւր. — 'ի տաճարին. տաճարին մէջ: Նստէր. — Ո՞ւր. — 'ի գերեզմանս. գերեզմաններու: Եհան. — Ո՞ւր. — 'ի լեառն. լեռ մը: Գնաց. — Ո՞ւր. — յանապատ. անապատ: Ծնիւ. — Ո՞ւր. — յապարանս թագաւորին. Թագաւորին պալատը:

Բ. Ի կամ յ նախադրութիւնք եզակի մէջ տրական եւ յոքնակի մէջ հայցական խնդրով գործողութեան մը առնելը կը ցուցնէ. զոր օրինակ.

Յաւուրս Հերովդի արքայի. Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի. Տեղայր մարգարիտ 'ի հարսնութեանն Սաթինկան:

Նորէն դերբայներն ալ Ի կամ յ նախադրութեամբ՝ առնելը կը նշանակեն, բայց ու-

բական չեն դրուիր, այլ միշտ հայցական. զոր օրինակ՝ 'ի ծնանելն Յիսուսի, 'ի խռնելն զնովաւ ժողովրդեանն։ Այսպէս կ'ըսուի նաև։

Ի նմին աւուր. յաւուր յայնմիկ. 'ի ժամանակի անդ. 'ի նմին ամի. յերկրորդում աւուր. 'ի գիշերի. յերեկոյի. յառաւօտու. 'ի գարնան. յամարան. յաւուրսն յայնոսիկ. եւայլն։

Ի կամ յ նախադրութիւնը երբ ատեն կը ցուցընէ, Ե՞րբ հարցման պատասխան է. զոր օրինակ. Եկին մոգք. մոգերը եկան. — Ե՞րբ՝ — յաւուրս Հերովդի. Հերովդէսին օրերը։ Տեղ ոսկի տեղայր. ոսկի կը տեղար. — Ե՞րբ. — 'Ի թագաւորութեան Արտաշիսի. Արտաշէսին թագաւորութեան ատենը։ Ե՞րբ. — 'Ի գիշերի, յաւուր յայնմիկ. եւ այլն. գիշերը, ան օրը։

Գ. Ի կամ յ նախադրութիւնը անորոշ հայցական խնդրով գործիականի նշանակութիւն ալ կ'ունենայ. զոր օրինակ.

Աղաղակեաց 'ի ձայն մեծ. Անկցին 'ի սուր սուսերի. Մաշել 'ի սուր եւ 'ի հուր. Երեւեցաւ նոցա 'ի սեան ամպոյ. 'ի լոյս երեսաց քոց, փոխանակ ըսելու, Ձայնիւ մեծաւ. սրով սուսերի. սրով եւ հրով. լուսով երեսաց քոց. եւայլն։

Ի կամ յ նախադրութեանս այս նշանակութեանը որո՞վ. ի՞նչ բանով հարցման պատասխան է. զոր օրինակ. Ի՞նչ բանով. — Ի ձայն մեծ. մեծ ձայնով։ Ի՞նչ բանով. — Ի սուր եւ 'ի հուր. սրով և հրով։

Գ. Ի կամ յ նախադրութիւնք անորոշ հայցական խնդրով ձևն, համար, նախադրութեան նշանակութիւնն այլ կրնայ ունենալ․ զոր օրինակ․

(Արարածք) մեզ 'ի պէտս են, և կարգչին իւրեանց 'ի փառս․ Արեգակն ընդ ժամանակս ժամանակս 'ի խաւար զատնայ առ 'ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից․ Լուսաւորք փառն լուսաւոր լինելոյ միայն արարան, և 'ի նշանս և 'ի ժամանակս և յաւուրս, յամս և 'ի տարիս․ Զի՞նչ է այդ․ և ասէ Միքա․ Էշքդ՝ նստելոյ արքային, և հացդ և արմաւդ՝ 'ի կերակուր մանկանցդ․ Այս եղիցի ձեզ 'ի խրատ և 'ի զգուշութիւն․ Ի ճեւէ եկեալ եմ Ոչ եւս եղիցի ջրհեղեղ ջուրց 'ի ապականել զամենայն մարմին։

Աս նշանակութեամբ 'ի կամ յ նախադրութիւնք ինչո՞ւ համար հարցման պատասխան է․ զոր օրինակ․ Արարածք են․ — Ինչո՞ւ համար․ — Մեզ 'ի պէտս․ մեր գործածութեանը համար։ Արեգակն 'ի խաւար զատնայ․ — Ինչո՞ւ համար․ — 'ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից․ իրեն պաշտօն մատուցողներուն յանդիմանութեան և ամօթի համար։ Այս եղիցի․ — Ինչո՞ւ համար․ — Ձեզ 'ի խրատ և 'ի զգուշութիւն․ ձեզի խրատու և զգուշութեան համար։

Զ.

122. Ա. Օ. նախադրութիւնք նախ՝ հայ-

ցական հոլովին հետ կը գործածուի։

Բ. Ը՛նդ Նախադրութիւնը բացառականով* մէկուն կամ բանի մը վրայով կը նշանակէ. զոր օրինակ.

Զի՞նչ է այս զոր լսեմս զքէն. աս քու վրայովդ լսած ի՞նչ է. Տրտնջէին զնմանէ. անոր վրայով կը տրտնջէին. Բերէին համբաւ չար զՅովսեփայ. Եւ համբաւ զնմանէ. Սպասէին որսալ բանս ինչ 'ի բերանոյ նորա զի չարախօսեսցեն զնմանէ. անոր բերնէն խօսք մը որսալու կը սպասէին, որ անոր վրայով չարախօսութիւն ընեն։

Գ. Ը՛նդ Նախադրութիւնը գործիականով** կը նշանակէ. 1° Անորոշ ժամանակ մը, զոր օրինակ.

Յարուցեալ ընդ գիշերաւ. կէս գիշերուան ատենները. Ընդ միջաւուրբ ծագեաց լոյս. կէս օրուան ատենները լոյս ծագեց։

Այսպէս կըսուի.

Ընդ հասարակ աւուրբ. Ընդ միջօրէիւ. Ընդ հասարակ գիշերաւ. Ընդ միջոցաւ ճանապարհին. Ընդ այնու ժամանակաւ, կը նշանակեն. Կէս օրուան, կէս գիշերուան ատենները. Ճամբուն կէս եղած ատենները. Ան ատենները։

2° Բոլորտիքը. զոր օրինակ.

---

* Ոմանք զսոյն բացառականը՝ պարագայական հոլով կ'անուանեն

** Ոմանք զսոյն գործիականին՝ պարառական կ'ըսեն

Ի խռնել զնովաւ ժողովրդեանն՝ ինքն կայր առ ծովակին. Ժողովուրդին անոր բոլորտիքը դիզուած ատենը։ Առ զիւրեւ յորոյ վերայ անկեալն դնէր. Պատեաց զնոքօք ան. Անկաւ զպարանոցաւ նորա։

## ԱՌ

Ա. ԱՌ Նախադրութիւնը է կամ յ Նախադրութեան տեղ կը գործածուի երբ խօսքն անձանց վրայ է։

Երբ բայը շարժում մը կը նշանակէ, — Նախադրութիւնը թէ եզակի և թէ յոգնակիի մէջ անորոշ հայցական կ'ուզէ, զոր օրինակ.

Բարեկամ իմ եկու առ ես յուղւոյ. Բարեկամս դրուէն ինծի կամ առնս եկաւ։ Յորժամ երթիցես առ իշխանն. Երբ իշխանին կ'երթաս։ Կոչեաց առ ինքն զմի 'ի ծառայիցն։ Յղեցին առ Նաաման։ Մատեան առ Փարիսեցիս։ Ընթացան առ [illegible]։

Բ. Առ Նախադրութիւնը եզակի մէջ տրական, յոգնակիի մէջ անորոշ հայցական խնդրով քովը կը նշանակէ, զոր օրինակ.

Եկաց առ Նմա աւուրս երկուս. Երկու օր անոր քով կեցաւ։ Առ առն մեղաւորի եմուտ լուծանել. Մեղաւոր մարդու քով կամ տանը օթեւան ընելու մտաւ։ Բնակեցաւ առ եղբօր իւրում. Եղբօրը քով բնակեցաւ։ Ծառայեցի առ քեզ. Քու քովդ ծառայութիւն ըրի։ Եկաց առ Նոսա։ Նստէր առ դրանն. Դրանը քովը կեցաւ։ Կայր առ ծովակին, առ խաչին։ Սպասէին առ դրանն։

Գ. Ս— սեռականով համար կամ պատճառ— կը նշանակէ և շարժառիթ կը ցուցնէ. զոր օրինակ.

Ա— ամօթոյ փախչին 'ի նմանէ. Ամչնալէն կը փախչին։ Ա— նախանձու մատնեցին զնա. Նախանձու համար կամ նախանձուէ շարժեալ մատնեցին։ Ա— խնդոյ յիշատակի. Իմ յիշատակիս համար։

Ս— մօքով երբեմն առանց 'ի հայցական ալ կ'առնէ, մանաւանդ անորոշ դերբայները, զոր օրինակ.

Ա— սէր քո արարի զայդ. Քու սիրոյդ համար ըրի։ Ա— զութ Փիլիպեան ազգին՝ Փիլիպպոս անուանեցին. Փիլիպեան ցեղին սիրոյն համար։ Ոչ թէ — ատել ասեմ. Ոչ թէ ատելուս համար կ'ըսեմ։ Ով 'ի ձէնջ — հոգալ իւրում յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի. Ո՞վ հոգալովը իր հասակին (պօյին) վրայ կրնայ կանգուն մը աւելցնել։ Ա— չժուժել ծախուցն եղեւ փախստական. Ծախքին չդիմանալէն՝ առաւ քալեց։ Ա— չգիտանս եկեր։ Ա— ցաւս իւր ձչել։ Ոչ — ցաւումն ինչ, քաւ լիցի։

Դ. Ս— կամ —ն բացառականով 1° ա—մօր այսինքն՝ իբր նպատակ կը նշանակէ, զոր օրինակ.

Նզովեաց զթզենին — օրէնակէ. Թզենին օրինակ ըլլալու համար անիծեց կամ՝ Անիծեց որպէս զի օրինակ ըլլայ։ Ա— ——կէ շրջեցուցանէին. Խայտառակութեան համար կը պտտցնէին։ Ա— եղեռ-

նէ նորա եղեւ. Անոր վնասուն համար եղաւ։ Ա— ականէ ծառայել. Երեսպաշտութեան (միւտահանէ) համար ծառայել։ Ա— 'ի չգոյէ հիւթոյ. Հիւթ չունենալուն համար։

2°. Դարձեալ — 'ի բացառականով՝ նիւթն կը նշանակէ.

Աննմարինքն — 'ի մարդկանէ. Մարդոց նիւթանէ անկարելիները։ Ոչ տկարասցի — յԱստուծոյ ամենայն բան. Աստուծոյ նիւթանէ բան մը անկարելի չէ։

Ե. Ա— ի, — Անորիշ դերբային հայցականովը կամ տրականովը նոյնպէս պատճառ կամ նպատակ կը ցուցնէ. զոր օրինակ. Ա— 'ի խնդրել, Ա— 'ի պատմելոյ, Ա— խրատել, Ա— ուղղելոյ և այլն. որոնք կը նշանակեն. փնտռելու, զրուցելու, խրատելու, ուղղելու նպատակաւ կամ համար։

Ա— գործիականով՝ կը նշանակէ. 1°. Մէկուն կամ բանի մը տեղը, զոր օրինակ.

Ա— Աբիադարաւ քահանայապետի. Ա— նովաւ լինէր Դեւկալիոնեան ջրհեղեղն. Հեթանոսութեան սկիզբն — Թարայիւ, հարբ Աբրահամու եղեւ։ Ա— կենդանութեամբ առն իւրոյ։

2°. Բ—ն 'ի վեր, կամ Երեսն 'ի վեր (մակերեւոյթին վրայէն), զոր օրինակ.

Անց — նովաւ. Անոր քովէն անցաւ։

Նոյնպէս կ'ըսուի.

Բերել — ափամբք. Եղերքն 'ի վեր (գըյը ըը-

րա) երթալ. Նաւել — եզերք. Գնային — որմոյն. Նստէր — ճանապարհաւն։

3° Համեմատութեան, զոր օրինակ.

Զի՞նչ է յարդ — ցորենով. Յարդը ցորենին քով ի՞նչ պիտի ըլլայ։ Արդարացաւ ապստամբութիւնն Իսրայելի — ապստամբութեամբն Յուդայ. Իսրայէլին ապստամբութիւնը՝ Յուդայի ապստամբութեան նայելով արդարացաւ։ Այս փոքր ինչ է — նովաւ. Անոր նայելով ասիկայ փոքր բան է։

## ԸՆԴ

Ա. Ը՛նդ սեռական խնդրով Փոխանակ, տեղը կը նշանակէ. զոր օրինակ.

Թագաւորեաց որդի նորա ընդ նորա. Որդին անոր տեղը թագաւորեց։ Ակն ընդ ական եւ ատամն ընդ ատաման. Աչքի տեղ աչք եւ ակռայի տեղ ակռայ։ Զայն առեալ տացես ընդ իմ եւ ընդ քո. Առ զմի 'ի կողից նորա եւ ելից ընդ այնր մարմնի. Այն նոցա ընդ հատուցման բարեաց գործոց լինիցի. Ընդ ամենայն դատարկ բանի համարս տացեն. Եւ մեզ վիշտ ժառանգի է ընդ կուսոյս։

Բ. Ը՛նդ եզակիի մէջ տրականով, յոգնակիի մէջ հայցականով Հետ կը նշանակէ, զոր օրինակ.

Հանին ընդ նմա 'ի խաչ երկուս աւազակս. Անոր հետ երկու աւազակ խաչը հանեցին։ Եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց. Բազում մաքսաւորք բազմեալ էին ընդ

Յիսուսի եւ ընդ աշակերտս նորա. Ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէ եւ ըմպէ. Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի։

Գ. Ընդ անորոշ հայցականով կը նշանակէ.
1° Բանի մը մէջէն կամ մէջ տեղէն. եւ աշխարհաբար բացառականով կը Թարգմանուի, զոր օրինակ.

Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր. Քու հոգիէդ ալ սուր պիտի անցնի։ Ջանացարուք մտանել ընդ նեղ դուռն. Նեղ դռնէն։ Գնաց ընդ արտորայսն 'ի շաբաթու. Արտերուն մէջէն։ Եմուտ ընդ պատուհանն 'ի ներքս. Պատուհանէն ներս։ Ընդ եղեգան փող բոց ելանէր. Եղեգին մէջէն։ Ընդ մէջ կտրել. Ընդ երկուս կտրել, բաժանել։

2° Ընդարձակութիւն կամ տարածութիւն, զոր օրինակ.

Ել հրաման յԱւգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս. Օգոստոսէն հրաման ելաւ որ բոլոր աշխարհի վրայ աշխարհագիր ըլլայ։ Ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին. Անոր լուրը գաւառին ամէն կողմը տարածուեցաւ։ Քստմունք գնան ընդ անդամսն. Բոլոր անդամներուն վրայ դող մը կուգայ.

Այսպէս կ'ըսուի.

Շրջել ընդ քաղաքս, ընդ գեօղս, ընդ երկայնութիւն դաշտին, ընդ եզր ծովուն. Գնալ ընդ ցամաք, ընդ ծով, ընդ ճանապարհ, ընդ երեսս դաշտին։

3° Անորոշ ժամանակ մը, կամ դէպ այս

ինչ ատեն կամ ժամանակ, զոր օրինակ.

Ընդ այն ժամանակս. ընդ առաւօտն ընդ այնուհետ. ընդ երեկս. ընդ այգն, ընդ առաւօտն, ընդ ծագել արեգականն, ընդ երեկս. ընդ առաւօտս: Տես եւ 122. Գ. 1. ւ ով բացառականի օրինակները:

4. Շարունակութիւն ժամանակի, զոր օրինակ.

Ընդ ամս տասն. ընդ ամս բազումս, ընդ գիշերն ողջոյն:

5. Կողմէն. դիէն, զոր օրինակ.

Ընդ հիւսիս, ընդ հարաւ. ընդ արեւելս.

6. Երկու բան իրարու կցել, զոր օրինակ.

Կարել ընդ մորթ. Կապել ընդ նաւն. Տուն ընդ տան կցել. Անկցի ժողովուրդն այր ընդ այր. որոնք կը նշանակեն, Մորթին հետ կարել. Նաւին հետ կապել. Տուն տունի հետ կցել, եւ այլն:

7. Միանգամայն, ամէնը մէկէն, զոր օրինակ.

Ընդ այր եւ ընդ կին եւ ընդ մանկունս. Երիկ-մարդ, կնիկ մարդ ու տղայք միանգամայն. Ընդ հեծեալ եւ ընդ հետեւակ. Ընդ ամենայն՝ հարիւր կանգուն. Ընդ ամէնը՝ հարիւր կանգուն. Ընդ բնաւ՝ չորեքհարիւր այր. Բոլորը՝ չորս հարիւր մարդ.

8. Երկու բանի մէջ տեղը, զոր օրինակ.

Մի լիցի կռիւ ընդ իս եւ ընդ քեզ. Ընդ հովիւս իմ եւ ընդ հովիւս քո: Իմ եւ քու, իմ հովիւ-

ներուս եւ քու հովիւներուդ **մէջտեղը** կռիւ չըլլայ. է այն **ընդ Կադէս եւ ընդ Բարադ.** Կադէսի եւ Բարադի **մէջտեղն** է. կախեցաւ **ընդ երկինս եւ ընդ երկիր.** Երկինքի ու երկրի **մէջտեղը**: Ոչինչ է խտիր **ընդ բազումս եւ ընդ սակաւս.** Շատի եւ քչի **մէջտեղը** տարբերութիւն չկայ. Լեառն որ բաժանէ **ընդ Աղձնիս եւ ընդ Տարօն.** **Ընդ ճշմարտութիւն եւ ընդ ստութիւն**:

Դ. **Ընդ** առանց ի ի բացառականով, **կողմն, դիէն** կը նշանակէ, զոր օրինակ.

Սեմէի երթայր մօտ առնա **ընդ կողմն** լերինն. Սեմէի անոր մօտ լերանը **դիէն** կ'երթար. **Ընդ արեւելից կողմանէ.** Արեւելքի **դիէն**. **Ընդ աջմէ. ընդ ահեկէ.** Աջ **դիէն**, ձախ **դիէն**.

**Ընդ** գործիականով **տակը** կը նշանակէ, զոր օրինակ.

Հանգչել **ընդ հովանեաւ.** Շուքին **տակը** հանգչիլ. Բնակել **ընդ որթով եւ ընդ թզենեաւ.** Հաւ ժողովէ զձագս իւր **ընդ թեւովք.** Ունիմ **ընդ իշխանութեամբ իմով** զինուորս. Զովասջիք **ընդ ծառովս.** **Ընդ ստորոտով** լերանց. Պատի **ընդ** հիւսիսիւ:

**Ընդ** անորոշ դերբայի հետ գործածուելով, բան մը **ընելուն պէս** կը նշանակէ, զոր օրինակ.

**Ընդ բուսանելն** չորացաւ. **Բուսնելուն պէս** չորցաւ:

## ԸՍՏ

Ա. **Ըստ** տրական խնդրով **համեմատ** (կէօրէ) կը նշանակէ, զոր օրինակ.

Արասցուք մարդ ըստ պատկերի մերում. Մեր պատկերին համեմատ մարդ ստեղծենք։ Եղիցի ինձ ըստ բանի քում. Թող քու խօսքիդ համեմատ ըլլայ։

Բ. Ըստ անորոշ դերբային տրականովը կամ հայցականովը, առաջնաբար, ըստովը կը նշանակէ, զոր օրինակ.

Ըստ պակասելոյ ամացն. Տարիներուն պակսելուն ըստով։ Ըստ յաճախելոյ արմտեացն. Արմտեաց շատնալուն ըստով։ Տեղիք ինչ են ծովու, որոց ջուրն ըստ աճել լուսնոյ աճէ, եւ ըստ պակասելն՝ պակասէ։

Գ. Ըստ անորոշ հայցականով կը նշանա-կէ

1. Տեղւոյ կամ իրի մը սահմանէն անդին, զոր օրինակ.

Անցանել ըստ բլուրս եւ ըստ արձանս ըստ այս. Այս բլրէն եւ այս արձանէն անդին. Ելին ըստ քաղաքն. Քաղաքէն անդին ելան։ Ըստ երկիր անդր ոչինչ է. Երկրէն անդին ոչինչ է։ Ելեալ արտաքս ըստ սահման երկրին Ասորւոց. Ասորւոց երկրին սահմանէն անդին ելելով։

Այսպէս կ'ըսուի.

Ելանել ըստ դատաստան, ըստ հրաման, ըստ չափն ուրուք, ըստ ուժ. Ըստ ակն անկանել. Աչքի տեսութենէ անդին իյնալ, այսինքն՝ ալ չերեւնալ։

2. Ըստ մէկ, մարդ գլուխ, զոր օրինակ.

Տալ ցորեան ըստ բերան, Բերան, այսինքն՝ մարդ գլուխ ցորեն տալ։ Ըստ տունս ազգացն՝ ոչխար ըստ

Էրր. Ահն մէկ ցեղէ՝ տուն ճըռուխ ոչխար մը:

Այսպէս կըսուի.

Ըստ տըր, ըստ ճըռուխ, ըստ փըռան:

Դ. Ըստ առանց է ի բացառականով յաջորդութեան նշանակութիւն ունի, զոր օրինակ.

Զթագաւորսն որ ըստ նմանէ էին. Անկէ ետքը եղող, կամ անոր յաջորդող թագաւորները: Եհաս վճիռն Աստուծոյ 'ի վերայ Ադամայ եւ որոց ըստ նմանէ էին. Ադամի եւ անկէ ետքը եղողներուն վըրայ Աստուծոյ վճիռն հասաւ:

Այսպէս կ'ըսուի.

Ամ ըստ ամէ. Մի ըստ միոջէ. Այր ըստ առնէ:

Ց

Ց նախադրութիւնը միշտ հայցական խնդիր կ'ուզէ, եւ կը նշանակէ. 1° Մէկուն, եւ քանի մը բայերու հետ կը գործածուի, զոր օրինակ՝ ասեմ, հարցանեմ, տամ, ինչպէս.

Ասէ ցնոսա. Ասէ ցորդին իւր. Ասէ ցծառայսն իւր. Հարցին ցնա. Հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս. Խփեալ զգիրսն ետ ցպաշտօնեայն եւ նստաւ:

2° Կը նշանակէ մինչեւ. Երթիցուք ցԲեթղահէմ:

123 Սուրբ նախադրութիւններէն ո-

մանք ածական հոլով խնդիր կ՚ուզեն. ինչպէս շատ մը տեղւոյ պարագաներ ցուցնող նախադրութիւններ, զոր օրինակ. առաջի, ընդ, յետ, ՚ի վերայ, յանդիման, ՚ի ներքոյ, արտաքոյ, ՚ի մէջ, յայնկոյս, յայսկոյս. նոյնպէս փոխանակ եւ ձան նախադրութիւնները։

Ոմանք տրական կ՚ուզեն, ինչպէս, ընդդէմ, դէպ, հանդէպ եւ ուրիշ տրական խնդիր պահանջող ածականներ, երբ մակբայօրէն կը գործածուին։

Ոմանք բացառական կ՚ուզեն, ինչպէս, հեռի, զատ, բաց եւ բացառական խնդիր պահանջող ածականներ, երբ մակբայօրէն կը վարուին։

Ոմանք գործիական, ինչպէս, հանդերձ. [illegible]

## Դ. ԲԱՅԵՐՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

124. Բայերը Հայցական, Տրական, Բացառական եւ Գործիական հոլով խնդիր կ՚առնեն։

Ա. Հայցական հոլով։ Հայցական հոլովը խնդիր սեռի է, երբ ներգործական բայի մը Տէր բային ըրածը կը ցուցնէ, զոր օրինակ.

Որբեւայրեաց զինէր քո. Եհար զծառայ քահանայապետին, եւ եհատ զունկն նորա. Յղեաց զնա յագարակ իւր.

Սեռի խնդիր հայցականը զո՞վ, ի՞նչ բանը հարցման պատասխան է, զոր օրինակ. Սի-րեսցես. — Զո՞վ. — Զընկեր քո. Ընկերդ։ Ե-հար. — Զո՞վ. — Զծառայ քահանայապետին. Քահանայապետին ծառան. Եհատ (կտրեց). — Ի՞նչը. — Զունկն. Ականջը։

125. Հայցական հոլովը սեռի խնդիր չէ.

1. Երբ ժամանակի տեւողութիւն կը ցուցնէ, զոր օրինակ.

Զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս, եւ դու զերի՞ս աւուրս կանգնես զդա։ Զվեց օր գործեսցես. Զամենայն գիշեր աշխատ եղեաք եւ կալաք ոչինչ. Պահեալ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր ապա քաղցեաւ. Զի՞ կայք աստ ցերեկ դատարկ. Ծառայեաց ամս եօթն. Զվեց օր գործեսցես, զի զվեց օր արար Աստուած զերկինս եւ զերկիր. Զվեց ամ սերմանեսցես զերկիր քո. Երիս ժամանակս 'ի տարւոջ արասջիք ինձ տօնս. Շինեաց զնա եօթն ամ, եւ զիւր տունն շինեաց Սողոմոն երեքտասան ամ. Թագաւորեաց ամս քառասուն. Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն. Սուգ առի զաւուրս. Արկայ հանդերձ գերութեան զաւուրս (օրերով). Զչորս օրս պատրաստեսջիր 'ի նմին զաղանութեան զփիղան. Առ նմա աւուրն այն օր. Կայր մեծ ժամս յանհնարին պրկոցս. Լուսին երեսուն օր անցեալ ընդ ամենայն աստեղատունսն՝ հասանէ 'ի նոյն տեղի. եւ երկինք զմի տիւ և գիշեր առածեալ զինքեամբք շրջին 'ի նոյն տեղի. Այսուհետեւ զամենայն աւուրս երկրի՝ սերմն եւ հունձք, ցուրտ եւ

*տօթ, ամառն եւ գարուն,* գրէ ու գծեր *մի գա-գարեսցին:*

*Ժամանակի տեւողութիւն ցուցնող հայ-ցականը* ո՞րչափ ատեն *հարցման պատասխան է. զոր օրինակ.* Շինեցաւ տաճար. *Ա՛ս տաճա-րը շինուեցաւ.* Ո՞րչափ ատենուան մէջ. — Օչ-ատուան եւ գիշեր ամ. *Քառասուն եւ վեց տար-ուան մէջ:* Նշխար եղեր. *Նախատեցանք.* Որ-չափ ատեն. — Օձնեայն գիշեր. *Բոլոր աս գի-շերը:* Օտարայեայ. *Օտարայեց.* Ո՞րչափ ատեն. — Մի եօթն. *Եօթը տարի:*

2. Երբ յե —, կերդ, կամ եղանակ *կը ցուցնէ, զոր օրինակ.*

Զ.Տարան դէպ եւ ցերեկ Բաբելոնի չինէր. Խօ-սեցաւ դայս օրինակ. Զբացական տեսին դնայն օր-ինակ քանդակեցին. Առաջանձնորդ օրինակ բարձրա-նալ. Մերուժան գիր զգենն եւ զզարդ եւ զնշան սաղաւարտին բազմաց եղեալ էր դնայն օրինակ. Յի-շէ դայս յե օրինակի:

Զի — կերդ կամ եղանակ *ցուցնող հայցակա-նը* ի՞նչ յե-ով. ի՞նչ կերպով. ի՞նչ եղանակով *հարց-մանց պատասխան է, զոր օրինակ.* Շինեայ Նաւարան. *Տարան բաղաքը չինեց.* Ի՞նչ յե-ով. — Օյե- ե- ցերեկ Բաբելոնի. *Բաբելոնին ձեւովը:* Խօսեցաւ. *Խօսեցաւ.* Ի՞նչ կերպով. — Օայս օրինակ. Այս կերպով:

3. Երբ չափ *կը ցուցնէ, զոր օրինակ.*

Որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա եւ երկուս. Բարձին զնչխարս կատորացն երկոտասան առաքելոյն. Արար զծովն ձուլածոյ տասն կանգնոյ. Հատանել փայտ մի յիսուն կանգուն. Պատրաստեցի ոսկի՝ տաղանդս հարիւր հազար, եւ արծաթ՝ տաղանդս հազար հազար. Տային գարի տասն հազար քոռ. Եւ ձէթ քսան հազար լոք. Անկաւ լորամարգին զբանակաւն աւուր ճանապարհ աստի, եւ աւուր ճանապարհ անտի. Մեկնեցաւ 'ի նոցանէ իբրեւ քարընկէց մի. Որ ոք արբուցէ միում 'ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր. Չափեաց զորաձն դրանէ 'ի դուռն հարիւր կանգուն. Զկշիռ մարմնոց նոցա ոսկի տանուլին. Հեռացաւ թագաւորն զերկուս աւուրս ճանապարհ:

Զ–ք ցուցմունք հայցական հոլովի, Ո՞րչափ կամ ո՞րչափ տեղ հարցման պատասխան է, զոր օրինակ. Տ–ր–ս–ր–հ–ն կ–ր–ջ–է. Նկարիցի տանի. Ո՞րչափ կամ ո՞րչափ տեղ. – Մղոն մի. մղոն մի. Մնչեց– է նոցանէ. Ննջմէ հեռացաւ. Ո՞րչափ. – Քարընկէց մի. Բաց մի նետաւ չափ տեղ: Իրջկն ...չեար– կ–տուրց. Կատարումն վերջացին. Ո՞րչափ. – Երկոտասան աւուրս. Տաւերկու տակառ (...): Ընկ– քառամարգին. Լորամարգին ինկաւ. Ո՞րչափ տեղ – Աւուր ճանապ– նայ ասափ և աւուր ճնայ անտի. Որում մի ձամբայ մէկ դինէն, որում մի ձամբայ միւս դինէն:

4. Երբ ժամանակ կը ցուցնէ, զոր օրինակ Քառասուն անգամ զերիս աւուրս, և այլն եր–

Թիլլէք ըծ–ն–դ–ւ–րն Յէր. Երթեալ էր նորա ըէրկ–յն ծ–ն–դ–ւ–րն յաշխարհն Յունաց. Գնացեալ է ծ–ն–դ–ւ–րն հէ–ն. Մի երթար ծ–ն–դ–ւ–րն ընդ նոսա. Գնալ ըծ–ն–դ–ւ–րն Րէ–ր. Տագաւորէին երթալ ըհէ–ն ծ–ն–դ–ւ–րն. Պնդեցան արքն զկնի նոցա ըծ–ն–դ–ւ–րն Յորդանանու. Տրամութեամբ երթային ըէրկ–յն–Րէ–ն ճանապարհին. Զըէ–ն–ըէ–ն–յն գնացիք. Առաքէր զնա ըէրկ–յն ծ–ն–դ–ւ–րն. Երթիցուք ը–ը ըըրը–ն. Կարգեալ տուեալ երթան ըէրկ–յն–յէ ծ–ն–դ–ւ–րն. Երթայր ը–յ– կ–ըծ լերինն. Եկին իբրև աւուր միոյ ծ–ն–դ–ւ–րն։

Ճամբայ ցուցնող հայցականը, Ի՞նչ կամ Ո՞ր ճ–մբ–յ հարցման պատասխան է, զոր օր.

Ն՞րԻէլէ. Գնացէք. Ո՞ր ճ–մբ–յ. — Օ ճ–ն–դ–ւ–րն Յէր. Չէր ճամբան. Ն՞րԻէյ–. Նորթանք. Ո՞ր ճ–մբ–ն. — Օ–ըըրըն. Ճիտակ ճամբան։ Գ–ն–ըէ. Գնացէք. Ի՞նչ ճ–մբ–յ. — Օ ըէ–ն–ըէ–ն–յն. Լեռնէ լեռ։

2. Ի՞այի մը արծաթը եղող կամբային հետ մէ է– նոյն նշ–ն–կ–Րէ–նն ունեցող բառեր գործիականի տեղ հայցական կը դրուին զոր օրինակ.

Ես երկեան Էրկէ–ը ժծ. Մէր յուխոննական սիրեցի զքեզ. Անէծ զիս անէծ– ցուապին. Կոծեցան զնա կ–ծ ժծ. Ենար զժողովուրդն Հար–ժ– ժծ–ժծ– յոյժ. Զը–ըը–ծ իշոյ թագեացի. Խարդէլ միկեալ է ըէրկ–Րէ–ն յուխուննից. Ողբացեն ող– Զարմացարուք ըըրծ–ն. Կ–տ–– կաքուել. Եկաց յաղօթս առ Տէր ը–ժն–յն ըըըը– ը–յ– եւ ըէ–ըըը–

ատամ. Եւ նորա զնոյն բառն նմջեցին. Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ. Երկուս ժամս սպասանեն. Զախտս մանու ջերմանէր. Զմահ աղուխաւ սպանից զքեզ. Զայրումն ժամանակութիւն սպանոց տոկացեր. Զառաջին բարբառն, զնմանն ամենեցուն, նոյնդունակ լացեալ.

Նման բառեր յարաբերող յարաբերական դերանունը կամ անոնց վերաբերութիւն ունեցող ածական մը նոյնպէս կրնայ գործիականի տեղ հայցական դրուիլ, զոր օրինակ.

Մեծ էր սէրն զոր սիրեաց զնա. Վասն յանցանացն զոր յանցեաւ. Ի մեղս նոր զոր մեղաւ. Բժշկել է վէրացն զոր խոցեցին զնա. Ոչ թողից քեզ զանարգանս գլխոյն զոր անարգեցեր զնգաս. Զչէս յանցանաց քոց ոչ յանցեաւ. Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել Քրիստոսի.

Այս հայցականները գործիականի տեղ են, կամ իմաստին սաստկութիւն տալու համար. փոխանակ ըսելու, Երկեան երկիւղ մեծ. կամ երկեան յոյժ. Խնդացին ուրախութեամբ մեծաւ, խնդացին յոյժ. Յաւիտենական սիրով սիրեցի զքեզ. Սէրն զոր սիրեաց զնա. եւ այլն.

126. Կան ներգործական բայեր որոնք երկու հայցական կրնան առնել, որոց մէկը անձի անուն է, միւսը իրի, զոր օրինակ.

Որ զգեցուցանէր զՅէշ նորոգէր. Զգեցուցի զնէշ

զէ—զէ—– Ադուցի զէ—զ հէր և չ—ր—ըր. Հարցից եւ ես զՅ—զ բ—ն մ—. Հարցից ի—ւ զՅ—զ։ Զի— ի—ւ —յ—զ—ի ի—ն—ր— բանից մի հարցանէք. Ուսուցանէր զն——— առակօք բ—զ—մ ի—։ Զի—ւ խրատեցին զն— ծերքն, եւ զի—ւ մանկտին. Զի՞—ւ զրկեցի զէ—զ։ եւ այլն.

**127. Որքեմն չէզոք բայեր ալ վայելչութեամբ իրենց բնութեան խնդիրը հայցական հոլով կ'առնեն, զոր օրինակ.**

Ամենայն որ բնակեալ իցէ զը—ն—կ—զ—ն. Որ ըն—ր—զին բնակեալ նստէին. Բնակեալ նստէին զ—ֆն ծ—վ—ն. Որ զի—ր—ն—կ—զ—ն —ֆն գետոյն կարգեալ նըստէին. Զմ—ր—ն կ—զ—ն նստէին. Զամենայն՝ որ ի—ւ ակն ունիցիս յինէն արարից քեզ. Նսթեր՝ զ—ր ամսունոյցու թագաւորին. Ոչ հաճեցան զհօրն հր—մ—ն. Խնդացին զ—ր 'ի նոսա հ——ն—ն. Զկանոն (այսինքն զրկեմ) զ—նչ—ն իմ 'ի բարութենէ. Ի բամբասանաց խնայել (պահել) զէ—զ—. Նրկչոսն մի՞չս կանխէ (խորհի) զ—նհ—ր—ն—. Ասքն զ—յ—ւ ֆ———— չըջէին. Անխայեցեր (պահեցեր) զն——— 'ի մեզաց. Ի մի վայր ժողովեալ զօրս զ—ր տօնին, զ—կ—զ—ր—կ քաջութեանն ցնծան. Խանդացաւ զ—ր—ն—բ—ն —. Զզջացաւ զ—մ———ն—զ—. Ըղձանայլն զ—զ———մ—— երկրին. Ոչ խուսեցից զ—ն—— իմ. Ցեսու յաջորդեալ 'ի Մովսիսէ զ—ր—մ—ր—բ—ն—. Կեցծաւորի զ—ն—զ—բ—ն. Եզբայրն յանցեաւ զ—մ—ն—ն. Զգուշանալ զ—+ (պահել). Ապաշաւել զ—ր—ծ ի—ւ։ Համբերել զ—յ— ի—ւ։ եւայլն

**Բ. Տր—կ—ն հոլով խնդիր։**

Թող զ—ւ զպարտիս մեր. Եղբարքն Յովսեփու վաճառեցին զնա Իսմայելացւոց։

Մէկ եւ Իսմայէլացւոց տրական խնդիր են Թող եւ Վաճառեցին բայերուն։

Տրական հոլովը Որո՞ւն, (քիմ՞). հարցման պատասխան է։ Թող. Որո՞ւն. — Մէկ։ Վաճառեցին. Որո՞ւն — Իսմայէլացւոց։

Գ. Բացառական հոլով խնդիր.

Փրկեա զմեզ 'ի չարէ. Յօրանջելն եւ ձգտել ոչ 'ի դիպէ լինի, այլ 'ի Ձանձրութենէ եւ 'ի Թուլութենէ մարմնոյ։

Բացառական հոլովը Ուստի՞. Ուստի՞ հարցման պատասխան է, զոր օրինակ. Փրկեա. Ուստի՞ — Ի չարէ. Չարէն։ Յօրանջելն լինի. Ուստի՞ . — Ի դիպէ. Դիպէն. Ի Ձանձրութենէ մարմնոյն. Մարմնոյն թուլութենէն։

Դ. Գործիական հոլով խնդիր.

Բերէին զհիւանդս մահճօք. Ամենայն ինչ Նովաւ եղեւ։

Գործիական հոլովը Որո՞վ, Ի՞նչ բանով հարցման պատասխան է, զոր օրինակ. Բերէին զհիւանդս. Ինչո՞վ. — Մահճօք. Մահիճներով։ Ամենայն ինչ եղեւ. Որո՞վ. — Նովաւ. Անով։

## ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԽՆԴԻՐՆԵՐ

128. Խօսքի մը մէջ տրական, Բացառական, Գործիական խնդիրներէն զատ, որոնք

Ընդունելեան խնդիր կը կոչուին, Նախադրութեամբ խնդիրներ ալ կրնան գտնուիլ, զոր օրինակ.

Ածին զՅիսուս առ Պիղատոս. Ընկեցին զԴանիէլ ՚ի գուբն առիւծուց. Կացոյց զնա ՚ի վերայ աշտարակի տաճարին.

Այս օրինակներուն մէջ, առ Պիղատոս, ՚ի գուբն, ՚ի վերայ աշտարակի՝ նախադրութեամբ խնդիրներ են՝ Ածին, Ընկեցին, Կացոյց բայերուն։

ԳԻՏԵԼԻՔ

129. Բայերուն Տէր բայի եւ խնդիր կ'ըլլան, Գոյական, Դերանուն, գոյականաբար առնուած Ածական կամ Անցեալ դերբայ եւ Անորիչ դերբայէ զատ, երբեմնաեւ Մակբայ մը, Հոլովուած բառ մը, Դիմաւոր բայ մը եւ Ամբողջ խօսք մը, զոր օրինակ։

Եղիցի ձեր այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ. Զի՞նչ իցէ այն փոքր մի եւս. Զայս՝ արդեօք յայտ առնէ. Առաքինութիւն եւ փախիլն՝ զմի միտս ունին. Արքեայն՝ փառաւորեալ է. Նոյնն՝ ՚ի ձեռն նորա յայտ առնէ. Սուրբն եղիցի անուն քո՝ բնութիւն իսկ առաքինութեան է հաստատութիւն. Զի ներող է արտաքսողէ առաքէն՝ այն ամենեցուն իսկ յայտնի է։

Պատուոյ սակս առաջ գիտէ. Զմինն եղ ՚ի մէջ. Երագ երագն քան զվազվազելն եւս հեզգաղոյն է ՚ի փոյթ լինել գործոյ. Զայսոսիկ ոչ վայրապար լինել

յաւել. Զնոր խորոց եղ ՚ի միջի. Յաճախաբար գնէ զերդումն ինձ. Յիշեցէք եւ զղոտ է որդորն եւ ող մի. Իսկ որ զշրջնեալ էր որ բնակեալն առեն' անմիտք են. Ամենայն օրէնք ՚ի մի բան կատարին. ՚Ի մերեջեան զընկեր քո իբրեւ զանձն քո. Ի սկզբանէն զոր եղ. Ոչ եկին ՚ի մեղոյն. Զկնի համբարձման սարկաւագն քարոզէ. Զառ ՚ի յետոյն մոռացեալ եմ. Եւ զի բորեալ կամեցող Աստուծոյ' ուսուցանէ մեզ Տէր մեր յաւելին։

---

## ԳԼՈՒԽ Գ.

### ՈՒՂՂԱԿԱՆ ԽՆԴԻՐ ԿԱՄ ՍՏՈՐՈԳԵԼԻ

**130.** Ուղղական խնդիր կամ Ստորոգելի կ'ըսուի այն բառը որ ստորոգաբար Էական բայէն ետքը կուգայ, եւ Էական բային Տէր բային Ի՞նչ, Ո՞վ ըլլալը կը ցուցնէ, զոր օրինակ.

Դու մեծ ես. Ես եմ որդին քո. Այրն այն էր Եղիան. Դուք էք աղ երկրի. Նոքա եղիցին ձեր դատաւորք։

**131.** Երբ Էական բային Տէր բային յոքնակի է, Ուղղական հոլովն ալ ստորոգաբար յոքնակի կը դրուի, զոր օրինակ.

Ամենեքին մեք որդիք եմք առն միոյ. Արք խաղաղութեան եմք, եւ չեն ծառայք քո լրտեսք. Կամակիցք էք գործոց նորա. Երանելիք են աչք նորա. Թուղթքս ծանունք են եւ սաստիկք. Էին որդւոց երկրին. Եղեն նմա հարկատուք. Լերուք որդիք Եղէց

նոցա Աստուած եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ։

132. Երբեմն Ուղղական խնդիրը եզակի ալ կը դրուի. մանաւանդ երբ անձական է, և խօսքին ենթակը կամ Տէր բային առաջ դրուած է, կամ հաւաքական անուն է, կամ եզակին չգործածուող բառ. և կամ այնպիսի բառ մը որ բայի հետ կը գործածուի զոր օրինակ.

Գործակից եմք ձեր. Երանելի են կանայք քո. Երագ են ոտք նոցա. Դեռ մոռացեալ էք. Ուղիղ են ճանապարհք նորա. Երկոտասան եղբայր եմք ծառայք քո. Ընդունայն են կեանք իմ. Սակաւ եւ ցաւագին են կեանք մեր. Հունձք բազում են եւ մշակք սակաւ. Դուք ազգ էք ընտիր. Ողջ լերուք, եւ մեք մեզէն ողջ եմք. Զգոյշ լերուք. Լուռ եղեն. Հնազանդ լերուք. Ուրախ եղաք։

133. Նախկին բայէն զատ ուրիշ բանի մը Ներգործական բայերու Տէր բային ու Սեռի խնդիրին ալ Ուղղական խնդիր կամ Ստորոգելի մը կրնայ ունենալ. ինչպէս են Անուանեմ. Կոչեմ. Առնեմ. Դնեմ. Կարգեմ. Կացուցանեմ բայերը եւ ուրիշ շատեր։

134. Երբ Ուղղական խնդիրն ալ բայերուն Տէր բային կը վերաբերի, Ուղղական կը դրուի. իսկ երբ Սեռի խնդրոյն կը վերաբերի, Հայցական կը դրուի, զոր օրինակ.

Դու կոչեսցիս Կեփաս. Յորմէ ծնաւ Յիսուս որ

անուանեցաւ Քրիստոս. Որդիք Աստուծոյ կոչեսցին. Լի չոգայ եւ ունայն դարձայ. Կացի Նախարար. Զի անվարժ ելանէ չէք. Գնացին յամենայն պատուիրանս Տեառն անարատք. Ընդէ՞ր կայք դատարկք. Դատարկաշրջիկք ուսանին. Շրջողք տանէ 'ի տուն. Ճանապարհք անմնաց տգեղ թուին. Խիստ եւ յանդուգն եւ հպարտն՝ ծանր կոչին։

Այս օրինակներուն մէջ Ստորոգելին Ուղղական է, քանզի Տէր բայիներուն կը վերաբերի։

Կոչեցի զձեզ բարեկամս. Արար զիս Հայր Փարաւոնի. Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ. Ոյք առիցեն զչար բարի. Գիտէր զնա այր արդար եւ սուրբ. Եթէ որ խոստովանիցի զնա Քրիստոս. Զանձն իւր մատոյց պատարագ. Պատկեր կոփեաց զնա հիւսն. Կացոյց զնոսա իշխանս. Կենդանի արար ըզ մեզ. Եդ զձեզ տեսուչս. Տեսանէր զնոսա ջերմեռանդս. Արհամարհանս ուսուցին զնոսա. Նոսա բարեաւ զգրուեն բանային. Գտին ծուլացեալ զմնացեալսն. Անճառ զբանսն համարի. Ուղիղ արարէք զշաւիղս նորա. Հնազանդ արար զժողովուրդս. Արար զմեզ սուրբս. Արար զմեզ պաշտօնեայս. Կացոյց զիս դատաւոր. Կացուցեր զնոսա իշխանս. Եթէ կոչիցէ որ զնոսա զայն խելք որ ենն, ամաչեն. Տարակուսիր թէ ո՞վ կոչեսցէ զՀերմոն. Զամուր ամուր տեղիս Հայոց չինէր բերդս։

Այս օրինակներուն մէջ ալ Ստորոգելիները Հայցական են, քանզի բայերուն Սեռի խնդիրներուն կը վերաբերին։

**135.** Նոյնպէս Լուական բային անորոշ դերբային, այսինքն լինել ին ուղղական խնդիրը շատ անգամ անորոշ հայցական կը դրուի, զոր օրինակ.

Պարտ էր ձեզ լինել ճշմարտասէրս. Պատուէր տայես ոմանց չլինել ստախօսս. Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, տնտեսս լինել. Մեծատանց պատուէր տաջիր՝ առատս, մեծատուրս, հաղորդս լինել. Ծերոց զգաստս լինել, պարկեշտս, ցածունս, ողջամիտս 'ի հաւատս։ Զգաստացուցանիցեն զմանկամարդսն այրասէրս լինել, որդեսէրս, ցածունս, սուրբս, տնտեսս, քաղցրաբարոյս, հնազանդս իւրեանց արանց. Ծառայից իւրեանց տէրանց հնազանդ լինել եւ հաճոյս յամենայնի. մի հակառակս, մի հատանս. Յուշ արասջիր նոցա իշխանութեանց եւ պետութեանց հնազանդ լինել եւ հպատակ կալ. անխախտս լինել, հեզս. Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել։

**136.** Ուղղական խնդիրը գոյական եղած ատեն, կրնայ ի նախադրութեամբ անորոշ հայցական դրուիլ, զոր օրինակ.

Եղէց 'ի հայր. Եղէց յԱստուած ազգիդ Իսրայէլի. Եղիջիք դուք մեզ 'ի ծառայս. Եղէց ձեզ 'ի հայր, եւ դուք եղիջիք ինձ յուստերս եւ 'ի դստերս. Եղիցին երկոքեան 'ի մարմին մի. Եղիցին դժուարինքն 'ի դիւրինս եւ առապարքն 'ի դաշտս. Ոստարձակեսցէ եւ եղիցի ամենայն երկիրդ յանապատ 'ի բնակչաց. Քոյր մեր, եղիցիս 'ի հազարս եւ 'ի բիւրս. Եւ եղեւ նոցա 'ի կերակուր. Եղեն նոցա 'ի

հարկաւոր. Մեծութիւնդ ձեր յոչինչ է. Քակտե-ցան եւ եղեն յոչինչ. Լերուք յորդիս զօրութեան. Լեր դու ինձ յորդի զօրութեան։

Շինեաց տէր Աստուած զկողն զոր առ յԱդա-մայ 'ի կին. Արարից զքեզ յազգ մեծ. Օծանել զքեզ 'ի թագաւոր. Տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութիւն. Յոչինչ համարել։

137. Տէր բային եզակի եղած ատեն ալ բայը յոգնակի կը դրուի, երբ ուղղական խնդիրը յոգնակի է.

Կանոնքն դէպ են. Հերս երկայնս ունել կնոջ մարդոյ փառք են. Յայտ է թէ բաժանողք են աղանդքն։

Ուղղական խնդիրը ի՞նչ հարցման պա-տասխան է, զոր օրինակ. Դու ես. — Ի՞նչ — Մեծ։ Ես եմ. — Ի՞նչ. — Արդէն ջու։ Այրն այն էր. — Ի՞նչ — Իշխան։ Դու կոչեսցիս. — Ի՞նչ — Կեփաս։ Անուանեցաւ. — Ի՞նչ — Պետրոս։ Կո-չեցի զձեզ. — Ի՞նչ — Բարեկամս։

---

## ԳԼՈՒԽ Գ.

## ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

381. Բացայայտիչ կը կոչուին ան բառերը ո-րոնք խօսքի մէջ ուրիշ բառի մը քով կը դրուին, եւ անոր հետ մի եւ նոյն բանը կը նշանակեն. բայց նոյնը աւելի բացայայտ ընելու կը ծառայեն, զոր օրինակ.

Յովսէփ, այրն Մարեմայ. Յովսէփ, Մարիամին այրը։

Հոս՝ այրն Մարեմայ բառերը Յովսէփին հետ մի եւ նոյն են, բայց որ Յովսէփն ըլլալն աւելի յայտնի կ'իմացնեն։

Փախուստն Անակայ, հօր սրբոյն Գրիգորի. Սուրբ Գրիգորին հօրը, Անակայ, փախուստը։

Հոս ալ հօր սրբոյն Գրիգորի բառերն՝ Անակին հետ մի եւ նոյն են, քանզի հայր սրբոյն Գրիգորի եւ Անակ մի եւ նոյն անձն են. միայն երկրորդը առջինին բացայայտիչն է։

Զմայրն ամենայն առաքինութեանց, զխոնարհութիւն չունէր յանձին. Ամեն առաքինութեանց մայրը, խոնարհութիւնը, չունէր։

Հոս ալ խոնարհութիւն բառը՝ մայր ամենայն առաքինութեանցին բացայայտիչ է. Առաքինութեանց մայր եւ խոնարհութիւն մի եւ նոյն բաներն են։

Կռոց եւ դրօշելոց հանգամանք առ Թարայիւ, հարբ Աբրահամու, եղեն. Քարէ եւ փայտէ արձաններ (կուռքեր) շինելը՝ Աբրահամին հօրը, Թարային, ատենը սկսաւ։

Հոս ալ հարբ Աբրահամու բառերը՝ Թարային բացայայտիչ են. Աբրահամու հայրը եւ Թարա մի եւ նոյն անձն են։

**139.** Բացայայտչին բացայայտած կամ յայտնի ըրած բառը Բացայայտեալ կը կոչուի.

վերի օրինակներուն մէջ՝ Յովսէփ, Նոյ, մայրն ամենայն առաքինութեանց, Թորոս բացայայտեալ են։

140. Բացայայտիչը բացայայտելոյն հետ թուով եւ հոլովով կը համաձայնի. եւ բացայայտելոյն զ, ի, ց, ընդ, ըստ նախադրութիւնները, եթէ ունի, սովորաբար բացայայտչին վրայ ալ կը կրկնուին, զոր օրինակ.

Ես զԿղէոպատրա զդուստր իւր. Զմեղսն ձեր զոր արարէք, զորթն, առի եւ այրեցի զնա հրով. Զարթուցանեմ զՔաղդէացիս, զազգ դառն եւ զերագ. Եդ զմեզ 'ի բանտի 'ի տան դահճապետին, զիս եւ զմատակարարն. Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս, զՈրդի Աստուծոյ. Շրջել զեղբարք իւրովք, զորդւովքն Իսրայելի։

Զիա՞րդ յինէն ըմպել խնդրես, 'ի կնոջէ Սամարացւոյ. Ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ, յԵրուսաղէմ յերկինս. Ամենայն օրէնք 'ի մի բան կատարին, 'ի սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո. Ասէ Յուդա ցԻսրայէլ, ցհայր իւր. Ասէ ցպատանին ցկապարճակիրն իւր. Ընդ եղբարս ձեր ընդ որդիսն Իսրայելի. Անց նա ըստ գետն մեծ ըստ Եփրատ. Նայեցարուք ընդ առաքեալն եւ ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս Քրիստոս։

141. Այս նախադրութիւնը և ուրիշ նախադրութիւններ սովորաբար չեն կրկնուիր, զոր օրինակ.

Առ Թարայիւ, հօրն Աբրահամու. Առ Աբիադաբաւ, քահանայապետին. Իսահակաւ եւ Յակոբաւ հանդերձ, ժառանգակցօք նորին աւետեաց. Վասն որդւոյ իւրոյ, Յեսուայ։

---

## ԳԼՈՒԽ Ե.

### ԿՈՉԱԿԱՆ

142. Կոչական կ՚ըսուի ան բառը որ կը ցուցնէ անձ մը կամ անձնաւորեալ իր մը, առ որ խօսք մը ուղղուած է, զոր օրինակ.

*Արք, ընդ մեզ զի՞ էք պշուցեալ. Սիմոն, ունիմ ինչ ասել քեզ. Որդեակ, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ. Լուր, որդեակ, խրատու հօր քո. Բարեկամ, 'ի վեր մատիր. Բժիշկ, բժշկեա զանձն քո. Արք Աթենացիք, պաշտօնասէրս տեսանեմ զձեզ։*

143. Կոչականը Հայերէնի մէջ շատ անգամ ով եւ դու բառերուն հետ կը գործածուի, զոր օրինակ.

*Ով բանաքաղ Մարկիոն. Ով անմիտք եւ հեղգամիտք 'ի հաւատալ. Ով ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ յերբ իցեմ ընդ ձեզ։*

*Այր դու, ով կացոյց զիս դատաւոր 'ի վերայ ձեր. Արի կաց, մանուկ դու։*

144. Երբ կոչականն իրմէ առաջ ածական մը ունի, շատ անգամ ածականին վրայ Ը դիմորոշը կ՚աւելցուի, զոր օրինակ.

Կամ եղեւ եւ ինձ գրել քեզ. +-Ըչ Թէոփիլէ. Ոչ մոլիմ, +-Ըչ Փեստոս։

145. Իսկ եթէ կոչականն իմէ եարքը յատկացուցիչ մը ունենայ, դ գիրը կոչական ին վրայ կը գրուի, զոր օրինակ.

Աստուածորդիդ Պարսից, ընդէր զանգիտես. Ի բաց կացէք յինէն, մշակքդ անիրաւութեան. Գիտեմ զքեզ ով ես, սուրբդ Աստուծոյ. Արքայդ Խարայելի։

---

## ՈՒԹԸ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ՎՐԱՅ ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

---

### Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

### Յօդի գործածութիւնը.

146. Հայերէն յօդը՝ ն գիրն է։

147. Յօդի գործածութեան համար չորս կանոն կայ։

Ա. Յատուկ անուններ, եւ այնպիսի իբաց անուններ որոնք իրենց սեռին մէջ մէկ հատիկ են, յօդ չեն առներ, բայց հայցական ի մէջ շնախդիրը կ՚առնեն. զոր օրինակ.

Եկն Յ-----. Ասէ Պ-տր--. Ա-տ----ծ արար զերկինս եւ զերկիր. Արարած Ա-տ---ծ-յ. Ա-ե-ֆ-ն- խաւարեցի. Լ---ն ոչ տայէ զլոյս իւր. Ծ-վ մեծ է եւ անդորր. Եկեսցեն յ-ր-ն-ս-ից եւ յ-ր-մ-ր-ից. Զ-շ--ն- եւ զհ-ր--- դու արարեր, եւ այլն

Բ. Հասարակ անուն մը յօդ չառներ՝ երբ սեռ կը ցուցնէ, այսինքն՝ երբ ամէն բա-ռը քովը կրնայ դրուիլ. բայց եթէ հայցա-կան է, զ նախդիրը կ'առնէ, զոր օրինակ.

Մարդիկ եւ անասունք շարժին եւ զգան։

Հոս մարդիկ եւ անասունք սեռ կը ցուցնեն, այսինքն՝ ամէն մարդ, ամէն անասուն կը նշա-նակեն. անոր համար յօդ առած չեն։

Արար Աստուած զմարդիկ եւ զանասունս։

Հոս ալ մարդիկ եւ անասուն սեռ կը ցուց-նեն, ասոր ալ յօդ առած չեն. բայց ո-րովհետեւ հայցական են, զ նախդիրն ա-ռած են։

Նոյնպէս կ'ըսուի.

Գետք ի ծով դիմեն, ծով ոչ լնու. Լերինք ա-պաւէն են եղջերուաց, վէմք ապաւէն նապաստակաց. Հո-ղմք շնչեն. Աստեղք լուսաւոր են, եւ այլն։

Գ. Հասարակ անուն մը բնաւ յօդ չառ-ներ, եւ, եթէ հայցական է, զ նախդիրն ալ չառներ, երբ անորոշ կերպով քանի մը կամ մաս մը կը ցուցնէ, զոր օրինակ.

Ես գտանք յանապատի աստ. Աս անապատին մէջ գազաններ կան։

Հոս գազանք՝ քանի մը գազան, կամ գա-զաններէն մաս մը կը նշանակէ, անոր հա-մար յօդ առած չէ։

Եղբարք իմ սպանին գողն․ Եղբայրներս գա-զաններ սպաննեցին։

Հոս ալ գողն նոյնպէս անորոշ կերպով մաս մը կամ քանի մը գողան կը նշանակէ, անոր համար յօդ առած չէ․ եւ, թէպէտ հայցական է, զ նախդիրն ալ առած չէ։*

Դ․ Հասարակ անուններ յօդ կ՚առնեն երբ որոշեալ անհատ կը ցուցնեն․ եւ, եթէ հայցական են, զ նախդիրն ալ կ՚առնեն, զոր օրինակ․

Հացն զոր ետու քեզ՝ իմ է․ Գեղջի տուած հա-ցըս իմս է։

Հոս Հաց՝ այս ինչ որոշեալ հացը (իմ տո-ւած հացս) կը ցուցնէ, անոր համար յօդ ա-ռած է։

Կերա՞ր զհացն զոր ետու քեզ․ Գեղջի տուած հացս կերա՞ր։

Հոս ալ Հաց՝ այս ինչ որոշեալ հացը (քե-զի տուածս) կը ցուցնէ․ անոր համար յօդ առած է․ եւ որովհետեւ հայցական է, զ նախդիրն ալ առած է։

---

* Առանց զ-ի հայցականին անորոշ հայցական կ՚ըլլայ։

## 148. Յ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԻՏԵԼԻՔ

1° Երբ յօդ առնող բառը յատկացուցիչ ունի, յօդը յատկացեալին վրայ կը դրուի, օրինակի համար.

Տուն Թագաւորին, կ'ըսուի, ոչ թէ Տունն Թագաւորի։

Բայց երբ յատկացուցիչը յատուկ անուն է, յօդը յատկացեալին վրայ կը դրուի, զոր օրինակ.

Մայրն Յիսուսի, կ'ըսուի, եւ ոչ Մայր Յիսուսին։

2° Երբ յօդ առնող բառն ածական ունի, ածականը թէ նախադաս ըլլայ եւ թէ յետադաս, յօդը գոյականին վրայ կը դրուի, զոր օրինակ.

Այրն քաջ. Երկիրն ընդարձակ. Մանուկն ստահակ. Նոյնպէս Քաջ զինուորն. Բարեպաշտօն մայրն։

Եթէ ածական ունեցող գոյականը յատուկ անուն է, ոչ գոյականին եւ ոչ ածականին վրայ յօդ կը դրուի, եթէ ածականը յետադաս է, զոր օրինակ.

Աղեքսանդր մեծ. Ղեւոնդ երանելի. Տրդատայ քաջի. եւ այլն.

Իսկ եթէ ածականը նախադաս է, ածականը կ'առնէ յօդը եւ ոչ յատուկ անունը, զոր օրինակ.

Մեծն Աղեքսանդր· Երանելին Ղեւոնդ· Քաջն Տրդատ։

3°. Երբ յօդ առնող գոյականը իմ, քո, մեր, ձեր, իւր Ստացական ածականներէն մէկը, կամ նորա, նոցա, իւրեանց յատկացուցիչները, եւ կամ ստացական ածականով յատկացուցիչ մը ունի, յօդը գանց կ'առնուի սովորաբար, զոր օրինակ կ'ըսուի.

Տուն իմ. Հայր քո. Եղբայր նորա. Բանք իւրեանց. փոխանակ՝ Տունն իմ. Հայրն քո. Եղբայրն նորա. Բանքն իւրեանց։ Նոյնպէս կ'ըսուի. Տուն հօր իմոյ. Դրունք քաղաքի ձերոյ. Որդիք բարեկամաց նոցա. փոխանակ՝ Տունն հօր իմոյ. Դրունքն քաղաքին ձերոյ, եւ այլն։

4°. Երբ գոյականաբար առնուած ածական մը ընդհանուր մտքով առնուած է, սովորաբար եթէ եզակի է՝ յօդ կ'առնէ, եթէ յոգնակի է՝ յօդ չ'առներ, զոր օրինակ.

Արդարն 'ի հաւատոց կեցցէ. Անզգամն անգոսնէ զխրատ հօր. Անմեղն հաւատայ ամենայն բանի, իսկ խորագէտն գայ 'ի զղջումն. Վասն վընասու շրթանց անկանի յորոգայթ մեղաւորն, եւ արդարն զերծանի 'ի նմանէ. Քաղցրահայեացն գըթութիւն գտցէ. Արդարք ժառանգեսցեն զերկիր. Անզգամք զխրատ անգոսնեն. Երանի ողորմածաց. Երանի հեզոց։

5°. Երբ յօդ առնելու անունները երկու են, եւ շաղկապով կապուած, սովորա-

քար աչքի բառը յօդ կառնէ. զոր օրինակ.

Աղքատն եւ տնանկ. Դպիրքն եւ փարիսեցիք. Զպատուղ ցորենոյն եւ գինւոյ եւ ձիթոյ. Զխուլն եւ զհամր. Զազգ մեր եւ զտեղի. Նկացն եւ պանդխտաց. Դպրացն եւ Փարիսեցւոց։

6° Յօդ կը դրուի ածականի մը կամ յատկացուցչի մը վրայ, երբ գոյականը կամ յատկացեալը լռելեայն կ'իմացուի. նոյնպէս որ եւ իցէ բառի վրայ որուն հետ մէկ կամ քանի մը լռելեայն բառեր կ'իմացուին, զոր օրինակ.

Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի. այսինքն՝ ընդ չոր փայտ։ Աշակերտքն Յովհաննու պահեն սակայն եւ քոյքդ ոչ պահեն. այսինքն՝ քո աշակերտք։ Նա է քաւութիւն մեղաց մերոց, եւ ոչ եթէ մերոցն միայն. այսինքն՝ ոչ եթէ մեղաց մերոց միայն։ Է բարկութիւն որ գովելի է, որպէս Մովսէսին. այսինքն՝ Մովսէսի բարկութիւնն։ Արիւնն Յիսուսի առաւել խօսի քան ըզ Հաբելին. այսինքն՝ քան զարիւնն Հաբելի։ Մաքսաւորն եւ ձկնորսն եւ առանց դպրութեանն այնպէս ճարտար խօսէր. այսինքն՝ եւ այն որ առանց դպրութեան էր։ Սպանցեն զվասն մեղացն. այսինքըն՝ զպատարագն որ է վասն մեղաց։ Զուխտն եւ ըզ կամաւն. այսինքն՝ զնուէրն որ է կամաւ. Ընկալայ զառ 'ի ձէնջն. այսինքն՝ զայն որ էր առ 'ի ձէնջ։ Պահանջէի զիմն. այսինքն՝ զայն որ իմ է։ Ծանաչեմ զիմսն. այսինքն՝ զայնոսիկ որ են իմ։

7° Յօդ կը դրուի անուանէն, չուէն, բայէ.

րուն հետ գործածուած ուղղական խնդրոյն վրայ. Թէ եւ ուղղական խնդիրը յատուկ անուն ըլլայ. զոր օրինակ.

Պետրոս որ Կեփաս կոչեցաւ. Յակոբոս զոր Արդարն կոչէին. Վասն Անտիոքայ Երեւեալն անուանելոյ.

8° Յօդ կը դրուի երբեմն վայելչութեամբ ածականաբար գործածուած գոյականներու կամ յատուկ անուանց վրայ. զոր օրինակ.

Եպիփանիոս անուն 'ի Հելլենացի լեզուէ է. Հայրդ անուն մի է հոգեւորաց եւ մարմնաւորաց. Կոչեալ զՅիսուսն անուն. Զկուսայն ասան. Ի Թիլն ասան. Ի Սինն անապատէ. Դեկղադն գետոյ.

9° Յատուկ անուններ ալ յօդ կ'առնեն այս, այդ, այն ցուցականներով, կամ ածականներուն զօրութիւն տալու համար, զոր օրինակ.

Մովսէսն այն որ եհան զմեզ. Դո՞ւ իցես Սիբայն. այսինքն՝ Սիբայն այն. Զիրան զոր արար Աթինէն. Այլ Անտիոքոսն ութ հարիւր քանքար բերեալ էր. Ո՞վ է Պաւղոսն կամ Ապողոսն. Ո՞ւր է այն ձեր Աղեքսանդրոսն. Եթէ գիտասցեն զքէն եթէ դու ես Աղեքսանդրոսն. Երուսաղէմն վերին. Փախո զԳրիգորդ. այսինքն, զԳրիգորդ այդ. Մեզ զԳրիգորդ Տեառւչ կացուսջիք. Հարցանէր 'ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն. Քրիստոսն յորժամ գայցէ միթէ աւելի՞ ինչ նշանս առնիցէ.

10°. Երբեմն ալ զարդու համար նախադաս ածականի մը վրայ յօդ կը դրուի, զոր օրինակ.

Դերճն գնացիւք. Բարձրաբերձն լերամբ. Ուղղորդն գնացիւք. Մանուածապատն շրջանօք. Յորդն անձրեւօք. Աներկեւանն ցնծութեամբ. Ի մշտաւակարն բանից. ուր Ն երը կրնան զանց առնուիլ։

## Բ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

149. Երբ ածականը բաղդատութիւն կը ցուցնէ, քան նախադրութեամբ խնդիր կ'առնէ բաղդատուելու բառը. զոր օրինակ.

Հատն մանանխոյ որ փոքր է քան զամենայն սերմանիս, բուսանի եւ լինի մեծ քան զամենայն բանջարս. Կորիւն առիւծու հզօր է քան զանասունս. Թեթեւ քան զօդ. Բնութիւն նոցա (հրեշտակաց) 'ի վեր է քան զհողմ եւ քան զհուր, նուրբ եւ արագ քան զմիտս. Յառաջ քան զարեւ. Առաւել քան զամենայն. Կրկին քան զայն. Սակաւ քան զնոսա. Փոքր մի խոնարհ քան զհրեշտակս. Լաւ է մեռանել քան զայս կեանս. Նոքա բազում վիշտս կրեցին քան զմեզ. Էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զնա։

150. Բաղդատական ածականին վերջը երբեմն գոյն մասնիկը կ'աւելնայ, զոր օրինակ.

Որ զկնի իմ գայ հզօրագոյն է քան զիս. Եւ էր օձն խորամանկագոյն քան զամենայն գազանս. Ջուր

քան զծանուցման Նրբագոյն է, եւ քան զթեթեւան թանձրագոյն. Ձեմ անմտագոյն քան զձեզ. Երիցագոյն քան զհայր քո աւուրբք. Ոչ տեսի յամենայն երկրիս Եգիպտացւոց զազրագոյն քան զնոսա։

151. Երբեմն գոյն մասնկան տեղ եւս բառըն ածականէն առաջ կամ ետքը կը դրուի, բաղդատութեան համար եւ աւելի կը նշանակէ զոր օրինակ.

Քակեցից զշտեմարանս իմ, եւ ևս մեծամեծս շինեցից. Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, զի զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց. Ոչ ոք արկանէ կապերտ նոր 'ի վերայ հնացեալ ձորձոյ, ապա թէ ոչ առնու նորն լրութեամբն 'ի հնոյ անտի, եւ չար ևս պատառումն լինի։

152. Ածական մը բանի մը որպիսութիւնը վերջին աստիճանի ցուցնելու համար,

1° Ածականին քով յոյժ, կարի. ամենայն եւ ուրիշ ասոնց նման բառեր կ'աւելնան, զոր օրինակ.

Մեծ յոյժ. Կարի երկայն. Ամենայն բարձր։

2° Ածականին բացառական կամ նախդիր-ով հայցական (նախդրիւ տրական) խընդիր կը դրուի, զոր օրինակ.

Անմեղն 'ի ձէնջ արկցէ քար. Ձենէ ամենէն առջը քար նետէ։

Այսպէս կ'ըսուի նաեւ.

Զընտիրս 'ի հեծելոց. Մեծն 'ի Բռնաւորս. Որ

փոքրիկն է յամենեսին ՚ի յետ։ Որոնք կը նշանակեն, Ամենէն ընտիր հեծեալները. Ամենէն մեծ թագաւորը. Ձեր մէջէն ամենէն պզտիկը։

3. Ածականը կրկնելով յոքնակի գոյականի հետ, զոր օրինակ.

Ծաղկեցին պզտոր պզտորն. Ամենէն աղէկները ժողվեցին։ Ջնտիր ընտիր մայրիան. Ամենէն աղէկ մայր ծառերն։ Մանր մանր խնչ ճճիք կամ անասունք կերակուր լինին օձից. Օձերը խոշոր մանր կամ ամենէն մանր գազաններ կամ անասուններ կ'ուտեն։ Թողէք պզտոր մանր օրինացն. Օրէնքներուն ամենէն մանրերը թողուցիք, եւայլն։

153. Շատ անգամ ածականի մը գոյականը զօրութեամբ կամ լռելեայն կիմացուի եւ ան ատեն ածականը գոյականաբար առնուած կ'ըսուի, զոր օրինակ.

Անզգամն անգոսնէ զխրատ հօր. Արդարք ժառանգեսցեն զերկիր. Տեսցես զմշտնջենաւորն Աստուծոյ, ՚ի ճանապարհս ամբարշտաց մի երթայցես. Երանի հեզոց. Ընտրեցին զբարի բարին. Թողէք զծանր ծանր օրինացն. Եթող զճանապարհս այգւոյ իւրոյ, եւ գնաց ընդ ամայիս եւ ընդ անապատ. Եղիցին փառաւորքն ՚ի դժոխսն. Կոյրք գնան. Բորոտք սրբին. Մեռեալք յառնեն. Զհամբաւ իւրեւ զօրաւոր թելադրեալ կարծեցուցանիցէ. Անկանիցին ՚ի յորջանոցն. Ընտրել զբարին եւ զչար. Տեսաք զոմն որ յանուն քո դեւս հանէր. Գնաց առ յապարանս իւր եւ ած ՚ի փառաւ իւրոյ. Եթէ ոք զհանդամանս իւրաց

ինչ գիտիցէ. Ոմանք զայս ինչ ասէին, այլք զայլ իմն աղաղակէին։

Աս խօսքերուն մէջ Անզգամ՝ այր անզգամ ըսել է. Արդարք՝ այրք արդարք. Մեծամեծ֊ մըն Աստուծոյ՝ գործք մեծամեծս. Ոմն, ոք, ոմանք, այլք՝ այր ոմն, այր ոք, այրք ոմանք, այլ այրք, ըսելու տեղ են. նոյնպէս միւսնե֊ րը։

## Գ. ԴԵՐԱՆՈՒՆ

### 1. Ցուցական դերանուն.

154. Ցուցական անուններուն տեղ շատ անգամ մինակ ս, դ, ն գրերը գոյական֊ ներուն վրայ կը դրուին, զոր օրինակ.

Տեսանեմք զաշխարհս 'ի պէսպէս կերպարանս. փոխանակ ըսելու, զաշխարհս այս։ Չարիքս որ ըն֊ նէն ուստի՞ իցեն. փոխանակ ըսելու, չարիքս այ֊ սոքիկ։ Քոյրդ իմ միայն եթող զիս 'ի սպասու. այ֊ սինքն՝ քոյրդ իմ այդ։ Արի, առ զմանուկդ եւ զմայր նորա. այսինքն՝ զմանուկդ այդ։ Այս երեք ամք են յորմէ հետէ գամ խնդրել պտուղ 'ի թզե֊ նւոյդ եւ ոչ գտանեմ. արդ կոտեա զդա, ըն֊ դէ՞ր եւ զերկիրդ խափանէ. փոխանակ ըսելու, 'ի թզենւոյդ այդմիկ, զերկիրդ այդ։ Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս. այսինքն՝ մանկտւոյդ այդ֊ միկ։ Դուրքդ փակեալ են եւ մանկունքս ընդ իմս կան յանկողնի. այսինքն՝ դուրքդ այդոքիկ. ման֊ կունքս այսոքիկ։

Եւ էր օձն իմաստնագոյն քան զամենայն գազանս. Եկին լրտեսել զերկիրն. Եկին 'ի քաղաքէն եւ եկին 'ի չէնսն. փոխանակ՝ օձն այն. զերկիրն այն. 'ի քաղաքէն յայնմանէ. 'ի չէնսն յայնոսիկ։

155. Այսր, անդր, այդր. աստ, անդ. աստի, անտի, այտի, մակբայները շատ անգամ այս, այդ, այն, ածականներուն տեղ կը գործածուին։

Այսր, անդր, այդր, կը դրուին, երբ գործողութիւնը շարժում կը ցուցնէ. Աստ, անդ կը գործածուին, երբ գործողութիւնը դադարում է. Աստի, անտի, այտի կը դրուին բացառական հոլովներու հետ, զոր օրինակ.

Առաքեցին 'ի քաղաքն անդր. փոխանակ՝ 'ի քաղաքն այն։ Բնակեաց յերկրի աստ իմում. փոխանակ՝ յերկրիս յայսմիկ։ Ի քաղաքէ անտի. փոխանակ 'ի քաղաքէն յայնմանէ ըսելու։

Մի սատակեսցուք, որպէս եղբարքն մեր յանապատի անդ. Ջնջել 'ի տեղւոջէ աստի զյիշատակ նոցա. Ինքն առ զկէս 'ի զօրաց անտի. Սկսան հուր հարկանել 'ի բանակի անդ. Ոչ ինչ էր 'ի ներքս 'ի տաճարի անդ. Իցեն բազումք 'ի մանկտւոյ այտի որ ընդ ակամբ հայիցին. Քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ աստի. Մի զարհուրիր դու 'ի չարաչուք գահճէ այտի. Կարդացին առ տէր այց առնել հայել 'ի ժողովուրդ անդր որ կոխեալ եղեւ 'ի հեթանոսաց. Ակն ունիմ ապրել 'ի դժուարին հիւանդութենէ աստի։

## 2. Ստացական դերանուն.

156. Ստացական դերանուններն են իմ, քո,

Մեր՝ Ձեր՝ Իւր. երբ իբր դերանուն, այսինքն՝ միայն, առանց գոյականի կը գործածուին, Իմինս, Քուկինդ, Մերինը, Ձերինը, Իւրենը կը նշանակեն, զոր օրինակ.

Ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն. Իմինները կը ճանչնամ, Իմիններէս ալ կը ճանչցուիմ։ Յիմմէ անտի առնուցու. Իմինէս պիտի առնէ։ Առ զքոյդ. Քուկինդ առ։ Զքոյս 'ի քոյոց քեզ մատուցանեմք. Եթէ 'ի Քուկէդ ինչ երկմտիցես, 'ի նորայոցն հաւատասջիր. Յիւրսն եկն եւ Իւրերը զնա ոչ ընկալան. Ոչ թէ նա կարօտ Մերիններուս իցէ, այլ Մենք ամենեւին նորայովքն։

Նորա. Նոցա, յատկացուցիչներն ալ սա կերպով կը գործածուին, զոր օրինակ.

Ամենակալանագոյն քան զնորայն. Զամենայն զնորայսն. Ընտանիք օտարին նորայոցն ցանկանայցեն. Զինչ նման իցէ սորա մահս նորայոց. Եթէ 'ի քումմէջն ինչ երկմտիցես, 'ի նորայոցն հաւատասջիր ուսանել. Ոչ եթէ նա ինչ կարօտ մերովքս իցէ, այլ մեք ամենեւին նորայովքն. Ի նորայոցն տաս. Եդ նա բանս ինչ 'ի նորայոց անտի. Զի՞նչ հաւասարութիւն իցէ ձերայոցն ընդ նորայոցն. Զհոգայցեմք ինչ ընդ նոցա, այլ նոցայոցն։

3. Ցուցական դերանուն, եւ ս, դ, ն դիմորոշներուն գործածութիւնը.

157. Ա՛յ, ո՛ բառը, իբրեւ անորոշ ածական գոյականի հետ կը գործածուի, զոր օրինակ.

Վասն որո՞յ գործոյ քարկոծ առնէք զիս. Ո՞ր գործի համար զիս քարկոծել կ'ուզէք։ Յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք. Որ տուն որ կը մտնէք, հոն մնացէք։ Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ. Որ յոյսին համար կ'ամբաստանուիմ։ Վասն որոյ պատճառանաց մեռանէին՝ յայտ առնէր. Ինչ կամ որ պատճառի համար մեռնիլը կ'իմացնէր։ Որով լեզուաւ օրհնեմք, նովին եւ անիծանեմք. Ո՛ր լեզուաւ որ կ'օրհնենք, անով ալ կ'անիծանենք։ Յորմէ արարչէ երկիր լեալ է՝ 'ի նմանէ եւ գազանքն արարեալ են. Ո՛ր արարչէ որ երկիրը ստեղծուած է, գազաններն ալ անկէ ստեղծուած են։ Ո՞ր+ են զօրքն որ շուրջ զնովաւ կային. Ո՞ր զօրքերն են որ անոր բոլորտիքը կեցած էին։ Ո ոք եւ երթայր առ նոսա՝ ուսուցանէին. Ով որ անոնց կ'երթար՝ կը սորվեցընէին. Ո ոք յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից. Ով որ առաջ ինծի կու գայ, անիկայ թագաւոր պիտի ընեմ։ Որ ոք լուծցէ ինչ 'ի պատուիրանացս յայսցանէ. Ով որ աս պատուիրանքներէս մէկը կը լուծէ։ Յամսեանն հինգերորդի, որ օր եօթն էր ամսոյս. Յորմէ՞ քաղաքէ ես դու, եւայլն։

158. Որ, » իբրեւ յարաբերական դերանուն խօսքին մէջ առաջ յիշուած բառ մը կը յարաբերէ.

Հայրն քո երկնաւոր որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս. Յովսէփ, այրն Մարեմայ, որում խօսեցեալ էր զՄարիամ կոյս յորմէ ծնաւ Յիսուս որ անուանեցաւ Քրիստոս. Ես ժամանակս եւ տեղիս որոց+ զերծանիցին 'ի մեղաց։

159․ Յարաբերական դերանունը ամեն դէմքի անուն կամ դերանուն կրնայ յարաբերել, զոր օրինակ.

Ես որ խօսիմ. Դու որ լսես. Նոքա որք լուան. Այրն՝ որ խօսեցաւ։

160․ Յարաբերականին ցցուցած անունը կամ դերանունը յարաբերեալ կ'ըսուի. Նախընթաց օրինակներուն մէջ Ես, Դու, Նոքա, Այրն բառերը յարաբերեալ են։

161․ Յարաբերականը կարելի եղածին չափ յարաբերելոյն անմիջապէս քովը պիտի դրուի, բոլոր իրեն վերաբերեալ բառերովը, զոր օրինակ.

Հայրն քո երկնաւոր որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս. Ամենեցուն որ 'ի ծովեզերեանն էին՝ աչք 'ի նա հայէին. Ի կախարդն՝ որ անձին չկարէ օգնել, ապաւինեցաւ. Զառաւել սիրոյն՝ զոր ընդ մարդոյն ունէր, յայտ առնէր. Ոչինչ աւելի քան զՄանի՝ զոր ինքեանք մոլեցին, ասեն. Ի երազի՝ որ Նաբուգոդոնոսորայ եղեւ է, երեւի. Դիւրաւ ուսանել եւ զայլսն եւս՝ որ առելոց իցեն, կարիցէք. Եւ զայնոսիկ՝ որ բնաւ էին անմօրթք իցեն, ըմբերանէր. Ընդ որպիսի մարդկան՝ որք արեան մարտուցեալ ծարաւի էին, խօսէր. Կուրին՝ զորոյ ծեփեաց զաչսն եւ եբաց, յայտ արար. Շունս ասա զայնոսիկ՝ որ յանձնարարեալ ամբարշտութեան իցեն, կոչէ. Աւելորդ էր այնուհետեւ վասն նշանացն՝ որ ծածկեալ լինելոց էին եւ այլք ընթերցեալ, ասել. Եկի զանէծս օրինացն՝ որ վասն յանցաւորացն էրան, լուծանել։

162. Յարաբերականն իրեն վերաբերեալ մասերուն ամբողջ խօսք մըն է, որ գլխաւոր խօսքին միջանկեալ անդամը կը կոչուի, զոր օրինակ, սա խօսքին մէջ.

Հայրն քո երկնաւոր որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս.

Որ տեսանէ 'ի ծածուկ՝ միջանկեալ անդամ է. գլխաւոր խօսքն է՝ Հայրն քո երկնաւոր հատուսցէ քեզ յայտնապէս։

Նա՝ որ ընդ ծառայութեան արհեստական հայել կամիցի, պարապի զպղտորութիւն աչացն, զաղտն եւ զբիծն 'ի բաց սրբել, զի մի մթարքն՝ որ զբիբսն շրջապատեն, արգել հայելոյ 'ի յստակութիւն լուսոյն լիցին։

Այս խօսքին մէջ, Նա եւ միայն յարաբերեալ են, եւ ասոնց վերաբերեալ մասերը գրուած են միջանկեալ անդամներէն ետքը, որ նօտր գրով նշանակուած են։ Բայց ասանկ ըլլալն էական չէ։

Նախ՝ յարաբերեալին վերաբերութիւն ունեցող մասերը, կամ ամբողջ գլխաւոր խօսքը՝ միջանկեալ անդամէն առաջ ալ կրնայ դրուիլ, ուստի փոխանակ ըսելու, Ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին՝ աչք 'ի նա հայէին. կրնանք ըսել. Ի նա հայէին աչք ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին։

Երկրորդ՝ կրնայ միջանկեալ անդամը, այսինքն՝ յարաբերականն իր մասերովը ա-

առաջ դրուիլ ու գլխաւոր խօսքը կամ յարաբերեալն իր մասերովը ետքը դրուիլ զոր օրինակ.

Որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում դուն վկայեցեր՝ անաւասիկ նա մկրտէ. փոխանակ ըսելու, Անաւասիկ մկրտէ նա՝ որ էր ընդ քեզ, եւայլն։ Որում բազում աւանդեցաւ՝ առաւել եւս պահանջեսցեն 'ի նմանէ. փոխանակ՝ Պահանջեսցեն 'ի նմանէ՝ որում եւայլն։ Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. փոխանակ՝ Ասէ ցնոսա որ զաղաւնիսն վաճառէին։ Որոց ոգիքն 'ի մարմնոյն ելանէին՝ արկանէր զնոսա մի ըստ միոջէ 'ի գեհենն. փոխանակ՝ Արկանէր 'ի գեհենն զնոսա՝ որոց եւայլն։

163. Յարաբերականը կրնայ յարաբերեալէն քիչ շատ հեռու մնալ, եթէ խօսքին մէջ յարաբերեալը որն ըլլալը, առանց հոմանութեան պատճառելու, յայտնի կ'իմացուի. ինչպէս հետեւեալ խօսքերուն մէջ.

Ամենեքեան կորեան որ ընդ նմայն էին. Զ[illegible] Յոպպէացւոց ամբարցոյց որ 'ի վերայ ծովուն էր։

164. Երբեմն յարաբերականն իր պահանջուած հոլովը դրուելու տեղ, յարաբերեալին հետ մի եւ նոյն հոլովը կը դրուի զոր օրինակ.

Եւ զիս ընդէր 'ի տարրաբնական յորոց գրեցերն. փոխանակ՝ յորոյ գրեցեր։ Յորժ յայնժամէ՝ յորոց գերեաց. Յորժ՝ յորոց նման. Յորժ՝ յորոց լուաք. Յե-

րէն յայնմանէ՝ յորմէ եկն յանապատս. Առ զիս յերէ-
րէն՝ առաջի ծնեալ էի. փոխանակ՝ որ ծնեալ էի։
Յաղթէ Յուդայ ծաղկեալ Տէր մեր, յորմէ ազգէ վասն
քահանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց. փոխանակ՝
զորմէ ազգէ եւայլն։ Լսել զամենայն՝ զոր հրամայեալ
է քեզ 'ի տեառնէ. փոխանակ՝ որ հրամայեալ է եւ-
այլն։ Զոր ինչ եւ ձեզ հաճոյ թուեսցի՝ զայն գոր-
ծեցէք. փոխանակ՝ որ ինչ եւ ձեզ հաճոյ թուեսցի
եւայլն։ Որոց նստէին յաշխարհին եւ 'ի ստուերս
մահու՝ լոյս ծագեաց նոցա. փոխանակ՝ Լոյս ծագ-
եաց նոցա՝ որ նստէին եւայլն։ Ամենեցուն՝ որոց էք
'ի Հռոմ սիրելեաց Աստուծոյ. փոխանակ՝ Ամենե-
ցուն որ էք եւայլն։ Ի վերայ միոյ 'ի լերանց՝ զորոց
ասացից քեզ. փոխանակ՝ Զորոց ասացից քեզ եւ-
այլն։

165. Յարաբերականին եզակի ուղղակա-
նըն ու հայցականը, յոքնակիի տեղ կը գոր-
ծածուին, այսինքն՝ կրնան յոքնակի բառ-
մըն ալ յարաբերել, զոր օրինակ.

Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք. Մեք որ
կենդանւոյն մնացեալ իցեմք. Զգործն զոր ես գոր-
ծեմ. Ամենայն այնոցիկ որ սողին 'ի վերայ երկրի.
Զչարիսն զոր հասոյց 'ի վերայ ազգին։

Իսկ յարաբերեալն անեզական բառ-
մըն է, յարաբերականն ուրիշ հոլովներու
մէջ ալ եզակի կրնայ դրուիլ, զոր օրինակ.

Հասին առաջեաց որում ցանկային. Ի չարեաց
կասկածանաց յորմէ երկնչիմ։

166. Եր յարաբերականը դիմաւոր բայով

աշխարհաբարին ոչ եւ ոճ մերձաւորած բառերուն զօրութիւնն ունի, զոր օրինակ.

Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ. Ձեզի մտիկ ընողը ինծի մտիկ կ'ընէ։ Որ ընթեռնուն՝ ՚ի միտ առցէ. Կարդացողը թող հասկնայ։ Որ ոչն գործիցէ՝ եւ կերիցէ մի. Չաշխատողը թող չուտէ. Որ ետես զիս՝ ետես զհայր իմ. Զիս տեսնողը հայրս տեսաւ.

Զոր լուաք եւ տեսաք՝ պատմեմք ձեզ. Լսածնիս ու տեսածնիս ձեզի կը պատմենք։ Զոր ասէն՝ այսպիսի ինչ է. Ըսածը աս է։ Զոր ժողովեցեր՝ ո՞ւմ լինիցի. Ժողովածդ որո՞ւ պիտի ըլլայ։

---

## 167. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆԻՆ ԱՅ ԿԵՐՊ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՔԱՆԻ ՄԸ ԳԻՏԵԼԻՔ

1° Ու տեսակ խօսքերու մէջ դերանուն յարաբերեալ մը զօրութեամբ կ'իմացուի, զոր օրինակ.

Որ ձեզ լսէ, նա կամ այն որ ձեզ լսէ, կը նշանակէ։ Որ ընթեռնուն, նա որ ընթեռնու, ըսել է։ Զոր լուաքն եւ տեսաք՝ պատմեմք ձեզ. Զայն զոր լուաք եւ տեսաք՝ պատմեմք ձեզ ըսել է։

2° Ու տեսակ խօսքերու մէջ, երբ զօրութեամբ իմացուած դերանուն յարաբերեալը հոլոված է, յարաբերականը անփոփոխ անոր հոլովը կը դրուի, զոր օրինակ.

Որում խնդրէ ՚ի քէն՝ տուր. Քենէ խնդրողին տուր. փոխանակ ըսելու՝ Տուր այնմ որ խնդրէ ՚ի

քէն։ Դուք երկիր պագանէք որում ոչն գիտէք, մեք երկիր պագանեմք որում գիտեմքն. Դուք չը-ֆէտցածներդ երկրպագութիւն կ'ընէք, մենք ֆէտ-ցածներս երկրպագութիւն կ'ընենք. փոխանակ ըսելու՝ Դուք երկիր պագանէք այնմ՝ զոր ոչ գիտէք. մեք երկիր պագանեմք այնմ զոր գիտեմք։ Քաղցր է տէր որոց սպասեն նմա. Տէրն իրեն սպասողներուն քաղցր է. փոխանակ ըսելու՝ Քաղցր է Տէր այնոցիկ որ սպասեն նմա։ Դուք ոչ մտանէք, եւ որոց մտանենն՝ չտայք թոյլ մտանել. Դուք չէք մտներ, մտնողներուն ալ մտնելու չէք թողուր. փոխանակ ըսելու՝ Մտանել չտայք թոյլ այնոցիկ որ մըտանեն։ Եւ առ յորոց ածէրն ձեռամբ իւրով պատարագս. Իր բերածներէն իր ձեռքովը ընծայ առաւ. փոխանակ ըսելու՝ Առ պատարագս յայնցանէ զոր ածէր, եւայլն։

## Օրինակներ.

Երանի —մ (որում) թողութիւն եղեւ մեղաց. Մօտէ 'ի սուտն գողոց, եւ որոց երդնուցուն սուտ. Վասն որոց առաքեցանն 'ի Յովհաննէ. Երեւի որոց ոչն թերահաւատեն 'ի նմանէ. Նախ որոց 'ի Դամասկոս եւ յԵրուսաղէմ էին՝ պատմեցի. Որոց սիրենն զԱստուած՝ յամենայնի գործակից լինի 'ի բարիս. Երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն. Մեք արժանի որոց գործեցաքն առնումք ըղ հատուցումն. Եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ որոց տեսերն եւ լուար. Կրել պատուհաս ըստ որոց գործիցէ. Արժանի ըստ որոց մեղարն անց լիցի քեզ. Ոմանք յորոց անդն կային աստ. Ոչ ումեք պատմեցին եւ ոչինչ յորոց տեսինն. Առնուլ

զքեզ 'ի ձեռն պաշտօնեայ եւ վկայ որոց տեսերդ
զիս, եւ որոց երեւեցայց քեզ· Յանձն առ Յուդա
էր միանգամ Լիւսին աղաչեաց զնա. Կարդացին
զոր յամենայն ժամանակի օգնական եւ պաշտ-
պան լինէր ազգին իւրեանց· Խօսել չհամարձակէին
էր ինչ եղեն· Մի ինչ եկեսցէ 'ի վերայ իմ յորոց
դուքդ ասացէք։

Երբեմն կրնայ յարաբերականը զօրու-
Թեամբ իմացուած յարաբերելոյն հոլովը
չդրուիլ, զոր օրինակ.

Վասն որ հարկանէ զակն· փոխանակ վասն ո-
րոյ։ Զինչ բան տաց պատասխանի որ առաքեցին
զիս· փոխանակ որո—մ առաքեցին զիս· Առաջի Թա-
ւալէին որ 'ի սկզբանէ յաւիտենից հաստատեաց
զիւր ժողովուրդ· փոխանակ, Թաւալէին առաջի
որոյ, եւայլն։ Որում խնդրէ 'ի քէն տուր, եւ որ կա-
մի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս·
փոխանակ՝ եւ յորմէ կամի, եւայլն։ Որ 'ի ներքս
անդ էին՝ ինքնին Յուդա նէա եւ զէն մատուցա-
նէր· փոխանակ, որոց 'ի ներքս անդ էին, եւայլն։
Ծագեա զողորմութիւնս քո այն ճանաչեն զքեզ,
զարդարութիւնս քո որ ուղիղ են սրտիւք· փոխա-
նակ, որոց ճանաչեն զքեզ, որոց ուղիղ են սրտիւք։
Ասել կապելոց Թէ ելէք, եւ որ 'ի խաւարին իցեն՝
Թէ յայտնեցարուք· փոխանակ, որոց 'ի խաւարին
իցեն։ Վայ այն իջանենն յեգիպտոս· այսինքն՝ վայ
որոց։ Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդա-
րութեան· այսինքն՝ որոց։ Երանի որ հալածեալ ի-
ցեն վասն արդարութեան։ Զիա՞րդ դժուարին է որ
ընչս ունիցին մտանել յարքայութիւն Աստուծոյ·

այսինքն՝ դժուարին է որոշ ունիցին, եւայլն։

3. Այս տեսակ խօսքերու մէջ որ յարաբերականին բայը կընայ ներկայ, անկատար, կատարեալ, եւ ուրիշ ժամանակ դրուիլ երբ աշխարհաբարին ող կամ ած վերջաւորած բառը ներկայի, անկատարի, կատարեալի զօրութիւն ունի, զոր օրինակ.

Ասիկայ լսողը՝ կը զարմանայ. հոս լսողը ներկայի նշանակութիւն ունենալուն համար գրաբար պէտք է ըսել. Որ լսէ զայս զարմանայ։

Ասիկայ լսողը կը զարմանար. հոս լսողը անկատարի նշանակութեամբ է. ուստի գրաբարին մէջ որ յարաբերականին բայը անկատար դնելու է. Որ լսէր զայս զարմանայր.

Ասիկայ լսողը զարմացաւ, հոս ալ լսողը կատարեալի նշանակութիւն ունենալուն համար նոյն բայը կատարեալ պիտի դրուի. Որ լուաւ զայս զարմացաւ։

Ասիկայ լսողը պիտի զարմանայ. հոս ալ լսողը ապառնի նշանակութիւն ունի, ուստի բայն ապառնի պիտի ըլլայ. Որ լուիցէ կամ որ լսիցէ զայս՝ զարմասցի։

Նոյնպէս հետեւեալը.

Լսածս կը պատմեմ. լսածս ներկայ ըլլալուն համար. գրաբարին բայը պէտք է ներկայ դնել. Զոր լսեմ պատմեմ։

Լսածս կը պատմէի. ըստ անկատար է, ուստի եւ գրաբար բայն անկատար կը դըրուի. Օր ըսէին պատմէի։

Լսածս պատմեցի. Հոս ըստ կատարեալ է, ուստի եւ գրաբարին մէջ նոյն բայը կատարեալ պիտի ըլլայ. Օր նոյն պատմեցի։

Լսածս պիտի պատմեմ. ըստ եթէ ապառնի նշանակութեամբ է, այսինքն՝ եթէ ասկէ ետքը ըսելիքս կը նշանակէ, գրաբարին բայն ալ ապառնի պիտի դրուի. Օր ըսելն պատմեցից։

4° Այս տեսակ խօսքերու մէջ, երբ յարաբերեալը յետեւեայն կ՚իմացուի, կամ յարաբերականէն վերջը դրուած է, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ սովորաբար ս, դ, ն դիմորոշ կոչուած գիրերէն մէկը կը դրուի։

Եթէ զօրութեամբ իմացուած դերանուն յարաբերեալը ես, դու կամ այն է կամ անոնց յոքնակիները, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ . գիրը կը դրուի, զոր օրինակ.

Որ խօսիմս ընդ քեզ. Որ տրուպս եմ. Որ այժմս կեամ. այսինքն Ես որ խօսիմ, որ տրուպ եմ, որ այժմ կեամ։ Որ կարողքս եմք. Որ կենդանիքս եմք. Որ արտաքոյս եմք. այսինքն՝ Մենք որ կարողք եմք, որ կենդանիք եմք, որ արտաքոյ եմք։

Որ աստն է. այսինքն՝ Նա որ աստ է։ Որ կանն...

Որ խօսին. այսինքն՝ Ս--+- որ կան, որ խօսին։ Զոր խորհեցայ. առնել, այսինքն՝ Զ--յ- զոր խորհեցայ առնել։ Մի ոք մեղադիր լիցի եւ աղարտիցէ զոր ասեմ. այսինքն՝ Զ--յ- զոր ասեմ։ Զոր սայ- առնէ. այսինքն՝ Ա.յ- զոր սա առնէ։ Զորոց մեք- խօսիմք. այսինքն՝ Ա.յ--+էն զորոց մեք խօսիմք։

Եթէ զօրութեամբ իմացուած դերանուն յարաբերեալը դ--, դ- կամ այդ է կամ ասոնց յոգնակինները, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ դ դիմորոշը կը դրուի, զոր օրինակ.

Զոր եսդ սիրեմ. Որ ամենեցունդ ես թագաւոր. Որ ձիթենիդ վայրենի էիր. Որ եսդ առանց մեղաց. Ընդ որում համարձակեալդ խօսիմ. Որ վաղդ ելեր մեկնեցար. Որ ոչդ երկնէիր. այսինքն՝ Դ-- զոր ես սիրեմ. Դ-- որ ամենեցուն ես թագաւոր. Դ-- որ վայրենի ձիթենի էիր, եւայլն։

Որ 'ի Գէթդ էք. Որ արբեալդ էք. Որ չեւդ էք արբեալ. այսինքն՝ Դ--+ որ 'ի Գէթ էք. Դ--+ որ արբեալ էք, եւայլն։

Որ 'ի քէնդ առաքեցաւ. Ո՞վ է որ ասէդ ցքեզ. այսինքն՝ Դ- որ 'ի քէն առաքեցաւ. Ով է դ- որ ասէ ցքեզ։ Որ շուրջ զմեօքդ բնակեալ են. այսինքն՝ Դ--+ որ բնակեալ են շուրջ զմեօք։ Որ իբրեւ զքեզդ իցեն. այսինքն՝ Դ--+ որ իցեն իբրեւ զքեզ։

Զոր դուդ առնես. Որում դուքդ երկիր պագանէք. Զոր դայդ մարգարէանայ. Առաւել եւս քան զոր ասեմդ. Գիտասցէ զոր գրեցիդ. Հաստատուն կաց յոր ուսարդ. Զոր յօժեալ եւ ուսեալդ

ես. Զոր ոչ՛ վայելէ քեզ խօսել. այսինքն՝ Այդ զոր դու առնես. Այդ որում դուք երկիր պագանէք. Այդ զոր դա մարգարէանայ, եւայլն։ Ընդ որս դուքդ զարմանայք. Ցանկացան լսել զոր լըսէքդ. Գիտիցէ՞ արդեօք զոր ընթեռնուցուսդ. այսինքն՝ Այդ--էկ ընդ որս դուք զարմանայք. Ցանկացան լսել զայդ--էկ զոր դուք լսէք. Գիտիցի՞ս արդեօք զայդ--էկ զոր ընթեռնուս։

Եթէ զօրութեամբ իմացուած դերանուն յարաբերեալը նա կամ այն է, կամ ասոնց յոքնակիները, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ ն գիրը կը դրուի, զոր օրինակ.

Որում դուն վկայեցեր. Որ 'ի նմայն ծնեալ է. Որ զթայն ողորմութիւն գտցէ. Որ բժշկէն եւ բըժշկին. Որ մեռանին արդարացեալ է. Որ գողանայրըն մի եւս գողասցի. Ո՞վ է որ դատին զքեզ. Ո՞վ է որ չարչարիցէն զիս. Որ սիրեացն զիս եւ մատնեաց զանձն իւր վասն իմ. Որ եկնն եհաս. Որ արարիչն եւ տուիչ է. Որ հիւանդն իցէ զբժիշկն խնդրէ. Որ 'ի վերն քան զՋրուանն էր. Զորմէ այսպէսն ասի. Վասն որոյ յառաջ կասկածն իսկ եղեւ. Որ կարին իսկ քաջ գիտիցէ. Որ այնպէսն կարող է. Որ ձրին եգիտ. Որ մտադիւրն ծառայեաց. Որ 'ի վերայն էր հասանելոց. Որ 'ի ծածուկն քեւ պատերազմի. Որ ոչն է ձեր թշնամի. Որ ոչն անկեալ երկիր պագանիցէ. Որոյ եղերուքն դուք որդիք. Որում չեմն արժանի թէ լուծից զխրացս կօշկաց նորա։

Ա՛յս օրինակներուն մէջ նա կամ այն յարաբերեալը զօրութեամբ կ'իմացուի. այսինքն՝ Նա որուն դու վկայեցեր. Նա կամ այն որ ծնեալ է 'ի նմա. Նա որ գթայ. Նա կամ այն որ բժշկէ, եւ այն որ բժշկի, եւ այլն։

Որ զիսն սիրեն. Յորս դուքն պանծացեալ էք. Որ զձեզն խռովեցուցանեն. Որ ընդ նմայն հաւանեալ էին. Որ զնովաւն էին. Որ ընդ նոսայն նստէին. Որ ատեանն զիս. Որ ննջեանն՝ գիշերի ննջեն, եւ որ արբենանն՝ գիշերի արբենան. Որ լայցենն՝ որպէս թէ ոչ լայցեն. Որ քրիստոսեանքն են. Որ բունքն իսկ են. Որոց պարտն եւ պատշաճ էր խընդալ. Որ ընդ ահեկէն իցեն. Որ յԵրապօղին են. Որ երբեմն օտարացեալքն էին. Որ շուրջն կային զնովաւ. Որ զհետն երթային. Զորս յառաջագոյն հրաւիրեաց. Որոց այսպէսն պարտ եւ պատշաճ էր զպարկեշտսն ցուցանել. Որ հաղիւն ապրեցան։

Ա՛յս օրինակներուն մէջ ալ զօրութեամբ իմացուած յարաբերեալը՝ նորա կամ այնորիկ է. այսինքն՝ Նորա կամ այնորիկ որ սիրեն զիս. Նորա կամ այնորիկ յորս դուք պանծացեալ էք, եւ այլն։

Զոր յիսն տեսէք. Զոր մեքն քարոզեմք. Զոր դուքն ոչ գիտէք. Զոր նոքայն ժողովեցին. Զոր գործեմն՝ ոչ գիտեմ. Զոր կամքն յաղօթս՝ ոչ գիտեմք. Զոր պարտէաքն առնել՝ արարաք. Մեք արժանի որոց գործեցաքն առնումք զհատուցումն. Որում չէն մարթ լինել. Զոր Աստուածն կամի. Զոր ասան եւ. Զոր անդն խոստացաւ. Զոր միչան ա-

սէի. Զարհուրեալ եւ դողացեալ վասն որոյ գաղտն արար. Եւ զոր ոչն եւս խնդրեցեր՝ ետու քեզ. Մեք ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք չխօսել։

Անոնց մէջ ալ զօրութեամբ իմացուած յարաբերականներն են՝ այն, այնոցիկ. այսինքն, Այն զոր տեսէք յիս. Այն զոր մեք քարոզեմք. Զայն զոր դուք ոչ գիտէք. Այնոցիկ զո-րըս նոքա ժողովեցին, եւ այլն։

Յարաբերեալը ներգործութեամբ եղած ատենն ալ՝ երբեմն յարաբերականէն անմի-ջապէս ետքը եկող բառին վրայ դիմորոշ Յօդ ( ս, դ, ն ) կը դրուի, զոր օրինակ.

Այնմ որ ինձն պատմիցէ. Զայրն զորմէ դուքդ ասէք. Զինչ է այդ զոր դուքդ գործէք. Այս որ ձեզս տուաւ. Կանայսն որ շուրջ զնովաւն կային. Ես եմ որ խօսիմս ընդ ձեզ. Ոչ եթէ զոր կամիմն զայն առնեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ. Եթէ զոր քակեցին զնոյն միւսանգամ շինիցեմ. Դարձայց 'ի տունն իմ ուստի ելին. Զոր ուսարուքն եւ լուայք եւ տեսէք յիս՝ զայն արարէք. Այն որ սրբէն, եւ որ սրբին. Ոչ վասն այնորիկ որ զրկեացն, եւ ոչ վա-սըն այնորիկ որ զրկեցաւն. Յայնոսիկ որ ընդ աջմէն իցեն. Ես որ կապեալս եմ. Ոմանք 'ի սոցանէ որ աստ կան. Ոմանք յայնցանէ որ անդն կային։

5. Եթէ աշխարհաբարին մէջ ող կամ ած վերջաւորած բառն ածական է եւ գոյական մը ունի, ան ատեն ալ գրաբարին մէջ ող վերջաւորած ածականին տեղ յարաբերա-

կանոմ դիմաւոր բայ կը դրուի, զոր օրինակ.

Եկող մարդը. Տեսնող ծառաները. Սպանող զինուորը։

Գրաբարի կը դառնան այսպէս.

Այրն որ եկն. Ծառայքն որ տեսին. Զինուորն որ սպան։

Նոյնպէս.

Տեսած մարդս. Լսած խօսքդ։ Կորսուած գիրքը՝

Գրաբար կ՚ըսուին.

Այրն զոր տեսի. Բանն զոր լուար. Մատեանն զոր ընթեռնու։

6. Նոյն տեսակ խօսքերուն մէջ երբեմն որ յարաբերականով դիմաւոր բայը գոյականէն առաջ կը դրուի, զոր օրինակ.

Որ առաքեացն զիս Հայր. փոխանակ՝ Հայրն որ առաքեաց զիս։ Որ բարւոք վերակացու լինին երիցունք. Փոխանակ՝ Երիցունք որ բարւոք վերակացու լինին։

Այսպէս են հետեւեալները.

Դեմետրիոս եւ որ ընդ նմա ճարտարքն. Իբրեւ լուան որ յԵրուսաղէմ առաքեալքն էին. Խօսէին ՚ի նմանէ որ ՚ի Թլփատութենէ անտի հաւատացեալք. Ողջոյն տան քեզ որ ընդ իս են ամենեքին։

Այս խօսքերն աշխարհաբարի կը դառնան այսպէս.

Որ առաքեացն զիս հայր. Զիս ղրկող հայրը՝

Որ բարւոք վերակացու լինին երիցունք. Աղէկ վերակացութիւն ընող երէցները՝ Դեմետրիոս եւ որ ընդ նմա ճարտարք. Դեմետրիոսն ու անոր հետի վարպետները։ Իբրեւ լուան որ յԵրուսաղէմ առաքեալքն էին. Երուսաղէմ եղող առաքեալները երբ լսեցին։

Նոյնպէս միւս օրինակներն ալ։

7. Նոյնպէս յարաբերեալը յարաբերականէն եւքը դրուած ատեն՝ երբ երկուքը տարբեր տարբեր հոլով են, իրարու հոլով կը դրուին. այսինքն՝ յարաբերականը յարաբերեալին, յարաբերեալն ալ յարաբերականին հոլովը, զոր օրինակ.

Մարգարէանայ զոր առյապայ անցք ընդ Սաւուղ անցանելոց էին. փոխանակ՝ Մարգարէանայ զանցս որ, եւայլն։ Որոց առ գերութեամբն ժողովրդեան՝ առաջին է սա. փոխանակ՝ Առաջին է սա ժողովրդենէց որ, եւայլն։ Ապստամբութիւն ուսուցանես 'ի Մովսիսէ որոց 'ի հեթանոսս ամենայն Հրէից են. փոխանակ՝ Ուսուցանես Հրէից որ են, եւայլն։ Մարգարէքն որք վասն որոց 'ի ձեզ լինելոց էին շնորհացն՝ մարգարէանային. փոխանակ՝ մարգարէանային վասն շնորհացն որ լինելոց էին եւայլն։ Ոչ եղի յԵրուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին. փոխանակ՝ առ առաքեալսն որ էին եւայլն։ Նարձաւ առ որս նստէին եղբարքն, եւ ասէ. փոխանակ՝ առ եղբարսն որ նստէին։

168. Գիմորոշ յօդ կը դրուի նաեւ

Ա. Երբեմն որ ինչ եւ ինչ բառերէն ետ-

քը, որոնք այն ինչ որ, կամ աշխարհաբար՝ ան որ, ինչ որ կը նշանակեն, ինչպէս.

Զոր ինչ ես գործեմ. Ոչ գիտեմ զինչ դու ասես. Գիտէք զինչ արարիք. Զոր ինչ տեսանեմքն՝ ասեմք. Այր դու, չգիտեմ զինչ ասես. փոխանակ ըսելու, Զայն ինչ զոր ես գործեմ. Զայն ինչ զոր դու ասես. Զայն ինչ զոր արարի, եւայլն.

Բ. Դիմորոշ յօդեր կը դրուին շատ անգամ մինչ, յորժամ, ուր, ուստի, որպէս, իբրեւ շաղկապներէն ետքը, քանզի այսպիսի խօսքերու մէջ միշտ զօրութեամբ բառ մը կամ բայ մը կ'իմացուի, զոր օրինակ.

Աղաչեցի զքեզ կալ յԵփեսոս մինչ երթային. այսինքն յայնժամ՝ յորժամ երթայի։ Մինչ էաքն մարմնով. փոխանակ՝ յայնժամ՝ յորժամ էաք մարմնով։ Մինչդեռ կայրն կախեալ. այսինքն՝ յայնժամ յորժամ կամ 'ի ժամանակին յորում, եւայլն։ Մինչդեռ ալէկոծն եւ ծովածուփ իցէ. այսինքն՝ յայնժամ՝ յորժամ իցէ, եւայլն։ Մինչդեռ այդն կամէր լինել. Մինչ ինքնն միայն էր։

Յորժամ զգենուցումքն. Յորժամ յարեաւն 'ի մեռելոց. Յորժամ եկնն. Յորժամ քաղցեաւն. Յորժամ զՅոբն կամեցաւ փորձել. Յորժամ պատկեալն տեսանիցեն. Յորժամ ոչն գանգատեցար 'ի յառնել եւ 'ի թողուլ զճաշ քո. Յորժամ եմն հեռի. փոխանակ՝ յայնժամ՝ յորժամ զգենումք. յայնժամ՝ յորժամ յարեաւ, քաղցեաւ, եկն, եւայլն։

Ուր եմն իցեմ. Ուր եմն երթամ՝ դուք ոչ կարէք գալ. Ուր երթամն գիտիցէք. Ուր էաքն ժո-

զովեալ· Ուր Քրիստոսն նստի. Ուր առաքս հրաման· փոխանակ ընելու՝ Անդ ուր ես եմ. անդ ուր ես երթամ, ուր չաք ժողովեալ, եւայլն։

Ուստի եմն գիտէք, այսինքն՝ գիտէք զճնպհն յորմէ եմ. Ջի մի տրամութիւն ինչ կրիցեմ ուստի արժանն իցէ ինձ ուրախ լինել. այսինքն՝ անդէ՝ ուստի արժան իցէ, եւայլն։

Ոգի մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ. Որպէս մեք լուաք. Զգործ տեառն գործէ որպէս եւ ես. Որպէս սկսաւն յառաջագոյն. Որպէս դուք այլ ընդ այլոց կարծես. Որպէս երդուայն. Գուցէ եկեալ ոչ որպիսիս կամիցիմն գտանիցեմ զձեզ. Որպէս եւ Յորն ասէ. Ոչ ծանր ինչ եւ տաղտկալի իրս առաջի դնէր որպէս Յովհաննն. Որպէս եւ Մովսէսն եկաց յաղօթս. Ելից եւ արարից որպէս միչտն. Երգէր ձեռամբ իւրով որպէս եւ հանապազն. Որպէս յառաջագոյնն ասացաւ. Որպէս 'ի միասինն արարաք զնա. Որպէս եւ կանխաւն ասէի. Փառաւոր լիցի յամենայն տեղիս որպէս եւ առ ձեզ։

Նո խօսքերուն մէջ ալ այնպէս բառը մինակ կամ ուրիշ բառերով մէկտեղ զօրութեամբ կ'իմացուի, զոր օրինակ.

Որպէս երդուայն. Այնպէս որպէս երդուայ, ըսել է։ Զգործ տեառն գործէ որպէս եւ ես. Զգործ տեառն գործէ այնպէս՝ որպէս եւ ես գործեմ, ըսել է։ Գուցէ եկեալ ոչ որպիսիս կամիցիմն՝ գտանիցեմ զձեզ. կը նշանակէ՝ Գուցէ եկեալ ոչ գտանիցեմ զձեզ այնպիսին՝ որպիսիս կամիցիմ։

Այսպէս պէտք է իմանալ միւսները։

Դ. Անորոշ դերբայի տեղ շատ անգամ՝ շաղկապով դիմաւոր բայ կը գործածուի. ան տեղն՝ որ շաղկապէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ դիմորոշ յօդ կը դրուի, զոր օրինակ.

Ո՞չ շատ լաւ է քեզ այն զի ուսանիցես դու զն-գիրատ. այսինքն՝ Ո՞չ շատ լաւ է քեզ —երէն քո գնգիրատ

Ոչ այնու միայն զարմանալի է (Աստուած) զի ած՛ ՚ի չգոյէ ՚ի գոյ զչգոյսն, այլ զի եւ անպարապ պահէ զեղեալսն. այսինքն՝ Ոչ միայն զարմանալի է վ—ն —ծեւոյն ՚ի չգոյէ ՚ի գոյ, եւայլն.

Ոչ զի մեռաւ, այլ զի խաչեցաւ՝ այն ուէլ են զարմանք. փոխանակ՝ Ոչ մ—անէն այլ խաչէն են զարմանք.

Ոչ զի եկլին միայն, այլ առաւել եւս զի համարձակեցան. այսինքն՝ Ոչ միայն վասն գալոյ նոցա, այլ առաւել եւս վասն համարձակելոյ նոցա

Վասն զի արար եւ հաստատեաց զնոսա. այսինքն՝ վասն առնելոյն եւ հաստատելոյն զնոսա

Մի ընդ այն նայիցիս զի նեղն եւ անձուկ է եւ խիստ. այսինքն՝ Մի նայիցիս ընդ լինելն նեղ եւ անձուկ, եւայլն

Նա զի եւ ազգաւն իսկ իցես՝ յայն սակս կարեւոր պէտք են նեղ եւ հանդարտ լինելոյ. այսինքն՝ Նա մանաւանդ վասն լինելոյդ ազգաւ՝ պարտ է քեզ հանդարտ լինել.

Ոչ զի մարմինն առ եւ եղեւ մարդ, այլ զի . . .

այսինքն՝ Ոչ վասն մարմին անձկոյն և մարդ ըն-կերոյն, այլ. ևայլն

Ոչ միայն են հաստատունն և անշարժք են բա-րութիւնքն . . . այլ են դիւրաւ և առանց ամե-նայն աշխատութեանց ընդունելեան. այսինքն՝ Ոչ միայն վասն հաստատուն և անշարժ լինելոյ բա-րութեանցն, այլ և վասն դիւրաւ և առանց աշ-խատութեան ընդունելոյ նոցա

## Դ. ԲԱՅ

### 1. Գործողին ժամանակներուն աշխարհաբարին հետ համեմատութիւնը.

169. Գրաբարին Սահմանական ներկան Գործեմ, աշխարհաբարին ներկային հետ նոյն է, որ է կը գործեմ, զոր օրինակ.

Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ.
Հայրս մինչև հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ։

Նոյնպէս ամեն բայ, զոր օրինակ.

Գիտեմք եթէ ուղիղ խօսիս. ոչ առնուս աչս, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես. Գիտեմք որ շիտակ կը խօսիս, աչառութիւն չես ըներ, այլ Աստուծոյ ճամբան ճշմարտութեամբ կը սորվեցնես։

170. Գրաբարին Անկատարն ալ նոյն է աշ-խարհաբարին անկատարին հետ, որ է կը գոր-ծէի, զոր օրինակ.

Յառաջագոյն հայհոյիչ էի և հալածիչ. այլ զոր

ողորմութիւն, զի զայն յանգիտութեան գործէի։ Առաջ հայհոյիչ ու հալածիչ էի, բայց ողորմութիւն գտայ. քանզի չգիտնալով կը գործէի։ Զցայգ եւ զցերեկ գործեաք՝ վասն չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ. Ձենէ մէկուն ծանրութիւն չըլլալու համար՝ գիշեր ցորեկ կը գործէինք։

Այսպէս ամեն բայ, զոր օրինակ.

Յաւուրսն Ղովտայ ուտէին, ըմպէին, գնէին, շինէին, վաճառէին. Ղովտին ատենը կ'ուտէին, կը խմէին, կը գնէին, կը շինէին, կը ծախէին։

171. Գրաբարին Կատարեալն ալ գործեցի նոյն է աշխարհաբարին կատարեալին հետ որ է գործեցի. զոր օրինակ.

Եթէ արժանի ինչ մահու գործեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ. Եթէ մահու արժանի բան մ գործեցի, մեռնելէն չեմ փախնար։

Այսպէս ամեն բայ. զոր օրինակ.

Իբրեւ ետես զնա հայրն, գթացաւ, յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նորա եւ համբուրեաց զնա. Երբոր հայրը զանիկայ տեսաւ, գթաց, ելաւ դիմացը վազեց, անոր վիզն ինկաւ ու զանիկայ համբուրեց։

172. Գրաբարին Հրամայականն ալ գործեա, գործեցէք, աշխարհաբարին հրամայականին հետ նոյն է, որ է գործէ, գործեցէք. զոր օրինակ.

Որդեակ, երթ այսօր գործեա յայգւոջ. Որդեակ, այսօր գնա այգին գործէ։ Զամենայն ինչ գործեցէք

առանց տրտնջելոյ եւ քրթմնջելոյ. Ամեն բան առանց տրտնջելու ու մրմռալու **գործեցէք**։

Այսպէս ամեն բայ, զոր օրինակ.

Ած զգօտի քո, **արկ** զձորձս քո եւ **էկ** զկնի իմ. Գօտիդ **կապէ**, լաթերդ **հագիր** ու ետեւէս **եկուր**։

**173.** Գրաբարին **Ապառնին** ընդհանրապէս աշխարհաբարին ապառնոյն չի պատասխաներ. ուստի, **գործեցից**՝ պիտի գործեմ ըսել չէ, այլ **կը գործեմ*** ըսել է, որ տեսակ մը ապառնի է, զոր օրինակ.

**Լուայց** քեզ, յորժամ չարախօսք քո եկեսցեն. Քեզի մտիկ **կ'ընեմ**, երբ ամբաստանողներդ գան։ Դու առ այժմ երթ. եւ յորժամ ժամ լիցի, **կոչեցից** զքեզ. Դուն հիմակու հիմա գնա, երբ պատեհութիւն ըլլայ, քեզ **կը կանչեմ**։ Զայս ամենայն **տաց** քեզ, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ. Ասոնք ամենը քեզի **կու տամ**, եթէ երեսի վրայ իյնալով ինծի երկրպագութիւն ընես։ Ոչ **գործեցից** զՏէր. Տէրը **չեմ գործեր**։

**174.** Գործեալ գրաբարին ապառնին շատ անգամ ստորադասական է, կամ ըստորադասականին տեղ ալ կը գործածուի. ուստի **գործեցից**՝ կը նշանակէ նաեւ **որ գործեմ**, զոր օրինակ.

---

* Աշխարհաբարին մէջ **կը գործեմ** որ ներկայ է, շատ անգամ Ապառնի նշանակութիւն մը կ'առնէ. եւ գրաբարին ապառնին սովորաբար աշխարհաբարին աս ապառնոյն կը դառնայ.

Խորհուրդ տալուն չէ զիտակցական ողջունելը. Խորհուրդ ըրին որ կապիտաններն ողջունեն. Զի՞նչ կամիս չէ տարբեց. Ի՞նչ կ'ուզես որ ընեմ. Կամի՞ս չէ երթեցուք. Կ'ուզե՞ս որ երթանք։

175. Գրաբարին ապառնին աշխարհաբարին ապառնոյն կը պատասխանէ, այսինքն՝ Գործեցէք՝ պիտի գործեմ, կը նշանակէ, միայն Աստուածական կամ մարգարէական, այսինքն գուշակելով եղած խօսքերու մէջ, զոր օրինակ.

Արեգակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ զլոյս իւր. Արեգակը պիտի խաւարի, ու լուսինն իր լոյսը չպիտի տայ։

176. Գրաբարին մէջ աշխարհաբարին ապառնոյն ձևին պատասխանող ժամանակը՝ աս ձևն է. Գործելոց եմ, պիտի գործեմ. Գործելոց էի, պիտի գործէի. Գործելոց եղեմ, պիտի գործեմ.

Ա. Գործելոց եմ ձևը՝ բուն ապառնի է. և գալու ժամանակի մէջ, զոր օրինակ՝ վաղը, գալ շաբաթ, գալ ամիս, գալ տարին պիտի գործեմ ըսել է. զոր օրինակ.

Իբրև գիտաց Յիսուս թէ գալոց են յափշտակել զնա, զի արասցեն թագաւոր. Յիսուս երբ իմացաւ թէ զինք յափշտակելու պիտի գան որ թագաւոր ընեն. Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. Պատերազմներ ու պատերազմի լուրեր պիտի լսէք։ Մոլորութիւնն զինաց խաղ-

նաց զդիւցապաշտս Հայոց եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելնելու է եւ առնելու զաշխարհս. Դիւաց մոլորութիւնը Հայոց դիւցապաշտները խաբեց թէ՝ դեւերն Արտաւազդ անունով մէկը բանտարկած են, որ ցարդ կենդանի է, ու պէտք ելլէ եւ աշխարհս պէտք տիրէ։ Կանխաւ գիտաց զՅակոբայ թէ առաքինի ըլլալու է, եւ զԵսաւայ՝ թէ յանցաւորութիւնս գործելու է։ Առաջուց գիտցաւ թէ Յակոբ առաքինի պէտք ըլլայ, եւ Եսաւ անօրէնութեանց մէջ պէտք իյնայ։ Յառաջագոյն հայեցեալ ՚ի նախանձաւորութիւնն Յովսիայ՝ այդ արար կանխագոյն թէ յառնելու է ՚ի նոցանէ թագաւոր, որ զկռապաշտութիւն որդւոյն Իսրայէլի եղծանիցէ։ Յովսիային նախանձաւորութիւնը յառաջագոյն տեսնելով կանխաւ խօսեցաւ թէ անոնցմէ թագաւոր մը պէտք ելլէ որ Իսրայէլի որդւոց կռապաշտութիւնը ջնջէ։

Բ. Գործելու էր ձեւը՝ անցեալ ապառնի է, եւ կը նշանակէ բան մը որ ապառնի ժամանակէ մը ետքը. պէտք ըլլար. զոր օրինակ.

Սա է որ զկնի իմ գալոց էր։ Ան է որ ինձ ետքը պէտք գար։ Մովսէս եւ Եղիա երեւեալ փառօք՝ ասէին զելիցն նորա զոր կատարելոց էր յԵրուսաղէմ։ Մովսէս ու Եղիա փառօք երեւնալով կը խօսէին անոր ելքին վրայ զորոնք Երուսաղէմի մէջ պէտք կատարէր։ Յառաջագոյն խորհէր զնոսա, թէպէտ գիտէր թէ չէր նմա լինելոց։ Զանոնք առաջուց խորհեցաւ, թէպէտ գիտէր թէ իրեն պէտք չըլլային։ Վասն նիւթոյ Դաւթի ասէր թէ պատրաստելոց էր [illegible]

գերիս ժողովրդեանն. Պարսիկ Կիւրոսին համար կ՚ըսէր, թէ ժողովուրդին գերիները պէտք ազատէր:

Գ. Գործելոց էջեմ ձեւը՝ ստորադասականին ապառնին է, պէտք գործեմ կը նշանակէ, եւ գործելոց եմ ին տեղ կը գործածուի, երբ խօսքը թէական, հարցական կամ տարակուսական է, զոր օրինակ.

Իսկ կէսքն ասէին, միթէ 'ի Գալիլեէ՞ գալոց է Քրիստոսն. Ոմանք ալ կ՚ըսէին, Քրիստոսը Գալիլեայէ՞ն պէտք գայ: Մեք ակն ունէաք թէ նա իցէ որ փրկելոց էր զԻսրայէլ. Մենք կը յուսայինք թէ Իսրայէլին ան պէտք փրկէր: Ընդէ՞ր աշխատ առնիցեն որ չիցեն անառոց. Ինչո՞ւ կը յոգնեցնեն անոնք որ պէտք մեռնիլ չեն:

177. Գրաբարին ստորադասականը գործիցեմ, ընդհանրապէս աշխարհաբարին ստորադասականին հետ նոյն է, որ է գործեմ:

Ստորադասականը կը գործածուի աշխարաբար,

Ա. Երբ օրինակ կամ ենթադրութիւն բերուած խօսքեր բացատրելու, զոր օրինակ.

Նման է ազգս այս մանկտւոյ որ նստիցեն 'ի հրապարակս, կարդայցեն ընկերս իւրեանց եւ ասիցեն. Փողս հարաք ձեզ եւ ոչ կաքաւեցէք. ողբացաք ձեզ եւ ոչ կոծեցարուք: Այս ազգը կը նմանի տղոց, որոնք հրապարակները նստին, իրենց ընկեր-

նէրուն չանչըն ու բուէն. Ձեզի փող հարինք ու չկա-
քաւեցիք, ողբացինք ու կոծ չըրիք։

Որպէս յորժամ իցէ ոք ուրուք թշնամի, եւ թաքուցեալ զթշնամութիւնն գաղտ կամիցի վնասել, եւ քննիցէ զհանգամանս վնասակարութեանն, եւ շուրջ եկեալ յածիցէ հնարս խնդրել. ապա գտեալ ժամանակ յորժամ ոք 'ի բժշկաց թշնամւոյ նորա պատուէր տայցէ յայս ինչ չհպել, եւ յայս ինչ կերակրոյ չճաշակել, որով առողջութեանն կարիցէ հասանել, վաղվաղակի 'ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն դարանիցէ, եւ զօգտակարսն նմա վնասակարս թելադրեալ կարծեցուցանիցէ, եւ պատուէրս հակառակ հրամանաց բժշկին տայցէ, եւ այնու առնիցէ նմա վնաս. Նոյնպէս երբոր մէկը մէկուն թշնամի ըլլայ, եւ թշնամութիւնը ծածկելով գաղտ վնաս ընել ուզէ, բայց վնաս ընելուն եղանակն ալ չգիտնայ ու հնարք փնտռելու ըլլայ. երբոր բժիշկ մը անոր թշնամւոյն պատուէր տուած ատեն՝ թէ այս ինչ բանին չմօտենայ, այն ինչ կերակուրէն չուտէ որ առողջութեանը հասնի, պատեհութիւն գտնելով եւ բարեկամութիւն կեղծելով բժիշկը դարանէ, օգտակարները անոր վնասակար կարծեցնէ, բժշկին հրամաններուն հակառակ պատուէրներ տայ, եւ այնպէս անոր վնաս ընէ։

Բ. Սորադասականը տարակուսական կամ անստոյգ խօսքերու մէջ կը գործածուի. ուստի գրաբարին մէջ Ըղձական, Հարցական եւ Բացասական խօսքերու մէջ սովորաբար Սորադասական կը գործածուի, երբ գործողու-

թիւնը ներկայ կամ Ապառնի* է, զոր օրի-
նակ.

Եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո նմա եւ զմիւսն. Եթէ մէկը քու աջ ծնօտիդ ապտակ մը զարնէ, մէկալն ալ անոր դարձուր։ Եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա. Եթէ հոն ողջունի որդի կայ, ձեր ողջոյնն անոր վրայ հանգչի։ Միթէ քաղիցե՞ն 'ի փշոց խաղող. Փուշերէն խաղող կը քաղուի՞։ Բարեացն արարիչ եւ չարեաց ո՞ քան զո՞ հարուստ իցէ. Բարւոյն ու չա-

* Եթէ գործողութիւնն անցեալ է. Թէական. հարցական եւ բացասական խօսքեր անկատարով կամ կատարեալով կը բացատրուին. զոր օրինակ. Եթէ գիտէիք զի՞նչ է. « ողորմութիւն կամիմ եւ ոչ զոհս » ․ ոչ դատապարտէիք զանմեղսն. Եթէ « ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ » խօսքին ինչ ըլլալը գիտնայիք անմեղները չէիք դատապարտեր։ Եթէ ոչ էի եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա. մեղ ինչ ոչ գոյր նոցա. Եթէ ես եկած ու անոնց հետ խօսած չըլլայի. յանցանք չէին ունենար։ Իմացա՞յք զայս ամենայն. ասեն ցնա. Այո. Տէր. Այս ամէնը հասկցա՞ք. Այո. Տէր ըսին. Եթէ ննջեաց. ապա ապրի. Եթէ քնացեր, կ'ապրի։

Աս խօսքերուն մէջ ինչպէս յայտնի է. Ըղձական եւ հարցական բայերուն գործողութիւնը անցեալ է. այսինքն արդէն եղած է.

Բայց աս խօսքերուն մէջ գործողութիւնն ապառնի է. այսինքն՝ տակաւին պիտի ըլլայ։

Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ եւ ասիցէք թթենւոյ այդմիկ. խլեաց եւ անկեաց 'ի ծովու. հնազանդեսցի ձեզ. Եթէ մանանխոյ հատին ալ չափ հաւատք ունենաք եւ այն։ Եթէ ոչխար ուրուք անկանիցի 'ի խորխորատ 'ի շաբաթու. միթէ ոչ ունիցի եւ յարուցանիցէ զնա. Եթէ մէկուն ոչխարը շաբաթ օր խորխորատ իյնայ. անիկա չէ՞ բռներ, չէ՞ վերցըներ։

րին արարիչներէն ո՞ր աւելի զօրաւոր է*։ Զիչէ՞ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ։

## Զ. Անորոշ Դերբայ։

**178.** Ոչ Շաղկապով դիմաւոր Բայը շատ անգամ Անորոշ դերբայի զօրութիւնն ունի, զոր օրինակ.

Զի ներող եւ արդահատող է արարիչն՝ այն ամենեցուն իսկ յայտնի է. փոխանակ ըսելու՝ Ներող եւ արդահատող լինելն արարչին յայտնի է ամենեցուն։

Այլ զի Աստուած մահուան չէ պատճառ՝ վըկայեսցէ ամենարուեստ իմաստութիւնն. այսինքն՝ Ոչ լինելոյն Աստուծոյ պատճառ մահուան՝ վկայեսցէ իմաստութիւնն։

Եւ զի ճշմարիտ է բանն՝ յայտ անտի է զի . . . այսինքն՝ ճշմարիտ լինելն բանին անտի յայտ է զի . . .

Եւ զի բարեաց կամեցող է Աստուած՝ ուսուցանէ մեզ Տէր յասելն, եւայլն. այսինքն՝ Զլինելն Աստուծոյ կամեցող բարեաց՝ ուսուցանէ մեզ Տէրն։

Այլ զի դեւ զդեւ ոչ հանէ՝ զայն իսկ յայտ արար. այսինքն՝ Զոչ հանելն եւս դիւի զդեւ յայտ արար. Դիւին դեւ չհանելն ալ իմացուց։

**179.** Առ հակառակ շատ անգամ ալ կամ

---

* Թէական եւ հարցական խօսքեր. ինչպէս աշխարհաբարին, նոյնպէս գրաբարին մէջ, կրնան ներբայով ալ բացատրուիլ. ուստի վերի խօսքերն այսպէս ալ կ՚ըլլան. Միթէ քաղէն ՚ի փշոց խաղող։ Բարեացն արարիչ եւ չարեաց, ո՞քան զո հարուստ է։

Թէ Շաղկապով դիմաւոր բայն՝ Անորոշ դերբայի կը փոխուի, եւ ան ատեն է որ Տէր բային ամբողջաբար Տրական կը դրուի, եթէ չէ կամ Թէ Շաղկապին բայը յայտնի Տէր բայի ունի. զոր օրինակ.

Հակառակէին չլինել յարութեան, այսինքն՝ Հակառակէին թէ չէր յարութիւն։ Եւ եղեւ բանալ երկնից, փոխանակ՝ Եւ եղեւ զի բացան երկինք։ Պատասխանի ետուն չգիտել, այսինքն՝ Պատասխանի ետուն թէ ոչ գիտէին։ Պատուիրեաց նմա մի ումեք ասել, այսինքն՝ Պատուիրեաց նմա զի մի ումեք ասիցէ։ Եղիցի կոյր չտեսանել զարեւ, փոխանակ՝ Եղիցի կոյր զի մի տեսցէ զարեւ։

Տես նաեւ թիւ 112։

**180.** Անորոշ դերբային Հայցականը կամ Տրականը 'ի կամ առ 'ի, առ նախադրութիւններով գործածութեան մը նպատակը կը ցուցնէ, զոր օրինակ.

Ի լուծել եկեալ եմ. այսինքն՝ Եկեալ եմ զի լուծից. լուծելու կամ լնելու համար եկած եմ։ Ոչ եւս եղիցի ջրհեղեղ ջուրց 'ի ապականել զամենայն մարմին։ Ոչ աչաց պիտանութիւն (գործածութիւն) էր նոցա 'ի տեսանել, ոչ ականջք էին 'ի լսել եւ ոչ ունչք առ 'ի հոտոտել զօդ, եւ ոչ մատունք ձեռաց առ 'ի շօշափել։ Լռեցուցէ զշրթունս իւր 'ի չխօսելոյ զնենգութիւն, այսինքն՝ զի մի խօսեսցէ զնենգութիւն. Նենգութիւն չխօսելու։ Վասն արծաթոյն մատնեմք առ 'ի խոշտանգել զմեզ, այսինքն՝ մատնեմք զի խոշտանգեսցեն զմեզ. Կը մատնենք որ մեր

վրայ փնտռեմ։ Ձիոց սանձս 'ի բերան դնեմք ա-նսալոյ նոցա մեզ. այսինքն՝ Ձիոց սանձս 'ի բերան դնեմք զի անսայցեն նոքա մեզ. Որպէս զի մեզի հը-նազանդին։ Հազիւ լռեցուցանէին զժողովուրդն 'ի չզոհելոյ նոցա. այսինքն՝ զի մի՝ զոհեսցեն. զժու-ռաւ կը հանդարտեցնէին ժողովուրդը որ զոհ չմա-տուցանեն անոնց։ Առ խրատել զքեզ. Քեզ խրատե-լու համար։

Առ լաւութեանցն խելամուտ լինելոյ. այսինքն՝ Որպէս զի խելամուտ լիցի լաւութեանց. Որպէս զի ա-ղէկութիւն ընել սորվի, կամ՝ բարին, լաւը ճանչ-նայ։

Շատ անգամ այսպէս Հայցական կամ Տրական Անորոշ դերբային 'ի, առ 'ի, առ նախդիրները զանց կ'առնուին. զոր օրինակ.

Եկին ջուր առնուլ զոտս նոցա. փոխանակ՝ առ 'ի լուանալ։ Ել Իսահակ զբօսնուլ 'ի դաշտի. փոխանակ՝ առ 'ի զբօսնուլ։ 'Ի մէջ լերանց գնա-ցեն ջուրք արբուցանել զամենայն գազանս վայրի. փոխանակ՝ առ արբուցանել։ Եդ զնոսա (զլուսա-ւորս) Աստուած 'ի հաստատութեան երկնից լուսա-տու լինել յերկիր, և իշխել տուընջեան եւ գիշերոյ։ Ոչ եւս եղիցի ջրհեղեղ ջուրց ապականել զամենայն երկիր. փոխանակ՝ առ 'ի լուսատու լինել, առ իշ-խել, առ ապականել։ Եղիցին լուսաւորք ծագել յերկիր. այսինքն՝ առ 'ի ծագել։ Ակնարկէին որ-սակցացն գալ օգնել նոցա. այսինքն՝ զի եկեսցեն օգ-նեսցեն նոցա։ Տայր ցաշակերտսն (զնկանակսն) ար-կանել ժողովրդեանն։ Յաղօթս կացէք մտանել 'ի

փորձութիւնս. այսինքն՝ զի մի մոռանիցէք, կամ՝ — 'ի չմոռանել եւայլն: Ոչ էր կարող մերժելոյ զչարն. այսինքն՝ — 'ի մերժել: Ժամանակի սպասէր խու-րում անմտութեանն օգնական գտանելոյ. Գունդս առ գունդ կազմեցեալ հանելոյ զկէնն յաշխարհէն. Ոչ ոք եբաց զդուրս տանն հայելոյ 'ի ներքս. Այս ածէին փախչելոյ 'ի տեղւոջէն. Եւ նոցա իշխանութիւն հանելոյ զայսս պիղծս. փոխանակ ըսելու՝ — 'ի գտանել, — 'ի հանել, — 'ի հայել, եւայլն:

Նոքա ակն ունէին նմա ուռուցելոյ կամ անկանելոյ եւ յանկարծակի մեռանելոյ, այսինքն՝ Ակն ունէին թէ ուռուցու կամ անկանիցի եւ մեռանիցի: Օտարոտի իմն դից թուի պատմիչ լինելոյ. այսինքն՝ թուի թէ իցէ պատմիչ օտարոտի իմն դից: Մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի. այսինքն՝ Մի կրթել (կրթուիլ) զի տայցէք պատասխանի:

Երբեմն երկու բային մէկը դիմաւոր, միւսը անդէմ կը դրուի, զոր օրինակ.

Ոչ ապաքէն զի քննեցէք զքաղաքս եւ դիտել զերկիր եկիք. այսինքն՝ Եկիք զի քննեցէք եւ դիտեցէք, կամ՝ Եկիք քննել եւ դիտել: Մխիթարէր զնոսա զի մի վհատեսցին, այլ կալ եւ մարտնչել քաջութեամբ, փոխանակ՝ Զի մի վհատեսցին, այլ զի կացցեն եւ մարտնչիցեն եւայլն. կամ՝ Մխիթարէր զնոսա մի վհատել այլ կալ եւ մարտնչել եւայլն:

**181.** Անորոշ դերբային Հայցականը 'ի կամ ընդ նախադրութեամբ մինչ, մինչդեռ, երբե-, ատենը կը նշանակէ, զոր օրինակ.

Ի ծնանելն Յիսուսի. Ի դառնալ արդարոյն յար-

յուլթենէ. Ի Պաւղոսի բողոքելն. Եւ եղեւ 'ի մկրտել ամենայն ժողովրդեանն եւ ընդ Յիսուսի մկրտելն եւ կալ յաղօթս՝ բանալ երկնից. Ընդ երթալն նորա ժողովուրդքն նեղէին զնա. Ընդ խօսելն նոցա եւ ընդ վիճել, եւ ինքն իսկ Յիսուս մերձեցաւ եւ երթայր ընդ նոսա. Ընդ յափշտակել նաւին, եւ 'ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն՝ թոյլ տուեալ երթայաք եւ գայաք. Ընդ անցանելն Պետրոսի գոնէ հովանի նորա հասցէ ումեք 'ի նոցանէ. փոխանակ ըսելու, Երբեւ ծնաւ Յիսուս. Երբեւ դարձցի արդարն. Մինչ երթայր նա՝ ժողովուրդքն նեղէին զնա. Մինչդեռ խօսէին նոքա եւ վիճէին եւայլն։ Աշխարհաբար՝ Դարձած ատենը, ծնած ատենը, խօսած ատենը, եւայլն։

**182.** Ո՞րիշ դերբայը մինչ- նախադրութեամբ այնպէս չէ, անանկ որ կը նշանակէ. զոր օրինակ.

Մինչեւ չմնալ 'ի նոցանէ ապրեալ. Այնպէս որ անոնցմէ ազատող չեղաւ։ Մինչեւ մտանել նմա 'ի նաւն։ Մինչեւ գալ թռչնոց երկնից եւ հանգչել յոստս նորա. Մինչեւ հծծել ընդ միմեանս. Մինչեւ տեղի եւս ոչ լինել. Մինչ գալ խռնել. Մինչ գրեթէ լի իսկ լինել։

**183.** Ո՞րիշ դերբայը կրկնութեամբ, առաջէն, ետքէն- կը նշանակէ, զոր օրինակ.

Տալ ետու կնիք եւ տանն Ստեփանեայ. Իրաւ Ստեփանին ընտանիքն ալ մկրտեցի. Ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած. այսինքն՝ Թէպէտ եւ ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած։

Որ յասպարիզին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութիւնն. այսինքն՝ Թէպէտ եւ ամենեքին ընթանան։ Ունել ունէին խաղ, այլ ոչ բաւական. Սիրել սիրեն, այլ ոչ սերտիւ. Առնուլ առ 'ի ձեռս զիշխանութիւնն, բայց ոչ կարէր. Առնել արարեր ողորմութիւն, այլ ոչ այնչափ որչափ կլինն այրի. Յանհիւթ ապառաժ տեղին որ, թէպէտ վարել վարիցեմք, անմասն եղեալ 'ի պտղոյն զրկիլ։

### 3. Անցեալ դերբայ.

**184.** Անցեալ դերբայն ալ իբրեւ, յորժամ, երբ շաղկապներով Նման որ բայի տեղ կը գրուի, զոր օրինակ.

Եւ ծնեալ 'ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի. փոխանակ՝ Իբրեւ եմուտ 'ի Կափառնաում, եւայլն։ Եւ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ, առէ ոմն ցնա. այսինքն՝ Իբրեւ ճանապարհ արար, եւայլն։ Եւ բախեալ զդուրս տանն, մատեաւ աղախին մի ունկն դնել. այսինքն՝ Իբրեւ բախեաց նա զդուրս տանն, եւայլն։ Եւ նորա զայս պատասխանի տուեալ, Փեստոս 'ի ձայն մեծ ասէ. այսինքն՝ Իբրեւ նա զայս պատասխանի ետ, եւ այլն։ Եւ հրամայեալ Փեստոսի, ածին զՊաւղոս. Իբրեւ հրամայեաց Փեստոս, եւայլն։ Դորա ինքնին կալեալ բողոք առ քաջ արանցն, խորհեցայ յղել. այսինքն՝ Իբրեւ բողոք կալաւ նա, եւայլն։

**185.** Ներգործական բայերուն Անցեալ դերբայը ոչ իբր ածական եւ ոչ իբր գոյական կրնայ գործածուիլ. ուստի չըսուիր.

Տուեալ պարգեւն քո․ Ասացեալ բանն մեր․ Առաքեալք պատգամաւորք նորա․ Տուած պարգեւ․ Ըսած խօսքերնիս․ Ղրկած պատգամաւորները։

Նման խօսքեր՝ Յարաբերականով ու Դիմաւոր բայով կը բացատրուին, այսպէս․ Պարգեւն զոր ետուր․ Բանն զոր ասացաք․ Պատգամաւորքն զորս առաքեցին։

Տես եւ էջ 144․

186․ Կրաւորական բայերուն Անցեալ դերբայը թէ իբր ածական եւ թէ իբր գոյական կրնայ գործածուիլ․ զոր օրինակ․

Կառաց խորտակելոց․ Կործանած կառքերու։ Ոգւոց փրկելոց, կորուսելոց․ Փրկուած, կորսուած հոգիներու։ Բանից ասացելոց․ Ըսուած խօսքերուն։ Ալեաց կուտակելոց․ Դիզուած ալիքները։ Ձեռք ձգեցելոց․ Ծունկք կրկնեցելոց․ Գանձի ծածկելոյ յագարակի․ Ուռկանի արկելոյ 'ի ծով․ Կոյս խօսեցեալ առն․ Նեղելոցն յայսոց պղծոց բժշկէին․ Պիղծ հոգիներէն նեղուածները․ Բժշկել զբեկելոց․ Ազատել զգերեալս․ Մի ումն 'ի կապելոց։

187․ Չէզոք բայերուն Անցեալ դերբայն ալ թէ իբր ածական եւ թէ իբր գոյական կը գործածուի, եւ աշխարհաբարի մէջ ալ նշանակութիւնը կ'ունենայ, զոր օրինակ․

Արանց անկելոց, մեռելոց, եկելոց․ Ինկող, մեռնող, եկող մարդոց։ Ո՞վ է մեծ, բազմեա՞լն եթէ սպասաւորն․ Ո՞վ մեծ է, նստո՞ղը թէ սպասաւորը։

Եւ ասէ ցեկեալսն 'ի վերայ նորա. Իր վրայ էկողներուն կ'ըսէ: Ո՞ յերեցունց 'ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն 'ի ձեռս աւազակաց. Աւազակներուն ձեռքն ինկողին: Ոչ կամիմ եթէ տգէտ իցէք վասն ննջեցելոցն. Մեռնողներուն համար, եւ այլն:

## Ե. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

188. Երբեմն կան նախադրութիւնը իրմէ ետքը զնախդիրը կ'առնէ, թէեւ խնդիրը հայցական չըլլայ, զոր օրինակ.

Զի՞նչ առաւելութիւն է իմաստնոյն քան զանմտին. Զի ամաց էր այրն աւելի քան զքառասուն. Այս երեւեցաւ աւելի եւս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն. Արամբ միով որ խոժագուժ եւս էր տեսանելով քան զմտօքն թանձրութեան. Զնիկանովր 'ի ձեռն գումարէր ոչինչ պակաս քան զքառասուն հազարս. Որ յառաջածանօթ էր նախ քան զ'ի սկզբանէ աշխարհի. Առաւել ունէին զնէր մանկտւոյն քան զծերոցն իմաստնոց. Նախ քան զամենեցուն քեզ հանդիստ առնիցես. Մեղօքն՝ քան զբազում քարամբք եւ չարաչար կոչկոճի. Բանն աստուածպաշտութեան տարածանիցի ոչ նուաղագոյն քան զառաքելովքն. Այս չինուած յետոյ է քան զՏրովլացւոց պատերազմն աւելի քան զչորեքհարիւր երեսուն եւ երիւք ամօք:

189. Ինչ ասոր նման կը գործածուին երբեմն ներքէ – եւ որդէ – բառերը, զոր օրինակ.

Իբրեւ զգծնդակ բռնաւորի ումեք կամ 'ի հարկի. Ոչ համբերէր նոցա իբրեւ զեփրեմեան զնդին. Սպառնաւորէր նմա յոյժ սիրով իբրեւ զՕր. Զայս ամենայն պարգեւէ մեծն Տրդատ մարդկան ազգին կամսարականաց որպէս զմտերմաց. Զեռնուլ խորհրդովքն, եւ իբրեւ զհրով տոչորել։

Այնպէս է որպէս զհայհոյիչն. Ոչ այնպէս մեղանչելն, որպէս զանյոյսն լինել կորուսանէ. Եղիցին իբրեւ զպատերազմողք որ ճակատիցին. Լինիցիմք իբրեւ զչեղեալք։

Նախադրութեանց վրայ տես եւ Ի՛- 121—123։

## Զ. ՄԱԿԲԱՅ

190. Նոյն. Մակբայ է, եւ կը նշանակէ Եպքը, զոր օրինակ.

Զոր ինչ եսս գործեմ, դու այժմ ոչ գիտես. բայց աղա գիտասջիր. Դուն հիմա իմ ըրածներս չես գիտեր, բայց Եպքը պիտի գիտնաս։ Նախ վասն մեղաց իւրեանց մատուցանէին պատարագս, եւ աղա վասն ժողովրդեանն։

Կարծեալ աղա Շաղկապ է, եւ կը նշանակէ ուրեմն, զոր օրինակ.

Եթէ մատամբն Աստուծոյ հանեմ զդեւս, աղա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւնն Աստուծոյ. Եթէ Աստուծոյ մատովը դեւերը կը հանեմ, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է։

Նոյն Շաղկապը՝ ուրեմն, Եբե շաղկապին բով ալ կը գործածուի, զոր օրինակ.

Սիմոն, թագաւորք յումմէ՞ առնուն զհարկս. նա ասէ. Յօտարաց. ասէ ցնա Յիսուս. Ապա ուրեմն ազատ են որդիքն։ Ապա ԵԹԷ եւ սատանայ բաժանեցաւ յանձն իւր, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա.

191. Եւ.— Շաղկապ է՝ երբ ու կը նշանակէ. Մակբայ է՝ երբ ալ կը նշանակէ, զոր օրինակ.

Ոն եկայք եւ մեք, զի ընդ նմա մեռցուք. Հայդա, եկէք, մենք ալ (երթանք) որ անոր հետ մեռնինք։ Արա եւ զիս իբրեւ զմի ՚ի վարձկանաց քոց. Իս ալ քու վարձուորներէդ մէկն ըրէ։ Ստոյգ եւ սա ընդ նմա էր. Ստուգիւ աս ալ անոր հետ էր։

Եւ խմաստով երբեմն ալ կը կրկնուի, զոր օրինակ.

Յիրաւի պատժեցան, եւ նա (սատանայ) եւ մարդըն զոր յօժարեցոյց յանհնազանդութիւնն։ Իրաւամբ պատժուեցան թէ՛ ան (սատանան) եւ թէ՛ մարդը զոր անհնազանդութեան յորդորեց։

192. Եւ— ալ նոյն նշանակութեամբ կը գործածուի, եւ Մակբայ է. զոր օրինակ.

Յաւել միւս եւս ծառայ յղել, նոքա եւ զնա եւս գան հարին. Դարձեալ ծառայ մ՚ալ ղրկեց. անոնք ան ալ ծեծեցին։ Ոմն մերկանայ զհանդերձս ընկերին եւ եթէ ընդդէմ դառնայցէ, յարեւէ եւս արկանէ։

Եւ— երբեմն աւելի կը նշանակէ. եւ բաղդատական խօսքերու մէջ (տես թիւ 151) Ածականի կամ Մակբայի հետ կը գործածուի, զոր օրինակ.

Քակեցից զշտեմարանս իմ, եւ եւս մեծամեծս շինեցից. Ոչ ոք արկանէ կապերտ նոր ՚ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ առնու նորն ՚ի հնոյ անտի, եւ չար եւս պատառումն լինի։

193. Գուցէ. Թերեւս — Ս՛ակրայններն անխը-տիր իրարու տեղ գործածել պէտք չէ։

Գուցէ կը գործածուի, երբ գործողու-թեան կատարուիլը չենք ուզեր ու կը վախ-նանք թէ կ՚ըլլայ. ուստի [illegible] կը նշանա-կէ. զոր օրինակ.

Գուցէ, մինչ քաղիցէք զորոմնն, եւ զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցէք. Ձգեա. Մի՛ որոմն քաղած ատեններնիդ՝ ցորենն ալ միասին փրցնէք. Աղաւնիք զգաստ նօթիս չկամիմ, գուցէ նեղիցեն [illegible] պարմայն։ Ասեն յիմարքն [illegible] Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, [illegible] ան- Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական. այլ երթայք ՚ի վաճառականս եւ գնեսջիք ձեզ։ Ասեն (Հրեայքն) ցՊիղատոս. Հրամայեա զգուշանալ (առնել պահ-պանութիւն) գերեզմանին մինչեւ ցերիս աւուրս. գուցէ եկեալ աշակերտքն գիշերի գողանայցեն զնա։ Արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ. գուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ՚ի քուն։ Առեալ զմակոյկն յօգնականութիւն կո-չէին ընդ նաւն, երկուցեալք թէ գուցէ ՚ի յորձա-նուտն անկանիցին։ Ճնշեմ զմարմինս իմ, զի գուցէ, որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանի-ցիմ։

Ասոր հակառակ՝ Թերեւս կը գործածուի

Երբ գործողութեան ըլլալը կ՚ուզենք, եւ կը յուսանք թէ պիտի ըլլայ, զոր օրինակ.

Ցեառն առաքեաց առ նոսա զորդի իւր, եւ ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդւոյ սորա իմմէ։ Ասէ ցնա այգեգործն. Տէր, թող զդա այս ամ եւս, մինչեւ շուրջ զդովաւ բրեցից եւ արկից աղբ. Թերեւս արասցէ պտուղ։ Այսպիսաւես դու 'ի չարեացդ. Թերեւս թողութիւն լիցի քեզ։ Հաստատեաց ժամանակս խնդրել զԱստուած, զի Թերեւս զննիցեն զնա եւ գտանիցեն։ Ընդ ամենայնի ամենայն եղէ, զի Թերեւս ապրեցուցից զոմանս։ Հանդարտութեամբ խրատել զհակառակորդս. Թերեւս տայցէ նոցա Աստուած ապաշխարութիւն։

Ինչպէս յայտնի է, եթէ գուցէ եւ Թերեւս իրարու տեղ գրուին, կրնայ հակառակ իմաստ ելլել։

104. Ու կամ չ Բացասական մասնկայ են. եւ, բայց 'ի հրամայականէն, ուրիշ ամեն ժամանակի հետ կը գործածուին, զոր օրինակ.

Հայեցարուք 'ի Թռչունս երկնից, ոչ վարեն եւ ոչ հնձեն եւ ոչ ժողովեն 'ի շտեմարանս. Ու գոյր նոցա տեղի յիջեւանին. Զերկնչի՞ս յԱստուծոյ զի 'ի նմին պատժի կաս. Եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, հսկէր եւ ոչ տայր թոյլ ականահատանել 'ի տան իւրում. Ծառայ որ գիտիցէ զ կամս տեառն իւրոյ եւ ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում. Եւ որ ոչն գիտիցէ եւ արժանի գանի ինչ գործեսցէ, արբցէ գան

կաւ․ Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց։

Ոչ՛ նաեւ Հարցական մակբայ է, ու ո՞չ ապաքէն, չէ՞ մի, կը նշանակէ, զոր օրինակ․

Ո՞չ երկոտասան ժամ է աւուր․ Օրը տասներկու ժամ չունի՞ մի։ Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի։ Ո՞չ եւ սիրտք մեր ճմլէին ՚ի մեզ, մինչ խօսէրն ընդ մեզ ճանապարհայն։

195․ Զի—, Բացատրական մակբայ մըն է, եւ, քէ— ու կը նշանակէ, զոր օրինակ․

Կին դու, չէ— է հասեալ ժամանակ իմ․ Կնիկ, ժամանակս դէ— հասած չէ։ Զէ— եւս գիտէին ըզ գիրսն․ Դէ— գիրքերը չէին գիտեր։

Մինչեւ— ալ նոյն նշանակութիւնն ունի։

Մինչեւ հաւու խօսել իցէ, երիցս ուրասցիս զիս․ Դէ— հաւը չխօսած՝ իս երեք անգամ պիտի ուրանաս։ Մինչեւ բնաւ էր ինչ, սաեն, ոչ երկինք եւ ոչ երկիր եւ ոչ այլ ինչ արարած, Զրուան անուն էր։ Մինչեւ ծնեալ էին, եւ մինչեւ բարի ինչ կամ չար գործեալ էր, ասացաւ թէ՝ Երէցն կրտսերոյն ծառայեսցէ։

196․ Զի՛, Բացատրական բառ մըն է որ Աստուածաշնչական ներկայ եղանակի երրորդ դէմ քայլի զօրութիւն ունի, եւ՝ ու փ—յ, չի—յ, կը նշանակէ, զոր օրինակ․

Ես եմ Աստուած, եւ չիք այլ ոք․ Աստուած եմ եւ ուրիշ մը չ—յ։ Չիք ոք բարի, բայց մի Աստուած․ Մէկ Աստուծմէ զատ բարի չ—յ։ Չիք ինչ

ծածուկ որ ոչ յայտնեսցի. Ծածուկ բան մը չկայ որ չյայտնուի։

197. Մի՛ ալ Բացասական մակբայ է, բայց արգելիչ խօսքերու մէջ, ապառնոյ, ստորադասականի եւ հրամայականի հետ կը գործածուի, զոր օրինակ.

Դստերք Երուսաղէմի, մի լայք 'ի վերայ իմ. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն։ Յորժամ առնիցես ողորմութիւն, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. Արձակեսցես զդա 'ի տուն հօր իմոյ, որպէս զի տայցէ նոցա վկայութիւն, զի մի եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։

198. Արդեօք. Միթէ Մակբայները՝ հարցական խօսքերու մէջ կը գործածուին։

Արդեօք կը դրուի նախ՝ երբ հարցնողը չգիտնալով կամ տարակուսանօք կը հարցնէ, զոր օրինակ.

Ո՞վ արդեօք իցէ սա, զի եւ հողմք հնազանդին սմա։ Գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուս։ Մի՞ արդեօք դու իցես Եգիպտացին։

Երկրորդ՝ արդեօք կը նշանակէ նաեւ, արդարեւ, ապաքէն, անշուշտ, զոր օրինակ.

Եթէ գիտէիր ո՛վ է որ ասէդ ցքեզ թէ Տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ. Եթէ՝ ինծի ջուր տուր, ըսողն ով ըլլալը գիտնայիր, անշուշտ դուն անկէ կ'ուզէիր։ Եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք զի մի մատնեցայց Հրէից։

ՄԻԹԷ, ոչ տարակուսական, այլ հաստատական հարցումներու մէջ ալ կը գործածուի. երբ հարցնողը գիտէ ու կը հարցնէ. զոր օրինակ.

ՄԻԹԷ օրէնքն մեր դատի՞ն զմարդ, եթէ ոչ լսէն ինչ նախ 'ի նմանէ.

199. ՈՒՐ, տեղ ցուցնող Մակբայ է, զոր օրինակ.

ՈՒՐ եմ իցեմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. Ո՞ՒՐ եղիք զնա. Ո՞ՒՐ իցէ նա։

Դէպ 'ի տեղ մը շարժում ցուցնելու համար՝ ՅՈ ալ կը գործածուի, զոր օրինակ.

ՅՈ՞ երթայց. Յերեսաց քոց ՅՈ՞ փախեայց։

ՈՒՐ, միանգամայն Շաղկապ է, եւ ՄԻՆՉ կը նշանակէ, զոր օրինակ.

Չեն ինչ զարմանք եթէ նոքա (հրեշտակք) մերոց գրացեաց արարածոց անուամբքս անուանին, ՈՒՐ եւ նոցա արարիչն ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ. Զարմանք չէ որ անոնք մեր գրացի արարածներուն անուններովը կ'անուանուին, ՄԻՆՉ կամ ՈՒՐ ՈՐ անոնց արարիչն ալ անանկ անուններ վրան առնելէ չի գարշիր։

200. Շատ անգամ հոլովուած բառ մը, նախադրութեամբ կամ առանց նախադրութեան, իբր Մակբայ առնել՝ լեզուին մէջ սովորութիւն եղած է, զոր օրինակ. [illegible], [illegible], Ի ՎԵՐ, ԱՌ ՕՐՆ, [illegible], [illegible], եւ այլն։

## Է. ՇԱՂԿԱՊ

201. 1° Ն.— Շաղկապը — կը նշանակէ, եւ երկու բառ կամ խօսք իրարու հետ կը կապէ։

2° Ն.— Շաղկապը դարձեալ մինչ— ի նշանակութիւն ունի, զոր օրինակ.

Ի միջոյն և 'ի խոնարհ՝ հուր. Ի միջոյն և 'ի վեր՝ իբրեւ զտեսիլ փայլական. Ի քսանամենից և 'ի վեր. Կոտորեաց զամենայն մանկունս որ էին 'ի Բեթղահէմ, յերկեմենից և 'ի խոնարհ. Ի լուսնոյ և 'ի վեր զամենայն ինչ անմահ համարել. Անտի և 'ի խոնարհ. Յերկնից և այսր. Ի քէն և այսր է փքինն. Յօրէն ութերորդէ և անդր. Ի նմանէ և անդր. Անտի և այսր։

3° Ն.— Շաղկապը հետեւեալ օրինակներուն մէջ այլ եւ այլ առում ունի. եւ այլ եւ այլ կերպով աշխարհաբարի կը դառնայ, զոր օրինակ.

Այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, և նոքա, կողմանքն երկոքին, ընդ միմեանս խառնէին. Եղիցի քեզ որպէս և կամիս. Քանիցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայր իմ և թողից նմա. Ոչ, հայր Աբրահամ, բայց եթէ 'ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա և ապաշխարեսցեն. Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օրինացն և կորնչին. Եւ որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն և դատեսցին. Եկեսցէ, յորժամ և պարապեսցէ. Յորոց յորժամ և կամիցի՝

և մեկնել կարող է։ Որոնցմէ՝ երբ որ ուզէ, կրնայ ետ կենալ։ Ոչինչ այնպէս ուրախ առնէ զԱստուած՝ որպէս և վարք առաքինիք։ Որպէս զիարդ և ուսաւ 'ի վարդապետէն՝ և արար. Ըստ հրամանին՝ և առնէին։ Հրամայելուն պէս՝ կ'ընէին։ Շնորհօքն Աստուծոյ եմ զինչ և իցեմ։ Առ որ զինչ ոք և կամէր՝ խառնէր. Զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա։ Զինչ և խնդրեսցեն յԱստուծոյ՝ տացէ նոցա։ Ո ոք և երթայր առ նոսա։ Որ ուրուք և դիպէր ծընունդն։ Զոր ինչ ուրուք և առեալ իցէ։ Որով ուիք և յաղթիցի ոք՝ նորին և ծառայ է։ Ժողովեցին զամենեսեան զորս և գտին։ Ցոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ։ Չորեքին բնութիւնքն ուստի աշխարհս կազմեալ՝ և կայ։ Որոյ թողեալ ըզ ճշմարտութիւն հոգւոյն՝ և նստի առասպելս կարկատէ։ Սակաւ ինչ երեւեալ՝ և անդէն չամփոփէր։

202. Զի Շաղկապ է, եւ քանի մը առում ունի.

1° Կը նշանակէ *քանզի*, ինչու որ, զոր օրինակ.

Դուք յոյժ մոլորեալ էք, զի ոչ գիտէք զգիրս, եւ զզօրութիւնն Աստուծոյ. Դուք խիստ մոլորած էք, ինչու որ գիրքերն ու Աստուծոյ զօրութիւնը չէք գիտեր։

2° Կը նշանակէ *որպէս զի*, որ. եւ իրմէ ետքը եկող բայն Ըղձական կամ Ստորադասական կ'ուզէ, զոր օրինակ.

Ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին. Ըսէ որ աս քարերն հաց ըլլան։

3° Կը նշանակէ, ընդէ՞ր, ինչո՞ւ համար, զոր օրինակ.

Զի՞ տեսանես դշխոյ ական եղբօր քո. Եղբօրդ աչքին մէջի շիւղն ինչո՞ւ համար կը տեսնես։ Զի՞նչ գործէք, չէ՞ լուծանէք զյաւանակդ։

203. Իսկ Շաղկապ է, եւ կը նշանակէ, բայց, ալ, զոր օրինակ.

Իսկ Պետրոս ուրացաւ եւ ասէ. Ոչ գիտեմ զնա, կին դու. Պետրոս ալ ուրացաւ, եւայլն։ Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն. Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա. Մշակներն ալ երբ որդին տեսան, եւայլն։

204. Իսկ բառը հայերէնի մէջ յաճախ գործածութիւն մը ունի, եւ կը գործածուի.

1° Դերանուններու հետ, եւ կը նշանակէ, նոյն ինքն, ալ. զոր օրինակ.

Նոքին իսկ արարածք իւրաքանչիւր փոփոխմամբք յայտ առնեն, եթէ է ոմն որ փոփոխէ զնոսա։ Զիա՞րդ պաշտիցեմք զհուր որում դքեզ իսկ երկրորդ արարիչ կարծեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես, եւ յորժամ կամիցիս՝ խափանիցես. Եթէ որդի ուրուք չիցէ մարդ, բազում անգամ զծառայ այր առաջի նորա դան հարկանեն, զի 'ի նա հայեցեալ լինիցի մարդ. ապա եթէ եւ այնու եւս ոչ խրատիցի, 'ի նա իսկ մատուցանեն զտանջանսն. Երբեմն հարկանէ զանասուն մեր, եւ երբեմն զանդս եւ զայգիս, զի ընդ այն հայեցեալ մացուք ընդ լծով երկիւղին

Աստուծոյ. ապա եթէ այնու եւս ոչ խրատիցիմք, ՚ի մեզ իսկ մատուցանէ պատանջանան. Մի ոք լիցի դատաւոր ՚ի միջի մերում, այլ քո իսկ օրէնքն զոր գրեցեր: Զինչ եւս պիտոյ է մեզ վկայութիւն, զի մեղէն իսկ լուաք ՚ի բերանոյ դորա:

2̊. Գոյականներու հետ կը գործածուի Բուն, նոյն իսկ, ալ, նշանակութեամբ, զոր օրինակ.

Ի մարդոյ իսկ առ օրինակ. զի յորժամ գայ ՚ի չափ հասակի մարդոյ, յայնժամ միտի ՚ի չարիս. Բուն մարդէն օրինակ առ, ևայլն: Այսու յայտ առնեն թէ զյարութիւն իսկ մարմնոյ խափանել կամին. Ասով կը ցուցնեն թէ նոյն իսկ մարմնոյ յարութիւնը խափանել կ՚ուզեն: Նա եւ ՚ի տէրունական իսկ փորձանացն իմանալի է, թէ չէ (սատանայ) կանխագէտ. Է երբէք զի վասն մեղաց իսկ լինին այսպիսի տանջանք. Երբեմն մեղքի համար ալ ասանկ տանջանքներ կ՚ըլլան: Այլ զի մի ՚ի մէնջ եւ եթ լսիցէք, զգիրսն իսկ ընթերցարուք:

3̊. Կը գործածուի Ծականներու, Մակբայներու եւ Բայերու հետ, նոյն նշանակութեամբ, զոր օրինակ.

Եթէ Աստուած չէր կանխագէտ եւ ամենագէտ, ապա եւ չարչարեալ իսկ չէր. Եթէ Աստուած կանխագէտ չըլլար, կատարեալ ալ չէր ըլլար: Վասն որոյ եւ ընդունայն իսկ եղեւ յոյս նոցա. Անոր համար յոյսերնին ընդունայն ալ եղաւ: Այն իսկ մեծ եւ զարմանալի է, զի մարդն վաստակ Աստուծոյ օգնականութեամբն յաղթիցէ սատանայի.

Ուստի յայտ ինչ է թէ հրոյ ընդ խոտոյ ոչ ամուսնութիւն լինի, այլ ծախումն. Արքունական է քաղաքն (երկինք). ոչ որպէս աստ ՚ի վաճառս եւ յարքունիս բաժանեալ, այլ այն ամենեքին ինչ արքունիք են. Արդարեւ ինչ չարիքն որ լինին՝ ՚ի տարակուսի կացուցանեն զբազումս. Բնաւ ինչ, ասեն, յետ թիւրելոյն սատանայի եւ խաբելոյ զմարդն՝ ընդէ՞ր ինչ ոչ եբարձ ՚ի միջոյ. Եւ չարագործն, մինչդեռ ինչ ՚ի գործ չարագործութեանն իցէ, եթէ ոք չարագործ կոչէ զնա, ըմբոստանայ. Որպէս յառաջագոյն ինչ ասացաւ, որ մարմնաւոր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել. Այլ եւ փրկէր ինչ ընդէ՞ր զայլոյ արարածս, զոր ինք չէր արարեալ. Եւ զօրէնսն զիա՞րդ իշխէր դատաւոր խնդրել. մանաւանդ զի եւ գիտէր ինչ թէ պարտաւորեն զնա օրէնքն եւ ոչ արդարացուցանեն։

205. **Ինչ** բառը իբրեւ թարմատար կամ զարդ հայերէնի մէջ յաճախ գործածութիւն մը ունի.

1°. Սովորաբար **Ինչ** բառով խօսքերու մէջ՝ ստորոգելոյն հետ կը գործածուի, երբ խօսքը բացասական կամ թէական կամ հարցական է, զոր օրինակ.

Ոչ եթէ կարօտ ինչ ոք լինէր, եթէ վասն այնորիկ խնայիցէ զկենդանութիւնն. Ոչ եթէ կարօտ մէկն էր որ կենդանութիւնը խնայէր։ Ոչ եթէ առնուր ինչ ոք եղեւ նա յԱստուծոյ, եթէ չգիտէր եթէ որ ինչ ըստ Աստուծոյ կամացն լինի՝ բարի է, եւ որ ինչ արտաքոյ քան զնորա կամսն՝ այն չար

է. Զէր ի՞ն ·Դ·Ծ գործ Աստուծոյ զսատանայ ինքնին անձամբ սպանանել, այլ թերեւս կարծիք ինչ 'ի մէջ մտանէին թէ Հ——ր ի՞ն ոք էր նա Աստուծոյ, եւ աճապարեաց 'ի միջոյ եբարձ. Եթէ բնութեամբ ·Ը·ր ի՞ն էր օձ, ապա չգտանէր ինչ ամենեւին 'ի նմա օգտակար. Որ ·Ը·ր ի՞ն է, նորա եւ ամենայն ինչ վնասակար է. Եթէ Բ——ր (զօրաւոր) ոք ի՞ն էր, ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան եւ ապա մխէր 'ի փորձութիւնս. Դըպրութիւն կամ ճարտարութիւն (քերթողութիւն) կամ բժշկութիւն ոչ եթէ ·Ա·Ջ·Ի·Ն· ի՞ն են, այլ, եւ այլն. Են ցաւք որ ոչ վասն մեղաց են, եւ ոչ յԱստուծոյ ի՞ն 'ի փառս, այլ 'ի չկշռելոյ (յանհաւասարակշռութենէ) խառնուածոց. Ոչ եթէ 'ի Դ-ր-ղ-ր-բ-ն ի՞ն ոգւոց լինին մարդոյն տանջանքն դիւաց, այլ առաւել եւս յարգահատութիւն։ Զեն ի՞ն Ը·ր·մ·ն· եթէ նոքա (հրեշտակք) մերոց դրացեաց արարածոց անուամբքս անուանին, ուր եւ նոցա արարիչն ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ. Եթէ Հ·ն·ր ի՞ն էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ փոխէր զկերպարանան յինչ եւ կամէր։

2° Մակբայի կամ մակբայօրէն գործածուած գործիականի* Հետ կը գործածուի, զոր օրինակ.

---

* Գործիականը հայերէն որպիսութիւն ցուցնող Մակբայի զօրութիւն ունի, զոր օրինակ. Բ·-Ջ·-Բ·-Ն·-Ճ մեռցուք փոխանակ՝ Բ·-Ջ·-Ճ·-Ր մեռցուք։

*Ուստի լինիցի նոցա զճշմարիտն ուսանել, եւ մեզ ոչ 'ի դուր ինչ զբանս ծախել. Ոչ ընդ վայր ինչ ասացեալ է բանն իմաստնոյն թէ, եւայլն. Յորժամ երեւել սրբոց իւրոց կամէր, մարդոյ կերպարանօք յայտնէր, եւ այն ոչ վայրապար ինչ լինէր, այլ զի զառաւել սէրն իւր զոր ընդ մարմնոյն ունէր, ցուցանիցէ։ Ոչ եթէ անճարակութեամբ ինչ յաղթել ջանամք, այլ խրատամբք զճշմարիտն ուսանել։ Նոյնպէս յորժամ դուստր զմայր անարգիցէ, եւ նու, (հարս) զկեսուր իւր, եւ կին զայր, մի ինչ տարցին ընդ միտ որ անարգեցանն։*

3°. *Հարցական խօսքերու մէջ կը գործածուի, եւ արդեօք, միթէ, բառերուն զօրութիւնը կ'ունենայ, զոր օրինակ.*

*Հարցցուք զհիւղեայն. Պա՞րզ ինչ բնութիւն իցէ եթէ յօդուածով. Հիւլէին համար հարցնենք. արդեօք պա՞րզ տարր էր թէ բաղադրեալ։ Օգո՞ւտ ինչ իցէ յաչաս զոր առնեմ. Արդեօք ըրած զո՞ւս օգուտ ունի՞։ Մարդիկ յանձա՞նց ինչ ունիցին զայնպիսի շարժմունս, եթէ յԱստուծոյ լեալ իցեն։*

4°. *Մասնական կամ անորոշ մտքով* (տես Ի— 147 Գ.) *առնուած բառերու հետ, զոր օրինակ.*

*Եթէ նշանս ինչ ոչ տեսանիցէք, ո՞չ հաւատայք. Եթէ նշան չտեսնէք՝ չէ՞ք հաւատար։ Եթէ 'ի գետս 'ի կանանց ինչ կերպարանս երեւիցին, սատանայի կերպարանք են. Եթէ գետերու մէջ կանանց կերպարանքով երեւան, սատանայի երեւոյթներ են. Ուտել արմատս ինչ խոտոց. Խոտերու արմատներ ուտել։*

5° Ոչի հետ կը գործածուի, եւ բնաւականին զօրութիւնը ունի, զոր օրինակ.

Ոչ խռովէին ինչ, եւ ոչ զմտաւ ինչ ածէին. Բնաւ չէին խռովիր, ոչ ալ բնաւ մտքէ կ'անցնէին։ Ոչինչ այսպիսի զմտաւ ածին, եւ ոչ խօսեցան ինչ։ Ասանկ բան մը չխորհեցան, բնաւ չխօսեցան ալ։ Պարտ էր անկանել 'ի ձեռս Հերովդի, եւ ոչ ճողել (էլ) ինչ։ Հերովդէսին ձեռքն իյնալու էր, ու բնաւ փախուստելու չէր։

206. Իբրեւ եւ Մինչեւ Շաղկապները տարբեր առում ունին։

Իբրեւ, դէպքի մը պատահելէն անմիջապէս առաջ եղածը կը ցուցնէ, եւ աշխարհաբարին Երբ ին կը պատասխանէ, զոր օրինակ.

Իբրեւ լուան զայս 'ի Թագաւորէն, գնացին. Երբ Թագաւորէն աս լսեցին, գացին։

Մինչեւ կամ մինչ, բանի մը տեւողութեան ատենը՝ ուրիշ բան մը եղած կը ցուցնէ, եւ աշխարհաբարին մէջ Ատեն բառով աւելի աղէկ կը բացատրուի, զոր օրինակ.

Մինչեւ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն երեւեցաւ նմա. Ան աս խորհած ատենը՝ ահա Տէրոջը հրեշտակն անոր երեւցաւ։ Զի՞նչ են բանքդ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս, մինչդեռ գնայքդ. Գացած ատենիդ վիճածնիդ ի՞նչ է։ Մինչեւ նոքա զայս ընդ միմեանս խօսէին, ծնեալ

Որմզդի 'ի ժամու խրոում լուսաւոր եւ անուշահոտ՝ եկն եկաց առաջի Զրուանայ։

207. Մինչեւ— Նախադրութիւն է, եւ կը նշանակէ ինչուան, զոր օրինակ.

Ասեն հովիւքն. Եկայք երթիցուք մինչեւ ցԲեթղահէմ եւ տեսցուք. Սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել մինչեւ յօրն պատուիրելոյ առաքելոցն։

Մինչեւ— Շաղկապ է, եւ կը նշանակէ, այնչափ, ան աստիճան որ, եւ իրմէ ետքը դրեթէ միշտ աներեւոյթ կ'ուզէ, զոր օրինակ.

Եւ գայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն, մինչեւ հաց եւս ոչ ժամանել ուտել նոցա. Ժողովուրդը դարձեալ անոնց հետ կու գայ, այնչափ որ հաց անգամ չեն կրնար ուտել։ Հատն մանանխոյ յորժամ աճիցէ, լինի ծառ մինչեւ գալ թռչնոց երկնից եւ հանգչել յոստս նորա. Մանանխոյ հատը երբոր մեծնայ, ծառ կ'ըլլայ, այնչափ որ երկինքին թռչունները կու գան ու անոր ոստերուն վրայ կը հանգչին։

# ՄԱՍ Գ.

## ՇԱՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

208. Շարադասութիւն կամ Շարադասութիւնը՝ բառերուն խօսքի մը մէջ ունեցած կարգն է։

209. Կարգը կրկին է. Քերականական եւ Հռետորական։

Քերականական կարգը խօսքին բնական կարգն է։

Հռետորական կ՚ըսուի կարգը՝ որ Քերականութեան կամ Շարադասութեան ձեւերուն մեկումն է։

## ԳԼՈՒԽ Ա.

### ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

### 210. ԳԻՏԵԼԻՔ

Ա. Որ եւ իցէ խօսք մէկ կամ աւելի նախադասութենէ կը բաղկանայ։

Բ. Նախադասութիւն կ՚ըսուի խօսք մը՝ որուն մէջ դիմաւոր բայ մը կայ. եւ դիմաւոր բայ մը եղած տեղ՝ հարկաւ յայտնի կամ լռելեայն Տէր բայի մը եւ Ուղղական խնդիր (ստորոգելի) մը կայ, զոր օրինակ.

Աստուած է որդւոյ. Դու ես վէմ. Նախադասու-թիւններ են, եւ ամեն մէկուն մէջ Դիմա-ւոր բայ մը է, ես, Տէր բայի եւ Ուղղական խնդիր կան.

Երբ բայն ածական բայ մըն է, այսինքն Էական բայէն զատ ուրիշ բայ մը. Ուղղա-կան խնդիրն Էական բային հետ միացած կ'ըլլայ. զոր օրինակ. Ննջեմ՝ Ննջող եմ, Սի-րեմ՝ սիրող եմ, ըսել է։

Գ. Խօսքի մը մէջ որչափ դիմաւոր բայ կայ, այնչափ նախադասութիւն կայ, զոր օ-րինակ.

Որ ուրանայ զիս՝ ուրասցի 'ի Հօրէ իմմէ. Եթէ առ-նիցես ողորմութիւն, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո

Այս խօսքերուն առջինին մէջ՝ երկու նա-խադասութիւն, երկրորդին մէջ երեք նա-խադասութիւն կայ. քանզի առջինին մէջ երկու Դիմաւոր բայ կայ. երկրորդին մէջ ե-րեք։

Դ. Թէպէտ նախադասութեան մը էական մասերն երեք են, Տէր բային, Բայն ու Ուղղական խնդիրը, շատ անգամ նախադա-սութեան մէջ այս երեքէն զատ ուրիշ բա-ներ ալ կը գտնուին. Այսինքն՝ նախադա-սութեան մը մէջ կրնան գտնուիլ՝ Ածական, Բացայայտիչ, Յատկացուցիչ, Խնդիր եւ Մակբայ։

Ե. Տէր բայէն, Դիմաւոր բայէն եւ Ածական խնդրէն զատ՝ նախադասութեան մը մէջ գտնուած ուրիշ բառեր՝ լրացուցիչ կամ յաւելուած կը կոչուին, եւ նախադասութեան էական մասերուն, այսինքն՝ Տէր բայէին եւ Ածական խնդրոյն կամ Դիմային իմաստը լրացնելու (ամբողջացնելու, որոշելու) կը ծառայեն, զոր օրինակ.

Աստուած ճշմարիտ արարիչ է երկնի եւ երկրի:

Այս խօսքին մէջ ճշմարիտ ածականը լրացուցիչ կամ յաւելուած է Աստուած Տէր բային. երկնի եւ երկրի յատկացուցիչներն ալ արարիչ Ածական խնդրոյն լրացուցիչը կամ յաւելուածն են:

Դու խորհիս զայդ ՚ի սրտի քում:

Այս խօսքին մէջ զայդ. ՚ի սրտի քում խնդիրները լրացուցիչ են խորհիս բային, կամ լաւ եւս ըսենք՝ խորհող ածական խնդրոյն. (քանզի խորհիս՝ խորհող ես, ըսել է):

Նա արտմեցաւ յոյժ:

Այս խօսքին մէջ ալ՝ յոյժ Մակբայը լրացուցիչ է արտմեցաւ բային, կամ արտմեալ ըստորոգելոյն. (քանզի արտմեցաւ՝ արտմեալ եղեւ ըսել է):

211. Նախադասութեան մը բառերը ներդաշնակեան կարգով շարելու կանոններ:

1. Նախադասութեան մը Տէր բային

ամենէն առաջ կը դրուի, ետքը բայը, ետքը Ուղղական խնդիրը, այսպէս.

Ես եմ հովիւ. Դու ես վէմ. Նոքա խորհեցան. Այրն էր մեծատուն։

2° Եթէ նախադասութեան մը Տէր բային, կամ բայը կամ Ուղղական խնդիրը լրացուցիչ կամ յաւելուած մը ունին, լրացուցիչը կամ յաւելուածն՝ անմիջապէս լրանալի բառէն ետքը կը դրուի։

Զոր օրինակ, եթէ Տէր բային ածական մը, կամ Բացայայտիչ մը, կամ Յատկացուցիչ մը ունի՝ ասոնք Տէր բայիէն անմիջապէս ետքը կը դրուին։ Բային կամ Ուղղական խնդրոյն համար ալ նոյն բանն է, զոր օրինակ.

Այրն այն էր մեծատուն. Այրն Յոբ էր արդար. Եղբարքն Յովսեփու իջին յԵգիպտոս. Նա էր իշխան երկրին. Եւ նա տրտմեցաւ յոյժ. Տեսի զէնն 'ի ներքոյ Բաբելոնայ։

Մեր խօսքերուն մէջ ալ կարգը բնական է, քանզի լրացուցիչները լրանալի բառերուն անմիջապէս քովը եւ անոնցմէ ետքը դրուած են։

3° Եթէ բառ մը երկու լրացուցիչ ունի, զոր օրինակ՝ Ածական մը եւ Բացայայտիչ մը, կամ Ածական մը եւ Յատկացուցիչ մը, բառէն անմիջապէս ետքը նախ Ա-

ծականը կը դրուի, ու ետքը Բացայայտիչը կամ յատկացուցիչը, զոր օրինակ.

Այրն այն, Յովբ, էր մեծատուն. Դշխոյն Քձ հարաւոյ եկն տեսանել զՍողոմոն։

Նոյնպէս եթէ բայ մը երկու խնդիր ունի, Սեռի եւ Բնութեան, սովորաբար նախ Սեռի խնդիրը կը դրուի խնդրառու բայէն անմիջապէս ետքը, եւ ապա Բնութեան խնդիրը, զոր օրինակ.

Դու խորհիս զայդ 'ի սրտի քում. Հերովդէս սպան զՅակովբոս սրով:

4°. Եթէ լրացուցիչն ալ ուրիշ լրացուցիչ ունի, զոր օրինակ՝ Յատկացուցիչ մը ուրիշ Յատկացուցիչ, կամ Խնդիր մը ուրիշ Խնդիր մը՝ միշտ լրացուցիչը լրանալի բառէն ետքը կը դրուի, զոր օրինակ.

Կապանք չէտոց նորա լուծան. Իբրեւ լուան զհասանելն նոցա 'ի քաղաքն. Կոչեաց զերկուս 'ի ծառայից իւրոց:

Բոլոր աս օրինակներուն մէջ շարադրութեան կարգը բնական է. քանզի ամենուն մէջ ալ նախ Տէր բային, ետքը բայն ու ետքը Ստորոգելին դրուած է: Երկրորդ լրացուցիչները լրանալի բառերէն անմիջապէս ետքը դրուած են:

## ԳԼՈՒԽ Բ.

### ՁԵՒԱՒՈՐ ԿԱՐԳ.

**212.** *Ձեւաւոր կարգը՝ քերականական չորս ձեւերուն պատճառաւը կ'ըլլայ. որոնք Շարադասութեան յեղեր կը կոչուին, եւ հետեւեալներն են. Արտուղութիւն, Զեղչում, Աւելադրութիւն, եւ Յաջորդութիւն։*

### Ա. ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

**213.** *Երբ նախադասութեան մը բառերը բնական կամ քերականական կարգէն տարբեր կերպով շարուած են, նախադասութիւնը ձեւաւոր է, եւ խօսքին ան մասը կամ բառը որ այսպէս իր քերականական դիրքը փոխած է, արտուղէ կամ շրջուն կ'ըսուի զոր օրինակ.*

*Առն ուրումն մեծատան եսուն անդք տոհմականս. Ի միւսանգամ Պաւղոսի յԵրուսաղէմ ելանել. Երկուց արարչաց, զբարւոյ եւ զչարի, 'ի միոջէ հօրէ ծննդեան համբաւէ. Առ 'ի զխաւարն եւ զաստերն զերկուց մեծացն անօթոց 'ի բաց 'ի միջոյ փարատելոյ. Վասն բազում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ զնոսա։*

*Սօ խօսքերը շրջուն են, եւ քերականական կարգով կը շարուին այսպէս.*

*Անդք առն ուրումն մեծատան եսուն առհմա-*

կանս. Ցեղանել Պաւղոսի միւսանգամ յԵրուսաղէմ. Համբաւէ զծնունդս երկուց արարչաց, բարւոյ եւ չարի, 'ի միջէ հօրէ, եւայլն։

214. Արտուղութիւնը կամ Շրջուն կարգը երկու է, Հարկաւոր եւ Ազատ։

### 1. Հարկաւոր արտուղութիւն.

Արտուղութիւնը հարկաւոր կ'ըլլայ, երբ կը տեսնենք որ բառ մը իր բնական դիրքը պահելով խօսքին մէջ երկդիմութիւն պիտի պատճառէ։

Արտուղութիւնը հարկաւոր ընող դէպքերն են.

1° Բնական կարգով ածականը, իբրեւ լրացուցիչ, լրացուցած բառէն, այսինքն՝ իր գոյականէն ետքը պիտի գրուի։ Բայց հարկ է գոյականէն առաջ դնել

Նախ՝ երբ ածականը բազմավանկ է, գոյականն ալ հոլոված բառ մը։ Ասոր պատճառն աս է. Ածականը գոյականէն ետքը գրուած ատեն՝ անոր հետ մէկտեղ կը հոլովի (39). արդ՝ բազմավանկ ածականներ սովորաբար չեն հոլովիր, եւ կամ եթէ հոլովելու ըլլան՝ ականջի խիստ կամ ծանր կուգան, զոր օրինակ.

Վասն էջանելոյ առաքածելոյն սուրբ Հոգւոյն։

Ս խօսքին մէջ եթէ ածականը բնական

կարգին համեմատ գոյականէն ետքը դնենք, հոլովել հարկ կ՚ըլլայ, այսպէս.

Վասն Էջմիածնայ հօտոյն սրբոյ աստուածաշինին։

Յայտնի է որ աստուածեղէն ածականը հոլովելն ականջի ծանր է։

Երկրորդ՝ հարկ է երբեմն ածականը գոյականէն առաջ դնել, երբ գոյականը հոլոված բառ չէ եւ իրմէ ետքը Բացայայտիչ կամ Յատկացուցիչ մը ունի, զոր օրինակ.

Դասն և առաքելոց նործանուած Քերովբէ։

Յայտնի է որ եթէ աս խօսքին մէջ դասն և առաքելոց ածականները գոյականին յետադաս ըլլան, այսպէս.

Նործանուած դասն և առաքելոց Քերովբէ։

համ իմաստ կուտան, քանզի ան ատեն դասն և առաքելոց Քերովբէի ալ կրնայ հասկցուիլ

2° Յատկացուցիչը բնական կարգով իբրեւ լրացուցիչ, լրացուած բառէն, այսինքն՝ յատկացեալէն ետքը պիտի դրուի. բայց յատկացուցիչը յատկացեալէն առաջ դնել հարկ է

Նախ՝ երբ յատկացեալն իրմէ ետքը յարաբերական մը ունի։ Զոր պատճառն աս է որ յարաբերականը հոմութիւն չտալու համար, (մանաւանդ որ հայերէնի մէջ սեռի զանազանութիւն չկայ) յարաբերեա-

լին անմիջապէս քովը պիտի դրուի։ Եթէ յատկացուցիչը յարաբերական ունեցող յատկացեալէն ետքը դրուի, յարաբերականը կրնայ շատ անգամ թէ յատկացեալին եւ թէ յատկացուցչին վերաբերութիւն ցուցնել, զոր օրինակ.

Յովհաննու եղբայրն որ սպանաւ սրով։

Ոս խօսքին մէջ եթէ Յովհաննու յատկացուցիչը յատկացեալէն ետքը դրուի, կրնայ հասկցուիլ թէ սրով սպանուողն Յովհաննէսն է։

Երկրորդ՝ երբ յատկացուցիչը յարաբերական դերանուն է, միշտ յատկացեալէն առաջ կը դրուի, զոր օրինակ.

Կինն՝ որոյ անուանն պատմի ընդ ամենայն աշխարհ։

Որոյ յարաբերականը՝ անուան բառին յատկացուցիչն է, բայց անմիջապէս իր յարաբերեալին կին բառին քովն ըլլալու համար՝ յատկացեալէն առաջ դրուած է. ուստի չըսուիր,

Կինն՝ անուանն որոյ պատմի ընդ ամենայն աշխարհ։

3° Բնական կարգով բայն անմիջապէս Տէր բային ետքը կը դրուի։ Բայց Տէր բային բայէն զատել հարկ կ՚ըլլայ երբ Տէր բային անմիջապէս ետքը՝ անոր մէկ յատկութիւնը բացատրող յարաբերականով միջանկեալ խօսք մը (141) կայ, զոր օրինակ.

Յակոբոս զըր օղըն Հէրօլտրէ, կոչէր եղբայր տեառն։

Ինչպէս կը տեսնուի, զըր օղըն Հէրօլտրէ միջանկեալ խօսքը Տէր բայլին Նայէն բաժնած է։ Նման միջանկեալ նախադասութիւններ Տէր բայլին լրացուցիչը կը համարուին, անոր համար անմիջապէս անոր քովը կը դրուին։

Նման խօսքերու մէջ գլխաւոր նախադասութիւնն իր բոլոր մասերովն առաջ ալ կրնայ դրուիլ. բայց ան ատեն Տէր բայլին վերջը դնել հարկ կըլլայ, որպէս զի յարաբերականն անմիջապէս անոր քովն իյնայ, զոր օրինակ.

Եղբայր Տեառն կոչէր Յակոբոս՝ զըր օղըն Հէրօլտրէ։

Տես նաեւ թիւ 161 եւ 162

4°. Հարցական խօսքերու մէջ՝ հարցում բացատրող անունը կամ ածականն՝ իրեն վերաբերեալ մասերովը խօսքին սկիզբը կը դրուի, զոր օրինակ. Որդեօք ինչ — խօսքին մէջ — Տէր բայլին՝ Նայէն եաքը դրուած է, իսկ որդեօք ինչ բառերը, թէպէտ Ուղղական խնդիր են, խօսքը հարցական ըլլալուն համար խօսքին սկիզբը դրուած են։

Վ.ան ըրը ֆործը կամիք քարկած առնել զիս, խօսքին մէջ՝ վան ըրը ֆործը բառերը որ քարկած առնել բայլին խնդիրն են, ուստի եւ

*անկէ ետքը պիտի դրուէին, խօսքը հարցական ըլլալուն համար՝ խօսքին սկիզբը դըրուած են։*

*Զի՞նչ գործ գործեալ է քո. հոս ալ զի՞նչ գործ բառերը որ սեռի խնդիր են գործեալ է բային, եւ անկէ ետքը պիտի դրուէին, խօսքը հարցական ըլլալուն համար՝ խօսքին ըսկիզբը դրուած են։*

5° *Մակբայները. իբր լրացուցիչ, բնական կարգով, լրանալի բառէն կամ բայէն ետքը կը դրուին. բայց ոչ, մի՝ բացասական մակբայներն հայերէնի մէջ գրեթէ միշտ բայէն յառաջ կը դրուին, զոր օրինակ.*

*Ոչ եմ, կամ, չեմ արժանի.*

*Ոչ կամիմ. Մի՛ սիրէք։*

## 2. Ազատ արտադրութիւն.

*Արտադրութիւնն ազատ է՝ երբ խօսքին քերականական կարգը փոխել թէպէտ հարկ չէ, այնպէս ընել լեզուն կը ներէ, եւ ականջին ու ճաշակը վայելուչ կը դառնէ։*

**215.** *Հայերէնի մէջ ազատ արտադրութեան սովորական դէպքերն են.*

1° *Տէր բային բայէն ետքը դնել.*

*Էր այր մեծատուն. փոխանակ՝ Այրն էր մեծատուն։*

2° Ուղղական խնդիրը բայէն առաջ դը-նել.

Մեծատուն էր այրն. փոխանակ՝ Այրն էր մե-ծատուն

3° Խնդիր մը խնդրառուէն առաջ դնել։

Ա. Յատկացուցիչը յատկացեալէն առաջ.

Աստուծոյ բարբառ է. Պատերազմաց սկիզբն յա-գահութենէ մարդկան եղեւ. Եթէ Աստուծոյ կա-մօք գործէին այնպիսի չարիք, ընդէ՞ր 'ի գործե-լեաց չարեացն վրէժս պահանջէ. Ոչ իշխէ արքայից արքայէ ծառայ 'ի կայսր խրախուսել, եւ ոչ կայսեր ոք ծառայ 'ի սատանայական խիզախել։

1° Յատկացուցիչը յատկացեալէն առաջ դրուած ատեն, եթէ յատկացեալը նախ-դիր կամ նախադրութիւն մը ունի, այն նախ-դիրը կամ նախադրութիւնը առհասարակ յատկացուցչին վրայ կը դրուի. երբեմն ալ երկուքին վրայ կը կրկնուի, զոր օրինակ.

Սատանայ վրիպեցուցանէ զմարդիկ յԱստու-ծոյ ճշմարտութենէն. Առ շնորհն սուսեր եւ եհատ զգլուխ նորա. Գիտել շարեաց փոփոխմունս եւ շատերաց դիրս. Մի շահանց վրէժ խնդրէք. Դարձան յիւրեանց տեղիս. Յամենեցուն մեր ան-կանելն յերկիր. Ընդ Յիսուսի մկրտելն եւ կալ յա-ղօթս. Սատանայ յԵբրայեցւոց եւ յԱսորւոց լեզ-ուէ խոտորեալ Թարգմանի. Յուզղոյն մանանայոյ եւ 'ի մատց իսկ անկանի մարդն. Զարմանի զվրիժուց զհատուցումն անդրէն յանձն իւր ընկալեալ. Զմե-

ծին Աստուծոյ Արտեմեայ զմեհեանն. Զորոյ ես զգը-լուխն հատի. Զազնուականի ուրուք զորդի սե-ռանիցէ որք յազգականսն հատեալ. Զայնչափ հոգ-ւոց զորս եհան առ նոքօք յերկինս, զսօսաւթիւնն զիա՞րդ ոչ առնուին. Զօգոյն՝ որ ցայգ ունոււն 'ի խոնաւութենէ ջուրց, հասեալ ջերմութեան ճա-ռագայթից արեգականն, չքթեցուցանէ 'ի բաց զտամկութիւնն. Զնոյն զբազմութիւն որդւոցն սատակեցեր.

2. Կրնայ նաեւ նախդիրը յառկացելոյն վրայ միայն դրուիլ, զոր օրինակ.

Եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնսն ուշ եղին. Այլ նոյսա որպէս զմորթն զգենումք եւ ոչ ճնաւէ, եւ զմին, եթէ սիրտ ուրուք առնոյր եւ ունէր, ոչ ճնաւէր. Նորա զմիտս հանճէք, այլ զտխե-ղերաց միտս ոչ կարէք հանել. Քաղաքի միոյ մե-ծի զփչխանութիւնն հաւատալ. Երկուց արարչաց, զբարւոյ եւ զչարի, 'ի միջէ հօրէ զծնունդսն համ-բաւէ.

Յաւէտ Երեւել բան ալ այսպէս կը գոր-ծածուի, այսինքն՝ յ նախդիրը նախադաս յառկայուցչին վրայ չի դրուիր, զոր օրի-նակ.

Շատից յաչաց եղանէին. Աստուծոյ յաչաց ե-լին. Նոյն իսկ հանէ զքեզ առնն յաչաց.

3. Նաեւ երբ նախադաս յառկացութի-նը յարաբերական դերանունն է, կրնայ յառկացելոյն նախդիրը յարաբերական

յատկացուցչին վրայ չդրուիլ՝ զոր օրինակ·

Ազգ՝ որոյ ոչ լուիցես զլեզու· Որոյ հուր յաչացն արձակիցի· Որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա· Որոց զչափ գիտէր զքրիստոնէութեանն· Որոց ընդ հարսն երդմունս եւ դաշինս արարեր· Որոց ընդ բարս եւ ընդ գնացս նախանձէին։ Փոխանակ՝ Ազգ զորոյ ոչ լուիցես զլեզու· Յորոյ աչացն հուր արձակեցի· Զորոց արիւնն Պիղատոս խառնեաց, եւայլն։

Բ. Սեռի կամ Ծնութեան խնդիրը բայէն առաջ·

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ· փոխանակ՝ Տուր մեզ զհաց մեր հանապազորդ։

Յովսէփայ եւ Դանիէլի մեծամեծ իրաց տեսիլք յայտնեցան· փոխանակ՝ Մեծամեծ իրաց տեսիլք յայտնեցան Յովսեփայ եւ Դանիէլի։

Գ. Նախադրութեան կամ անձականի մը խնդիրը՝ նախադրութենէն կամ անձականէն առաջ, զոր օրինակ·

Յիմաստութենէ կարօտ. Ի բնակչաց Թափուր. Խնկովք լի· Մարբն հանդերձ· Մեր առաջի· Փորձելոյ վասն· փոխանակ՝ Կարօտ յիմաստութենէ· Թափուր ՚ի բնակչաց· Լի խնկովք· Հանդերձ մարբն· Առաջի մեր· Վասն փորձելոյ։

Ծովակն որ զնովաւ շուրջ էր· Քան զաւուրս ինչ յառաջ· Այլ ոք քան զկս յառաջագոյն իջանէ։

Երթէ նախադրութիւնը նախդիր ունի, կրնայ նախդիրը նախադրութեան ու նախ-

դիրին մէջ տեղը դրուիլ, կամ նախդիրը եր-կուքին վրայ ալ կրկնուիլ.

Ի պէ՛ս պէ՛ս փորձութեանց 'ի մէջ անկանիցիք. Ի ձերում միջի. Զմեր կնի ոչ շրջէր. Զայր զհետ ել-եալ ես. Ի մեր վերայ. փոխանակ՝ ի մէջ պէս պէս փորձութեանց. Ի միջի ձերում. Զկնի մեր. Ի վե-րայ մեր։

Դ. Բացատական մակբայները ոչ. մի. եւ հարցական մակբայները, ընդէ՞ր, զիա՞րդ, ո՞րպէս, ո՞րչափ. կրնան բայէն վերջը դրուիլ՝ զոր օ-րինակ.

Խոզ թաթաւերձ է, բայց որոճայ ոչ, պիղծ լի-ցի նա ձեզ. Տկարանայ ինչ ոչ քեզ. Գրեցաւ իսկ ոչ. Եթէ գովեսցես զբանսն, եւ առնիցես ոչ մե-ծամեծ պատիժք են. Ցայտ է թէ բնաւ եւ էր իսկ ոչ Զրուանն. Նա եւ առնուլն իսկ ոչ յանձն. Բնաւ եւ յիշեմ իսկ ոչ. Որ ոչն գործիցէ, եւ կերիցէ մի. Եւ փրկէր իսկ ընդէ՞ր զայլոյ արարածս. Բնաւ իսկ սուտ ընդէ՞ր կոչիցի. Եւ գոհանային զիա՞րդ. Կամ-զի կանգնեաց, եւ կանգնէ ո՞րպէս։

Ե. Շաղկապներէն ոմանք կրնան խօսքին սկիզբը դրուելու տեղ՝ մէջ տեղը դրուիլ։

Սով եթէ լինիցի յերկրի. փոխանակ՝ Եթէ սով լինիցի յերկրի. Իմ եթէ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա. Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք. Զայն մեղադրել ցանկութիւն չահիցն հնարեցաւ. Կոյր կուրի յորժամ առաջնորդէ. Ջերմ մինչդեռ էր իբրեւ զհուր։

Ժխտական մակբայը չ՚ու կրնար, անորոշ դերբային վրայ դրուելու. տեղը՝ հրամայականին վրայ դրուիլը, զոր օրինակ.

Զգրաստու թշնամւոյն անկելոյ բնաւիք չհրամայէ զանց առնել. Զուլ 'ի մօր կաթն չհրամայէ եփել. Ուտել 'ի պտղոյ ծառոյն՝ յոր հուպն չհրամայեաց երթալ. Վասն հոգւոյն չատ հոգալ, եւ վասն մարմնոյ չհրամայեաց տատամսել. Պատգամս չհրամայեաց զարդարել կանանց. Չհրամայեաց ումեք 'ի վեր հանել. փոխանակ ըսելու՝ Հրամայէ չառնել զանց, չեփել. չզարդարել, եւ այլն

216. Տեսակ մը արտուղութիւն ալ կայ. ան է որ իրարու հետ անմիջապէս կապակցութիւն ունեցող բառերու մէջ տեղն ուրիշ խօսքեր կը մտնեն, զոր օրինակ.

1° Նախադրութեան ու խնդրոյն մէջ տեղը.

Թշնամի կոչի (սատանայ) վասն զորոմն 'ի մէջ ցորենոյն սերմանելոյ. փոխանակ՝ Վասն սերմանելոյ զորոմն, եւ այլն. Վասն 'ի լաւութիւնս զմարդն յորդորելոյ. Յետ զաշխարհն ընդ ձեռամբ նուաճելոյ. Առ 'ի զաւերն Բաբելոնի նշանակելոյ.

2° Ժխտական մակբային ու բային մէջ տեղը, զոր օրինակ.

Մի, զի չեմք այն, ասասցուք թէ չեմք 'ի մարմնոյ անտի. փոխանակ՝ Մի ասասցուք թէ չեմք 'ի մարմնոյ անտի, այսու զի չեմք այն. Մի ընդ այնպիսի որ գործեն զանօրէնութիւն, կարգա-

Ներ զիս. Մէ, վասն զի չէ գրքին մասը մերոյ կալ 'ի վերայ սկզբան աշխարհիս թէ զիարդ եւ որպէս եղէ, Հորժէքցէմ+ թէ անօկկիզըն եւ սանոնց արարչի եղէ. Զի մ. մթարքն որ գրքօքն շաղայցեն, —րժէլ Հայերոյ 'ի յատակութիւն լուսոյն ցէշէն. Եւ —ւ թէ միշտս ինչ կրիցեն, զէ—ն.

3°. Խոկու բառէ չինուած նախադրու-թեանց կամ մակբայից մէջ անցը, զոր օրի-նակ.

Ըն— հայմոյն քէմ. փոխանակ Ընդդէմ հայմոյն. Գրէ իսկ Ըէ անմնայն. փոխանակ Գրեթէ անմնայն

Նայցէս կըսոււի նաեւ.

Այլ ինչ —զէ. Այլ իմն —զէ. Ոչ այսչափ միայն, այլ եւ —յլ եւս —զէ. փոխանակ Այլազգ ինչ, Այ-լազգ իմն, Այլազգ եւս

4°. Խոկու բառէ չինուած սաւութիւնն-ու մէջ անցը. զոր օրինակ.

Այս եթէ զմարտասայն ըմ—— ոչ —ծէցէն. փոխանակ Ոչ ածիցեն զմառւ. Արէ Հերովդէս ար-քայ ջէ—ն չարչարել զամենա. փոխանակ Արկ ձե-ռըն Հերովդէս, եւ այլն

Զի մի, մթարքն որ գրքօք շողայցեն, —րժէլ հայերոյ 'ի յատակութիւն լուսոյն ցէշէն. Արոր Սատ-ուած —յց որդւոյն Նորայելի. Ցորմամ տասմնորդն —զէ, կամ սասմի կամ ձայնիւ, —ն—էցէ. Զինչ ինչ յ—յ+ օրհնութիւնքն ——ն—էցէն. Ց—յ+ 'ի Ցորայ փոր-ձանայն է.

5°. Խախան բայով ու անցեալ դերբայով

բաղադրեալ ժամանակներու մէջ՝ Լծական բային ու Ենթակային մէջ ամբողջ, զոր օրինակ.

Ես ծնեալ իմ 'ի գեղջն եմ. փոխանակ՝ Ես ծնեալ եմ իմ 'ի գեղջն։ Որ էր, վասն խոստովանութեան իւրոյ եղելոյ 'ի քաղաքին եւ սպանութեան, ժողովեալ 'ի բանտ Մինչչեւ ձեր խնդրելով իմ էր. Զեւ էլ հաւատ խօսել։ Անգ էր նաեւ Բոփեղոց գրեալն.

## Բ. ԶԵՂՉՈՒՄ

217. Զեղչում կ'ըսուի, երբ խօսքին մէջ խօսքին մէկ մասը, զոր օրինակ՝ Ենթակ կամ ածկ բային կամ Խնդիրը մը, պակաս կը թողունք կամ յաւելեալն կ'իմացնենք.

Զեղչում կ'ըլլայ. 1. Տէր բայի. 2. Բայի. 3. Խնդրոյ. 4. Դերբայներու. 5. Դերանուն ածականներու. 6. Լծակցութեան եւ նախդիրի. 7. Շաղկապի.

### 1. Զեղչումն Տէր Բայի.

218. Առաջին եւ երկրորդ դէմքի բայերուն Տէր բային, ես, մեք, դու, դուք, սովորաբար կը զեղչուին. Ուստի կ'ըսուի.

Կամիմ ուսանել զԳիրս, փոխանակ՝ Ես կամիմ. Կոչեցի զնոսա, փոխանակ՝ Ես կոչեցի զնոսա.

Երրորդ դէմքի բայերուն դերանուն Տէր բայիները, նա, նոքա, ինքն, ինքեանք, հայե-

բէնի մէջ սովորաբար կը զեղչուին, այսինքն՝ լռելեայն կ'իմացուին, երբ զեղչուած Տէր բային՝ նախընթաց բային Տէր բայինին հետ մի եւ նոյն անձը կամ թիւն է, զոր օրինակ.

Զակքէոս խնդրէր տեսանել զՅիսուս, եւ ոչ կարէր 'ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ.

Այս խօսքին մէջ՝ կարէր, էր՝ բայերուն Տէր բային Զակքէոսն է. անոր համար այս բայերուն վրայ նա դերանուն Տէր բային կրկնել հարկ չէ. ուստի աւելորդ է ըսել.

Զակքէոս խնդրէր տեսանել զՅիսուս, եւ ոչ կարէր նա 'ի բազմութենէն, զի կարճ էր նա հասակաւ.

Բայց երբ բայի մը Տէր բային՝ նախընթաց բային Տէր բայինին հետ մի եւ նոյն անձը կամ թիւը չէ, անոր զատ անուն կամ դերանուն Տէր բայի տալու է, զոր օրինակ.

Յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի, եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ. եւ իբրեւ սպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ.

Այս խօսքին մէջ՝ գնաց, վատնեաց, կեայր, ըսպառեաց բայերուն Տէր բային գրուած չէ, քանզի ամենուն ալ Տէր բային 'ի սկզբան բացատրուած կրտսեր որդին է, բայց եղեւ բային Տէր բային զատ ըլլալուն համար՝ զատ

բառով բացատրուած է, որ է ուղբառը։

Հետեւեալ խօսքը վերի խօսքին շարունակութիւնն է.

Եւ սկսաւ նա (կրտսեր որդին) չքաւորել. եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ումն 'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ, եւ նա յղեաց զնա յագարակ իւր։

Այս խօսքին մէջ՝ յղեաց բային Տէր բային՝ գնացեալ յարեցաւ բային Տէր բային չէ։ Քաղաքացիներէն մէկուն յարողն ուրիշ է, եւ զանիկայ իր ագարակը ղրկողն ուրիշ է. այսինքն ան քաղաքացին՝ որուն անիկայ գնաց յարեցաւ. անոր համար յղեաց բային նա կամ նա Տէր բային տարբեր է։ Ըսել է նա, Տէր բային չդրուիլ, այսպէս.

Գնացեալ յարեցաւ 'ի մի 'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ, եւ յղեաց զնա յագարակ իւր.

այնպէս կը հասկցուի թէ ագարակը ղրկողն ան է՝ որ գնաց յարեցաւ, ուստի եւ ղրկողը քաղաքացին ըլլալու տեղ՝ անոր յարողը կ'ըլլայ. եւ ղրկուողն ալ քաղաքացին ագարակն ալ ոչ թէ քաղաքացւոյն, այլ անոր յարողինը եղած կը հասկցուի, որ սխալ է։

Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա եւ գթացաւ. յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ. անկաւ զպարանոցաւ նորա եւ համբուրեաց զնա, եւ ասէ ցնա. Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո. եւ ոչ եմ

եմ արժանի կոչել որդի քո։ Եւ ասէ ցծառայս իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին եւ ագուցէք նմա։

Այս խօսքին մէջ երրորդ դէմքի բայերուն ամենն ալ Տէր բայի չունին. ուստի եւ ամենուն ալ Տէր բայն մի եւ նոյն անձը կը հասկցուի. բայց ան բայերէն ոմանք տարբեր Տէր բայի ունենալուն համար, նոյն խօսքը հետեւեալ կերպով պիտի գրուի.

Եւ որդին յարուցեալ գնաց առ հայր իւր. եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն եւ գթացաւ, յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ նորա, եւ անկաւ զպարանոցաւ նորա եւ համբուրեաց զնա։ Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո, եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո։ Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղվաղակի հանէք ըզպատմուճանն առաջին եւ ագուցէք նմա։

219 Ստացական խնդիր առնող բառեր ինչպէս են անորոշ կամ միջակ անուններ, իբրեւ Տէր բայի կրնան զեղչուիլ, զոր օրինակ.

Եկն առ իս յեղբարց իմոց, այսինքն՝ Եկն առ իս ոմն յեղբարց իմոց, Եկին ընդ մեզ եւ յաշակերտաց անտի, այսինքն՝ Եկին ընդ մեզ ոմանք յաշակերտաց. Եկին եւ առաջի մեր 'ի նոցանէ. Անմեղի ումեք ոչ դեւք, եւ ոչ 'ի գազանաց եւ 'ի սողնոց կամ յայլ անասնոց կամ 'ի մարդկանէ վնասել կարասցեն. այսինքն՝ եւ ոչ ոք 'ի գազանաց .. կամ 'ի մարդկանէ ոք եւ այլն։

220. Իմ բայով եւ անցեալ դերբայով շինուած բաղադրեալ ժամանակներուն երրորդ դէմքին առաջին եւ երկրորդ դէմքի դերանուն Տէր բային ալ (որ սեռական հոլով է. տես 111 Բ.) երբեմն կը զեղչուի, զոր օրինակ.

Մինչեւ զամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է. այսինքն՝ Լուծեալ է մեր. Զգաւիթն մի չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց. այսինքն՝ Իմ տուեալ է զնա. Մինչչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի գիտեմ զքեզ. այսինքն՝ Մինչչեւ ստեղծեալ էր իմ զքեզ. Եթէ զգործսն չէր գործեալ 'ի նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. այսինքն՝ Եթէ իմ չէր գործեալ. Ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ կամ բարեպաշտութեամբ արարեալ իցէ զգնալդ դմա. այսինքն՝ Արարեալ իցէ մեր. Մինչչեւ խօսեալ իցէ՝ ուսիր. այսինքն՝ Մինչչեւ խօսեալ իցէ քո. Զի՞նչ ունիս զոր ոչ իցէ առեալ, այսինքն՝ զոր ոչ իցէ առեալ քո.

221. Շատ անգամ բաղադրեալ ժամանակները խօսքին մէջ երկուք են, ան ատեն բային մէկը առաջին կամ երկրորդ դէմք դրուելով, միւս բայը երրորդ դէմք կը դրուի, ու երրորդ դէմքին դերանունը կը զեղչուի.

Զետ 'ի ցետոյն մոռացեալ է, եւ 'ի յառաջադէմն նկրտեալ եմ. փոխանակ ըսելու՝ մոռացեալ եմ, կամ մոռացեալ է իմ. Ոչ յերկիր ուրուք մտեալ եմք, եւ ոչ 'ի բաժին յուրուք տարապարտուց ձեռն

բռնութեամբ մխեալ է (մեր)։ Եթէ կացեալ էաք ՚ի պատուիրանին քում, Տէր, եւ պահեալ էր (մեր) զպատուիրանս զոր եդիր։ Որպէս զամենայն ազգս նուաճեալ էր (մեր) եւ ի հնազանդութեան ունէաք։ Մինչչեւ տեսեալ էր (նորա) զնա, եւ մինչչեւ ՚ի նախանձուէն էին հաչեալք։ Թէեւ բիւրապատիկ յափշտակեալ իցէ (մեր), եւ ոսկաւ ինչ տայցեմք։ Ցորժամ զայսպիսի մեծամեծս առեալ իցէ (մեր), եւ ոսկաւս պահանջիցիմք։ Մինչչեւ ծնեալ էին, եւ մինչչեւ բարի ինչ կամ չար գործեալ էր (նոցա)։

222. Երբեմն զեղչուած Տէր բային երրորդ դէմքի անորոշ դերանուն մը կամ անուն մը կրնայ ըլլալ. զոր օրինակ.

Զայս ամենայն գրեալ է (առաջնոց, կամ ուրուք) ՚ի գիրս ժամանակաց թագաւորացն։ Զնենես էր արկեալ (Հերովդի) զՅովհաննէս ՚ի բանտ. Եդ ՚ի գերեզմանի զոր էր փորեալ (մարդկանն կամ ուրուք) ՚ի վիմէ։ Տեսին զի թաւալեցուցեալ էր (այլոց կամ ուրուք) զվէմն ՚ի գերեզմանէն։ Եդ ՚ի կածոյ գերեզմանի ուր չէր բնաւ զոք եդեալ (ուրուք)։

## Զ. Բայի չէզոքը.

223. Ամ բայով եւ անդէմ դերբայով շինուած բաղադրեալ ժամանակներուն մէջ էական բայը երբեմն կը զեղչուի, զոր օրինակ.

Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինձ հազար ամի, եւ Որմիզդ ՚ի վերայ քո արքայ կացուցեալ (լիցի)։ Տուեալ (եմ) քեզ ընդ այնր վրիժուց զամենեսեան որ կամիցին հաւատալ քեզ։ Տուեալ

(եմ) քեզ զՀագար նաժիշտ իմ. 'ի նմանէ եղիցի քեզ որդի. Ամենեքեան որ անցանիցեն զօրինօքն՝ տուեալ (եմ) քեզ իշխանութիւն պատուհասել. Որչափ եւ գրէք. իմ արքայի հրաման տուեալ (է) զի մի ոք գացէ զիմակաց. Արքայ, տուր իշխանութիւն եւ սպանից զվիշապդ. եւ առէ թագաւորն. Տուեալ (եմ, կամ լիցի) քեզ. Մանաւանդ վասն աղանդին քրիստոնէից պատուիրեալ (եմ) ձեզ, զի եւ այլն, Զի անհաւատին Հողոփեռնի յերկիր կործանեալ (է), եւ գլուխ իւր չէ առ նմա. Ոչ կերեալ (է) զորս եւ ոչ արբեալ. Ոչ խօսեալ (է) նոցա երբէք եւ ոչ իմացեալ (է) եւ ոչ գիտաց ինչ ածեալ (է). Նա աւանիկ նորին հոգւոյ միւսոյ մարգարէի յայս տարաբեալ (է), թէ լոյս է. Եւ զոր նորա ժողովեալ (է), սա ցրուէ. Գնացին արք անօրէնք պատմել թագաւորին եթէ Յովնաթան մեքենայս կազմեալ, շուրջ զբերդաւն պատեալ, յանձնել պատրաստեալ (է). Եւ արքայ Դաւիթ ծերացեալ եւ անցեալ (էր) զաւուրբք, եւ ծածկէին զնա հանդերձիւք եւ ոչ ջեռնոյր.

**224. Ո՞ր զեղչումն կ՚ըլլայ մանաւանդ մինչ—, չէ— բառերէն ետքը, զոր օրինակ.**

Մինչեւ լերինք հաստատեալ էին. մինչեւ ըստեղծեալ (էր Աստուծոյ) զերկիր եւ զամենայն տիեզերս. Ասեմ ձեզ մինչեւ եղեալ (իցէ), զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք. Զի՞նչ չար քան զօձ կայցէ, եւ 'ի նմանէ թերխակէ. եւ 'ի սպանող գեղոց՝ որք 'ի ննջութենէ մարդկան կազմեցան, չեւ հասուցեալ եւ անդէն բուժէ. Մինչեւ եկեալ (էր նոցա) առ միմեանս՝ (Մարիամ) գտաւ յղացեալ 'ի

հոգւոյն սրբոյ· Ի սկզբանն այնպիսի բանս խօսէր, մինչեւ զզօրութեանն իւրոյ փորձ ցուցեալ· Զեւ այդ եղեալ՝ իւրաքանչիւր զընկեր կոչեմք· Զեւ նստեալ՝ եւ անդրէն եւս յօրհնութիւնն յորդորին· Մինչեւ դիմեալք 'ի կռիւն, այլ կային ճակատեալք, եցոյց մերին զօրութիւնն եւ այլն։

225· Հետեւեալ օրինակներուն մէջ ալ բայի զեղչում կայ·

Այդ ձեզ օրհնութիւն (է) յաւարէ թշնամեաց տեառն· Այր եհաս 'ի բանակէ զօրուն Սաւուղայ, եւ հանդերձք իւր պատառեալք (էին), եւ հող ըզ գլխով (էր)· Եկաց քարոզ զօրուն 'ի բանակին եւ ասէ· Իւրաքանչիւր ոք 'ի քաղաք իւր եւ յերկիր իւր (երթիցէ) զի մեռաւ արքայ· Դու բարձրութիւն Երուսաղեմի, դու ցնծութիւն Իսրայելի, դու պարծանք ազգիս մերոյ· այսինքն՝ դու ես եւ այլն։ Մեք կաւ եւ դու ստեղծիչ մեր· եւ գործք ձեռաց քոց ամենեքին մեք· այսինքն՝ Մեք եմք, Դու ես։ Սուր 'ի վերայ Քաղդէացւոցն· այսինքն՝ եկեսցէ կամ իջցէ սուր· (Պաւղոս) ձեռն տուեալ էր Պետրոսի եւ այլոց առաքելոց հաւանութեան, զի ինքն Բառնաբաւ հանդերձ 'ի հեթանոսս. եւ Պետրոսեանք 'ի թլփատութիւնն (սահմանեսցին կամ կարգեսցին եւ այլն)· Զեւ (էր) ուրեք որդի 'ի միջի, եւ նա չյղացելոյն եւ չծնելոյն անուն դնէր· Անէծք (լիցին) այնպիսի կծծի բանից, Մի այսուհետեւ անպտղոյնք եւ անդութք եւ անխնամք եւ անողորմք, մի եւս չար քան զգազանս (լիցուք)։

Նոյնպէս են նամակներու մէջ·

Առ Յովնաթան եղբայր. Առ ազգն Հրէից· Առ

Սպարտացիս եղբարս ողջոյն, խնդալ, խաղաղութիւն. այսինքն՝ լեջէ ողջոյն, եւ այլն։

**226.** Ու յարաբերականէն ետքն ալ Էական բայը կը զեղչուի շատ անգամ, երբ յարաբերականով կազմուած խօսքը յարաբերելոյն մէկ պարագան կը ցուցնէ. զոր օրինակ.

Լուան ամենայն թագաւորք Ամովրհացւոց որ յայնկոյս Յորդանանու (էին). Յորդանանու անդին եղող Ամովրհացւոց բոլոր թագաւորները լսեցին. Ասեն արքն որ ընդ նոսա (էին). Յիշէին տակաւին զիրան որ 'ի պանդխտութեան իւրեանց (լեալ էին). Յիշեաց զուխտ իւր որ ընդ Աբրահամու. Որդի Յովսեփայ որ Յակոբայն, որ Հեղեայն, այսինքն՝ որ էր որդի եւ այլն։

**227.** Շատ անգամ այս տեսակ խօսքերու մէջ, բայէն հետ յարաբերականն ալ կը զեղչուի. զոր օրինակ.

Կցեցան յարս անօրէնս յԻսրայէլացւոց անտի. այսինքն՝ որ էին յԻսրայէլացւոց անտի. Բերին մեզ վահան ոսկի (որ էր) 'ի հինգ հազար քանքարէ. Ունէր հանդերձ (որ էր) 'ի ստեւոյ ուղտու. Երթային զհետ նորա ժողովուրդք բազումք (որ էին) 'ի Գալիլեէ եւ յայն կոյս Յորդանանու. Առ 'ի քէն իմաստութիւնդ. այսինքն՝ Իմաստութիւնդ (որ է) առ 'ի քէն. Փառաւորեա զիս առ 'ի քէն փառօքն. այսինքն՝ Փառօքն՝ որ են եւայլն. Զփառս զոր 'ի միայն Աստուծոյ ոչ խնդրէք. այսինքն՝ Զփառս (որ են) առ 'ի միոյն Աստուծոյ. Զխարդ մաքսաւորն

եւ ձկնորսն եւ առանց դպրութեան. այսինքն՝ Զայն որ էր առանց դպրութեան. Զողջակէզսն եւ զվասն մեղացն. այսինքն՝ Զայն որ է վասն մեղաց. Առեալ լի ափով զառ 'ի յիշատակէն նորա. այսինքն՝ Զայն որ է 'ի յիշատակէ նորա. Ընկալայ զառ 'ի ձէնջն. այսինքն՝ Զայն որ է 'ի ձէնջ։

228. Խօսքի մը նախընթաց անդամին մէջէն մէկ կամ քանի մը բառ, եթէ յաջորդ անդամին մէջ ալ յիշել հարկ ըլլայ՝ կը զեղջուի, զոր օրինակ.

Որ առողջ միտս ունին, ոչ զշարժունսն՝ այլ զշարժիչն պարտին փառաւորել. այսինքն՝ Ոչ զշարժունսն պարտին փառաւորել, այլ զշարժիչն պարտին փառաւորել։ Զերախտաւորսն եւ զբարերարս որ 'ի նմանէ կարգեցան՝ մեք ոչ հրամայեմք անարգել. բայց դարձեալ եւ ոչ զպաշտօն արարչին արարածոց մատուցանել. այսինքն՝ Բայց դարձեալ եւ ոչ զպաշտօն արարչին հրամայեմք արարածոց մատուցանել, եւայլն։ Զիարդ պաշտեսցեմք զարեգակն որ կոչի ծառայ, կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, կամ զերկիր՝ զոր հանապազ բրեմք եւ ցանկ կոխեմք. այսինքն՝ Կամ զիարդ պաշտեսցեմք զլուսին... կամ զիարդ պաշտեսցեմք զերկիր, եւայլն։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, եւ դատաւորն՝ դահճի. այսինքն՝ Եւ դատաւորն մատնիցէ զքեզ դահճի։ Ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ. մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ. եւ մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա. եւ մի 'ի գլուխ քո երդնուցուս, եւայլն, փոխանակ ըսելու՝ Մի երդնուցուս

ցերկինս զի . . . եւ մի Երդնուցուս յերկիր զի . . .: Թէպէտ եւ ամենեքին գայթագղեսցին, այլ ես ոչ. այսինքն՝ Այլ ես ոչ գայթագղեցայց:

229. Երբեմն բային հետ ուրիշ բառ մ'ալ, զոր օրինակ՝ ածական մը, խնդիր մը, մակբայ մ'ալ մէկ տեղ կը զեղչուի, զոր օրինակ.

Արեգական յայտ առնէ թէ չեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս զամենայն տիւ լուսաւոր պահէ. այսինքն՝ Այլ այն է արժանի պաշտաման որ . . .: Գովեսցէ զքեզ ընկերն եւ մի՝ քո բերան, օտարն՝ եւ մի քո շրթունք. այսինքն՝ Գովեսցէ զքեզ ընկերն եւ մի գովեսցէ զքեզ քո բերան. գովեսցէ զքեզ օտարն եւ մի գովեսցեն զքեզ քո շրթունք: Նոքա կարօտ են հացի, եւ դու՝ իմաստութեան. այսինքն՝ Եւ դու կարօտ ես իմաստութեան:

3. Զեղչումն խնդրոյ.

230. Մի եւ նոյն հոլով խնդիր առնող բայերէն ամենուն քով դերանունն խնդիրը չի կրկնուիր, այլ անգամ մը մէկուն քով դրուելէն ետքը՝ յաջորդ բայերուն քով Առելեայն կ'իմացուի, զոր օրինակ.

Ետես զնա եւ կոչեաց. փոխանակ՝ Ետես զնա եւ կոչեաց զնա:

231. Բայց երբ բայերը տարբեր հոլով խնդիր կուզեն, ամեն մէկուն պահանջած հոլովով դերանուն խնդիրն անոր քով դնելու է, զոր օրինակ.

Ետես զնա եւ խօսեցաւ ընդ նմա. Յարեցաւ 'ի նա եւ ոչ մեկնեցաւ 'ի նմանէ։

232. Երբեմն դերանուն կամ գոյական խնդիր մը կը զեղչուի, զոր օրինակ.

Առաքեաց գլխատեաց զՅովհաննէս 'ի բանտի. այսինքն Առաքեաց դահիճ եւ գլխատեաց եւ այլն։ Առաքեցին ընդ ամենայն գաւառն, եւ ածին առ նա զամենայն հիւանդս . . . այսինքն՝ Առաքեցին մարդ եւ այլն. Առաքեցին 'ի բանտն ածել զնոսա. Յղեցին եւ կոչեցին զնոսա. Գուցէ սատակիցէ 'ի նոցանէ տէր. Առ ընդ քեզ (զոմանս) 'ի ծերոց ժողովրդեանդ. Յաղքատաց ժողովրդեանն եթող անդրէն յերկրին. Արբ (սակաւ ինչ) 'ի գինւոյն եւ արբեցաւ. (Մասն ինչ) 'ի պտղոյ այգւոյն տացեն նմա. Առ 'ի պտղոյ նորա եւ եկեր։

223. Երբ յատկացեալ մը քանի մը յատկացուցչի կը վերաբերի, անգամ մը միայն դրուելով, յաջորդ յատկացուցիչներուն քով զօրութեամբ կ'իմացուի. միայն՝ եթէ յատկացեալը նախդիր ունի, նախդիրը յատկացուցիչներուն վրայ կը կրկնուի, զոր օրինակ.

Լուաւ զձայն երգոցն եւ զպարտուց, այսինքն եւ զձայն պարտուց. Զվարագոյր դրան խորանին եւ ըզ դրան սրահին. Խոստովան լինիցին զմեղս իւրեանց եւ զհարց իւրեանց Փետէի զվարսս գլխոյ իմոյ եւ զմօրուաց իմոց. Զպտուղ կալոյ քոյ

եւ զՆնձանի մի հատանիցես. Բուրեսցէ հոտ Նորա իբրեւ զկնդրկի. Ձայն Նորա իբրեւ զօձի որ չլիցէ. Զամենայն ճարպ զարջառոյ եւ զոչխարի եւ զայծեաց մի ուտիցէք. Բազում են որդիք ակնդկիդ առաւել քան զարամբւոյն. Գուցէ տեսանիցէ զերեսս ձեր տրտմագոյնս քան զայլոց մանկանց հասակակցաց ձերոց. Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն եւ զփարիսեցւոց. Առնէաք զկամս մարմնոյ եւ զմտաց. Տըգէտ են Աստուծոյ արդարութեանն եւ զիւրեանցն (այսինքն՝ զիւրեանց արդարութիւնն) խնդրեն կացուցանել. Զիրաւունս զեկլին եւ զորբոյ եւ զայրւոյ. Մի լիցի ապրեալ տուն Նորա, այլ 'ի Նորայն (այսինքն՝ 'ի տան Նորա), կացցեն օտարք. Զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն Նորա եւ ընդ ամենայն որդւոցն Իսրայելի. Որպէս թէ արդարոցն մեռելոց ոգիք յայլ 'ի սուրբ մարմինս փոխիցին, կամ 'ի մարդկան կամ 'ի գազանաց եւ 'ի ճճեաց եւ 'ի սողնոց. Լուաւ Գոթողիա զձայն ժողովրդեանն զընթանալոյն, զգոհանալոյն եւ զօրհնելոյն զարքայ՝

234. Երբեմն յատկացեալը բոլորովին կը զեղչուի, մանաւանդ երբ յատկացեալը էր* բառն է, կամ մէկուն վերաբերեալ բան մը կ'իմացնէ, զոր օրինակ.

Զխափանածոյ Նորա եւ զբժշկութեանն տումեսցի, այսինքն՝ զ[illegible] կամ զ[illegible] խափանածոյ եւ բժշկութեան Նորա. Տալով տաշիք Նմա զհարուածոյն, այսինքն՝ զ[illegible] կամ զ[illegible] հարուածոյ Նորա. Տօնեսցեն զտաղաւարացն, այսինքն՝ ըզ տօն տաղաւարաց. Են որ զիւրեանց սերմանեն, եւ

բազմապատիկ առնեն, այսինքն սերմանեն որ ինչ իւրեանց է. Կոյսն հոգայ զտեառնն. այսինքն՝ զիրս տեառն. Զյափշտակեն զուրուք. Մի ոք զանձին եւեթ խնդրիցէ, այլ եւ զընկերին. Յորժամ եղէ այր՝ զտղայութեանն 'ի բաց խափանեցի. Երթայք տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ։

## 4. Դերբայներու վերլուծում.

235. Նորիշ դերբայ մը նախընթաց խօսքին մէջ անգամ մը դրուելէ ետքը, խօսքին յաջորդ անգամին մէջ լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ.

Զինչ գործէք, զոր չէ օրէն (գործել) 'ի շաբաթու. Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ եւ դեղով (գրել). Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել. մի (լինել) թշնամանող, մի հարկանող, եւայլն. Տեսեալ արդարոց՝ ծիծաղեցան. անարատին (տեսեալ)՝ եւ արհամարհեցան։

236. Երբեմն անցեալ դերբայ մը գոյականներու հետ լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ.

Մեռաւ ամաց քանից. այսինքն՝ մեռաւ լեալ ամաց քանից. Յայն ինչ ապաստան (լեալ)՝ զամենայն ինչ անխտիր գործեմք. Զատէպ յօրանջելն եւ ձգտելն հմուտ բժիշկք 'ի մերձելոյ մաղասոյ ասեն (լեալ կամ լինել). Ինքն երթայր բոկ, եւ ամենայն ժողովուրդն ընդ նմա ձորձ զգլխով (արկեալ). Հարիւր հազար ասպար 'ի ձեռին, տիգաւոր

հետեւակ. այսինքն՝ Հարիւր հազար տիգաւոր հետեւակ «որոց էր ասպար 'ի ձեռին. Անկանէր 'ի ներքըս» (ունելով) սուսեր 'ի ձեռին. Կոյս վճարեցաւ յաշխարհէ. Դի պսակեցաւ. այսինքն՝ Մինչդեռ կոյս էր, դի էր. Սասանականքն, որդի 'ի հօրէ, կարգաւ առին զթագաւորութիւնն. այսինքն՝ Սասանականքն կարգաւ առին զթագաւորութիւնն, որդի 'ի հօրէ — [illegible]։

Այսպէս դէպդիմամբ կ'ըսուի.

Բերան 'ի բերան խօսել. Մարտնչել ճակատ առ ճակատ. Սիրտ 'ի բերան շրջել. Գայլ 'ի բերան ածել. Սուր 'ի ձեռին ընթանալ. Ձեռս 'ի գլուխ եդանել. Խեղդ ընդ անձն պաշարել. Բերան 'ի վայր անկանել. Կապել զոք ձեռս յետս. փոխանակ Բերան 'ի բերան մօտեցեալ խօսել. Մարտնչել նորեեւ ճակատ առ ճակատ. Գայլ 'ի բերան եդեալ ածել. Սուր 'ի ձեռին ունելով ընթանալ. եւայլն։

Այսպիսի բացատրութիւններ երբեմն ածականի կամ մակբայի զօրութիւն ունին, զոր օրինակ.

Հող 'ի գլուխ կամ ձորձ 'ի գլուխ լինել. Կախել գլխիվայր. Հիմնիվեր տապալել. Կապել ձեռ ընդձեռ, եւայլն։

5. Ցուցական եւ Սեպական ածականաց [illegible]

237. Ցուցական ածականները, այս, այդ այն, շատ անգամ կը զեղչուին, գոյականին

վրայ դրուած ա., ը., ն., գրերը բաւական հա-մարելով։ (Տես 154)։

238. Շատ անգամ խմ. ձ., մը, յը, ը–ր Աստուածականները, եւ նոր–, նոյ–, ը–րե–նց յատ-կացուցիչները կը զեղչուին, երբ յայտնի է թէ գաղափարը որու կը վերաբերի. զոր օրի-նակ.

Եթէ (թագաւորն) հրամայէ պատերազմել, ոչ իշխեն անցանել զբանիւ. այսինքն՝ զբանիւ նոր–. Դէպ եղեւ եղբարս եօթն մարբն հանդերձ կալ-եալս ածել. այսինքն՝ հանդերձ մարբ ը–րե–նց. Որ անարգէ զհայր (իւր). Կոչէ զբարեկամս եւ զդրա-ցիս (իւր). Ծեծէին զգլուխն՝ (նորա) եղեգամբ եւ թքանէին ընդ երեսս (նորա). Եւ ոչ, յորժամ ընդ աւազակուտ տեղիս դիմեալ զընկերն (իւր) ոք տեսանիցէ, եւ ասիցէ թէ եղեռն գտանէ, նա ինչ իցէ պատճառք վնասուն. Սկսաւ Յիսուս ցուցա-նել աշակերտացն (իւրոց), թէ պարտ է նմա եր-թալ. Զոր 'ի ձեռին (իւրում) ունէր. Ընդէր բար-կանաս եղբօրն (քում). Քարամբք եւս կոծէր զան-ձըն (իւր). Մատնեաց զանձն (իւր) վասն իմ։

239. Յօդերէն մի թուական ածականը գո-յականին քով լսելեայն կ'իմացուի, զոր օ-րինակ.

Երկու գրիւք գարւոյ՝ տկեղ մլոյ լինիցին, եւ ՓՐԿ– նաչհւոյ՝ ակե.. այսինքն՝ եւ գրիւ մի նաչհւոյ տկեղ մ–յ. Արկ վարձս մշակացն աւուրն դահե-կան (մի). Արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն (մի). Առանց կաւոյ ամ (մի) չեմ

լեալ· Աւուր (միոյ) գնաց աստի, եւ աւուր (միոյ) գնաց անտի· Որ գիշերի էր, եւ միւս գիշերի կորեաւ· այսինքն 'ի միւս գիշերի։

## 6· Նախադրութեան եւ Նախդիրներու շեշտ.

**240·** Երբեմն Նախադրութիւն մը որ քանի մը խնդիր ունի, առաջին անգամ դրուելէն ետքը, միւս խնդիրներուն քովլուելեայն կ'իմացուի. միայն, եթէ Նախդիր ունի, Նախդիրը խնդիրներուն վրայ կը դրուի, զոր օրինակ.

Վասն խռովութեան իրիք եղելոյ 'ի քաղաքին եւ սպանութեան. այսինքն՝ եւ վասն սպանութեան։ Յարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն 'ի թագաւորութեան (վերայ). Վէրս 'ի վերայ վերաց եւ ցաւս 'ի ցաւոց (վերայ) յաւելուին. Ի վերայ խաչանց իմոց մեռանիմ. յորո՞ց խաչանց արդեօք. 'ի հարթուցելոյն, 'ի խափուցելոյն, 'ի գազանակուր եղելոյն. Գթայր 'ի վերայ նորա, իբրեւ հայր յորդւոյ. Երթ զհետ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոց, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան։

**241·** Նախդիրներն ալ երբեմն կը զեղչուին, զոր օրինակ, է նախդիրը հետեւեալ խօսքերուն մէջ.

Առնուլ զօք կնութիւն. Ետ արքայ զաղջիկն կնութիւն սիրելւոյն. Տայցեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ. փոխանակ՝ 'ի կնութիւն։ Ձեռնադ-

ընացեն անդ զաւրքն Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց մեծաց. փոխանակ՝ 'ի կաթողիկոսութիւն։

242. Երբ Ներքին դերբայները նախդիրով մը խնդիր են, եւ իրենք ալ նոյն նախդիրով խնդիր ունին, աս խնդիրը դերբայէն առաջ դրուած ատեն, դերբային նախդիրը զանց կ'առնուի, զոր օրինակ.

Յառաջ քան զերկիր առնել, եւ նախ քան զանդունդս գործել. Յառաջ քան զլերինս հաստատել. փոխանակ՝ Յառաջ քան զառնելն զերկիր, նախ քան զգործելն զանդունդս, եւայլն։ Ի քում լինել մարդկանն. փոխանակ՝ Ի լինել մարդկանն 'ի քում։ Ի ճանապարհ անկանել նոցա եւ մօտ 'ի քաղաքն լինել. այսինքն՝ Յանկանել նոցա 'ի ճանապարհ, եւ 'ի լինելն մօտ 'ի քաղաքն։ Արգելլին զմեզ 'ի ներքս մտանելոյ. այսինքն՝ Ի մտանելոյ 'ի ներքս։ Որ յարջառոց, որ յաչխարաց, 'ի թռչնոց, 'ի նաւչհւոյ, 'ի թոնրի եփելոյ. այսինքն՝ Յեփելոյ 'ի թոնրի։ Եւ այն լինի յոյժ 'ի տօթի աշխատելոյ կամ կարի 'ի ցրտոյ ըկելոյ. այսինքն՝ Յաշխատելոյ 'ի տօթի, 'ի ըկելոյ 'ի ցրտոյ։ Զթագաւորէն Յունաց զառ ինքն եկեալսն. այսինքն՝ Զ'ի թագաւորէն Յունաց առ ինքն եկեալսն։ Զծնէ կոյրն. փոխանակ՝ Զ'ի ծնէ կոյրն։

243. Երբեմն ղ եւ ● գրերով սկսող բառերու վրայ ղ նախդիրը, ինչպէս նաեւ յ եւ Լ գրերով սկսողներուն վրայ ալ է նախդիրը զանց կ'առնուի, զոր օրինակ.

Ի տալ տեառն Ջեբէէ եւ զՍաղմանայ 'ի ձեռս իմ. Առ զամենայն զօրս իւր, զհեծեալս եւ զհե-

տեւանկս եւ ղէն» եւ զկառս եւ գնաց. Մերկացաւ ղէե—ր իւր. Զեղչելն եւ զըազկէքն՝ զայն մեք ոչ գանդաղեցաք. Ոթեցի ղմ———իմ հանդերձ խնկօք իմովք. Կարդեցին անդ ղ—հ— պատարագաց իւրեանց. Այլ ինչ գործ ոչ ունէին բայց միայն ղ—ր—ղ—ր—ը—ն եւ զպճնելն եւ ընդ ոսկի եղանել. Եւ օր—ո—ղ—ն—ն որանն յաղտեղութիւն դարձուցանէին. Զգուշանային ——հ—մ—ն—օ+ երկրին իւրեանց. Յորժամ մանկըտին —+—ն—չ—լ—է օրհնութիւնն երգէին. Յարկս նոցա փուչ բուեցի. Կատարած նոցա երթայ յ—ր—կ— դըժոխոց. Թէպէտեւ յ—ր—կ— չարեացն երթեալ հասեալ իցեն. Հաց արդեանց երկիրն քո եղիցի յ—է——ր— եւ 'ի պարար. Յ——է—ր—ն— յաւիտենից. Յ—ն—ց—ն— ինչ անկանել. Եթէ յ———ր—է—ն— ինչ հաստանիցիս. Յ———ն—կէ նստել. Յ——է—ր—ն—ց մինչեւ յաւիտեանս. Յ—ր—ե 'ի ցորեան փոխել. Յ—ն—կ—ն բարբառոյն 'ի Հայերէն դարձուցեալ. Ուստի եւ յե—ո երթալոյ դհակառակաէր զատտանայ անուն ժառանգեալ. Յ—է—ե—ջ—յ ժամանակացն մինչեւ ցԱեմ. Ոչ այլ ուստեք այլ յ—ա—խ— ղատադնապան կրելոյ. Հե—ի աշխարհ ուրեք գնալ. Էջ յ—ք— գետոյն հոսանացն Եփրատու. Հ—ի—ր—ն թանձրախոււոն անտառին. Մարկոս յետ նորա հ—մ—ա—ջ—փ ճանապարհն եկն. Այժմիկ հե———ա—ն— գրեմ առ ձեզ:

Այս օրինակներուն մէջ նօտր գրով ըըր—ուած բառերուն՝ որ ՟ կամ ▪ գրով են, ՟ նախդիրը զեղչուած է. իսկ ° կամ ^ գրով եղողներուն՝ է նախդիրը. ուստի պիտի ըըլայ, զՕէրէի, ջղէնոյ, եւ այլն. Օրրութեան որանցն. զ"ահմանօք, եւ այլն. Ի յար-

կըս, ՚ի յատակս, ՚ի յագուրդ, եւ այլն. Ի հեռի աշխարհ, ՚ի հովիտս, եւ այլն։

## 7. Շաղկապի զեղչում.

244. Օր եւ երբ Շաղկապները երբեմն կը զեղչուին.

Տուաք մեք քեզ գիտել, Թագաւոր, եթէ զքաղաքս այս շինեսցի եւ պարիսպք սորա կանգնեսցին, չէ քեզ խաղաղութիւն. այսինքն՝ զի եթէ զքաղաքս եւ այլն։ Թող տուր անցից ընդ երկիր քո. այսինքն՝ զի անցից։ Ես գիտեմ, յուշ լիցին նմա չարիքն զոր անցուցաք մեք ընդ նա. այսինքն՝ զի յուշ լիցին եւ այլն։

Մի հոգայք վասն ուտելոյ ձերոյ՝ զինչ ուտիցէք. այսինքն՝ Թէ զինչ ուտիցէք։ Անկարելէ նմա հարցանել ո՞վ իցէ վասն որոյ ասեն. այսինքն՝ Հարցանել թէ ո՞վ իցէ։ Էր խռովութիւն ՚ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք Պետրոսն եղեւ. այսինքն՝ Թէ զի՞ արդեօք եւ այլն։ Գիտասցեն, եթէ ոչ ձիւն եւ սառնամանիք պնդէին զլերինս, արմատք խոտոց ոչ պարարէին. այսինքն՝ Գիտասցեն՝ զի եթէ եւ այլն։ Ու է որբէք յարանց կերպս դարձեալ, զկանայս յանցուցանէ. այսինքն՝ Է որբէք զի եւ այլն։ Կարծէին խաբէութեամբ ՚ի վնասել զնոսա եկն. այսինքն՝ Կարծէին թէ եւ այլն։ Այլ եւ զպատճառն եւս՝ վասն էր չասացէ, ասէ. այսինքն՝ Զպատճառն եւս թէ վասն էր եւ այլն։ Զի յայտ արասցէ, թէ ծուլանայցեն՝ առանց բժշկութեան անձին վէրքն. այսինքն՝ Զի յայտ արասցէ թէ՝ եթէ ծուլանայցեն,

և այլն։ Ու զինչ իցէ խորագիտութիւն օձին, եթէ ոչ՝ իբրև ծերացեալ նա և անսամիցէ ապականեալ զմարմին իւր . . . զիմէ նա ընդ անցս ինչ նեղանձուկ վայրաց, և ընդ կրթելն կեղևէ զապականեալ մարմին. այսինքն՝ Նմէ ոչ գէ իբրև ծերացեալ և այլն Տեառնեմք երկուս այս միացգին ընդ միմեանս զրգանալ միմեանց մանու և արկանել ծարաւի են. այսինքն՝ Զի ընդ միմեանս զըրգռեալ և այլն Նմէ անսամիցեն զոր սուր առնել և անձին առնիցէ, արդարանալ երրէք կարիցեն այնպիսւոյն. այսինքն՝ Տեառնիցեն զոք գէ սուր առնել և այլն

## Դ. ԿՐԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

**245.** Կրկնումն ու Կրկնաբանութիւնը ասպրեր են.

Կրկնումը Ճարտասանական ձեւ մըն է, մի և նոյն բառը կրկնելով կ՚ըսէ, զոր օրինակ.

Աստուած, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս. Տէր, Տէր մի և նո մանկանայ. Դու ես, դու ես այն

Իսկ Կրկնաբանութիւնը Քերականական ձեւ է, և կ՚ըսէ՝ երբ խօսքին մի և նոյն մասը, զոր օրինակ՝ Տերբայքն կամ Նկաթ իրր, առանց բառերով երկու անգամ կը բացատրութիւն, զոր օրինակ.

**246.** Ա. Դերանուն Տերբայի կրկնաբանութիւն

Սիրս զոր եւս ընդ իս, ու ես ինձ ի ծա-

ույ անուն եւ կերպայ. Վէմն զոր անարգեցին շի-
նողքն, նա եղեւ գլուխ անկեան։ Առաջնորդ իշ-
խանն՝ նա նստի 'ի գահս ուռել հայր։ Բանն զոր ես
խօսեցայ, նա դատի զնա։ Յիսուս Նազովրեցի՝ նա
փրկեսցէ զանեղծս զայս։ Ամենայն ինչ որ յաշխար-
հի է, չէ նա մեր։ Ազգքն այնոքիկ զորս դու մա-
ռանգեցեր ես, նոքա հմայից եւ դիւթութեանց ան-
սան։ Եւ Մովսէսի բանքն Յովակիմայ եւ ամենայն
ինչ զոր արար՝ ո՞չ ասանիկ գրեալ են նոքա 'ի գիրս

## 247. Զ. Կերպարան խնդրոյ աւետարանին.

ԶՅիսուս զոր դուք սպանէք, զնա յարոյց Աստ-
ուած։ Զբաժակն զոր ետ ինձ Հայր, ո՞չ ըմպիցեմ
զնա։

Ամենայնի որ լսիցէ՝ հնչեսցեն երկոքին ա-
կանջք նորա։ Լուսնի չիք նորա լոյս առանձին։ Մար-
գայ որպէս խօսեցան աւուրք նորա։ Եւ Սաղաթա-
գայ որդւոյ Սփերայ ոչ գտին նորա ասացեալք։ Այս-
ինքն, յարքայութեանն զոր ասէի՝ նորա զամ։ Ի լե-
րինն մեծի եւ բարձու՝ նորա է անկողին քո։ Եւ
զԹագաւորն Յուդա որ առաքեաց զձեզ խնդրել
զՏէր, այսպէս ասասջիք նմա։ Եթէ ընդ դուռն ընդ
որ Թագաւոր եկանէ՝ հանցես ընդ նա այր։ Էր այր
մի յորում այս ոգիք զայլ 'ի նմա։ Յորմէ եւ հեթա-
նոսք մեծաւ զգուշութեամբ խորշեալ պատկա-
ռէին 'ի նմանէ։ Որոյ ձեռք նորա յանօրէնութեան
են եւ աջ նոցա լի է կաշառօք։ Զարս որոց ոչ էր
նոցա թիւ։ Որոց յափրացաւ անձն իմ 'ի նոցանէ։
Աստուածք նոցա յորս յուսացեալ էիք 'ի նոսա։ Զո-
րոց զճարպ զոհից նոցա ուտէիք։ Ի անդուոյն յո-

բում դուք կամիք մտանել բնակել անդ. Տանն՝ յոր ես մտից անդր.

248. Այն. այդ. այս Դերանունը ոչ միայն եզակի, այլ և յոգնակի բառերու և անո-րոշ դերբայներու տեղ աւելադրութեամբ կը դրուի, զոր օրինակ.

Ամուրքդ զոր շինէք՝ այդ ձեզ խիկ լիցին. Արծ-նեյն և նկարեյն՝ այն 'ի զարդարիչ անդր հայի. Եւ մեղք հարցն՝ այն ընդ մեզ եղին. Իսկ հանդերձին որ զնոքօք արկեալ՝ այն ցեցակեր, մեցառեալ, փխրեալ մաշեալ կորուսեալ ապականին. Զիք ինչ այն որ բառ քո կամօդ արտաքս կարէ եղանել. Նո-րոգել 'ի փառութենէ մեղացն՝ այն Քրիստոսի ուղ-ղութիւնքն (երախտիք) էին. և անդրէն 'ի նոյն չդառնալ՝ այն նոցա փութոյն և տառապանաց գործ.

249. Այն. շատ անգամ ամբողջ խօսքի մը տեղ այ աւելադրութեամբ կը դրուի, զոր օրինակ.

Եթէ որչափ Քսոս արդեօք Աստուած 'ի մարդ-կանէ՝ այն ոչ ամենեցուն յայտնի է. Զի ներող և արգահատող է տրտմիչն՝ այն ամենեցուն իսկ յայտնի է. Եթէ չխօսիցին ինչ այնպիսի բանս՝ այն նոցա ազնուականութեանն է համար. Եւ զի խըն-դիրք ամենայն գործոց լինելոց են՝ այս վերագոյն յայտ արար.

250. Այն. այս. այդ Ներքին դերբայնե-րու նախադաս ըլլալով, աւելադրութեամբ կը գործածուին, զոր օրինակ.

Նա եւ այն իմաստութիւն է՝ ճանաչել թէ յումմէ է շնորհն. փոխանակ պարզապէս ըսելու թէ, Իմաստութիւն է ճանաչելն թէ յումմէ է շնորհն։ Արարչի այն գործ է՝ զբնութիւնս առնել եւ ոչ միայն արգս եւ զարդս եւ կերպարանս. Այն եւ եթ առաջի կայր՝ կամ մնալ Աստուծոյ կամ չմնալ. Եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն է՝ զարտաքինսն իրօք ճշմարտութեան առանց դրոց յանդիմանել. Երեցուն (երից աւետարանչաց) այն իմն փոյթ եղեւ՝ վասն տնտեսութեանն պարապել. փոխանակ ըսելու՝ Փոյթ երեցունց եղեւ պարապել վասն տնտեսութեանն. Այն իսկ գործ է այդ՝ կոծեցուցանելն եւ մորմոքեցուցանել զմեզ. փոխանակ՝ Գործ (Ներգործութիւն) այդ է կոծեցուցանել, եւայլն։

## 251. 3. Յարաբերեալ դերանուն.

1. Յարաբերեալը փոխանակ իր հոլովը դրուելու՝ ուղղական կամ Յարաբերականին հոլովը դրուած, և երբը ուրիշ Դերանուն մը աւելադրութեամբ յարաբերեալին հոլովը դրուած, զոր օրինակ.

Եւ Տուն՝ յորում իցէ աղտ, համդերձ նորա քակեալ լիցի. փոխանակ՝ Քակեալ լիցի համդերձ տունն՝ յորում իցէ աղտ. Ամենայն այր՝ որոյ էր դատ գալ առ արքայ ՚ի դատաստան, բարբառէր առ նա Աբեսաղոմ եւ ասէր. Եւ տունն զոր շինեաց արքայ Սողոմոն տեառն՝ վաթսուն կանգուն երկայնութիւն նորա. Մուրհակ՝ զոր ունէի զումեքէ, ընթեռնուլ եւ ոչ պատառէի զայն. Ամենայն որ

կամ խորոկ՝ յոր հատանէ պտղաբերան 'ի մէջ ծովուն, ընդոսան զոյն սատնու. Զաւրէն՝ որովք հեղձուցանէին Փարաւոնի զմանկունսն, Նոէխմբէ հեղձաւ. Ամինայն մորդ և անտառն՝ որ զայն 'ի գաւառի և ոչ մնայ 'ի տուն, անկցի 'ի վերայ նորա կարկուտ և սատակեսցէ. Բողոք՝ որ հուպ իցէ 'ի մերսուորն, տայ ծերակոյտ քաղաքէն այնորիկ երկինջ մի. Այրն այն Մոլոխ՝ որ եհան զմեզ յեգիպտոսէ, ոչ գիտեմք զի՞ եղեւ նմա. Թաքաւոր՝ որ քան զապաւուոր եւս վատթարագոյն է, լաւ էր նմա բնաւ չանանել իսկ զթագ 'ի գլուխ. Մառայ որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունսն տան լսել նմա. Մոլոխենոտ՝ որ տաանձինն 'ի յայտնի ինչ մամռակի տպաւորզ է, Նոէխմբ զմազձս հնացեալս հնարին բժիշկք հատանել. Այն որ այն ինչ կամէր 'ի վերայ ալեաց ծովու սատակել, ընդ ինքն յերկիր հոգեալ՝ չալակաւ չրջեցուցանէին. Ընտոծին և արծաթագինք՝ որ էին յազգաց օտարաց, թլփատեաց զնոսա. Սգթաբէ ծեր՝ որ ոչ եկին, անհաւատիկ եւ տապեմ 'ի նոսա սով. Ամինայնէ՝ որոց ոչ իցեն թեւք և թեփ, այլծ իցէ ձեզ այն. Ամինայն ոաբոաք՝ որոց իցէ 'ի տան իւրում կին այլազգի, երթեալ պահանջեսցեն 'ի նմանէ մամռակս. Ամինայնէ որում չատ տաւաւ, չատ խնդրեսցի 'ի նմանէ. Զամինայնէ՝ զորմէ տասցիս թէ զա մի երթիցէ ընդ քեզ, նա մի երթիցէ. Զհէնք հողոր կէնա արծաթոյն զոր տանուն, եւ այդ թողեալ լիցի. Զկեձն զոր անարգեցին չինողք, նա եղեւ գլուխ անկեանն. Զայրըն՝ զոր արքայ կամի փառաւորել, բերցեն զպատմուճանն զարքունի եւ զերիվարն, եւ տայցեն առն այնմիկ. Զայդ ամինայն զոր տեսանէք՝ եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի այդր քար 'ի քարի վերայ

որ ոչ քակտեսցի։ Զամենայն զոր ետ ցիս Հայր, ոչ կորուսից 'ի նմանէ. Ի տեղւոջ՝ ուր բնակիցեն, ընդ այն մի անցանիցեն. Զգործն՝ զոր ես գործեմ յանուն հօր իմոյ, նոքին վկայեն. Ի մահճոցդ՝ յոր ելեր, ոչ իջցես այդի. Զամենայն տեղի՝ յոր հատանիցեն զնայք ոտից ձերոց՝ ձեզ տաց զնա.

Այս տեսակ խօսքերու մէջ երբեմն Յարաբերեալին հոլովին տեղագրութեամբ գրուած Դերանունը զանց կ՚առնուի, զոր օրինակ.

Մէկ որ զայսպիսի բանս լսելոց եմք, պարտ է բազում պարկեշտութիւն ցուցանել. Ամենայն աղջիկ եւ ամենայն ծնդրոտութ կամ պղծոտն՝ որ լինիցին ամենայն մարդոյ, լուիցես յերկնից. Ընդ երկերն՝ ընդ որ մեք անցաք լրտեսել զնա, երկիր մարդակեր է բնակչաց իւրոց. Զբանն՝ զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է եւ կեանք. Երկերն, յոր հասեր, քեզ լիցի 'ի ժառանգութիւն. Եղջերու, այր մեծ ընդ առաջինսն 'ի գնդի անդ, լցեալ աւուրբ ծերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսօք, ածեալ զայլ 'ի լերան՝ առիպէին ուտել խոզենի.

2. Յարաբերականը փոխանակ իր հոլովը գրուելու՝ ուղղական գրուած, և անոր տեղ Դերանուն մը տեղագրութեամբ յարաբերականին հոլովը, զոր օրինակ.

Տէր ամենակալ, որ ամենայն ինչ սարսի եւ դողայ յերեսաց ահի զօրութեան քո. փոխանակ՝ Տէր ամենակալ, յորոյ երեսաց ահի զօրութեան սարսեալ դողայ եւայլն Մեծ մարգարէն Մովսէս

երկայ ՚ի յետոյն մեռանէր հրամանաւն Աստուծոյ որ մինչեւ ցայսօր պղերգութեան ձեռք ոչ ոք գիտել կարաց: փոխանակ՝ Յորոյ պղերգութեան եւ այլն: Ո՛չ այգ այն Մուշեղ է, մի (որ) զորացն Պապայ հրամանաւ զօրս պատերին: փոխանակ՝ Որոյ հրամանաւ պատերին եւ այլն:

### Գ. ՚Նախադասութեան եւ ՚Նախդիրներու առնչութիւն

258. Վան ՚Նախադասութիւնը կէ , ինք Համեմատ նշուց խօսքերու ուրիշը ալ. յարքու թեան կրնայ գալու , ինչ որինակ:

Երկրայրդ գիտա այդ այն քառասուն կամ կը մնացուցէ ձայն զամփոփութիւն գիւղապաշտ քաղաքապաշտութեանցն: Վասն կը մի ընդ խառնեն զանձինքն: Վասն կը արժանի արդարէ զառ մանել ընդ ձեռս զաւառ՝ զայն պաշտօնացն: Վասն թէ գիտ՚րդ է որդի Դաւթի Քրիստոս: Վասն թէ առաքում իցեն որ ապրելոց իցեն:

Նա առեալ խօսքերու մէջ այլ , այնոքի ՚Նախադասութեան գէպի ան ալ կրնայ քառելի , որպէս թէ ըլլար :

Վասն այնորիկ կը մնացուցէ: Վասն այնորիկ կը մի ընդ խառնեն զանձինքն, եւ այլն:

259. ՚Նախդիրներ ու Խօսքերու թէ ամեն կը կրնան ին :

1. Յառաջադրեալն ձախիկին Յառաջադասութիւն դալ: թէ և Յառաջադասութիւն յետադաս ըլլայ , ինչ որինակ :

ցԻսրայէլ՝ ցհայր իւր. ՅԵղիազար՝ ցորդին Ահարոնի ցքահանայ. Առ Շմաւոն քահանայապետ՝ առ բարեկամ Թագաւորաց. Հայեաց ընդ ծառայ իմ ընդ Յոբ. Յուսացեալ իցես 'ի ցուպն եղեգնեայ ջախջախեալ՝ յԵգիպտոս։

Տես նաև Թիւ 140։

3° Գոյականին Նախդիրն Ածականին վըրայ, թէ յետադաս ըլլայ ածականը և թէ նախադաս. մանաւանդ եթէ ածականները մէկէ աւելի են, զոր օրինակ.

## Ա. Յետադաս Ածականի վրայ.

Զխոյն զմի առցես. Եւ առցես զխոյն զերկրորդ. Հեղլին զարիւն զարդար. Զտասանորդսն զամենայն բերքին. Կոչեա զՍիմոն զոմն. Դարձցիս յայր յայլ. Գումարէին յերկիրն 'ի հեռաւոր. Առէ ցարսն կյարուցեալս 'ի վերայ նորա. Ընդ քաղաքն ընդ ամենայն այսր անդր ընթանային. Զզօրն զայն զմեծ. Զժողովուրդդ զայդ զչար. Զտունս զայս զբարձր. Թագեցին զնա յայրի անդ 'ի կրկնում. Յերկրին յայնմիկ 'ի պղծում. Գտի զոչխարս իմ զկորուսեալ. Զժողովուրդս քո զայս զմեծ. Զորդի իւր զերէց. Զորդին իւր զանդրանիկ. Յաւուր միում յերեւելւոյ. Ի տնկոյ իմմէ 'ի մահաբերէ. Եթէ հանիցէք զամենայն ակն ձեր զաջոյ. Կորեցէք զմանուկն զստնդեայց զկենդանի յերկուս. Բուռն եհար զհանդերձէն իւրմէ զնորոյ. Զազգ մի զանդէտ եւ զարդար կորուսանիցես. Զամենայն ոչխար զխայտախարիւ եւ զգոր. Զի՞րդ առնիցեմ զբանդ զայդ

զչար եւ զմեծ. Զեօթն հասկսն զընտիրս եւ զա-
տոքս. Զժողովուրդն մեծ զբազում եւ զյաղթան-
դամ. Զամենայն փայտ զազնիւ հարին. Զսուրն
սուրբ եւ զմեծ եւ զհզօր. Զկուռսն զարծաթա-
պատս եւ զոսկիապատս. Տայ մեզ զանձրեւ զկա-
նուխ եւ զանագան. Զգործ զմի եւ զնոյն վճարե-
ցաք. Զազգսն մեծամեծս եւ զբազումս. Զայր զը-
ւարթ եւ զառատ. Զեօթանասուն արամբքն դծե-
րովք. Յերկիրն մեծ եւ յանչափ. Յուսմունս պէս-
պէսս եւ յօտարաձայնս. Յազգ մեծ եւ 'ի հզօր եւ
'ի բազում. Յամին հարիւրերորդի յիններորդի յա-
ռաջնում. Յերկրիս յայսմիկ 'ի լայն եւ յընդարձակ
եւ 'ի պարարտ. Շրջեցաք ընդ ամենայն անապատն
ընդ մեծ եւ ընդ ահագին. Ընդ ամենայն քաղաքս
ընդ յոյժ հեռաւորս:

Նախորդի աս կրկնումը կ'ըլլայ նաեւ,
երբ Գոյականին ու Ածականներուն մէջ ու-
րիշ բառ մը, զոր օրինակ՝ Յատկացուցիչ մը
կը մտնէ, ինչպէս.

Գործեսցէ զվանդակս նորա զպղնձիս. Արա-
ծէր զխաշինս Լաբանու զմնացեալս. Արար զիւղն
օծութեան զսուրբ. Ողջացոյց զսեղան տեառն ըզ
կործանեալ. Շինեաց զդուռն տանն տեառն զբար-
ձըր. Ոչ լռես 'ի թիւրելոյ զճանապարհս տեառն
զուղիղս. Բերել զգիրս կախարդանացն զծանրա-
գինս եւ այրել. Զդրունսն առին զարտաքինսն պա-
րըսպացն. Հայր իմ տայ ձեզ զհացն յերկնից զճըշ-
մարիտ. Զօրէնսն կատարիցէք զարքունականս. Ի
ճանապարհս հօր իւրոյ յառաջինս. Ի ծառայից
տեառն իմոյ 'ի յետնոց. Ի Սաղմոսին գրեալ է յերկ-

բորբոքում. Զմարգարէն ամօթոյ պչորեքհարիւր եւ գլխուն. Զեօթն երինջս գեղեցիկս տեսլեամբ եւ զընտիր ա։

## Բ. Նախադաս Ածականի կրայ.

Ածեր 'ի վերայ գոցա զանհնարին զմեղադ. Անա զանճունախառն զկրակն. Զմնոցի տեղիս՝ զդըժնեայ զվայրան հրամայէին նոցա. Զմեծապատիւ չքնաղաշուք ոսկիակուռ զաթոռն. Զերկուսին զորդիս իմ. Զեօթանեսին զորդիսն իմ. Ցերկոսեան 'ի սրահս տանն. Նախս զայնչափ զքաան եւ զինն ալգաց զոգիս տանջեալս 'ի գեհենի. Ի տէրունական խակ 'ի փորձանացն խմանալի է. Զյանդուգն զբուռն արքայն սատակ զփարաւոն. Ոչ հալէին զատանակերպ զգիւրահալ զաղդ անուշակ կերակրոյն. Զնոյն զհոգեւոր զկերակուրն կերան. Ի նոյն 'ի նըմանամիշտ յերկիր անկայ. Ցայնչափ 'ի բազում 'ի նախորաց փիլիսոփայից սատուածոց. Ցիւրոց 'ի բարիոք արարածոյն. 'ի քարեղէն յարծաթագործ պըղընձագործ 'ի պատկերաց այտի. Ցանբաւ եւ յանկոխ եւ յանջուր եւ յանպտուղ երկրին. Ի պղծոց եւ 'ի նորաձայն բանից. Ի հարիւրորդի յիններորդի յառաջնում ամի. Ցերեաններորդի եւ յեօթներորդի ամի։

### Նոյնպէս կ'րսուի.

Զնոյն զմի. Զնոյն եւ զմի. Զմի եւ զնոյն. Ի մի եւ 'ի նոյն միտս. Ընդ նոյն եւ ընդ մի հետ գնաց։

## Գ. Մենայն Ածականը նախադաս եղած

առեն, նախդիրը Գրականին վրայ ալ կրնայ կրկնուիլ, զոր օրինակ.

Զամենայն զերկիրս զայս. Զամենայն զկահ նորա. Զամենայն զգունդն. Զամենայն զինչս իւր. Զամենայն զպատգամս տեառն. Ցամենայն 'ի կեանս քո. Ցամենայն 'ի թագաւորութեան նորա. Ցամենայն իսկ 'ի թուղթս, եւայլն.

## 5. Մակբայներու յետադրութիւն.

254. **Երբեմն, որպէս, ըստ** բառերէն ետքը՝ **այդպէս, այնպէս, նոյնպէս** աւելի կը գրուին, ազդուութեան համար, զոր օրինակ.

**Որպէս** հուր զի այրէ զանտառս, **որպէս** բոց զի կիզու զլերինս՝ **այնպէս** հալածեսցես զնոսա. **Իբրեւ** զկաւ 'ի ձեռս բրտին՝ **այդպէս** էք 'ի ձեռս իմ. Իբրեւ զծիծառն՝ այնպէս ճչեցի, եւ իբրեւ զաղաւնի՝ այնպէս մնչեցի. Որպէս զեղբայր եւ զընկեր այնպէս հաճոյ լինէի. որպէս սգաւոր եւ տրտում այնպէս խոնարհ առնէի. Օրն տեառն իբրեւ զգող գիշերի՝ այնպէս հասանէ. Այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմինս զօրս հրեշտակաց. Զի՞նչ այլ ինչ զօրաւոր որ այնպէս խածանէ զսիրտ մարդոյ՝ իբրեւ զնախանձ. Ըստ բազմութեան իւրեանց՝ նոյնպէս եւ մեղան ինձ. Ըստ դիպելոյ իրաց ինչ՝ նոյնպէս եւ զանուն իրացն դնել. Ըստ ակարութեան ընդունելեացն՝ նոյնպէս եւ զօրէնսն 'ի ժամանակին կարգեաց.

Այս վերջինները Հայերէն աշխարհաբար կը թարգմանուին.

Իրենց բազմութեանը համեմատ ինծի դէմ մեղանչեցին. Դէպքերուն համեմատ կամ նայելով իրերուն անուն դնել. Ընդունողներուն տկարութեանը նայելով օրէնքները ժամանակին դրաւ։

**255.** Նմանապէս ոչ բառն ազդուութեան համար կը կրկնուի.

Ոչ կարացին ապրեցուցանել եւ ոչ զանձինս իւրեանց. Ոչ պակասեսցէ 'ի նոցանէ եւ ոչ մի. Ոչ ումեք պատմեցին եւ ոչինչ յորոց տեսին. Չնախանձի եւ ոչ ընդ ումեք երբէք. Չանկանի եւ ոչ ընդ միով քննութեամբ. Ոչ ումեք ոչ երեւեցին՝ բայց միայն Հրէիցն. Այնպիսին հպարտացեալ է, եւ ոչինչ ոչ գիտէ. Բայց դուք եւ ոչ զմի զայն ոչ յիշեցէք. Ես եւ ոչ զմի ոք ոչ գիտեմ. Զոր ոչ երկինք եւ ոչ երկիր արժել ոչ կարեն։

### Դ. ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆ

**256.** **Բացառութիւն** կը կոչուի ան ձեւը՝ ուր երկու բառ իրարու հետ կը համաձայնին ոչ ըստ Քերականութեան՝ այլ ըստ իմաստին. ինչպէս է հետեւեալ օրինակներուն մէջ։

1° Բայց զօրութեամբ իմացուած բառի մը նայելով յոգնակի դրուած.

Զօրաժողով լինէին արքայն Ասորւոց եւ Իսրայելացւոց. փոխանակ՝ Արքայն Ասորւոց եւ արքայն Իսրայելացւոց. Ի բերանոյ նոցա ելանէին հրաման մահու եւ կենաց. այսինքն՝ Հրաման մահու եւ հրաման

կենաց· Ջ--ք աղի եւ անոյշ զամանս ջրուորայն ըն--ն. այսինքն՝ Ջուր աղի եւ ջուր անոյշ։ Այժմ երկրաւոր նշանաց պէտք են, եւ Եր[--]--րն այլում ժամանակի պահեալ են. այսինքն՝ Նա երկնաւոր նշ-ն+ն պահեալ են, եւայլն։

2° Լատական բայք յոքնակի գրուած՝ ուղղական հոլով խնդիրն (ստորոգելին) յոքնակի ըլլալուն համար.

Բարկութիւն հօր՝ որդի անմիտ, եւ ց--+ էն ծնանելեաց նորա. Այէ+՝ իմաստութիւն մարդոյ էն. Մասց բ-ջ--ղ-ն+ էն աղանդն, եւ ոչ ճշմարտութիւն. Ձէն օրէն+ աշխարհի մերում սալ նախ զկրասելին քան զերէց. Փ--+ էն՝ ասն խոստրել 'ի հայհոյութեանց. Ոչ վայրապար ինչ էր+ էին զփարէս յիչէր։

3° Հ-ուսաքական անուններուն Նոյը կամ Ծուկանը կամ Գեբրանունը յոքնակի գրուած.

Ամենայն Ի--ր-յէլ զկնի էր[--]յէն նոցա ձ--է-ւ+ եւ չ--ղ--ւ+. Դարձաւ ամենայն ժողովուրդն 'ի բանակն առ Յեսու 'ի Մակեդայ ողջ--ն--մ+. Ամենայն -ո--ն Իսրայելի հ-կ----կ-ւ+ եւ խ--ր---է+ էն. Արքին զ-թ--ն--յէն հ-ն--ղ-ն-ր-, բայց սատակելով ոչ սատակեցին զ----. Եւ եղեւ Մ-վ--ք Դաւթի 'ի ծ--ռ--յս պատարագաբերս. Տեսեալ զ-ր--ն-ր- Հայոց ղ-է--ւ- եւ զ-ր-ր--է-ւ-. Եթէ եղիցի ժողովուրդն իւրեւ պաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք մնասցեն 'ի նոցանէ. Նման էն ժ-ն-կ---յ որ ն---կ-ն 'ի հ-ր--ղ-ր-կ-. Զուեաց ամենայն ժողովուրդն բան բանակի ջ-ր-է-ն-. Կոչոսեաց ամենայն ժողովուրդն զգինդս

ոսկիս յականջաց կանանց իւրեանց. Զի՛նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց. Իբրեւ ոչ-խար որոց ոչ իցէ հովիւ:

Նմանայն բառին եզակին ալ, իբրեւ հաւաքական, նոյն համաձայնութիւնը կ'ունենայ.

Ամենայնէ որոց իցեն թիւք եւ թիւ՛ զայնս ուսուցէք: Յամենայնէ՝ յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն:

4. Նշանակի Թուական անուններուն վերաբերութիւն ունեցող ածական կամ բայ յոքնակի դրուած.

Տասն այր բորոտ որք կային 'ի հեռաստանէ. Երկոտասան այր ողջոյք եւ տառապեալք որք 'ի նա յարեալ էին:

ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Կէտադրութիւն կը կոչուի խօսքին մէջ բառեր եւ իմաստներ կէտ կոչուած նշաններով իրարմէ զատելու արուեստը:

2. Կէտադրութեան գլխաւոր նշանները հետեւեալներն են. Բութ ('), ստորակէտ (,), միջակէտ (.), վերջակէտ (:):

3. Այս նշանները՝ Ա. Խօսքի մը նոյնատեսակ մասերը եւ Բ. Գործերութեան մը մասերն իրարմէ զատելու համար կը գործածուին:

4. Ա. Խօսքն այն է որ գլխաւոր բայ մը ու֊նի. Խօսքին մասերն են Տէր բայն, Ստորոգելին. Բայը. Խնդիրները. Մակբայն ու Ածականները։ Երբ խօս֊քի մը մէջ աս մասերը մէկէ աւելի են, այս ինքն՝ երբ խօսք մը միեւնոյն Բային վերաբե֊րեալ քանի մը Տէր բայի, միեւնոյն Տէր բայիին վերաբերեալ քանի մը բայ կամ ստորոգելի, միեւնոյն խնդրառուին վերաբերեալ քանի մը խնդիր կամ մակբայ, միեւնոյն Գոյականին վե֊րաբերեալ քանի մը ածական ունի, այն մա֊սերը խօսքին նոյնատեսակ մասերը կը կոչուին։

5. Բ. Պարբերութիւն կ՚ըսուի երկայն խօսք մը որ կը բաղկանայ երկու գլխաւոր նախա֊դասութիւններէ՝ որոնք պարբերութեան անդամները կը կոչուին։ Այս պարբերութեան մը անդամները՝ կամ իրարմէ կախում ունե֊ցող կամ իրարու համադրեալ խօսքեր են, և կամ մէկը միւսին իբր ՚ի պատճառէ կամ ՚ի փաստէ Հետեւութիւնն* է, զոր օրինակ.

Եթէ մեզի մեր տկարութեանը վրայ գաղա֊փար տուող բան մը կայ, մեր ծննդենէն անմիջա֊պէս ետքը մեր գտնուած վիճակն է։

Երջանկութեան հասնելու համար բոլոր մար֊դիկ հարստութիւն կը փնտռեն. բայց եւ այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին։

---

* Պատճառէ կամ փաստէ Հետեւութեան վրայ տես Տրամա֊բանութիւն գաղափարական էջ 250։

Մեր թագաւորը բարեսիրտ եւ մարդասէր է. ապա անոր գթութեանը կրնանք պաղատիլ։

Աս երեք խօսքն ալ մէկմէկ պարզ պարբերութիւն են. առաջինին անդամները կախում կը ցուցնեն. երկրորդին անդամներն իրարու հակադրեալ են. իսկ երրորդին անդամներուն մէկը (հետեւորդ անդամը) միւսին (նախորդին) իբր 'ի փաստ հետեւութիւնն է։

6. Պարբերութիւն չէ երկայն խօսք մը՝ որուն մէջ նախադասութիւններն իրարմէ կախում չունին, ոչ իրարու հակադրեալ են, ոչ ալ մէկը միւսին հետեւութիւնն է. այլ միայն իրարու քով շարուելով ընդհանուր իմաստ մը կը բացատրեն, զոր օրինակ սա հետեւեալը.

Առողջութիւնը լաւ անուն է. կեանքը սուղ է. փառքը միայն երեւոյթ մը է. զուարճութիւններն ու հեշտութիւնները միայն վաղանցաւոր գրօսանք են։

7. Պարբերութիւն մը պարզ կը կոչուի, երբ անդամներուն երկուքն ալ մէկմէկ նախադասութիւն են, ինչպէս վերի երեք պարբերութիւնները։

8. Պարբերութիւն մը բաղադրեալ կը կոչուի, երբ անդամներուն մէկը կամ երկուքն ալ երկու կամ աւելի նախադասութիւններէ կը բաղկանան, զոր օրինակ.

Եթէ մարդիկ արդարութեան վրայ աւելի յարգ

ունենային՝ եւ ճշմարտութեան մեծ զօրութեանը վրայ համոզուած ըլլային, ոչ միայն ընկերութիւնն իր նպատակին աւելի մօտեցած կ՚ըլլար՝ այլ եւ առանձնական շահերն աւելի ապահով երաշխաւորութիւն մը ունեցած կ՚ըլլային։

Խօսքի մը մասերուն համար կէտադրութեան կանոն.

9. Ստորակէտով կը զատուին.

1° Խօսքի մը նոյնատեսակ մասերը. եթէ և, կամ, բայց, այլ շաղկապներէն մէկովը կապուած չեն, զոր օրինակ.

Աշխարհիս վրայ ջուր, խոնաւ, ջերմ, ցուրտ, պինդ, լոյծ, փխրելի բաներ խառն կը գտնուին։ Տիւրացիք արտաքոյ կարգի, համբերող, աշխատասէր, մաքուր, ուշադիր եւ խնայող են։ Ներսէսեանը, Բասմաճեանը, Ադրբէջանեանը, Դաւիթը, Կարապետեանցն ամ երկրին մէջ իրենց անագորոյն ձայնը երբէք լսել չեն տար։ Աս ամբաւ երկրագունդն իր մակերեւութին վրայ մեզի կ՚ընծայեցնէ լեռներ, ձորեր, դաշտավայրեր, ծովեր, ճահիճներ, անտառներ, վէմեր, հրաբուխներ։ Նա գեղեցկագոյն տուներուն այցելութիւն կ՚ընէր. անոնց վիճակէն, ընտանեացը, ծառաներուն, Ծովուն, Հովերուն, կարգադրութեանը, տարբեր, պատկեր եւ ուրիշ շատ բաներու կը տեղեկանար։ Աս փիլիսոփան ուրախութեամբ կը խոստովանէր թէ հոգին կ՚զմբանէ, կը խորհի, կը դատաւորէ, կը հասկնայ, կ՚իմաստասիրէ, կը ճանչնայ, կը կամի, կը խորհրդածէ։ Եթէ կ՚ուզուի որ տղաք միշտ տղայ չմնան՝ այլ վարպետ ըլլան, հայրերն ու վարպետները զանոնք խիստ կանուխ

յանդիմանած, աղաչած, կշտամբած, ողոքած, սաստած, հրահանգած, ու համոզած ըլլալու են։ Գերագոյն ու կատարեալ կառավարութիւնը՝ կառավարիչները կառավարելու մէջ կը կայանայ. պէտք է զանոնք ընտրելը փորձելը սանձելը ուղղելը քաջալերելը վերցնելը իջեցնելը տեղափոխելը ու միշտ 'ի բանի առնելը։

Ոմանք սա դէպքերուն մէջ բութ կը գործածեն։

2° Խօսքի մը մէջ իր բացայայտիչ դրուած խօսքի մասեր երկու ստորակէտի մէջ կ'առնուին, զոր օրինակ.

Աշխարհիս ամենէն մեծ պետութեանը, Հռովմէական պետութեան, վրայ Աստուծոյ դատաստանները մեղի թաքուն չեն։

3° Նախադրութեամբ խնդիրներ, երբ երկայնկեկ են և խօսքին իրարու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող երկու մասերուն, զոր օրինակ՝ Տէր բայիին ու բային կամ բային ու խնդրոյն, մէջտեղը դրուած են, նոյնպէս երկու ստորակէտի մէջ կ'առնուին, զոր օրինակ.

Անոր նաւը, երկայն ատեն հովերուն խաղալիկ ըլլալէն ետքը, ալեաց մէջ թաղուեցաւ։ Տիւրացիք, իրենց փառաւորութեանը պարծանաւ, զայրացուցած էին Սեսոստրիս մեծ թագաւորը որ Եգիպտոս կը թագաւորէր ու բազմաթիւ թագաւորութեանց տիրած էր։ . . . Սեսոստրիս, անոնց ամբարտաւանութիւնը կոտրելու համար, միտքը դրած էր որ բոլոր ծովերու վրայ անոնց վաճառականութիւնը չփոթէ։

4° Բացադրութեամբ ըսուած անուն մը, այսինքն կոչական մը, կամ ձայնարկութիւն մը խօսքին յաջորդ մասէն ստորակէտով մը կը զատուի. և եթէ խօսքին մէջտեղն է, երկու ստորակէտի մէջ կ'առնուի.

Ով Թագաւոր, ահա թշնամիներուդ դէմ քու վրէժխնդիրներդ։ Արժան է, որդեակ, որ քեզի յայտնեմ.

5° Կ'ըսեմ, ըսաւ, պատասխանեց, հրչնեց, և ասոնց նման ուրիշ մը խօսքը յառաջ բերող բայեր երկու ստորակէտի մէջ կ'առնուին, եթէ յառաջ բերուած խօսքին մէջտեղն են. իսկ եթէ խօսքին սկիզբն են, առոնցմէ ետքը միջակէտ կը դրուի, ու յառաջ բերուած խօսքը գլխագրով կը սկսի։

Ով է հայրդ, ըսաւ Դիցուհին, զոր կը փնտռես։ Ոդիսեւս կը կոչուի, ըսաւ Տելեմաք։ Կամ. Դիցուհին ըսաւ. Ով է հայրդ զոր կը փնտռես։ Տելեմաք պատասխան տուաւ. Հայրս Ոդիսեւս կը կոչուի։

6° Պարբերութիւն չեղող խօսքերու մէջ՝ իւրաքանչիւր նախադասութիւն, մանաւանդ եթէ երկայն է, նախընթացէն ստորակէտով մը կը զատուի.

Առողջութիւնը լոկ անուն է, կեանքը սոսկ երազ է, փառքը մինակ երեւոյթ մի է, զուարճութիւններն ու հեշտութիւնները միայն վտանգաւոր զբօսանք են։

Երբ ասանկ բազմաթիւ նախադասութիւններ նախընթաց խօսքի մը բացատրութիւն կամ իբր թուումն մասանց են, ան նախընթաց խօսքն ասոնցմէ միջակէտով մը կը բաժնուի, զոր օրինակ.

Երբ թագաւորաց սիրտը մարդոց ձեռքին մէջն է, բա՛րէ, կարծես թէ ամենայն ինչ զանոնք թիւրելու կը միաբանի. չողոքորթութիւնը զանոնք կը խաբէ, չար խրատտուները զանոնք կը գրաւեն, գէշ օրինակները զանոնք կը քարշեն, գործերուն զանազանութիւնն անոնց միտքը կը ցրուէ։

Այս դէպքին մէջ ոմանք ստորակէտի տեղ միջակէտ կը դնեն։

10. Բութ կը գործածուի խօսքին մէջ՝

1° Հոն ուր բառ մը զեղչուած է, զոր օրինակ.

Փռանկները, վայրենի ժողովուրդ, բանջարով, պտղով, արմատներով, եւ որսով միայն կ'ապրէին։ Արեւը, լուսինը, լուսաւորները, գետերն էին անոնց չաստուածները. խոր անձաւներ՝ անոնց մեհեանները. աստեղաբաշխներ, բժիշկներ ու դատաւորներ՝ անոնց Դրուիդ կոչուած քուրմերը. փայտակերտ կաւագործ հիւղեր՝ անոնց քաղաքները. իսկ անոնց առուտուրն էր փոխանակութիւն։

2° Բութով կը զատուի խօսքին ան մասը որ գիմաւոր բայ չունենալով՝ ամբողջ նախադասութիւն չէ. այլ ուրիշ նախադա-

*ութենէ մը կամ խօսքին դիմաւոր բայ ունեցող մասէն կախում ունի.*

Շարունակ վարանման ու անտարբերութեան մէջ ապրելէ ձանձրացած՝ որոշեցի որ Սիկիլիա երթամ։ Գործին այնչափ անհնարին դժուարութիւնները տեսնելով՝ հասկցանք որ մեր բոլոր ջանքերը վայրապար պիտի ըլլան։ Պատանին հօրը անունը լսածին պէս՝ սկսաւ ջերմ արտասուք թափել։ Հիացման արժանի տեսարանի մը հանդիսատես ըլլալէ ետքը՝ սկսանք կրկին կղզւոյն լեռները նշմարել։

3° Երբ Տէր բային կամ ստորոգելին իր *յարակից մասերովը երկայնկեկ է, այն մասը յաջորդ խօսքէն բութով մը կը զատուի, որ ընչառութեան հանգիստ տրուի, զոր օրինակ.*

Իրենց նախնի աւանդութիւնները պահելու համար Եգիպտացւոց ամենէն գեղեցիկ մէկ հնարքն ալ՝ անոնց (աւանդութիւններուն) համար յատուկ տօներ սահմանելն էր. ասով աւանդութեանց քարոզական նշանակութիւնը՝ ժողովրդեան մտքին մէջ կը տպաւորուէր։

4° Յարաբերական դերանունով սկսող *միջանկեալ խօսքերուն վերջը բութ կը դըրուի, ու այնպէս խօսքին մնացորդը կը շարունակուի, զոր օրինակ.*

Աստուծոյ մեծագործութեանը գանձն է բնութիւնը. ան մարդը որ անոր ծոցին ալ խելամուտ է՝ տակաւ ամենակարողութեան ներքին գահը կ՚ամբառնայ։

Սմանք բութը յարաբերականին վրայ կը դնեն, ու յարաբերականով կազմուած նախադասութիւնը խօսքին յաջորդ մասէն ստորակէտով կը զատեն, այսպէս.

Ընջրին՝ որ իմացական կարողութեամբ շատէն ա- ւելին օգուտն է, տակաւին խօսողութեան դրեթէ հաւասար ձիրք մը բնութենէն ընդունած է։ Կարմիր ծովը՝ որ զԱրաբիա երէն Եթովպիայէ եւ Եգիպտո- սի մէջէն կը բաժնէ, երեքհարիւր լիսուն մղոն երկայնութիւն եւ քառասուն մղոն լայնութիւն ունի։

Պարբերութեան անդամներուն համար կէտադրու- թեան կանոն.

11. Պարզ պարբերութեան մը անդամները, եթէ մէկը միւսէն կախում կը ցուցընէ, իրարմէ ստորակէտով կը բաժնուին.

Մինչ Մեծնոր ու Հազայէլ կը խօսէին, ոսկեփայլ ու կապուտակագոյն թեւերով ծաղկուած գլխիններ նշմարեցինք։ Պարտաւորութիւն մը որչափ աւելի մեծ ու տաժանելի է, նոյնչափ անոր հիմը զգալի եւ զօրաւոր ըլլալու է։ Որովհետեւ յոյս չունինք որ մեր վրայ թնդաւորէք, գէթ մեր օրէնքն հաստատուն պահել տալու կարող թագաւոր մը գտնելու մեզի օգնեցէք։ Անձնասիրութեան աշխարհին մէջ որչափ նոր տեղեր գտնենք, տակաւին շատ անծանօթ երկիրներ կը մնան։

12. Երբ պարզ պարբերութեան մը անդամներն իրարու հակադրեալ են կամ մէկը

միւսին իբր 'ի պատճառէ կամ 'ի փաստէ հետեւութիւնն է, իրարմէ միջակէտով կը զատուին, զոր օրինակ.

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն. բայց եւ այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին: Աստուած անսահման կատարեալ եւ անհուն բարի է. հետեւաբար ոչ կրնայ խաբուիլ, ոչ ալ մեզ կը խաբէ: Մեր թագաւորը բարեսիրտ եւ մարդասէր է. ապա անոր գթութեանը կրնանք ապաւինիլ:

**13.** Բաղադրեալ, այսինքն՝ երկրորդական անդամներէ բաղկացեալ պարբերութեան մը մէջ, եթէ պարբերութեան գըլխաւոր անդամներուն մէկը միւսէն կախում ունի, երկրորդական անդամներն իրարմէ բութով կը զատուին. իսկ գլխաւոր անդամները՝ ստորակէտով, զոր օրինակ.

Ինչ նիւթի վրայ որ ճառեն՝ ինչ խորհուրդ որ անոնց մտացը մէջ ծնանի՝ ինչ զգացումներ որ անոնց հոգին գրաւեն, աս ամենը բոլոր պարագաներովը եղածին պէս կը բացատրեն: Եթէ բանաստեղծութիւնը, երկրաչափութիւնը, աստեղագէտութիւնն ու աշխարհագրական բոլոր դիտութիւնք, աւելի կամ նուազ տարբերութեամբ, իրենց կատարելութեանը կը դիմեն՝ մինչդեռ քաղաքականը հասցի որոշեալ եղած կը թուի, պատճառն այն է որ մարդիկ, ընկերութիւն ձեւանալով իրենց իրենց օրէնք եւ քաղաքական տալու ստիպուած ըլլալնուն համար, դիտողութեա՛մբ քաղաքականին սկըրունք-

ներուն հասու չեղած՝ բարոյականի դրութիւն մը չինելու պարտաւորութեան։

14. Երբ բաղադրեալ պարբերութեան մը գլխաւոր անդամներն իրարու հակադրեալ կամ մէկը միւսին հետեւութիւնն է, ան ատեն երկրորդական անդամներն իրարմէ միջակէտով կը զատուին. իսկ գլխաւոր անդամները վերջակէտով, զոր օրինակ.

Մարդ իրեն հետ համամիտ եւ համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն գժտեալ չի կրնար մնալ. վերջապէս կը հաշտուի։ Բայց իր զգացմանցն ու կարծեացը հակառակ զգացում ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ըլլալու վայրապար կ'աշխատի. սանձերը կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին։

15. Երբ խօսքի մը մէջ քանի մը պարբերութիւն կայ, եթէ առաջին պարբերութեան գլխաւոր անդամներն իրարմէ ստորակէտով բաժնուած են, երկրորդ պարբերութեան ու առաջնոյն մէջ տեղը միջակէտ կը դրուի. իսկ եթէ առաջին պարբերութեան գլխաւոր անդամները միջակէտով բաժնուած են, յաջորդ պարբերութեան ու նախընթացին մէջտեղը վերջակէտ կը դրուի։ Այսպէս հետեւեալ օրինակը.

Եթէ մեր նպատակները կամ դիտաւորութիւններն ուղիղ եւ մաքուր են, յաջողելու մեծ յոյս կրնանք ունենալ. եւ եթէ չյաջողինք, չյաջողութեանը ոչ թէ պատժուած՝ այլ վրկուած կ'ըլլանք՝

Բայց երբ մեր նպատակները թիւր եւ չար են՝ ու մեր յուսացած յաջողութիւնը մենէ կը փախչի, միանգամայն զրկող եւ պատժուած ենք. զրկող ենք, քանզի մեր նպատակն անիրաւ է. պատժուած ենք, քանզի չյաջողութիւնը որ մաքուր եւ ուղիղ դիտաւորութիւն ունեցողին առ առաւելն տրտմութիւն մը կը բերէ՝ չարին եւ անիրաւին նաեւ յուսահատութիւն է։

16. Խօսք մը որ վերջակէտով կը լրանայ կամ կը գոցուի, ըրայեալ կամ ամբողջական խօսք կը կոչուի։

17. Գրութեան մը շարունակութեանը մէջ՝ ան մասերը որոնք նոր տողով (ալինէա) կը սկսին, տողագիր (փարակրաֆ) կը կոչուին։ Տողագիր մը կրնայ մէկ կամ աւելի լրացեալ խօսք պարունակել. ուստի և տողագրի մը մէջ որչափ վերջակէտով լմնցած խօսք կայ, այնչափ լրացեալ խօսք կայ։

18. Մենեւին կէտանշանով չեն բաժնուիր

1° Երկու նոյնատեսակ բառեր որոնք ու, եւ, կամ, բայց և ուրիշ ասոնց նման շաղկապներով կապուած են ու յարակից մասեր չունին, զոր օրինակ.

Պատիժն ու մոլութիւնն անբաժին են։ Բոլորտիքդ եղողներուն կորուստը կամ փրկութիւնը քու կորստենէդ կամ փրկութենէդ կախում ունի։ Մարդուս կիրքերն անոր վնասակար բայց սիրելի թըշնամիներն են։

2° Կցկտուած շաղկապներով կամ մակբայներով կապուած խօսքեր, զոր օրինակ.

Ամեն անգամ ծաղկած կը տեսնենք թէ Պոմոնային պտուղները թէ Փլորային ընծաները։ Մի թողուր ու ապահովութեան ու հպարտութեան որ քեզ քարշ ածեն։

3° Ու, թէ շաղկապներով սկսող խօսք մը որ նախընթաց բային խնդիր է, զոր օրինակ.

Չենք ուզեր որ մէկը մեզ յանդիմանէ, քանզի ուղղուիլ չենք ուզեր։ Շողոքորթութենէ կը խաբուինք, քանզի կը կարծենք թէ ուրիշներն այնչափ կոյր են որ մեր մոլութիւնները չեն տեսներ։

19. Պարոյկը (՞) հարցական նշան է և հարցում եղող բառին վրայ կը դրուի։

20. Երկարը (՛) զարմացական նշան է և հոգւոյն մէկ կիրքը նշանակող բառերուն վըրայ կը դրուի։

21. Կախման որ երեք կէտ է (. . .)՝ կը գործածուի խօսքը սակաւ կամ կիսկատար մնացած ըլլալը ցուցնելու համար։

22. Գիծը (—) կը գործածուի մէյմը հարցման ու պատասխանւոյ մէջտեղը՝ առանց ըսէ, ըսաւ, պատասխանեց, տուաւ, չըննէց բառերը գործածելու. Երկրորդ, փակագծի տեղ։

23. Չակերտը („) խօսքի մը նոյնամ ըլլալը նշանակելու համար կը գործածուի։

24. Փակագիծը որ սա նշանն է ()՝ խօսքին մարմինէն դուրս բայց անոր յաւելուած մը բուն խօսքէն կը զատէ։

Гос. ... ССР

# ՑԱՆԿ

ՀԱՅԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ . . . . . . . 1

## ՄԱՍ Ա.

Բառագիտութիւն . . . . . . . 2
Գլ. Ա. Անուն . . . . . . . . . . . . 2
Գլ. Բ. Ածական . . . . . . . . . . 22
Գլ. Գ. Դերանուն . . . . . . . . . 36
Գլ. Դ. Նախդիր կամ Նախադրութիւն . . 42
Գլ. Ե. Բայ . . . . . . . . . . . . 44
Դերբայներուն վրայ դիտելիք . . 82
Գլ. Զ. Մակբայ . . . . . . . . . . 84
Գլ. Է. Շաղկապ . . . . . . . . . . 87
Գլ. Ը. Ձայնարկութիւն . . . . . . . . 88

## ՄԱՍ Բ.

Համաձայնութիւն . . . . . 90
Գլ. Ա. Տէր բայի . . . . . . . . . 90
Գլ. Բ. Խնդիր . . . . . . . . . . 96
Ա. Գոյականին խնդիրները . . . . 97
Բ. Ածականներուն խնդիրները . . 98
Գ. Նախադրութեանց խնդիրները . 101
Դ. Բայերուն խնդիրները . . . . 116
Գլ. Գ. Ուղղական խնդիր կամ ստորոգելի . . 125
Գլ. Դ. Բացայայտիչ եւ բացայայտեալ . . 129
Գլ. Ե. Կոչական . . . . . . . . . 132
Ութը մասանց վրայ մասնաւոր դիտելիք
Ա. Գոյական անուն . . . . . . 133
Յօդի գործածութիւնը . . . . . 136

Բ. Ածական անուն . . . . . . . . 140
Գ. Դերանուն . . . . . . . . . . 143
1. Ցուցական դերանուն . . . . . 143
2. Ստացական դերանուն . . . . . 144
3. Յարաբերական դերանուն, եւ ս. դ. ն. գլխորոշներուն գործածութիւնը . . . . . . . . . . . 145
Դ. Բայ . . . . . . . . . . . . . 165
1. Գրաբարին ժամանակներուն աշխարհաբարին հետ համեմատութիւնը 165
2. Անորիշ դերբայ . . . . . . . 173
3. Անցեալ դերբայ . . . . . . . 178
Ե. Նախադրութիւն . . . . . . . 180
Զ. Մակբայ . . . . . . . . . . . 181
Է. Շաղկապ . . . . . . . . . . . 188

## ՄԱՍ Գ.

Շարադրութիւն . . . . . . . . . 197
Գլ. Ա. Քերականական կարգ. Գիտելիք . . 197
Գլ. Բ. Ձեւաւոր կարգ . . . . . . . . 202
Ա. Արտուղութիւն . . . . . . . . 202
1. Հարկաւոր արտուղութիւն . . 203
2. Ազատ արտուղութիւն . . . . 207
Բ. Զեղչում . . . . . . . . . . . 214
1. Տէր բայլի զեղչում . . . . . 214
2. Բայի զեղչում . . . . . . . . 219
4. Զեղչումն խնդրոց . . . . . . 224
4. Դերբայներու զեղչում . . . . . 227
5. Ցուցական եւ Ստացական ածականաց զեղչում . . . . . . . 228
6. Նախադրութեան զեղչում . . 230

7. Շաղկապի զեղչում . . . . . 233
Գ. Աւելադրութիւն . . . . . . . 234
1. Դերանուն Տէր բայի աւելադրութիւն . . . . . . . . . . 234
2. Դերանուն խնդրոց աւելադրութիւն . . . . . . . . . . . . 235
3. Յարաբերեալի աւելադրութիւն . 237
4. Նախադրութեան եւ Նախդիրներու աւելադրութիւն . . . . . 240
5. Մակբայներու աւելադրութիւն . 245
Դ. Բակառութիւն . . . . . . . 246
Կէտադրութիւն . . . . . . . . . 248
Խօսքի մասերուն կէտադրութեան կանոն . . . . . . . . . . . . 251
Պարբերութեան անդամներուն կէտադրութեան կանոն . . . . . 256

---

# ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՔ

# ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄԱՀ ՀՈԳՒՈՑ

Արտեմեայ օրիորդի և Նափայի Յ. Խորասանճեան.
Գաբրիէլի Երանեան.
Գայիանէ տիկնոջ Նորատունկեան.
Գրիգոր Պատուելոյ Փէշտիմալճեան.
Երանուհի տիկնոջ Յ. Եէմէնիճեան.
Իրինէի Գէորգ Աղայեքով և Տիրուհի տիկնոջն.
Նիկողայոսի Մ. Ջօրայեան.
Պաղտասար Պատուելոյ.
Տ. Մխիթար Վարդապետի Աբրայ.
Տ. Տ. Յակոբ Պատրիարքի Նալեան.

Ալէքսան Յ. Խօրասանճեան.
Ահարոն Վարպետեան.
Անդրանիկ Պէյ Կրճիկեան.
Անտոն Մանկասեան.
Բեդրակ Բարսատանեան.
Գառնիկ Յ. Յովակիմեան.
Գրիգոր Ա. Փափազեան.
Գրիգոր Խուրսաճեան.
Գրիգորիկ Կ. Պալեան.
Գրիգոր Մ. Բարսեղեան.
Գրիգոր Տ. Գէորգեան Աստափ.
Դանիէլ Մարկոսեան.
Տ. Տ. ԵՍԱՅԻ Արքեպիսկոպոս
և Պատրիարք Ս. Երուսաղեմի
Եսայի Ս. Անուշեան.
Լեւոն Մ. Գափամաճեան.
Խաչատուր Մանկաղեան.
Տ. Խորէն Վ. Գալֆաեան.
Կարապետ Սապայեան.
Ճանիկ Պէյլիքճեան.
Ճանիկ Ս. Ատամեան.
Մարկոս Ալաճայեան.
Մարտիրոս Թօգաթլըեան.
Մկրտիչ Ճանփոլեան.
Մկրտիչ Պէնտերլեան.

Մկրտիչ Ստեփանեան.
Մկրտիչ Տամատեան.
Յակոբիկ Կ. Պալեան.
Յակոբ Ս. Փէշլաքեան.
Յ. Ոսկան.
Յարութիւն Մարգարեան.
Յովհաննէս Հովուեան.
Յովհաննէս Յ. Ամիրաղէ.
Յովհաննէս Յակոբեան.
Յովհաննէս Պօյաճեանց.
Յովհաննէս Սարաֆեան.
Յովսէփ Գասպարճեան.
Նիկողայոս Տ. Ճէմաօղեան.
Նշան Հայկենց.
Պօղոս Սէրաստէտի.
Տ. Պօղոս Վ. Իօլասըմեանց
յՄարաշ.
Ռուբէն Յ. Քիւրքճեան.
Սարգիս Գալֆայեան.
Սարգիս Տ. Գասպարճեան.
Սերովբէ Թագաւորեան.
Սիմոն Մինասեան.
Ստեփան Ն. Ամիրաղեան.
Տիգրան Մ. Գաբրիէլեան.

2013 2521
ՀՀ Ազգային գրադարան
NL0059636